

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԳՈՒՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԳՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ջ Ա Յ ՈՒ Կ Յ Ա Ն Ա Կ Ա Ն  
Ը Ն Թ Ե Ր Ց ՈՒ Մ Ն Ե Ր

JAHUKYAN READINGS  
ДЖАУКЯНОВСКИЕ ЧТЕНИЯ

1-2 (17-18)



NATIONAL ACADEMY OF SCIENCES  
OF REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN

**JAHOOKYAN READINGS**

1-2 (17-18)

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА

**ДЖАУКЯНОВСКИЕ ЧТЕНИЯ**

1-2 (17-18)

Yerevan 2022  
Ереван 2022

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՋԱՀՈՒԿՅԱՆ ԱԿԱՆ  
ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

1-2 (17-18)

ԵՐԵՎԱՆ  
ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
2022

Գլխավոր խմբագիր՝ Վ.Լ. Կատվալյան  
Պատասխանատու քարտուղար՝ Ն.Գ. Հովհաննիսյան

Խմբագրական խորհուրդ

Ա.Վ. Գալստյան, Գ.Կ. Խաչատրյան, Վ.Գ. Համբարձումյան, Լ.Շ. Հովհաննիսյան, Հ.Հ. Մեսրոպյան, Գ.Ս. Մխիթարյան, Ն.Ս. Միմոնյան, Դոնաբեդյան Անահիտ (Ֆրանսիա), Դում-Թրագուտ Յասմին (Ավստրիա), Պլունգյան Վլադիմիր (Ռուսաստան), Սկալա Անդրեա (Իտալիա), Պ.Ա. Քոչարով (Ռուսաստան)

Editor-in-chief - V.L. Katvalyan

Executive secretary - N.G. Hovhannisyan

Editorial Board

A.V.Galstyan, G.K. Khachatryan, V.G.Hambardzumyan, L.Sh. Hovhannisyan, H.H. Mesropyan, G.M. Mkhitaryan, N.M. Simonyan, Donabedian-Demopoulos Anaïd (France), Dum-Tragut Jasmine (Austria), Petr A. Kocharov (Russia), Plungian Vladimir (Russia), Scala Andrea (Italy)

Главный редактор - В.Л. Катвалян

Ответственный секретарь - Н.Г. Оганесян

Редакционная коллегия

А.В. Галстян, Г.К. Хачатрян, В.Г. Амбарцумян, Л.Ш. Оганесян, А.А. Месропян, Г.М. Мхитарян, Н.М. Симонян, Донабедян-Демопулос Анаид (Франция), Дум- Трагут Ясмин (Австрия), Кочаров Петр Александрович (Россия), Плунгян Владимир (Россия), Скалла Андреа (Италия),

DOI:10.54412/2738277X

## ՀՈԴՎԱԾՆԵՐ

### ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ»-Ի ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ\*

10.54412/2738277X-2022.1.2-5

#### Գրիգորյան Սուսաննա

բանասիրական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ Ն. ԱՃառյանի անվան լեզվի ինստիտուտ,  
ավագ գիտաշխատակից. susanna7494@gmail.com

**Բանալի բառեր.** դատավոր, դատախազ, դատաստանագիրք, իրավունք, օրենք, քննություն, սովորություն:

#### Նախաբան

Առաջին անգամ քննության են առնվում Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի իրավական հասկացությունները: Հեղինակային նորակազմություններով համալրում է կատարվում գրաբարի բառապաշարում, իսկ հեղինակի առաջ քաշած հարցադրումները հետաքրքրություն են ներկայացնում թե՛ հայագետների, թե՛ իրավագետների համար: Իրավական հասկացությունների իմաստային քննություն անցկացնելու նպատակով դրանք ուսումնասիրվել են իմաստային խմբերով, դիտարկվել են հեղինակային նորակազմությունները, հասկացությունները համեմատվել գրաբարի բառապաշարը ներկայացնող բառարանների նյութի հետ: Իրավական հասկացությունները քննվել են տարաժամանակյա և համաժամանակյա մեթոդներով (ինչպես են կիրառվել դրանք 14-15-րդ դարերում և ինչ կիրառություններ ունեն արդի հայ հասարակության մեջ):

---

\* Ներկայացվել է 23.05.2022, գրախոսվել՝ 20.06.2022:

### Հարցի պատմությունից

Հրաչյա Աճառյանը, «Արմատական բառարան»-ի առաջաբանում խոսելով «յիշելու արժանի» մատենագիրների մասին, նրանց բառագործածություններն ու մեկնությունները բնութագրել է «իբրև հայեացք՝ կարծիք, հայ լեզուի կազմութեան մասին»<sup>1</sup>: Հայագետը կարևորել և բառարանում ներառել է նաև Տաթևացու բառագործածություններն ու մեկնությունները՝ արդարացիորեն լրացնելով «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բացթողումներից մեկը:

Հրաչյա Աճառյանը սկզբունքային մի նկատառում էլ ունի. նա գրում է. «Արմատի վկայութիւններից հետոյ դնում եմ նոյն արմատից յառաջացած կարևոր բառերը՝ իրենց վկայութեամբ: Սրա նպատակն է նախ՝ ցոյց տալու, թէ նոյն արմատը ինչ կենսունակութիւն ունի հայ լեզուի մէջ, կողմացած և քիչ գործածական մի ձև՝ է, թէ աճած ու զարգացած բառ» (ՀԱԲ, հ.Ա, էջ 5), այսինքն՝ բառի ցանկացած վերընձյուղում, ըստ հայագետի, տվյալ բառի կենսունակությունն է ցույց տալիս, ուստի բառավկայությունները, այդ թվում՝ Գրիգոր Տաթևացու, լրացուցիչ արժեք են ձեռք բերում՝ մի կողմից լեզվի բառապաշարի զարգացման միտումների առումով, մյուս կողմից իբրև ժամանակակցի վկայություն՝ տվյալ բառի գործածության վերաբերյալ:

Գրիգոր Տաթևացին իրավական կարգավորումներին նվիրված առանձին աշխատություն չի ստեղծել, սակայն նրա բազմաթիվ աշխատություններում այդ ոլորտի հարցադրումները բավականին պատկառելի թիվ են կազմում: Իհարկե, պետք է հաշվի առնել մի հանգամանք, որ քննվող հասկացությունները անպայմա-

<sup>1</sup> **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), հ. Ա, Ե., 1971, էջ 4:

նորեն անհրաժեշտ է դիտարկել այն ժամանակաշրջանի չափանիշներով, որում նրանք կյանքի են կոչվել:

Բնականաբար, իրավական կարգավորումների հարցում Տաթևացին ավելի քան պահպանողական է գտնվել և փորձել է՝ ելնելով իր ժամանակի խնդիրներից բացատրել նախորդների մոտեցումները և ըստ էության հիմնականում պաշտպանել դրանք՝ միաժամանակ անդրադառնալով նաև այն խնդիրներին, որոնք արդիական են եղել, ուստի նրա հարցադրումները տեղեկություն են տալիս նաև խնդրի առկայության և հեղինակի տեսակետի մասին այդ հարցի առնչությամբ:

### **Իրավական հասկացությունների իմաստային խմբեր<sup>2</sup>**

Դիտարկվող բառերը առաջին հերթին բաժանվում են երկու մեծ խմբի. հոգևոր ոլորտ և եկեղեցական կանոններ, հասարակական ոլորտ և սովորության իրավունքներ: Սրանց բաժանումն իհարկե ներկայացվում է պայմանականորեն, քանի որ միջնադարում կարգավորումները բխեցվում էին հիմնականում եկեղեցական կանոններից: Օրինակ՝ միայն *օրենք* բառը «Գիրք հարցմանց»-ում հեղինակն օգտագործել է ավելի քան երեք հարյուր անգամ՝ և՛ այն իմաստներով, որոնցով դրանք հանդիպում են կանոնական փաստաթղթերում ու մատենագրության մեջ, որոնք հիմնականում նկատի ունեն Եկեղեցու սահմանած կանոնները, և՛ սովորության իրավունքները քննելիս:

Եվ այնուամենայնիվ, քանի որ Տաթևացու աշխատությունները հատկապես նպատակաուղղված են եղել Հայոց Եկեղեցու իրավունքի պաշտպանությանը, դավանաբանական խնդիրներում նրա իրավացիության ապացուցմանը, ուստի հոգևոր ոլորտի իրավա-

---

<sup>2</sup> Ակադ. Գ. Ջահուկյանը հնդեվրոպական բառապաշարը քննելիս այն բաժանում է 22 իմաստային խմբերի: Իմաստային դաշտերը ներկայացնելիս օգտագործել ենք հեղինակի «Իմաստային խմբեր» բառակապակցությունը: **Գ.Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 50:**



կան հարցադրումները գերիշխող են, և այս ոլորտի հասկացությունները թվաքանակով ավելի մեծ են: Օգտագործվող հասկացությունների մեջ ենթախումբ են կազմում հերձվածողությունը բնութագրող սահմանումները:

### **Հոգևոր ոլորտ և եկեղեցական կանոններ**

Ընդհանուր առմամբ՝ «Գիրք հարցմանց»-ում հոգևոր ոլորտի իրավական հարցադրումները հետևյալ հիմնական հասկացությունների շուրջ են. *օրէնք, իրաւունք, դատաստան, դատաւոր, դատախազ, քննութիւն, սպանանել, վրէժխնդիր լինել, հատուցում, սովորութիւն, բռնադատել, անարգել, յափշտակել, յանցանք, պատիժ, տուգանք, խոստովանութիւն, վկայ, վկայութիւն, հայեոյութիւն, մեղանչել, քննել, արդարանալ, գոջում, հատուցում, կոնդակ, կանոն, կարգ, կամք, երկիւղ, հարկ ի վերայ (հարկադրանք), դատաւոր, արդարացուցանել, որդեգրութիւն, օրէնսդիր, օրինադրել, օրինադրութիւն:*

Ինչ նկատի ունի հեղինակը *օրէնք, օրինադրել, կանոն, կարգ* և մյուս հիմնական իրավական հասկացությունները կիրառելիս, և ինչպես են մեկնում այդ բառերը գրաբարի բառազանձը ներկայացնող բառարանները: Տաթևացին *օրէնքը* սահմանում է հետևյալ կերպ. «Նախ՝ զի օրէնքն կանոն և սահման է առնելեաց և ոչ առնելեաց: Երկրորդ՝ օրէնքն է ի հարկի և պատուիրանը կամաց»<sup>3</sup> (ընդժ.՝ Ս.Գ.): Բառի բացատրությունը «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» հեղինակները տալիս են հետևյալ կերպ. «Կարգ և կանոն՝ սահմանեալ յաստուծոյ կամ ի մարդկանէ. կրօնք. հաւատք. դէն. աւանդութիւնք. իրաւունք. պատուիրանք»<sup>4</sup>:

Հրաչյա Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ում կարդում ենք. «օրէնք, կարգ և կանոն, հին աւանդութիւն, իրաւունք, օրէնսգիրք» (ՀԱԲ, հ.Դ, 1979, էջ 617): Համեմատելով Տաթևացու և երկու բառարանների բացատրությունները՝ կարող ենք արձանա-

<sup>3</sup> Գրիգոր Տաթևացի, *Գիրք հարցմանց*, Կ.Պոլիս, 1729, էջ 340:

<sup>4</sup> Գ.Աւետիքեան, Խ. Միւրմելեան, Մ.Ազերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի* (այսուհետև՝ ՆՀԲ), հ. 2, Վենետիկ, 1837, էջ 1032:

գրել հետևյալը. բացատրությունները բառարանային իմաստով հիմնականում համընկնում են, սակայն Տաթևացու բացատրությունը այս պարագայում՝ իրավական իմաստով, ավելի ճշգրիտ է, ըստ որի՝ օրենքը «կանոն և սահման է առնելեաց և ոչ առնելեաց», այսինքն՝ կանոն և սահման՝ կատարելու կամ չկատարելու ինչ-որ բան, որը կարևոր բնութագրում է օրենքի համար: Եվ երկրորդ դիտարկումը՝ «օրենքն է ի հարկի և պատուիրանը կամաց» սահմանման մեջ էլ նշվում է օրենքի պարտադրող բնույթը, որը դարձյալ կարևոր բնութագրում է օրենքի համար (ընդգծ.՝ Ս.Գ.):

*Օրինադրել* բառի պարագայում, եթե բառարանները բացատրում են «օրենս դնելու, սահմանելու» իմաստով, ապա Տաթևվացին այն օգտագործում է «կարգ սահմանելու» իմաստով, սակայն պարտադիր կատարման պայմանով. «Այլ Մովսէս *օրինադրեաց* ի թիւքն առնել կրկին փողս արծաթի և կոչեաց զնոսա փողս ազդեցութեան. որպէս դեռնս զոն ի դրունս թագաւորաց կրկին փողք»<sup>5</sup>. Մովսէսը փողեր հնչեցնելը դարձրել է պարտադիր, ուստի հեղինակն օգտագործում է ոչ թե *կարգ սահմանեց* բառակապակցությունը, այլ *օրինադրեաց* բառը, որը հուշում է գործողության պարտադիր բնույթ ունենալու մասին:

Ստուգաբանելով *կանոն* բառը՝ Տաթևացին բերում է *կանոն, քանոն, ուղղութիւն, կարգ, օրէնք* հոմանիշների շարքը. «Ստուգաբանութեամբ կոչի կանոնն քանոն. այսինքն ուղղութիւն և կարգ և օրէնք»<sup>6</sup>, այսինքն՝ ըստ հեղինակի օրենքը նաև կարգ է, ուղղութիւն և կանոն: Եվ իսկապէս բոլոր այս իմաստներով էլ հանդիպում ենք *օրէնք* բառի կիրառությանը, այդ թվում՝ նաև ինքնատիպ կիրառություններ, ինչպէս օրինակ, *օրէնք դայեկել, օրինօք պարսպել*: Առաջին դեպքում հեղինակը, խոսելով նախորդների մասին, դրվատում է նրանց հոգատար վերաբերմունքը օրենքների նկատմամբ, այդ թվում նաև՝ *օրէնք դայեկել բառակապակցությունը*՝ նկատի ունենալով օրենքների պահպանումը, համալրումը («դայեկել» ի-

<sup>5</sup> Գրիգոր Տաթևացի, *Գիրք հարցմանց*, էջ 618:

<sup>6</sup> Գրիգոր Տաթևացի, նշվ.աշխ., էջ 538:

մաստով՝ սնուցումը, խնամելը, հոգածություն հանդես բերելը)։ «Օրէնք դայեկեցին։ Օրինակք նկարագրեցին։ Տեսանօր կանխաճանեցին։ Մարգարէք նախապատմեցին։ Չայնքն հնչեցին։ Բանքն ճշմարտեցին»<sup>7</sup> (ընդգծ.՝ Ս.Գ.)։ Երկրորդ դեպքում խոսքը Եկեղեցու պաշտպանության մասին է. «...գառաքեալսն զհայրապետսն և զվարդապետսն, որք *օրինօք պարսպեն* զեկեղեցի, և հանապազ ուսուցանեն զդպրութիւն»<sup>8</sup>։

Տաթևացու կարծիքով մեծ է նաև խոսքի, հորդորի, պատվիրանի դերը, ոչ պակաս քան օրենքինը, որովհետև օրենքն այնուամենայնիվ, հարկադրանք է, իսկ պատվիրանի կատարումը՝ կամավոր. «Եւ օրէնք՝ տեսոն առ ծառայս։ Իսկ պատուիրանքն՝ բարեկամի առ բարեկամս քաղցրութեամբ. որպէս հօր առ որդիս և եղբօր առ եղբարս։ Դարձեալ՝ օրէնքն և հրամանն հարկ է ի վերայ։ Եւ պատուիրանն ըստ կամաց»<sup>9</sup> (ընդգծ.՝ Ս.Գ.)։

### Եկեղեցական կանոններ

Տաթևացին համակողմանիորեն քննում է եկեղեցական կանոնները, որոնք հիմնականում վերլուծում, մեկնում են «Կանոնագիրք հայոց»<sup>10</sup>-ի սահմանած դրույթները *պատուիրան, արդարանալ, արդարացուցանել, հատուցում, բռնադատել, անարգել, յափշտակել, յանցանք, պատիժ, տուգանք, խոստովանութիւն, վկա, վկայութիւն, հայհոյութիւն, մեղանչել, քննել, արդարանալ, զղջում, հատուցում, կոնդակ, կանոն, կարգ, կամք, երկիւղ* հասկացությունների շուրջը։

Հետաքրքիր հարցադրումներ ունի Տաթևացին իրավական արգելքի<sup>11</sup> վերաբերյալ՝ մասնավորապէս քահանայագործելու ի-

<sup>7</sup> Գրիգոր Տաթևացի, նշվ.աշխ., էջ 456։

<sup>8</sup> Գրիգոր Տաթևացի, նշվ.աշխ., էջ 449։

<sup>9</sup> Գրիգոր Տաթևացի, նշվ.աշխ., էջ 277։

<sup>10</sup> Կանոնագիրք Հայոց, հ. Ա, աշխ.՝ Վ. Հակոբյանի, Ե., 1964։

<sup>11</sup> Իրավական արգելքի երևույթը ամրագրված է թե՛ միջազգային, թե՛ ՀՀ օրենսդրության մեջ։ Մասնավորապէս, ՀՀ կառավարության 2019թ. 685-Ն որոշումը դատավորի համար որպէս նշանակման խոչընդոտ հաստատել է ֆիզիկական արատների և հիվանդությունների ցանկ. այդ թվում՝ կուրություն, համրություն, խլություն։

րավունքը քննելիս, հատկապես, որ արգելքը բնութագրող հատկանիշները թվարկելիս օգտագործվում են նոր բառեր. «Նախ՝ *կոյրն*, իսկ ի մեզ, որ մտօքն իցէ: Երկրորդ՝ *բեկեալն ի գործոց բարեաց*. Երրորդ՝ *լեզուատն*, որ է անձայնն. որք ոչ ունին զխոստովանութիւն: Չորրորդ՝ *մարմատոտն*. որ կաշին պատառեալ և խոց լինի, նշանակէ զխոց մեղաց: Հինգերորդ՝ *քոսն*. որ յայտնին է: Վեցերորդ՝ *երքունտոտն. սնքնտոտն*. անբուժն է: Եօթներորդ՝ *քաճաւարին, այլամագն* խառնեալ. զանազան բարուց նշանակ: Ութերորդ՝ *թաղասաւորն*. որ թաղիացեալ է միսն ի կաշին և չքերթուի. որ անորիշ է ի խառնակ կենաց: Իններորդ՝ *ականջատն*. որ խուլ է մտօք: Տասներորդ՝ *կրճատն. որ է ազատն*. անամօթն է: Մտասաներորդ՝ *մալեալն, տրեալն*. պակասն արիութեամբ: Երկուտասաներորդ՝ *փօշտանկն*. որ հատեալ է աղիքն և ի դուրս թափեալ. նշանակ հոգեկան ցաւոց ի մարմինն երևեալ: Այլ և ի վերայ այսր, *հիւանդն և գիժն*: Որ մտօքն է մոլի, և մեղօք հիւանդ, չէ ընդունելի»<sup>12</sup>: Ըստ էության, հատվածում բերվում է քահանայագործության արգելքի ցանկը, ըստ որի չեն կարող քահանայագործել նաև *այլամագը, գիժը, սընքնտոտը, տրեալն ու քաճաւարին*:

*Այլամագ* - «Ուրիշ կամ այլ մագ» իմաստով «Միջին հայերենի բառարան»-ը<sup>13</sup> հղում է Գրիգոր Տաթևացուն, այլ բառարաններ չեն վկայում: Տաթևացին բառը բերում է իբրև *քաճավարի* բառի հոմանիշ և երկուսի համար տալիս «զանազան բարուց նշանակ» բացատրությունը, որ նշանակում է «տղամարդուն ոչ հարիր, կնաբարո»:

*Գիժ* - «Խենթ, խելագար, հոգեկան հիվանդ»: ՆՀԲ-ն բերում է «Աշխարհիկ բառք» հավելվածում, ՀԱԲ-ը համարում է «ուշ ժամա-

2019թ. 98-Ն որոշումը հանրային ծառայության անցնելու խոչընդոտների ավելի մեծ ցանկ է հաստատել, որի մեջ «շիզոֆրենիա» և անզամ՝ «Տրամադրության խանգարումներ», «Հոգեկան և վարքային խանգարումներ»:

<sup>12</sup> Գրիգոր Տաթևացի, նշվ.աշխ, էջ 371:

<sup>13</sup> Ռ.Մ.Ղազարյան, Չ. Մ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009, էջ 41:

նակից» ավանդված բառ՝ հղելով Գրիգոր Տաթևացուն: «Միջին հայերենի բառարան»-ը նույնպես հղում է Տաթևացուն:

*Մնթնտ* - «Որքինով, կեղով հիվանդ»: ՀԱԲ-ում բառը տեղ է գտել բացառապես Գրիգոր Տաթևացու բառագործածության հիման վրա:

*Տրեալ* - «Ապականված»: Բառը «տուիչ»՝ իզացող իմաստով «Հայերեն գաւառական բառարան»-ը բերում է Պոլսի բարբառի համար<sup>14</sup>:

*Քածավարի* - «Կնաբարո». ՀԱԲ-ը հղում է Տաթևացուն:

*Աղանդավորության և հերձվածողության* պատճառների վերլուծությանը Տաթևացին անդրադառնում է խիստ հանգամանորեն՝ նյութի քննությունը գրեթե բերելով իրավական դաշտ. որքանով են վտանգավոր հերձվածողների հարցադրումները հասարակության համար, միտումնավոր են արդյոք նրանք սխալվում, թե անգիտակցաբար, ներելի՞ են արդյոք նրանց արարքները, թե՞ աններելի, ո՞րն է նրանց գայթակղվելու հիմնական պատճառը: Իրավական հասկացության արժեք են ձեռք բերում հետևյալ բառակապակցությունները. *թիր կամք, անուղղայս խորհել* (ըստ ՆՀԲ -ի՝ «խոտոր, թիր, մոլոր, անխրատ»), *զանպատշաճս բարբառել, անկասկալ լեզու* («ցոփաբերան, անպարկեշտ խոսող»), *յամբարիշտ գոլ* («անհաշտ, կովարար»), *ներելի մեղք, անթողլի մեղք*:

Մի կողմից, ըստ Տաթևացու, սրանց պարագայում կա անգիտություն. «Նախ՝ վասն նորընծայ հաւատացելոցն. անկիրթ գոլով կատարեալ տեսութեանց»<sup>15</sup> (ընդգծ.՝ Ս.Գ.): Այս դեպքում գործ ունենք ներելի մեղքի հետ. «Ակամայն անգիտութեամբ է, որ ներելի է և թողելի, իսկ կամատրն անթողելին և մահու չափն է»<sup>16</sup> (ընդգծ.՝ Ս.Գ.): Իսկ որ ենթակա են պատժի, սրանք միտումնավոր վնասարարներն են. «Ասեմք, եթէ որք ի հաւատս ունին թիրութիւն. որպէս հերձուածողք և վնասիչք եկեղեցոյ. և որք ի զազիր վարս

<sup>14</sup> **Հ.Աճառեան**, *Հայերեն գաւառական բառարան*, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 1039:

<sup>15</sup> **Գրիգոր Տաթևացի**, նշվ.աշխ., էջ 687:

<sup>16</sup> **Գրիգոր Տաթևացի**, նշվ.աշխ., էջ 385:

պղծեալ են գործովք և վնասեն զինքեանս. և անգեղօք են առ երկոսին. յետ մի անգամ և երկիցս խրատելոյ, որոշեսցին յեկեղեցոյ և պատժեսցին»<sup>17</sup> (ընդգծ.՝ Ս.Գ.):

Հաջորդ հատվածում դատապարտելի արարքները թվարկվում են հոմանիշների շարքով. «Որք գաչս իմաստից յիմանալի ճառագայթիցն խուսափեցին թիւր կամօք, և խոտոր մտօք. գանուղայս խորհելով, և գանպատշաճս բարբառելով. յարձակեալ անկապ լեզուաւ և անդուռն շրթամբք բացեալ յերկինս. ցոպ բերանով ի բարձունս բարբանջելով. և յածեալ ընդ երկրաւ լեզուագարելով. որոց դատաստանն ի բնէ ոչ դատարկանայ և կորուստն ոչ նիւրեացէ»<sup>18</sup> (ընդգծ.՝ Ս.Գ.):

### **Հասարակական ոլորտ և սովորության իրավունքներ**

Իրավական հասկացությունների հաջորդ մեծ խումբը հասարակական կյանքի ամենատարբեր որոքտներից է, որում հեղինակն անդրադառնում է ամուսնական հարաբերություններին, ժառանգականության, իրավունքների, պարտականությունների, ուսման, կրթության և այլ հարցերի:

Բնականաբար, վերը քննված հասկացությունները շրջանառվում են նաև այս խմբում, սակայն անդրադառնանք հատկապես նրանց, որոնք հեղինակային ինքնատիպ կիրառություն ունեն:

Խոսելով հանցանքի այսպես կոչված իրեղեն ապացույցների մասին՝ Տաթևացին նոր բառիմաստով է օգտագործում ակնկալութիւն բառը՝ այն գործածելով ուղիղ իմաստով, այսինքն՝ «այքի առաջ եղած մի բան», որ տեքստում վերածվում է «իրեղեն ապացույցի» հոմանիշի. «Ութերորդ զի ամենայն տեսակք ախտիցն իր մի երևեսցուցանեն մեզ. որպէս գողութիւն զինչս, և պոռնկութիւն զհեշտութիւն. իսկ հպարտութեանն ոչ գոյ ամեննին ակնկալութիւն»<sup>19</sup>(ընդգծ.՝ Ս.Գ.):

<sup>17</sup> Գրիգոր Տաթևացի, նշվ.աշխ., էջ 540:

<sup>18</sup> Գրիգոր Տաթևացի, նշվ.աշխ., էջ 31:

<sup>19</sup> Գրիգոր Տաթևացի, նշվ.աշխ., էջ 562:

Ունենք դատելիք նոր բառը՝ «դատական գործընթացի մասնակից, վկա, դատական կողմեր» իմաստով. բառարանները չեն վկայում. «Զի երեք են դատելիքն՝ մին դատաւորն և ք դատախազքն, պիտոյ է այսինքն **գ** վկայք»<sup>20</sup>:

Հասկացություններ կան, որ արդեն իսկ լայն կիրառություն ստացած իրավական հայտնի հասկացություններ են. «Զայն ցուցանէ, զի մեռանիլն քահանային՝ ազատութիւն էր նոցա, յօրինակ քրիստոսի. յորժամ մեռաւ վասն աշխարհի, ազատեցան մահապարտքն<sup>21</sup>: «Զի քն գեղեցկագոյն ի գերեզմանէն յարութեան քո հասից. և անդատապարտ եղէց յատենի քոյ առաջի հօր և հոգւոյդ սրբոյ»<sup>22</sup>: «Դարձեալ՝ մարդոյս միայն է կարգ կանոնաց, բնութեան, կամաց, և հարկի. իսկ անասնոց միայն բնութեան է»<sup>23</sup>: «Ամբարտաւանութիւն է որ բաղձայ զյատուկ բարձրանալն իւր և անկարգ և անսահման լինի»<sup>24</sup> (ընդգծ. Ս.Գ.):

Տաթևացու կարծիքով մարդն ազատ է ընտրելու իր վարքագիծը. «Ուրերորդ՝ զի ազատ և անձնիշխան կամօք ընտրեն զբարին և խոտեն զչարն և դիւրասերտեալք ի բարին և դժուարաշարժք ի չարն»<sup>25</sup>: Նրանք, ովքեր ընտրում են երկրորդ ճանապարհը, կեղծավոր և խաբեբա են. «Չորրորդ՝ կեղծաւորութիւն է և խաբէութիւն գովելն զչարն և զանիրան»<sup>26</sup>: Մոլագար են նաև ծուլություն, ազահություն, որկրամոլություն, ցանկասիրություն ընտրողները. «Իսկ ծուլութիւն՝ ազահութիւն՝ որկորստութիւն՝ և բղջախոհութիւն՝ միայն առ մոլիսն գտանին»<sup>27</sup>:

Հեղինակն անդրադառնում է նաև այս հասկացությունների ստուգաբանություններին և մեկնություններին. «Ստուգաբանութեամբ կոչի կանոնն քանոն, այսինքն ուղղութիւն և կարգ և օ-

<sup>20</sup> Գրիգոր Տաթևացի, նշվ.աշխ., էջ 742:

<sup>21</sup> Գրիգոր Տաթևացի, նշվ.աշխ., էջ 392:

<sup>22</sup> Գրիգոր Տաթևացի, նշվ.աշխ., էջ 771:

<sup>23</sup> Գրիգոր Տաթևացի, նշվ.աշխ., էջ 275:

<sup>24</sup> Գրիգոր Տաթևացի, նշվ.աշխ., էջ 569:

<sup>25</sup> Գրիգոր Տաթևացի, նշվ.աշխ., էջ 137:

<sup>26</sup> Գրիգոր Տաթևացի, նշվ.աշխ., էջ 325:

<sup>27</sup> Գրիգոր Տաթևացի, նշվ.աշխ., էջ 152:

Գ. Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի իրավ. հասկաց.-ների իմաստային քնն.-ն 15  
րէնք<sup>28</sup>». «Եւ այն զի փայտութեամբ է՝ ըստ հրեական օրինին է. զի կոն-  
դակ և գալարելով էր նոցա գիրն....»<sup>29</sup> (ընդգծ.՝ Ս.Գ.):

### Եզրակացություն

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ չնայած Տաթևացին չունի իրավական ոլորտի վերաբերյալ առանձին աշխատություն, սակայն «Գիրք հարցմանց»-ում իրավական ոլորտի նրա հարցադրումները խիստ հետաքրքրական են և բազմազան, հաճախ՝ ինքնատիպ, իսկ իրավական հասկացությունները պատկառելի թվաքանակ են կազմում, որոնց մեջ ունենք հեղինակային նորակազմություններ:

### Օգտագործված գրականություն

Տաթևացի Գրիգոր, Գիրք հարցմանց, Կ.Պոլիս, 1729:

Աճառեան Հ., Հայերեն գաւառական բառարան, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913:

Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հհ. Ա,Դ, Ե., 1971, 1979:

Աւետիքեան Գ., Միւրմելեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Վենետիկ, 1837:

Կանոնագիրք Հայոց, հ. Ա, աշխ.՝ Վ. Հակոբյանի, Ե., 1964:

Ղազարյան Ռ.Ս., Ավետիսյան Հ.Մ., Միջին հայերենի բառարան, Ե., 2009:

Ջահուկյան Գ.Բ., Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:

**Susanna Grigoryan- Semantic Examination of Legal Concepts Grigor Tatevatsi's "Book of Questions".**- Although Tatevatsi does not have a separate work in the legal field of law , but summarizing the legal concepts

<sup>28</sup> Գրիգոր Տաթևացի, նշվ.աշխ., էջ 538:

<sup>29</sup> Գրիգոր Տաթևացի, նշվ.աշխ., էջ 481:



in the "Book of Questions", we can say that his questions in the field of law are also very interesting and diverse, and a large number of legal concepts allow us to present them in semantic groups. The author among these concepts has new word formations.

**Keywords:** judge, prosecutor, book, law, law, interrogation, custom.

Grigoryan Susanna, PhD of Philology, Institute of Language named after H. Acharyan of NAS RA, Senior Researcher.

**Сусанна Григорян- Семантическое исследование юридических понятий "Книги вопрошений" Григора Татеваци.** - Хотя у Григора Татеваци нет отдельного труда в правовой сфере, но обобщая правовые понятия в "Книге вопрошений", можно сказать, что его вопросы в области права также очень интересны и разнообразны, а большое количество юридических понятий позволяет представить их в смысловых группах. Автор среди этих понятий имеет новые словообразования.

**Ключевые слова:** судья, прокурор, книга, закон, право, допрос, обычай.

Григорян Сусанна, кандидат филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, старший научный сотрудник.

**ՆՈՐ ԲԱՌԻՄԱՍՏՆԵՐ XIII ԴԱՐԻ ԲԺՇԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ  
(«ՔՆՆՈՒԹԻՆ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՑ ԵՒ ՆՈՐԻՆ ՑԱԻՈՑ»,  
«ԲԺՇԿԱՐԱՆ ՁԻՈՑ ԵՎ ԱՌՀԱՍԱՐԱԿ ԳՐԱՍՏՆՈՑ»)**

10.54412/2738277X-2022.1.2-17

**Թաղևոսյան Հասմիկ**

բանասիրական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,  
ավագ գիտաշխատող. hasarm79@mail.ru

**Բանալի բառեր.** նոր բառիմաստ, իմաստափոխություն, միջին հայերեն, բժշկարան, բժշկական տերմին, կազմախոսական բառ, ախտանուն:

**Նախաբան**

XIII դարի բժշկարաններում, ինչպես և միջին հայերեն ավանդված տարբեր սկզբնաղբյուրներում, հանդիպում են գրաբարյան բառերի նոր իմաստներով կիրառություններ: Դրանք առօրյախոսակցական այն բառերն են, որոնք հիմնականում *նմանության գուգորդությանը*<sup>1</sup> կիրառվել են նոր նշանակությամբ: Ուսումնասիրության շրջանակում քննվել են XIII դարի երկու բժշկարաններ. Հերացու հետևորդ, բժշկապետ Գրիգորիսի «Քննութիւն բնութեան մարդոյ և նորին զանազան կրից և պատճառանաց ցաւոց»-ը<sup>2</sup>, որը միջնադարյան հայ բժշկագիտության ընդհանուր ախտաբանության տեսական ու գործնական հարցերին նվիրված եզակի հուշարձան է, և «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ»<sup>3</sup> ձիաբու-

\* Ներկայացվել է 07.05.2022, գրախոսվել՝ 18.05.2022:

<sup>1</sup> Է. Աղայան, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., 1984, էջ 79:

<sup>2</sup> Գրիգորիս, *Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց* (այսուհետև՝ Գր.), Ե., 1962, Ներածություն, էջ XXXVII:

<sup>3</sup> *Բժշկարան ձիոյն առհասարակ գրաստնոյ* (ԺԳ դար) (այսուհետև՝ ԲՁ), աշխատասիրությամբ՝ Բ. Լ. Չուգասզյանի, Ե., 1980:

ժական ձեռնարկը (1296-1298), որ Սմբատ Գ-ի հրամանով կազմել է ասորի բժիշկ Ֆարաջը, իսկ գրելիս նրան օժանդակել է Թորոս քահանան: Միջին հայերենի ամբողջական բառապաշարը ներկայացնելու տեսանկյունից նշված բժշկարանները կարևոր սկզբնաղբյուր են, քանի որ դրանցում արձանագրվում են առաջին անգամ կամ եզակի վկայությամբ գործածված բազմաթիվ բառեր, որոնց մի ստվար մասը բժշկական տերմինի արժեք ունեցող ախտանուններ, դեղանուններ, կազմախոսական բառերն են:

Սույն հոդվածի նպատակն է քննել նշված բժշկարաններում թերևս առաջին անգամ գործածված և բժշկական տերմինի արժեք ունեցող նոր բառիմաստները (25 նոր իմաստ) և ցույց տալ դրանց գործածության հետագա ընթացքը: Հարկ է նշել, որ քննվող բժշկարանների բառապաշարը հիմնականում տեղ չի գտել բառարաններում. «Բժշկարան ձիոյ»-ի բառապաշարը մասամբ է տեղ գտել, իսկ Գրիգորիսի բժշկարանինը չի ընդգրկվել ո՛չ Նոր հայկազեան բառարանում, ո՛չ էլ Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ում, մասամբ արտացոլվել է միայն «Միջին հայերենի բառարան»-ում<sup>4</sup>:

Թեման արդիական է, քանի որ միջին հայերենում արձանագրվում են բժշկական նշանակությամբ մի շարք բառեր, և նշվում է, թե որոնք են այսօր գործածվում:

Կիրառվել են լեզվաբանական ուսումնասիրության համաժամանակյա և տարածամանակյա մեթոդները:

### **Բառիմաստային դիտարկումներ**

Նոր բառիմաստների առաջանալը պայմանավորված է իմաստափոխական տարբեր երևույթներով, որոնց հիմքը հասկացությունների միջև առնչությունն է: Հայտնի է, որ «...միջին հայերենի իմաստափոխության դրսևորումները գլխավորապես պայմանավորված են բառիմաստի ընդլայնման և նեղացման երևույթ-

<sup>4</sup> Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան* (այսուհետև՝ ՄՀԲ), Ե., 2009, էջ 174:

ներով»<sup>5</sup>: Միջնադարյան բժշկարանների պարագայում, քանի որ քննվում է մասնագիտական բառապաշար, պատկերն այլ է. բառերը շարունակում են պահպանել իրենց գրաբարյան հիմնական իմաստները, բայց ձեռք են բերում նաև նոր՝ ավելի նեղ՝ ախտանվան կամ կազմախոսական բառի իմաստներ:

Վերոնշյալ հանգամանքը հաշվի առնելով՝ XIII դարի բժշկարաններում առկա նոր բառիմաստները ներկայացվում են ըստ կիրառվածության՝ առանց իմաստափոխության մեջ ընդունված դասակարգումների<sup>6</sup>:

### 1. Միջին հայերենի բառապաշարում պահպանված իմաստներ

*Բնեն* բառը, որ գրաբարյում ունի «գամ, մեխ», «երկրի առանցք», «շրջանի կենտրոն» իմաստները<sup>7</sup>, առկա է նաև նոր՝ «եղջերային ուռուցք» նշանակությամբ. «Եւ կոծիծն փոքր շտեր են և պինտ գերդ գքար և բոլոր, և ազգ մի, որ ասեն իւր *բնեն*» (Գր., 40):

*Գիղճ (գեղճ)* բառը, որ գրաբարում հայտնի է կազմախոսական «առհասարակ գեղճ» նշանակությամբ, գործածվել է նաև գեղձի մի տեսակի՝ «արցունքագեղձ»-ի իմաստով. «Եթէ մեծ է այս դուտայս, որ անուանի *գիղճ*, նայ արգիլէ զգիջութիւնն»: «Իսկ սայիլանն, որ անուանի դուտայ և հայերեն *գիղճ*» (Գր., 87):

*Գուղճ* բառը «հողի կոշտ կտոր» (ՆՀԲ, հ.1, էջ 579) իմաստից բացի նմանությամբ կիրառվել է իբրև «բերանի կամ այտերի վրա առաջացող կոշտ, ուռուցք». «Եւ այլ ուռից,....որ անուանի *գուղճն*» (Գր., 9): «...և այս *գղձներս* շտեր են, որ արձակին ի լեզուին ի վերնն և կեղեւնին և բերանն, ի թշերն և ի լնդերն» (Գր., 98):

Վերոնշյալ երկու բառիմաստներին անդրադառնալով՝ Ն.Միմոնյանը *գուղճ*-ը կապում է *գեղճ* արմատի հետ և ելնելով սլավոնական լեզուներում այս արմատից ստեղծված բառերի առկայու-

<sup>5</sup> Ռ. Ղազարյան, *Միջին գրական հայերենի բառապաշարը*, Ե., 2001, էջ 81-82:

<sup>6</sup> Է. Աղայան, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, էջ 101-107:

<sup>7</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), հ.1, Վենետիկ, 1836, էջ 486:

Ռ. Ղազարեան, *Գրաբարի բառարան*, հ.1, 2000, էջ 285:

թյունից՝ իրավամբ նկատում է, որ «գեղձ արմատի հետ են կապվում նաև այնպիսի բառեր, որոնք ունեն ընդհանրապես «ուռուցք, կոշտություն, մարմնի վրա առաջացած կոշտ» իմաստները»<sup>8</sup>:

*Գուլ* բառը գրաբարում ունի «փարախ, ախոռ», «գավիթ», նաև «գյուղ» (ՆՀԲ, հ.1, էջ 568) իմաստները, Գրիգորիսի բժշկարանում, որքան էլ զարմանալի է, հանդիպում է կազմախոսական տերմինի՝ «գլխուղեղի փորոք» նշանակությամբ. «Ըղուղն *գունուկ* ունի և յայն գոմն, որ յիշողականն է՝ լցեալ է պաղ և չոր պալղամն: .... Զոր ներգործէ ի յերեք *գունսն* ըղեղանն» (Գր., 5):

*Դուռն* բառը, որ գրաբարում հայտնի է «մուտք», «լեռնանցք», «պալատ» (ՆՀԲ, հ.1, էջ 639-640), միջին հայերենում՝ նաև «գրքի գլուխ, հատված» իմաստներով (ՄՀԲ, էջ 174), «Բժշկարան ձիոյ»-ում կիրառվել է իբրև «կաթնատան»։ «*Դուռն* սկսնու ի սննալ (ԲԶ, 53): «Եւ առջի ակոայքն, որ բուսնի քուռկին, նա *դրուքն* է» (ԲԶ, 54): Բ. Չուգասզյանը նկատում է, որ արաբերենն ունի համանուն *durr* «մարգարիտ» բառ, որ ծագում է *darr* «կաթ» արմատից, որից էլ *durar* «սպիտակ ատամներ» (ԲԶ, 189), և հավանական է համարում, որ վերջինս *դուռն* ձևի հետևությամբ կիրառվել է *ն*-ի հավելմամբ (նույն տեղում):

*Էջք* բառը, որ գրաբարում ունի «իջնելը» և «գրքի երես» (ՆՀԲ, հ.1, էջ 760) իմաստները, Գրիգորիսի բժշկարանում հոգնակիաձև հանդիպում է բժշկական տերմինի երկու նոր նշանակությամբ. առաջինը «իջվածք, ճողվածք» հիվանդության իմաստն է. «Թէ *էջքն*, որ իջեալ է ի յանդամսն՝ արինային լինի» (Գր., 29): Երկրորդ դեպքում գործածվում է կազմախոսական՝ «ողնաշարի ստորին մաս, պոչուկ» իմաստով<sup>9</sup>. «...և եռ ընծայի ի ձեռնի մատունսն, ի յարմրնգունքն և յողնայշարին *էջքն*, որ ի նստոյտեղն է ի մօտ» (Գր., 39):

*Խնձոր(ք)* բառը. «խնձորենու պտուղ» (ՆՀԲ, հ.1, էջ 955) գրաբարյան իմաստից բացի, միջնադարյան բժշկարաններում նմանու-

<sup>8</sup> Տե՛ս Ն. Միրոնյան, *Ստուգարանական և բառարանական դիտարկումներ*, Ե., 2022, էջ 71:

<sup>9</sup> ՄՀԲ-ն սույն *էջք*-ի համար նշում է «վերջույթ» իմաստը, որը թերևս ստույգ չէ:

թյամբ հանդիպում է նաև «կատիկ», «գավակ» իմաստներով<sup>10</sup>: ԲՁ-ում *խնձորք*-ը ունի նաև «կրունկների դուրս ցցված կլոր մասը» նըշանակությունը. «Եւ ...կրնկացն մեծութիւն ու երկու *խնձորքն* կըրընկացն ի դուրս և սմբակացն մեծութիւն սիրուն է» (ԲՁ, 46-47):

*Կացք* բառը գրաբարում «կենցաղավարություն, նիստուկաց» (ՆՀԲ, հ.1, էջ 1078) է նշանակում, իսկ Գրիգորիսի բժշկարանում՝ «կիսահիվանդ վիճակ». «Եւ այս փոփոխիլս գուշակէ ցաւ կամ *կացք*, որ ոչ առողջ է և ոչ դժար տկար» (Գր., 183):

*Կերիչ* // *ուտիչ* բառը գրաբարում ածական է «ուտող, խժող» (ՆՀԲ, հ. 1, էջ 1091) նշանակությամբ, միջին հայերենում գործածվում է նաև գոյականական «միջատ, ուտիճ» իմաստը (ՆՀԲ, հ.1, էջ 1091, ՄՀԲ, էջ 370), իսկ ԲՁ-ում գոյականաբար կիրառվել է «արյունոտ խոց ձիու ազետակում» իմաստով. «Վասն *կերիչ* ցաւն, որ է դաշտիկ» (ԲՁ, 39): «Այլ դեղ այս ցաւուս և այն, որ *ուտիճ* կոչվի» (ԲՁ, 114): «Այլ դեղ *ուտիչ* և այլ խոցերոյ» (ԲՁ, 117): «Յաղագս *ուտիչ* ցաւու» (ԲՁ, 116):

*Հովութիւն* բառը, որ գրաբարում «զովութիւն, ցրտութիւն» իմաստն ունի (ՆՀԲ, հ. 2, էջ 123), ԲՁ-ում կիրառվել է որպէս ախտանուն՝ «ցրտառություն, գայլցավ», «Վասն գայլցաւի, որ է *հովութիւն*»: «Պատճառքն լինի ի հովէ և ի քրտնելոյ, որ դիպի ի յինք քամի որ պաղի, ...նա ի յայս ցաւս ընկնի. և է դժար ցաւ» (ԲՁ, 39, 120):

*Մոռաց* բառը գրաբարում նշանակում է «մոռացում, մոռացություն» (ՆՀԲ, հ. 2, էջ 297), իսկ Գրիգորիսի բժշկարանում իբրև արաբերեն *նսիան*-ի հայերեն համարժեք՝ գործածվել է «հիշողության լրիվ կամ մասնակի կորուստ» (amnesia) բժշկական տերմինի իմաստով. «Եւ նեղն, որ անուանի նսիան, ասեն իւրեանն *մոռաց*» (Գր., 3): «Եւ հետ *մոռացին* լինի յուլութիւն մարմնոյ» (Գր., 59-60):

<sup>10</sup> Ն. Բիւզանդացի, *Բառագիրք ստորին հայերենի ի մատենագրութեանց ժԱ-ժԷ դարուց* (Մարտիրոս Մինասյանի հրատարակությամբ), Ժնև, 2000, էջ 296: ՄՀԲ, էջ 325:

XV դարում Ամասիացին նույն տերմինի համար կիրառել է *մոռացկութիւն* նորակազմությունը, նաև՝ *մոռաց բերել* «հիշողությունը թուլացնել» հարադրությունը (ՄՀԲ, էջ 528):

Պահլավերենից փոխառյալ *նահանջ* բառը<sup>11</sup> գրաբարում երկու իմաստ ունի՝ «հետ քաշվել, ընկրկում» և տոմարագիտական «29 օրյա փետրվար ունեցող տարի» (ՆՀԲ, հ. 2, էջ 402): Գրիգորիսի բժշկարանում *նահանջ*-ը գործածվել է «շնչարգելություն» իմաստով. «Իսկ շնչոյն նեղնալն, որ թարգմանի *նահանջ*, ....և շատն ի յայնորմէ լինի *նահանջն*, որ մաղձն զշնչոյ երակն է լցեալ» (Գր., 108): « ....և ոչ խոցտայ և ոչ ունենայ *նահանջ*, և ոչ հազ» (Գր., 118):

*Նահանջիլ* բայն էլ վերոհիշյալ *նահանջ*-ի տրամաբանությամբ կիրառվել է «շունչը կտրվել» իմաստով. «Եթէ առագաստն ուռենայ .... հազայ, և *նահանջի*» (Գր., 119):

*Տարափ* // *տարապ* բառը գրաբարում ունի «առատ անձրև, ձյուն, կամ ցող» (ՆՀԲ, հ. 2, էջ 856) իմաստը: Գրիգորիսի բժշկարանում առկա է «տևական լուծ, փորլուծություն» նշանակությամբ. «Երբ փորն զամէնն գնայ, ասի իւրն *տարափ*» (Գր., 152): «*Տարապն*, որ է միշտ լուծումն ազգևազգ մաղձերոյ» (Գր., 136):

Ստորև առանձնացվում են այն նոր բառիմաստները, որոնք կիրառվել են միջին հայերենում, բայց տեղ չեն գտել ՄՀԲ-ում:

### ՄՀԲ-ում չարձանագրված նոր բառիմաստներ

*Ախտ* բազմիմաստ գոյականը գործածվել է նոր՝ «կանանց ամսական, դաշտան» նշանակությամբ. «Նշանն այս է, որ ընդունի զովտակն, որ սկսու ու *ախտ* իջնու ի յիրմէ» (ԲՁ, 50): «Եւ հետ այնոր, թէ սկսնու *ախտն*, նա...կուզէ զովտակն» (ԲՁ, 51): Նշված իմաստն առանց աղբյուրը հղելու, իբրև հին նշանակություն՝ վկա-

<sup>11</sup> **Ն. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 3, Ե., 1977, էջ 423:

յում են միայն երեք բառարաններ<sup>12</sup>: Եվ ահա այդ հին նշանակությունն արձանագրվում է XIII դարում՝ ԲԶ-ում:

*Թուլութիւն* բառը Գրիգորիսը կիրառել է «պարալիզ, լուծանք» տերմինի իմաստով՝ իբրև արաբերեն *istrdā' ըստըրիսայ*-ի բառացի թարգմանություն (տե՛ս Գր., 223). «...նա այրն է գնեղն, որում ասեն ըստըրիսայ, որ է *թուլութիւն*. Եթէ *թուլութիւնն* յերեսն լինի՝ նայ ասեն իւր փելիճ ու լախուա» (Գր., 69):

*Լուսայմուտ* բառը, որ գրաբարում նշանակում է «պատուհան, լուսանցոյց» (ՆՀԲ, հ. 1, էջ 898), Գրիգորիսի բժշկարանում «աչքի բիբ» իմաստն ունի. «զի լուսոյն տեսանելն ի յինքն կայ և ինքն *լուսայմուտ* է և այս *լուսայմուտս* ժամ կայ արձակնայ, և ժամ կայ որ նեղնայ» (8): «Եւ նեղութիւն *լուսաստիւն* լինի ի բնական» (Գր., 83):

*Նեղ* ածականը գրաբարում ունի «անձուկ», «նեղեալ», նաև «նեղություն» իմաստները (ՆՀԲ, հ. 2, էջ 410), Գրիգորիսի բժշկարանում առավել հաճախ կիրառվում է «հիվանդություն» նշանակությամբ. «Եւ այս երկու *նեղս* մուխատրայ են և վնասակար և մահաբեր» (Գր., 57): «Եւ այս *նեղոյս* նշանն՝ աչից խորիլն, ...և նօսութիւն մարմնոյն» (Գր., 67): «Վասն սրտին *նեղեղոյն* պատճառացն և նշանացն» (Գր., 119):

Նույն նշանակությամբ հանդիպում է նաև ածանցավոր *նեղութիւն* գոյականը. «Եւ այս շարժունքս...գուշակէ *գնեղութիւն*, որ անուանի սապաթ» (Գր., 8): «...վասն շարժողական երակաց նշաննի, որ ցուցանեն *նեղութիւն* մարմնոյն» (Գր., 3): «...մարդիկ եղեն կարօտ տգրկի վասն իւրեանց *նեղութեանց*» (Գր., 47):

*Ուռից* (գրբ. ուռոյց) բառը Գրիգորիսի բժշկարանում «ուռուցք, ելունդ» (ՆՀԲ, հ. 2, էջ 554) գրաբարյան իմաստից բացի գործածվել է նաև «բորբոքում» նշանակությամբ. «...երկու նուշ, նա իւրեանց նեղն *ուռից* է, որ ի տաքութենէ լինի» (Գր., 102): «Եւ ցաւ, որ պատա-

<sup>12</sup> *Առձեռն բառարան հայկազնեան լեզուի*, Վենետիկ, Ս. Ղազար, 1865, էջ 7: **Ս. Գաբամաճեան**, *Նոր բառգիրք հայերէն լեզուի*, Կ. Պօլիս, 1910, էջ 11: **Ստ. Մալխասեանց**, *Հայերէն բացատրական բառարան*, հ. 1, Ե., 1944, էջ 21:



հի լընդացն և ատամացն մսին, նայ *ուռիցն* է, և իւր նշանն այն է, որ լինոքն և ատամունքն յոլով ցաւի» (Գր., 101):

## 2. Արդի հայերենի բացատրական բառարաններում ամրագրված իմաստներ

*Անդամ* բառը, որ գրաբարում նշանակում է «մարմնի մաս» և «մարմին» (ՆՀԲ, հ.1, էջ 130), ԲՁ-ում կիրառվել է իբրև կոնկրետ մարմնի մաս՝ «ազդր, ազդրոսկր»։ «Եւ ազետկուցն միսն, որ կայ յետսն *անդմացն*, նա լինի հաստ և պինդ» (ԲՁ, 47): «Կենդանու ազդր» իմաստն ունեն Ղարաբաղի և Նոր Ջուղայի բարբառները<sup>13</sup>, իսկ արդի հայերենում ամրագրվել է «արտաքին վերջույթ» իմաստը<sup>14</sup>։

*Թույթ* փոխառյալ բառը (ասոր.)<sup>15</sup> թթենու պտղի նմանությամբ XIII դարի երկու բժշկարաններում էլ գործածվել է նոր՝ «պալար, ուռուցք» իմաստով. «Եւ որ *թույթ* անուանի, նա իւր ընծայիլն ի մորթին լինի և երկնայ ի յամէն տեղ, ...և է թույթ նման» (Գր., 43-44): «Ի յորտեղ, որ ելնէ ի մարմինն թույթ, առ իմնադիա կաւ...ու աւծէ բժշկի» (ԲՁ, 113): Նկատենք, որ *թույթ*-ի վերոհիշյալ իմաստը պահպանվել է հայերենի բարբառներում<sup>16</sup> և ամրագրվել է արդի հայերենի բացատրական բառարանում «լեզվի ծայրին ելած կոշտ պալար» իմաստով<sup>17</sup>։

*Նուշ* բառը գրաբարում հայտնի է «նշենու պտուղ» (ՆՀԲ, հ. 2, էջ 452) իմաստով, իսկ Գրիգորիսի երկում այն նաև բժշկական տերմին է՝ «նշագեղձ» իմաստով. «Եւ այս Բ(2) խոյլս, որ անուանեցաւ երկու *նուշ*, նայ իւրեանց նեղն ուռից է, որ ի տաքութենէ լինի: Բ *նուշ*, որ հաստատեալ են ի խոչակին յաջ դեհն և ի ձախն, և այս Բ *նուշս* ուռենան՝ արգելոյն զկերակուն և ընպելին» (Գր., 102): Հարկ է նկատել որ *նուշ*-ը, պահպանելով «նշագեղձ» իմաստը, իբրև կազ-

<sup>13</sup> Հայոց լեզվի բարբառային բառարան, հ.1, Ե., 2001, էջ 56:

<sup>14</sup> Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, էջ 51:

<sup>15</sup> ՀԱԲ, հ. 2, Ե., 1973, էջ 202:

<sup>16</sup> Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 2, Ե., 2002, էջ 139:

<sup>17</sup> Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, էջ 461;

մախոսական տերմին՝ ամրագրվել է արդի հայերենի բառապաշարում *նշիկ* ձևով (նշվ. բառ., էջ 1078):

*Շիտ (շիթ)* բառը գրաբարում նշանակում է «կաթիլ» (ՆՀԲ, հ. 2, էջ 477), իսկ միջին հայերենում նաև՝ «բիծ. պուտ» (ՄՀԲ, էջ 595): XIII դարի բժշկարաններում *շիտ*-ն ավելի հաճախ կիրառվել է «մաշկի կարծր հանգույց, պալար» իմաստով. «Եւ կոծիծն փոքր *շտեք* են և պինտ գերդ քար»: «Եւ այլ *շտեք*, նա լինի մեծ մեծ *շտեք* ցամաք կամ շարաւով» (Գր., 40): «*Շտեք* ելնէ ի բերանն ու չգայ հոտ» (ԲԶ, 148): Հ. Աճառյանը նշված իմաստի համար հղում է Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ը (ՀԱԲ, հ. 3, էջ 520) (XIV դ.), սակայն բառն առկա է ավելի վաղ՝ XIII դարի բժշկարաններում: Կիրառվելով նաև բարբառներում<sup>18</sup> *շիտ*-ն ամրագրվել է արդի հայերենի բացատրական բառարանում իբրև բժշկական տերմին<sup>19</sup>:

### Եզրակացություն

XIII դարի երկու բժշկարաններից առանձնացված 25 նոր բառիմաստները բնորոշ են միջին հայերենին և պահպանվել են վերջինիս բառապաշարում: Դրանցից վեցը տեղ չեն գտել ՄՀԲ-ում: Քննված բառերից պահպանվել և արդի հայերենի բացատրական բառարաններում ամրագրվել են միայն չորսը՝ *անդամ*, *թուլթ*, *նշիկ* (*նուշ*), *շիտ*, որոնցից երեքը (բացի *նուշ*-ից) գործածվում են նաև բարբառներում:

### Օգտագործված գրականություն

Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:  
 Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984:  
 Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հհ. 2, 3, Ե., 1973, 1977:

<sup>18</sup> *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ. 4, Ե., 2007, էջ 442:

<sup>19</sup> Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, էջ 1109:

Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, Ս. Ղազար, 1865:

Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ (ԺԳ դար), աշխատասիրությամբ՝ Բ. Լ. Չուգասյանի, Ե., 1980:

Բիւզանդացի Ն., Բառագիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց (Մարտիրոս Մինասյանի հրատարակությամբ), Ժնև, 2000:

Գաբամաճեան Ս., Նոր բառգիրք հայերէն լեզուի, Կ. Պօլիս, 1910:

Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց, Ե., 1962:

Հայոց լեզվի բարբառային բառարան, հհ.1, 2, 4, Ե., 2001, 2002, 2007 : Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերէնի բառարան, Ե., 2009:

Ղազարեան Ռ., Գրաբարի բառարան, հ. 1, Ե., 2000:

Ղազարյան Ռ., Միջին գրական հայերէնի բառապաշարը, Ե., 2001:

Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, հ. 1, Ե., 1944:

Նոր բառգիրք հայկազնեան լեզուի, հհ.1-2, Վենետիկ, 1836-37:

Սիմոնյան Ն., Ստուգաբանական և բառաքննական դիտարկումներ, Ե., 2022:

**Tadevosyan Hasmik - New Lexical Meanings in the 13-th Century Medical Books ("Analysis of the Nature of Man and His Ailments", "Horses' Cures Book").** - This article discusses new lexical meanings (25 meaning), which were probably used for the first time in the 13-th century Medical Books to enrich the Middle Armenian vocabulary. These words were used with the medical term value as a pathological or anatomical words, meanwhile preserving the basic meanings of Grabar. Only four of them, being used, in Middle Armenian and dialects were preserved and fixed in the Modern Armenian vocabulary. Six of them didn't find place in the "Dictionary of Middle Armenian".

**Keywords:** new lexical meaning, semantic change, Middle Armenian, medical book, medical term, anatomical word, disease name.

---

Tadevosyan Hasmik, PhD of Philology, Institute of Language named after H. Acharyan, of NAS RA, Senior Researcher.

**Тадевосян Асмик - Новые лексические значения в лечебниках XIII века ("Анализ природы человека и его недугов", "Лечебник лошадей").** - В данной статье рассматриваются новые лексические значения (25 значений), которые, вероятно, впервые были использованы в лечебниках XIII века, обогатив словарный запас среднеармянского языка. Эти слова, сохраняя основные значения грабара, параллельно употреблялись со значением медицинского термина, как патологические или анатомические слова. Только четыре из них, будучи использованными в среднеармянском языке и диалектах, были сохранены и зафиксированы в словаре современного армянского языка. Шесть из них не были включены в "Словарь среднеармянского языка".

**Ключевые слова:** новое лексическое значение, изменение значения, среднеармянский язык, лечебник, медицинский термин, анатомическое слово, название болезни.

Тадевосян Асмик, кандидат филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, старший научный сотрудник.

**ԲԱՌԱԲԱՐԴՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ  
ԼԵԶՎԱՍՏՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ  
ՀԱՄՇԵՆԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ\***

10.54412/2738277X-2022.1.2-28

**Խաչատրյան Հասմիկ**

բանասիրական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,  
ավագ գիտաշխատող. khachhasmik@yahoo.com

**Խառատյան Մելանյա**

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,  
ավագ լաբորանտ. kharatyanmelanya@gmail.com

**Բանալի բառեր.** բառաբարդում, վերլուծական բարդություն, համադրական բարդություն, անվանական հարադրություն, բարբառային հայերեն, նկարագրական բառակաղապար, կրկնավոր հարադրություններ:

**Նախաբան**

Յուրաքանչյուր բարբառային միավոր, ունենալով գրական հայերենի և խոսակցական հայերենի բառապաշարային ընդհանրություններ, ունի նաև առանձնահատկություններ: Հայոց լեզվի բառապաշարի յուրահատուկ և ուշագրավ մասն է բարբառային բառամթերքը:

Հայ բարբառագիտությանը վերաբերող աշխատություններում բարբառային բառապաշարը ընդհանուր առմամբ քննության չի ենթարկվել<sup>1</sup>: Հ. Աճառյանը բարբառի քննության համար կարևոր

\* Ներկայացվել է 04.05.2022, գրախոսվել՝ 27.05.2022:

<sup>1</sup> Հ. Աճառյան, *Հայ բարբառագիտություն, Էմինեան ազգագրական ժողովածու*, հ. Ը., Մոսկուա-Նոր Նախիջեան, 1911: Ա. Ղարիբյան, *Հայ բարբառագիտություն*, Ե., 1953 և այլն:

է համարում բառարանի կազմումը՝ յուրաքանչյուր բարբառի բառապաշարում առանձնացնելով բնիկ, գավառական և օտար բառերը: Գ. Ջահուկյանը, անդրադառնալով բարբառային բառապաշարին, գտնում է, որ հայ բարբառագետները քիչ ուշադրություն են դարձրել բառային զուգաբանություններին: Ըստ գիտնականի՝ «Հ. Աճառյանի աշխատություններից հետո ավանդույթ է ստեղծվել բարբառագիտական գործերին կցելու գրաբարից բարբառ բառարաններ և երբեմն էլ տալու բարբառային բառարաններ, կան զգալի թվով բարբառագիտական բառարաններ, բարբառների ուսումնասիրության մեջ տեղ է տրվում նաև բառապաշարի (հատկապես իմաստափոխության, փոխառությունների, ավելի քիչ՝ բարբառային բառերի) քննությանը, բայց, այս բոլորով հանդերձ, բառապաշարի բնագավառում զուգահեռներ քիչ են անցկացվում, և այդ զուգահեռները բարբառների մերձավորության աստիճանը պարզելու համար քիչ են օգտագործվում»<sup>2</sup>: Գ. Ջահուկյանը, սակայն, բարբառային բառապաշարը քննում է բարբառների բառային հիմնական տարբերությունները վեր հանելու նպատակադրումով:

Սույն հոդվածում մեր նպատակն է ներկայացնել Համշենի բարբառի բառապաշարի՝ յուրահատուկ լեզվամտածողությամբ պայմանավորված առավել ուշագրավ բաղադրյալ բառանունները:

Թեմայի ուսումնասիրության հարցում կարևոր ենք համարում Հ. Աճառյանի «Քննություն Համշենի բարբառի» աշխատությունը, որում անդրադարձ է կատարվում բարբառում գործառող մի շարք բարդ բառերի<sup>3</sup>: Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով հավաքած նյութերը, ինչպես նաև Համշենի բարբառին վերաբերող բանահյուսական նմուշները և բառարանները ևս մեծապես օգնել են այս աշխատանքը կատարելիս:

Թեման արդիական է, քանի որ ժամանակն է գիտականորեն առավել հանգամանալից անդրադառնալու Համշենի բարբառի բա-

<sup>2</sup> Գ. Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 144-145:

<sup>3</sup> Հ. Աճառյան, *Քննություն Համշենի բարբառի* (այսուհետև՝ ՔՀԲ), Ե., 1947, էջ 176-177:

ռակագմությանը: Առաջին անգամ փորձ է արվում քննելու բարբառում առկա բառաբարդումների տեսակները:

Հետազոտությունն իրականացվել է լեզվաբանության մեջ կիրառվող համաժամանակյա և տարաժամանակյա մեթոդներով:

### **Բառակագմական դիտարկումներ**

Ինչպես հայերենի այլ բարբառների, այնպես էլ Համշենի բարբառին բնութագրական են հայերենին հատուկ և՛ վերլուծական, և՛ համադրական բառաբարդումները: Վերլուծական բարդություններից առանձնացրել ենք ինքնատիպ և հետաքրքիր անվանական որոշ հարադրություններ:

Անվանական կայուն բառակապակցությունների յուրօրինակ նմուշներ են արձանագրված կրոնափոխ համշենահայերի բառապաշարում: Որպես համշենահայերի պատկերավոր լեզվամտածողության վկայություն՝ դիտարկել ենք *ձվածեղ* հասկացության *հալած հավգիտ* հարադրությունը: Ի դեպ, Աբխազիայում, Մոչխում, Կրասնոդարում ապրող համշենահայերի խոսվածքներում գործածվում է *ձրվածեղ*-ը, իսկ ըստ Ս.Վարդանյանի՝ *ձվածեղ* բառը կրոնափոխ համշենահայերին անձանոթ է, նրանք գործածում են *հավգիտ հալուշ*, *հալած հավգիտ* նկարագրական հարադրությունները: Ասում են նաև՝ *յաղի մէջ հավգիթ էփեց*, *հալեց*: Օրինակ՝ Գայնանան էնիշտային համա *հավգիթ հալեց* (Ձոքանչը փեսայի համար ձվածեղ արեց)<sup>4</sup>: Հարկ է փաստել, որ արևմտյան մի շարք բարբառներում ևս, նույն աշխարհընկալմամբ պայմանավորված, արձանագրված են *ձվածեղ* հասկացության *հալած հավգիթ* նկարագրական բառակաղապարի հոմանիշային այլ տարբերակներ: Օրինակ՝ Ջեյթունում, Մարաշում՝ *դարգոց հավգիթ*, Սվեդիայում (Խըտըրբեկ)՝ *դարգուձ հավգետ*, Խարբերդում՝ *դարագ հավգիթ*, Քեսաբում՝ *դերգուձ հավգույտ*, իսկ Սասունի խոսվածքներում՝ պարզապես *դարագ* տարբերակով: Որոշ դեպքերում դրանք արտահայ-

<sup>4</sup> Ս. Վարդանյան, *Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը* (այսուհետև՝ ՎՀԲԵ), Ե., 2009, էջ 116, 298:

տում են բառային նրբինաստներ: Այսպես՝ Եղեսիայի Գարմունց գյուղի խոսվածքում *մրղլահավգիթ* են անվանում այն ձվածեղը, որի դեղնուցն ամբողջական է, իսկ հարած ձվով և այլուրով ձվածեղը *դաբագ հավգիթ*-ն է<sup>5</sup>:

Անվանական հարադրություններից առանձնացրել ենք նաև *բամբասանք* հասկացությանն առնչվող՝ Համշենի բարբառի յուրահատուկ լեզվամտածողությամբ ձևավորված մի շարք ուշագրավ բարդություններ:

Ինչպես գիտենք, *բամբասանք* բառը բաղադրված է գրաբարյան *բամ* բայի ներկա ժամանակի առաջին և երկրորդ դեմքերի բայաձևերից: Նույն սկզբունքով էլ արևմտահայ բարբառներում *բամբասանք* հասկացությունը դրսևորված է *ասել* բայի խոնարհված ձևերով, որոնք կազմում են *ըսի ըսավ* կրկնավոր բարդությունը<sup>6</sup>: Համշենի բարբառում որպես *բամբասանք* հասկացության նշանակելի գործածվում է նաև *ասել* բայի երկու ժամանակներից բաղադրված *ասեկոսե* բառանունը՝ *ասագասս, ասեգոսե* հնչաձևերով՝ Տըրգիծըս *ասեգոսեի* վարբեդ ան, նաև բայական հարադրությամբ *ասեկոս ընուշ* (ՀԲԱ նյութեր, տետր հ. 52):

Համշենի բարբառի յուրօրինակ լեզվամտածողության դրսևորումներից է նաև *բամբասանք* հասկացության *ասել* բայի հարակատար դերբայով ձևավորված *ասած-ասած* ուշագրավ կրկնավոր բարդությունը: ՀԲԱ ծրագրով արված գրանցումներում *բամբասել* բայանունը արձանագրված է *ասած-ասած ընուշ* բայական հարադրությամբ (Հայսը դալեճը *ասած-ասած* գրներ՝ Հարսը տալոջը բամբասում էր), մեկ այլ խոսվածքում՝ *ասած ընուշ* (Հայսը դալեճ վըրըն *ասած գրներ*) (ՀԲԱ նյութեր, տետրեր 252, 336, 39, 187):

<sup>5</sup> Տե՛ս Հայերենի բարբառագիտական ատլասի նյութեր հավաքման ծրագրով արված գրանցումներ (այսուհետև՝ ՀԲԱ ծրագիր), տետրեր հհ. 110, 337, 280, 199, 347, 298, 121:

<sup>6</sup> Ռ. Մաքսպետոյեան, *Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարան*, Ե., 2011, էջ 107:



Բարբառային հայերենում շատ հաճախ բաղադրյալ բառերը կարող են դրսևորվել հոմանիշ կազմիչներով: Այսպես՝ Համշենի բարբառում *բամբասանք* հասկացության դիմաց գործածվում է նաև *խօս-խօրատա* հոմանիշային անվանական հարադրությունը (ՀՖԱ նյութեր, տետրեր 39, 252, 336), որի *խորաթա* բաղադրիչը փոխառություն է հունարենից < *χωρατό, χωρατά* «կատակ, ծիծաղեցնելու համար արված զրույց»<sup>7</sup>: Հարկ է նշել, որ արևմտյան բարբառներում գործածվող *խօս-խօրատա* բառանունը դրսևորված է հիմնականում «խոսք, խոսակցություն, զրույց կատակ, տարածայնություն» նշանակություններով, իսկ Համշենի բարբառում այն փոխաբերացմամբ ձեռք է բերել նաև «բամբասանք» իմաստը (Ախճկօնը վերըն *խօս-խօրատա* ըղված *յի՛ Աղջկան բամբասել են*):

Համշենի բարբառում «ասեկոսե» նշանակությամբ արձանագրված է նաև *դեղեմ դեղի* անվանական հարադրությունը, որը, ըստ Բ. Թողաքյանի, բառացի նշանակում է «պապս ասաց»<sup>8</sup>: Կարծում ենք սակայն, որ *դեղեմ դեղի* կազմությունը ոչ թե «պապս ասաց», այլ հայերենում առկա *բամբասել*-ի համաբանությամբ՝ «*ես բամ, դու բամ*», ձևավորված բարդություն է և ստեղծվել է ոչ թե թուրքերեն, այլ հենց թուրքախոս հայերի միջավայրում, և նախնական ձևը պիտի լինի՝ *dedim* («ես ասացի», որովհետև թուրքերենում գործում է հնչյունների ներդաշնակության օրենքը՝ e-i>e) *dedi* («նա ասաց»), հմմտ.՝ թուրք. *dedik* «1. Ասվածք (խոսք), 2. Առած.՝ ասածս ասված է», *deyim* «ասացվածք»<sup>9</sup>:

<sup>7</sup> G. Meyer, Türkische Studien: Die griechischen und romanischen Bestandteile im Wortschatze des Osmanisch-Türkischen, *kebikeç yayınları*, Ankara, 1998, s. 90-91, J. Schallert, M. L Greenberg., The Prehistory and Areal Distribution of Slavic \**сѣлѣти* 'Speak', *Slovenski jezik Slovene Linguistic Studies*, Ljubljana-Lawrence, N6, 2007 p. 24. Կարելի է կարծել, որ այն վաղ շրջանի հունարեն բանավոր փոխառություններից է, որ վկայվում է նաև միջին հայերենում (տե՛ս Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009, էջ 329):

<sup>8</sup> Բ. Թողաքյան, *Նշխարներ Համշենի և Տրապիզոնի բանահյուսության*, Ե., 1986, էջ 218:

<sup>9</sup> Z. Korkmaz, *Gramer terimleri sözlüğü*, Ankara, 1992, s. 43. Թյուրք. «բամբասել» իմաստով գործածվում է **dedikodu** «բամբասանք, խոսակցություն, ասեկոսե» (տե՛ս

Համշենի բարբառի գրեթե բոլոր խոսվածքներում *կրիա* հասկացությունը դրսևորված է թուրքերեն *թօսպաղու* (tosbağa) բառանվամբ: Կրոնափոխ համշենահայերի բառապաշարում, սակայն, արձանագրված է *կրիա*-ի *գափագլի կօրտ* կամ *քափագլի քօրդ* նկարագրական անվանական հարադրությունը, այսինքն՝ *կրիան* «կափարիչ (կափաղ>գափագ) ունեցող գորտն» է (Դադաքը *գափագլի կօրտ* փեռնաձ ունին՝ Տղաները կրիա էին բռնել. *ԿՀԲԵ*, էջ 105): Հարկ է նշել, որ թուրքերենն ունի նաև *kaplumbağa* (< *kaplı* «ծածկված, խեցեպատ» + *bağa* «գորտերի և կրիաների ընդհանուր անուն», այլն՝ «կրիա, կրիայի պատյան») բառը<sup>10</sup>:

Համշենի բարբառի խոսվածքներում *լորտու* բառանունը դրսևորված է *լօղու* հնչաձևով, որը դիտարկված է որպես *խխունջ* հասկացության բառանուն (Լըմլի դեղօնը շաղ *լօղու* գըլլի՝ Խոնավ տեղերում շատ խխունջ է լինում): *Լորտու*-ն, վկայված լինելով դեռևս հին մատենագրության մեջ, գործածվել է որպես «մի տեսակ անվնաս օձ»: Բառի բուն նշանակությունն է «*լորձունքոտ, շողիքոտ, լպրծուն*». ծագում է *լորտ* առանձին անգործածական արմատից, որ առնչակից է *լորձ* արմատին: Ըստ Ն.Աճառյանի՝ *լորտ* արմատը աղերսներ ունի *լորձ*-ին այնպես, ինչպես *խեղդել*-ը՝ *հեղձնուլ*-ին, *յորդ*-ը՝ *յորձանք*-ին: Գիտնականը կարծում է նաև, որ բարբառային հայերենում առկա *լորտու* (Ակն, Կյուրին, Համշեն) և *լորտնուկ* (Խոտորջուր)՝ «շողուկ, կարմրավուն, առանց պատեանի մի տեսակ խխունջ» բառանունների առկայությունը ավելի համոզիչ է դարձնում *լորտ* և *լորձ* արմատների առնչակցությունը<sup>11</sup>: Ուշագրավ է նաև Ունիեի Բալլուդ գյուղի խոսվածքում գրանցված *գալատուլ լօղու*՝ «կողովով լորտու», այսինքն՝ «պատյանով լորտու» նկարագրական բառակաղապարը՝ «խխունջ» իմաստով (Լեմլի դեղերուն *գա*-

նաև А. Н. Баскаков, Н. П. Голубева, А. А. Кямилева, К. М. Любимов, Ф. А. Салимзянэва, Р. Р. Юсипова, *Турецко-русский словарь*, Москва, 1977 с. 212):

<sup>10</sup> Н. Н. Богочанская, А. С. Торгашова, *Большой русско-турецкий словарь*, Москва, 2009, с. 580.

<sup>11</sup> Ն. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 2, Ե., 1973, էջ 298:

*լատով լոյդուն* շաղ գրլլի): Հարկ է նշել, որ առօրյա կյանքում Համ-  
 շենի բարբառում այսօր էլ առանձին գործածվում է *գալատ* բառը՝  
 «կողով» նշանակությամբ: Օրինակ՝ *Գալատը* շալգեծ կրնած այդը  
 (արտը): «Քո հոգուն մեռնիմ, դրդես,- կասե,- ինձի ինչ կուզիս, էն  
 էրե, կուզիս քուռչեն ցած կըլօրե, մեկ օր *կալաթը* մի՛ կօյսընիլ, մեմել  
 տէսար էլի պետքը գուքա»<sup>12</sup>:

Ըստ Ն. Աճառյանի և Գ. Ջահուկյանի՝ *կալաթ*-ը (Համշենի բար-  
 բառում՝ *գալատ*)՝ *կեղթ, կաղթ, բրբ. կղաթ, կաղաթ, կալաթ* տարբե-  
 րակներով՝ «կողով» իմաստով, հունարենից փոխառյալ բառ է<sup>13</sup>:

Համշենի բարբառի բառապաշարի համադրական կազմութ-  
 յուններից առանձնացրել ենք *փուռնիդ, հնստիք, թօնկօւ, սգը-  
 լուծկ, էկլաց* բարդությունները: Սրանք կազմությամբ ինքնատիպ  
 են ու նաև ուշագրավ բառաքնության տեսանկյունից: Այսպես՝  
 համշենահայերը «*հաց, բոքոն*» նշանակությամբ գործածում են  
*փուռնիդ* (փուռ+նետ) բաղադրյալ բառանունը, այսինքն՝ «փուռը  
 նետված հաց»: *Փուռնիդ մը հաճը մեզ ժըմում գերավ* (Բոքոն հացը  
 միանգամից կերավ): Իսկական բարդության յուրօրինակ նմուշ է  
*հնստիք*-ը, որը կազմված է *հայս<հնս (խմոր)+դիր* բաղադրիչնե-  
 րից և «խմորը մեջը դնելու աման», այսինքն՝ «խմորի տաշտ» նշա-  
 նակությամբ է գործածվում: Ի դեպ, Ն.Աճառյանը փաստում է, որ  
 բարբառային *հայսդիր* ձևից է փոխառյալ քրդերեն *hastir*՝ «տաշտ»  
 իմաստով բառանունը (ՀԱԲ, հ. 3, էջ 31): Ուշագրավ է, որ «խմորի  
 տաշտ» իմաստով այսօր Համշենի բարբառում առկա է նաև *հնստի*  
 կամ *հնստի* բառանունը՝ կազմված հինհայերենյան *հայս* արմա-  
 տից: Այն թերևս *հնստիք* բառանվան դրափոխված ու մաշված  
 տարբերակն է՝ *Հնստի*ն պի՛ր, հնս մը շաղվինկ (Խմորի տաշտը  
 բե՛ր, խմոր հունցենք):

<sup>12</sup> Բ. Թողաքյան, նշվ. աշխ., էջ 51:

<sup>13</sup> ՔՀԲ, էջ 191, ՀԱԲ, հ. 2, էջ 569: Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառա-  
 րան* (այսուհետև՝ ՀԱԲ), Ե., 2010, էջ 398:

*Թօնքօւ* բառանունը՝ *թան* և *քամել* բաղադրիչներից կազմված, իսկական բարդություն է՝ «քամած մածուն» նշանակությամբ: Օրինակ՝ Դօբռագ մը *թօնկօւ* քեզի բնիսած ունիմ (Մի տոպրակ քամած մածուն ունեմ քեզ համար պահած):

Ըստ Գ. Ջահուկյանի՝ «Հին հայերենում նշանակալից թիվ են կազմում այն բարդությունները, որոնց երկրորդ բաղադրիչը բայահիմք է և գալիս է համապատասխան հնդեվրոպական բայահիմքերից ու բայահիմքային կազմություններից՝ -ագ, -ած, -առ, -արած, -բեր, -բոյծ, -գործ, -դիր, -տես և այլն»<sup>14</sup>:

Կարծում ենք՝ *փուռնիտ*, *թօնքօւ* և *հնստիր* բարդությունների երկրորդ բաղադրիչները՝ *-նետ (նիտ)*<sup>15</sup>, *-քամ (քոմ)*<sup>16</sup>, *-դիր (տիր)* հինհայերենյան բայահիմքեր են և, ինչպես Գ. Ջահուկյանն է նշում, սերում են հնդեվրոպական համապատասխան բայահիմքերից:

Համշենի բարբառում վկայված է գրաբարյան *ակն* արմատով *ագրլուծկ* (հոգն. *ագրլուծկնի*) իսկական բարդությունը՝ «կրակ անելու կպչան» նշանակությամբ<sup>17</sup>: Օրինակ՝ Իսա ցախերը *ագրնլուծ* դէ ժողված ունիմ (Այս ցախերը որպես կպչան են հավաքել): Այն կազմված է *ակն+ա+լուց+ք* բաղադրիչներից և, ըստ մեր դիտարկման, ունի «կրակ վառելու աչքը, ակունքը» իմաստը (գրաբարյան *լուցանել*՝ կրակ կամ ճրագ վառել. ՀԱԲ, հ. 2, էջ 296): Հարկ է փաստել, որ Համշենի բարբառում այսօր էլ գործածվում է գրաբարյան *լուցանել* բայը՝ «վառել» նշանակությամբ (Գրրագը *լուծա՛վ* տա՛ն՝ Կրակը վառվե՛ց): Նշենք, որ Հ. Աճառյանը հիշատակում է Սարգիսեանի առաջարկած վարկածը, ըստ որի՝ *ակն*-ը աղերսներ ունի սանսկրիտի *agni* «կրակ» բառի հետ (ՀԱԲ, հ. 1, էջ 108): *Ակնլուցք*

<sup>14</sup> Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 248-249:

<sup>15</sup> Նետ < \*nedo- "եղեգն". J. Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch, I, II bend (II Auflage), München: Francke Verlag, Bern, 1959, f. 759.

<sup>16</sup> ՀԱԲ, էջ 775:

<sup>17</sup> Խ. Թահմազ, *Ջենիգի բարբառի բառարան* (այսուհետև՝ ՋԲԲ), Սոչի, 2014, էջ 4: Տե՛ս նաև տեսր հ. 39:

բառի առկայությունը Համշենի բարբառում խորհելու տեղիք է տալիս. թերևս *ակն*-ը նաև «կրակ» նշանակությունն ունի, այսինքն՝ *ակնուցք*-ը կրակ վառելու միջոցն է:

Բ. Թողաքյանը հիշյալ բառանունը արձանագրել է նաև *ակրլուց* հնչատարբերակով, որը, ըստ նրա, ընդհանրապես «ջահ կամ չորացած փայտից կամ ցողուններից (կանեփի, գարու) պատրաստած ջահ» իմաստով է գործածվում<sup>18</sup>:

Համշենի բարբառում գործածվում է ոչ միայն *այգ* բառի *սկրն* բարբառային տարբերակը՝ «առավոտ» իմաստով (Հիվօնդը հընճակ *սկրն* քուն ըղավ հեճ՝ Հիվանդը մինչև առավոտ չքնեց), այլև նրանից ձևավորված՝ առավել հետաքրքրական *այգալաց* բարդության *ակլաց*, *աքլաց*, *էքլաց* հնչաձևերը՝ «այգողք» կամ բարբառային «էքնահող» նշանակությամբ: Այն փոխաբերացմամբ բարբառում գործածվում է որպես «մեռելի քելեխ», այսինքն՝ «հոգու հաց» (ՔՀԲ, էջ 259, ՋԲԲ, էջ 6): Հարկ է արձանագրել, որ «հոգու հաց» նշանակությամբ Ջեյթունում գործածվում է *այգողք* բառի *ախգէօխք* հնչատարբերակը<sup>19</sup>: Սեբաստիայում կա նաև *այգողք*-ի *աքուէօղ* հնչաձևը, որ նշանակում է «մի տեսակ հաց, որ *այգողքի* առթիվ են պատրաստում»: Այնթապի թուրքախոս հայերի շրջանում *այգալաց*-ը արտահայտված է *էքլաս* հնչաձևով՝ «չարչարման գիշեր» նշանակությամբ, *այգողք*-ը՝ *աքօխք* տարբերակով, ունեն նաև Ադանան, Ջեյթունը, Սեբաստիան, Սվեդիան և այլն (ՀԱԲ, հ. 1, էջ 165): Անհրաժեշտ ենք համարում նշել, որ ՆՀԲ-ում հիշատակված է *այգալաց* բառանունը՝ որպես «Լացք կամ պաշտօն և կանոն՝ ի վերայ ննջեցելոյն՝ ընդ այգն, ի վաղուի օրն ննջման. *այգողփ*, *ագողփ*. \*Յերկրորդում աուրն՝ յորժամ յայգալացն ժողովին. Մաշտ.»<sup>20</sup>:

<sup>18</sup> Բ. Թողաքյան, նշվ. աշխ., էջ 212:

<sup>19</sup> Հ. Աճառյան, *Քննություն Գիլիկիայի բարբառի*, Ե., 2003, էջ 297:

<sup>20</sup> Գ. Աւետիքեան, Խ. Միրսեփեան, Մ. Աւգերեան, *Նոր բարզիորք Հայկազեան լեզուի*, հ. Ա, Ե., 1836, էջ 79:

Ըստ Հ.Աճառյանի՝ *այգողք*-ը «Մեռելին երկրորդ օրը առավոտուն գերեզմանատուն երթալով մեռելին վրա լալը, գերեզման օրհնել տալը, այս առթիվ հոն աղբատներուն տրուած հացկերույթը» նշանակությամբ է գործածվում<sup>21</sup>: Այս բառում, ինչպես տեսնում ենք, կարևորվում է հաջորդ օրը՝ առավոտյան, գերեզմանատուն գնալու և «հանգուցյալի վրա լաց լինելու» հանգամանքը: Եվ չնայած Հ. Աճառյանի այն դիտարկմանը, որ *այգողք* բառը կազմված է ոչ թե *ող*, այլ *հող* բառից *այգահողք>այգհողք* (ՀԱԲ, հ. 1, էջ 165), այնուամենայնիվ նկատի ունենալով *այգալաց* և *այգողք* բառերի իմաստային նմանությունները՝ «մի դեպքում ննջեցյալի վրա առավոտյան լաց, մյուս դեպքում՝ «առավոտյան ողբ» (հիշատակված ունենք նաև *այգողփ*), կարծում ենք՝ հնարավոր է *այգողք*-ի առնչությունը *ողբ* բառին: Բարբառային հիշյալ բառերի առկայությունը կարևոր ապացույց է, որ *այգողք* բառը ծագումնաբանորեն աղերսներ ունի ոչ թե *հող*, այլ *ողբ* բառանվանը: Այսինքն՝ *այգողք* բառի նախնական ձևը եղել է *այգողբբ*, որը հետագայում *բ*-ի անկումով դարձել է *այգողք*, իսկ *այգողք* բառի *էքնահող*, *էքնաֆող* տարբերակները ժողովրդական կեղծ ստուգաբանության հետևանք են:

### Եզրակացություն

Քննելով Համշենի բարբառի բառային բաղադրությունները՝ կարող ենք ասել, որ լինելով կղզիացած ու մեկուսացած՝ համշենահայերենը ներկայանում է միայն այս բարբառին բնորոշ բազմաթիվ ինքնատիպ բառաբարդումներով: Բարբառի պատկերավոր լեզվամտածողությամբ պայմանավորված՝ առկա են բառային յուրահատուկ կազմություններ: Հատկապես ուշագրավ են նկարագրական բառակաղապարները, որոնցով ձևավորված են այնպիսի յուրօրինակ վերլուծական բարդություններ, ինչպիսիք են՝ *գալատով լօյղու*-ն, *հալած հավգիթ*-ը, *գափագլի կօրտ*-ը և այլն:

<sup>21</sup> Հ. Աճառյան, *Հայերեն գալատական բառարան*, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 90:

Բարբառակիրների առանձնահատուկ աշխարհընկալման շնորհիվ Համշենի բարբառում ստեղծվել են նաև հինհայերենյան արմատներից ձևավորված յուրահատուկ համադրական բառանուններ, ինչպիսիք են՝ *ագրնլուծք*-ը, *էքլաց*-ը: Իմաստային կառուցվածքով և բառակազմական կաղապարով ուշադրության են արժանի հատկապես բնիկ հայերեն *-նետ*, *-քամ* (*քով*), *-դիր* (*տիր*) բայահիմքերով յուրահատուկ կազմությունները (*փուռնիտ*, *թունքով*, *հյստիր*), որոնք, ամենայն հավանականությամբ, հնդեվրոպական նախալեզվի հետ ընդհանրություններ ունեցող արմատներ են:

#### Օգտագործված գրականություն

Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 1, 1971, հ. 2, Ե., 1973:

Աճառյան Հ., Քննություն Համշենի բարբառի, Ե., 1947:

Աճառեան Հ., Հայերեն գաւառական բառարան. Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913:

Աճառյան Հ., Քննություն Կիլիկիայի բարբառի, Ե., 2003:

Աւետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 1, Վենետիկ, 1836:

Աճառյան Հ., Քննություն Կիլիկիայի բարբառի, Ե., 2003:

Թահմազ Խ., Ջենիգի բարբառի բառարան, Սոչի, 2014:

Թոռլաքյան Բ., Հայ ազգագրություն և բանահյուսություն: Նյութեր և ուսումնասիրություններ, Ե., 1981:

Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, Ե., 2009:

Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:

Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:

Սաքապետոյեան Ռ., Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարան, Ե., 2011:

Վարդանյան Ս., Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը, Ե., 2009:

Korkmaz Z., Gramer terimleri sözlüğü, Ankara, 1992.

Баскаков А. Н., Голубева Н. П., Кямилева А. А., Любимов К. М., Салимзянова Ф. А., Юсипова Р. Р., Турецко-русский словарь, Москва, 1977.

Богочанская Н. Н., Торгашова А. С., Большой русско-турецкий словарь, Москва, 2009.

Meyer G., Türkische Studien: Die griechischen und romanischen Bestandteile im Wortschatze des Osmanisch-Türkischen, kebikçeç yayınları, Ankara, 1998.

Pokorny J., Indogermanisches etymologisches Wörterbuch, I, II bend (II Auflage), München: Francke Verlag, Bern, 1959.

Schallert J., Greenberg M. L., The Prehistory and Areal Distribution of Slavic \*gьlčěti 'Speak', Slovenski jezik Slovene Linguistic Studies, Ljubljana-Lawrence, N6, 2007.

### **Khachatryan Hasmik, Kharatyan Melanya - Compounding as a Means of Expressing the Unique Language Thinking in the Hamshen Dialect.-**

Examining compound words in Hamshen dialect in this article, we can say that being isolated and having no contact with other dialects, Hamshen dialect of the Armenian language presents distinctive ways of compounding typical only of this dialect. Due to the unique language thinking of the dialect, it has unique patterns of morphological derivation, which form such specific compounds such as *գալատով լոյժոյն* [*galatov loydo*] (*tortoise*), *հալած հալզիթ* [*halats havgit*] (*omelette*), *ազրնյուծք* [*agynlootsq*] (*kindling for fire*), *էքլաց* [*eqlats*] (*post-funeral reception*), *հաստիք* [*hastir*] (*dough trough*), *փռունիք* [*poornit*] (*loaf of bread*), *թօնքով* [*tonqom*] (*strained yogurt*), etc.

**Keywords:** compounding, open compounds, closed compounds, non-verb open compounds, repetitive open compounds, dialects of Armenian, descriptive word patterns.

Khachatryan Hasmik, PhD of Philology, Institute of Language named after H. Acharyan of NAS RA, Senior Researcher.



Kharatyan Melanya, Institute of Language named after H. Acharyan of NAS RA, Senior laboratory assistant.

**Хачатрян Асмик, Харатян Меланя - Деривация как средство выражения своеобразного языкового мышления в Амшенском диалекте.-** В результате изучения составных слов Амшенского диалекта, можно утверждать, что, будучи изолированным и не имея точек соприкосновения с другими диалектами, амшенская речь представлена своеобразными словосочетаниями, присущими исключительно этому диалекту.

В связи со оригинальным языковым мышлением, присущим данному диалекту, в котором присутствуют специфические словообразовательные шаблоны, с помощью которых и формируются такие своеобразные сложные образования, как *գալատով լոյմ* (галатóв лойдú - черепаха), *հալաճ հալաճիկ* (һалáц һавгít - яичница), *ազրիւնիճք* (агнлúцк - щепа для розжига огня), *էկլáց* (эклáц – следующий после похорон день), *հաճիւր* (һастíр – квашня, кадка для замеса теста), *բոլորիկ* (пурнít - буханка), *թոնկ* (тонкóм – сцеженный мацун) и др.

**Ключевые слова:** деривация, аналитическая сложность, комбинаторная сложность, именное примыкание, диалектный армянский, описательные словообразовательные шаблоны, повторяющиеся примыкания.

Хачатрян Асмик, кандидат филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, старший научный сотрудник.

Харатян Меланя, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, старший лаборант.

**ՀԻՆՀԱՅԵՐԵՆՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ  
ԱՐՏԱՑՈՂՈՒՄԸ ԱՐԴԻ ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ\***

10.54412/2738277X-2022.1.2-41

**Կատվայան Վիկտոր**

բանասիրական գիտությունների դոկտոր,  
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,  
առաջատար գիտաշխատող. [viktorkatvalyan@mail.ru](mailto:viktorkatvalyan@mail.ru)

**Բանալի բառեր.** հին հայերեն, գրաբար, բարբառային հատկանիշ, բառասկիզբ, պայթական բաղաձայն, քմայնացում, շրթնայնացում:

**Ներածություն**

Հայագիտության մեջ հինհայերենյան շրջանում բարբառների գոյության հարցը տարբեր մեկնաբանություններ է ունեցել<sup>1</sup>, սակայն անկախ այդ հարցի վերաբերյալ մոտեցումներից՝ ուսումնասիրողները բերել են լեզվական զանազանությունների մի շարք փաստեր հայ հին մատենագրությունից՝ դրանք համարելով ժամանակի բարբառային տարբերությունների վկայություններ<sup>2</sup>: Լրացնելով այդ կարգի տարբերությունները նոր փաստերով և համակարգելով դրանք, նաև արդի բարբառային հատկանիշներից ընտրելով հինգերորդ դարի հայերենի համար հավանական համարվող իրողությունները՝ Գ.Ջահուկյանը ստացել է հին հայերենի բարբառային վիճակի հավանական պատկերը<sup>3</sup>: Քանի որ այս աշխա-

\* Ներկայացվել է 23.08.2022, գրախոսվել՝ 09.09.2022:

<sup>1</sup> Տե՛ս **Հ. Աճառյան**, *Հայոց լեզվի պատմություն*, մաս 2, 2013, էջ 362, **Վ. Կատվայան**, *Հայ բարբառների ծագման հարցը «Պատմա-բանասիրական հանդեսի» էջերում (1958-1960)*.- Պատմաբանասիրական հանդես, Ե., 2018, № 2, էջ 20-33:

<sup>2</sup> Տե՛ս **Ա. Այտընյան**, *Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի*, Վիեննա, 1866, էջ 63-120. **Հ. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 114-141:

<sup>3</sup> Տե՛ս **Գ. Ջահուկյան**, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 158-192:

տանքում մեզ հետաքրքրում են աշխարհաբարյան շրջանի բարբառային հայերենի հնչյունական այն հատկանիշները, որոնց արմատները, ըստ հայ լեզվաբանության, ունեն բավականին հնույուն, և որոնց դրսևորումները հավանական են համարվում հինհայերենյան, նաև ավելի վաղ շրջաններում<sup>4</sup>, ուստի դիտարկում ենք Գ.Ջահուկյանի կազմած՝ 5-րդ դարի բարբառների հիմնական հատկանիշների ցանկից՝ մի քանիսը, որոնք բխեցվել են բարբառային արդի հատկանիշներից: Մեզ հետաքրքրում են այդ հատկանիշների բաշխման և դրսևորման յուրահատկությունները: Հատկանիշները ներկայացնում ենք ըստ Գ.Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատանքի՝ փակագծերում նշելով նաև աղյուսակներում հատկանիշի կարգը որոշող թվերը (նախ արդի բարբառային հատկանիշների ցանկում<sup>6</sup>, ապա՝ 5-րդ դարի հատկանիշների ցանկում<sup>7</sup>):

### **Հինհայերենյան բաղաձայնական հատկանիշներ արդի բարբառներում**

Արդի բարբառներում արտացոլվող հինհայերենյան բաղաձայնական հատկանիշները նախ և առաջ վերաբերում են բառասկզբում պայթականների ու հպաշփականների դրսևորումներին<sup>8</sup>,

<sup>4</sup> Նշենք, որ հողվածում դիտարկվող բոլոր հատկանիշները Գ. Ջահուկյանը համարել է բարբառների հնչյունական հնաբանություններ՝ դրանց վերագրելով բավականին մեծ հնություն, հասցնելով մինչև ենթաշերտային հին ազդեցություններ և մասամբ նույնիսկ մինչև հնդեվրոպական շրջան (տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 260-270, 276):

<sup>5</sup> Նկատի չենք ունեցել այն հատկանիշները, որոնք ներկայացվում են իբրև միտում (տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 163-166):

<sup>6</sup> Տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 51-81:

<sup>7</sup> Տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 163-166:

<sup>8</sup> Հ.Աճառյանը, անդրադառնալով 5-րդ դարի հայ բարբառների միջև եղած գանազանություններին, գրում է. «Այդ տարբերություններից առաջին հերթին հիշատակելի է թրթռուն, խուլ և թավ բաղաձայնների փոխանակությունը» (Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 135):

ապա նաև առանձին հնչյունական իրողությունների ու հնչյունների: Այդպիսիք են հետևյալները.

1(1>1). Բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների<sup>9</sup> շնչեղ խլություն (բ, դ, գ, ձ, ջ ~ փ, թ, ք, ց, չ). բան (~փան).

Այս հատկանիշը արձանագրվել է միայն արևմտյան բարբառներում<sup>10</sup>: Ըստ Հ.Մուրադյանի՝ այս հատկանիշը ձևավորվել է շնչեղ ձայնեղների ապաձայնեղացմամբ, որի դրսևորման նախնական վկայություններ են համարվում հունարանների ստեղծած *բաղ* և *փաղ* նույնիմաստ ածանցները, *սպաթարց* բառի *թարց* (>դարձ) բաղադրիչը, Անանուն Մեկնիչի (7-րդ դար) վկայած *բագուկ*, *պագուկ*, *փագուկ* բառաձևերը: Լեզվաբանը ենթադրել է, որ կատարված անցումները հին երևույթներ են և ժամանակագրորեն հասնում են նախապատմական շրջանին<sup>11</sup>: Ավելի վաղ այս իրողություններին անդրադարձել է Հ.Աճառյանը՝ 5-րդ դարի հայերենի բառասկզբում առկա զանազանությունների մասին խոսելիս<sup>12</sup>:

2(2>2). Բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների շնչեղ ձայնեղություն (բ, դ, գ, ձ, ջ – բ', դ', գ', ձ', ջ'). բան (~բ'ան).

Բացի այն, որ այսպիսի հնչյուններ դիտարկվել են հայերենի մի շարք բարբառներում<sup>13</sup>, շատ գիտնականներ շնչեղություն վերագրել են նաև գրաբարի ձայնեղ պայթականներին ու հպաշփա-

<sup>9</sup> Մեզ համար ընդունելի է *հպաշփական* եզրույթը:

<sup>10</sup> Ըստ Գ.Ջահուկյանի աղյուսակների՝ Փոքր Ասիայի բարբառախմբի Պոլսի միջբարբառի Ռոդոսթոյի, Ջյուռնիայի, Օրդուի, մասամբ նաև Նիկոմեդիայի և Պարտիզակի բարբառային միավորներում, նույն բարբառախմբի Ասլանբեկի և Մալաթիայի բարբառներում, ինչպես նաև Տիգրանակերտի (Մուշ-Տիգրանակերտի բարբառախումբ), Եդեսիայի (Համենի միջբարբառախումբ) բարբառային միավորներում (տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 51-62):

<sup>11</sup> Տե՛ս **Հ.Մուրադյան**, *Հայոց լեզվի պատմական քերականություն*, հ. 1, *Հնչյունաբանություն*, Ե., 1982, էջ 297:

<sup>12</sup> Տե՛ս **Հ.Աճառյան**, նշվ. աշխ., էջ 135:

<sup>13</sup> Տե՛ս **Ա.Ղարիբյան**, *Հայ բարբառագիտություն*, Ե., 1953, էջ 125. **Ա.Գրիգորյան**, *Հայ բարբառագիտության դասընթաց*, 1957, էջ 95:

կաններին<sup>14</sup>: Ըստ Հ.Մուրադյանի՝ շնչեղ ձայնեղ բաղաձայնները հատուկ են հիմնականում Հայաստանի կենտրոնական գավառների բարբառներին (Արարատյան, Բայազետի, Մուշի, Կարնո)<sup>15</sup>: Այս հնչյունների արտաբերական-ձայնաբանական բնույթը փորձել են պարզել թե՛ հայ, թե՛ օտար հետազոտողներ<sup>16</sup>: Ա. Հանեյանը հայերենի բարբառներում առանձնացրել է շնչեղ ձայնեղների երեք հիմնական տարբերակ՝ ա) ուժգնային կոկորդային (Մուշ, Կարին, Արարատյան դաշտ, Նոր Ջուղա, Բայազետ), բ) քմակոկորդային (Արծկե, Բաղեշ, Դիադին), գ) թույլ կոկորդային (Արաբկիր, Շապին-Կարահիսար, Սեբաստիա, Ակն, Խոտրջուր և այլն)<sup>17</sup>:

3(3>3). Բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների խլություն (բ, դ, գ, ձ, ջ ~ պ, տ, կ, ծ, ճ). բան (~պան).

Հատկանիշը արձանագրվել է թե՛ արևմտյան, թե՛ արևելյան խմբակցությունների բարբառներում<sup>18</sup>: Հ.Մուրադյանի կարծիքով՝

<sup>14</sup> Տե՛ս **Հ.Աճառյան**, *Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների*, հ. 6, Ե., 1971, էջ 554-555. **Հ. Պեղերսըն**, *Հայերենը և դրացի լեզուները*, Վիեննա, 1907, էջ 7-8. **Э.Бенвенист**, *Проблемы армянского консонантизма*-*Вопросы языкознания*, М., 1961, 3, էջ 37-39. **Г.Фогт**, *Заметки по армянскому консонантизму*-*Вопросы языкознания*, М., 1961, 3, էջ 40-43. **Ա.Մեյե**, *Հայագիտական ուսումնասիրություններ*, Ե., 1978, էջ 60:

<sup>15</sup> Տե՛ս **Հ.Մուրադյան**, նշվ. աշխ., էջ 284: Գ.Ջահուկյանի տվյալներով՝ շնչեղ ձայնեղներ ամբողջովին կամ մասամբ ունեն 13 բարբառներ (Համշենի, Սեբաստիայի, Շապին-Կարահիսարի, Արաբկիրի, Ակնի, Հաջընի, Ջեյթունի, Կարնո, Խարբերդ-Երզնկայի, Սշո, Արարատյան, Բայազետի, Ջուղայի) (տե՛ս **Գ.Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 51-62): Ծնչեղ ձայնեղներ դիտարկվել են նաև Դիադինի բարբառում (տե՛ս **Ա.Գարիբյան**, *Об армянском консонантизме*, ВЯ, М., 1959, 5, էջ 83-84):

<sup>16</sup> Տե՛ս **Հ.Աճառյան**, նշվ. աշխ., էջ 248-250. **Г.Капанцян**, *Аштаракский говор*, Историко-лингвистические работы, т. 2, Ер., 1975. **Ա.Մեյե**, նշվ. աշխ., էջ 60. **Ж.Фурке**, *Генезис системы согласных в армянском языке*-*Вопросы языкознания*, 1959, 6. **А.Писович**, *Le développement du consonantisme armenien*, Krakow, 1976 նս:

<sup>17</sup> Տե՛ս **Ա.Հանեյան**, *Ձայնեղ շնչեղները հայերենի բարբառներում*-*Հայերենի բարբառագիտական ատլաս*, պր. 3, Ե., 2010, էջ 166-231:

<sup>18</sup> Արևմտյան խմբակցության Սյուրգի, Մարթիլի, Կյուրինի, Միվրիհիսարի, Քեսար-Սվեդիայի, Խարբերդի, Սասունի, Վանի բարբառներում, արևելյան խմբակցության Աստրախանի, Քանաքեռի, Ցղնայի, Ղարաբաղի, Մեհտիշենի, Հաղրուփի,

արդի բարբառների բաղաձայնական համակարգերը առաջացել են ինչ-որ ժամանակ՝ զուգահեռաբար գոյություն ունեցած bh, p, ph և b, p, ph համակարգերից<sup>19</sup>, այսինքն՝ հայոց լեզվի մի տարածքում բառասկզբի ձայնեղները ունեցել են շնչեղության երանգ, իսկ մյուս տարածքում՝ ոչ<sup>20</sup>: Երկու համակարգերում էլ տեղի է ունեցել առաջին շարքի հնչյունների ապաձայնեղացում՝ առաջին դեպքում bh > ph, երկրորդ դեպքում՝ b > p անցումներով: Ընդ որում՝ այդ անցումները հին երևույթներ են և հասնում են նախապատմական շրջանին<sup>21</sup>:

4(5>7). Ծնչեղ խուլերի դիրքային ապաշնչեղություն կամ թույլ շնչեղություն (փ, թ, ք, ց, չ ~ պ, տ, կ, ծ, ճ). փրփուր (~փրպուր).

Հատկանիշը արձանագրվել է Մշո (Ալաշկերտ), Տավրոսիկ-Մոսկանի (Նիչ) և Համշենի (Մարթի) բարբառների առանձին խոսվածքներում: Մասնակի դրսևորումներ (*թուլղթ* ~ *թուլխտ* կարգի) ունի արևելյան խմբակցության գրեթե բոլոր բարբառներում (բացառությամբ Մեղրու և Ջուղայի բարբառները), արևմտյան խմբակցության Պոլսի, Եվրոկիայի, Ամասիայի, Շապին-Կարահիսարի, Մեբաստիայի, Մալաթիայի, Հաջընի, Քեսաբ-Սվեդիայի, Կարինի, Խարբերդ-Երզնկայի բարբառներում: Հ.Մուրադյանն արձանագրել է, որ շնչեղ խուլերը հայերենի բարբառներում միասնական արտասանություն ունեն միայն բառասկզբում, իսկ բառամիջում և բառավերջում նրանց արտասանական որակը վայրից վայր տատանվում է՝ թույլ շնչեղությունից մինչև ապաշնչեղացում<sup>22</sup>: Իրավացի է լեզվաբանը, երբ տարբերակում է ապաշնչեղացման բուն դեպքերը (երբ բառամիջում և բառավերջում շնչեղ խուլերը համատարած շնչեղագրկվում են) և նրանք, որոնք տեղի են ունենում փոխազդեցական հնչյունափոխությամբ (խօսք>խօսկ,

Շաղախի, Գանձակի, Բուրդուրի, Շամախի, Խոյ-Մարաղայի բարբառային միավորներում:

<sup>19</sup> Տե՛ս Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 294:

<sup>20</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 295:

<sup>21</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 297:

<sup>22</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 282:

մեղք>մէիկ)<sup>23</sup>: Նա հնարավոր է համարել, որ բառամիջում ու բառավերջում «շնչեղ խուլ արտաբերելու իրենց անկարողությունը խոսվածքները բերել են հնից»՝ իբրև բարբառակիրների արտասանական ապարատի առանձնահատկություն<sup>24</sup>:

5(6>8). Քմայնացած հետնալեզվայինների առկայություն (գ, կ, ք ~ գ՛, կ՛, ք՛). գամ (~գ՛ամ).

Հատկանիշը լայն ընդգրկում ունի արևմտյան և արևելյան խմբակցություններում<sup>25</sup>: Հ.Մուրադյանը նկատել է, որ քմային *գ, կ, ք* պայթականները առավելապես հատուկ են եզրային բարբառներին և խիստ տարածված են Վասպուրական-Սյունիք-Արցախ տարածքի և հարակից բարբառներում<sup>26</sup>: Նշվել է, որ սովորաբար հետնալեզվայինների քմայնացումը պայմանավորված է հաջորդող ձայնավորի որակով<sup>27</sup>, սակայն կան բարբառային միավորներ (Սյունիք-Արցախի, Վանի, Մոկսի, Դիադինի ու հարակից այլ վայրերի բարբառներ), որոնցում հետնալեզվային պայթականների քմայնացումը դիրքով պայմանավորված չէ<sup>28</sup>: Հ.Մուրադյանը նկատել է, որ հնչյունական շրջապատով չպայմանավորված քմայնացումը կարող է բացատրվել ենթաշերտային կամ այլ կարգի, իրեն անհայտ, պատճառներով<sup>29</sup>: Այս հատկանիշի հնությունը փաստել է Հ.Աճառյանը՝ մատնանշելով Թրակացու մեկնիչների բերած *գեամ, գեսս, գեսյ* ձևերում *գ* քմային բաղաձայնի առկայությունը<sup>30</sup>:

<sup>23</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 281:

<sup>24</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 282:

<sup>25</sup> Արևմտյան խմբակցության Սյուլոզի, Մարթիլի, Ջեյթունի, Բելլանի, Քեսաբի, Արամոյի, Խարբերդի, Երզնկայի, Տիգրանակերտի, Եդեսիայի, Նիչի, Բաղեշի, Խլաթի, Արձեշի, Արծկեի, Վանի բարբառներ, արևելյան խմբակցության Արովինի, Արարատյան, Մեղրիի, Ագուլիսի, Ղարաբաղի, Մեհտիշենի, Հաղբուբի, Գանձակի, Քելվան-Շաղախի, Բուրդուրի, Հավարիկի, Շամախիի, Խոյ-Մարաղայի բարբառային միավորներ:

<sup>26</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 310:

<sup>27</sup> Տե՛ս **Գ.Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 49:

<sup>28</sup> Տե՛ս **Հ.Մուրադյան**, նշվ. աշխ., էջ 311-312:

<sup>29</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 312:

<sup>30</sup> **Հ. Աճառյան**, *Հայոց լեզվի պատմություն*, հ. 2, էջ 384-385:

6(8>16). Բառասկզբի *հ*-ի դիմաց ոչ առնմանական *խ* (*h ~ խ*)<sup>31</sup>. հաց (~խաց).

Այս հատկանիշն ունեն Բաղեշի, Խլաթի, Արճեշի, Արծկեի, Վանի, Դիադինի, Բայազետի, Ջուդայի, Խոյ-Մարադայի բարբառային միավորները: Ըստ Հ.Աճառյանի՝ *հ-խ* ձայնափոխությունը տեղի է ունեցել արաբների արշավանքից հետո և թուրքերի տիրապետությունից (ԺԱ դար) ավելի առաջ<sup>32</sup>: Հ.Մուրադյանը եզրակացրել է, որ *հ-խ* հնչյունափոխության գործառույթյան մոտավոր ժամանակը կարելի է դնել 6-8-րդ դարերի սահմանագծում<sup>33</sup>: Ա.Ղարիբյանը և Գ.Ջահուկյանը հայ բարբառներում *հ*-ի դիմաց *խ*-ի առկայությունը համարել են ենթաշերտային ազդեցության հետևանք<sup>34</sup>: Մեր կարծիքով՝ արդի մի շարք բարբառների բնորոշ այս հատկանիշը բարբառային հայերենում եղել է հնդեվրոպական նախալեզվից տրոհվելու ժամանակներից<sup>35</sup>:

### **Հինհայերենյան ձայնավորական հատկանիշներ արդի բարբառներում**

Հինհայերենյան ձայնավորական հատկանիշները վերաբերում են ձայնավորների երկբարբառային արտասանության, քմայնացման ու շրթնայնացման երևույթներին:

<sup>31</sup> Գ.Ջահուկյանը հատկանիշը հատուկ է համարում միայն բառասկզբին (տե՛ս **Գ.Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 47, 164), սակայն այն արտահայտվում է բոլոր դիրքերում:

<sup>32</sup>Տե՛ս **Հ.Աճառյան**, *Քննություն Վանի բարբառի*, Ե., 1952, էջ 67:

<sup>33</sup> Տե՛ս **Հ.Մուրադյան**, նշվ. աշխ., էջ 267:

<sup>34</sup> Ա.Ղարիբյանի կարծիքով հնչյունական այդ երևույթը Վանի բարբառը ժառանգություն է ստացել խալդական լեզվից (**Ա.Ղարիբյան**, նշվ. աշխ., էջ 131): Ըստ Գ.Ջահուկյանի՝ բառասկզբի *հ*-ի դիմաց *խ*-ի առկայությունը ենթաշերտային, թերևս, ուրարտական ազդեցության արդյունք է, մանավանդ որ այդ երևույթը տարածված է հատկապես Վասպուրականում և Պարսկահայքում (**Գ.Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 267):

<sup>35</sup> Տե՛ս **Վ.Կատվայան**, *Հ-խ համապատասխանությունը հայերենի բարբառներում*. Պատմաբանասիրական հանդես, 3, 2007, էջ 163-172:



7(15>30). Ե-ի երկբարբառային արտասանություն. գետ (~գիէտ).

Ա.Ղարիբյանը նշել է, որ *է* ունեն բարբառներից մի քանիսը միայն, հատկապես՝ Նաճրնի, Ջեյթունի, Վանի, Ուրմիայի, Խոյի բարբառները, Մշո բարբառի արևելյան հատվածը, Արարատյան բարբառի Նոր Բայազետի ենթաբարբառը<sup>36</sup>: Գ.Ջահուկյանի տվյալներով՝ շեշտակիր վանկում երկբարբառային *է* ունեն բարբառախոս 28 վայրեր, որոնք ամբողջովին կամ մասամբ ընդգրկում են 14 բարբառներ<sup>37</sup>: Լ.Սսերյանցը և Յ.Կարստը երկբարբառային *է* արձանագրել են բարբառների շեշտակիր վանկերում<sup>38</sup>: Ըստ Հ. Աճառյանի՝ որոշ բարբառներ (Կարին, Մուշ, Վան, Մուչավա) շեշտված վանկում զանազանում են երկու տեսակ է. գրաբարի է հնչյունը պահում են է, իսկ *է*-ն հնչում է իբրև երկբարբառ: Անշեշտ վանկերում երկուսն էլ արտասանվում են է<sup>39</sup>: Լեզվաբանը նկատել է երկբարբառային *է*-ի որակական տարբեր դրսևորումներ հայերենի բարբառներում<sup>40</sup>: Հ.Մուրադյանի կարծիքով՝ *է* երկբարբառը բարբառներում առաջացել է հետգրաբարյան շրջանում՝ հնչյունափոխությամբ, և այդ գործընթացի սկիզբը լեզվաբանը հասցրել է 8-րդ դար<sup>41</sup>: Ա.Ղարիբյանը համարել է, որ գրաբարը չի ունեցել մաքուր է

<sup>36</sup> Տե՛ս **Ա.Ղարիբյան**, նշվ. աշխ., էջ 110:

<sup>37</sup> Արևմտյան խմբակցության Առդեալի, Սեբաստիայի, Կեսարիայի, Հաջրնի, Ջեյթունի, Կարնո, Մշո, Տալվորիկ-Մոտկանի, Վանի, Դիադինի բարբառները և արևելյան խմբակցության Արարատյան, Ջուղայի, Խոյ-Մարաղայի, Բայազետի բարբառները (տե՛ս **Գ.Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 63, 70-81, 132-136):

<sup>38</sup> Տե՛ս **Л.Мсерянц**, *Этюды по армянской диалектологии, 1. Сравнительная фонетика мушского диалекта в связи с фонетикою Грабара*, М., 1897, էջ 24-25. **Յ. Կարստ**, *Կիլիկյան հայերենի պատմական քերականություն*, Ե., 2002, էջ 28-29:

<sup>39</sup> Տե՛ս **Հ.Աճառյան**, *Հայ բարբառագիտություն*, Մ.-Ն. Նախ., 1911, էջ 15: Փաստենք, որ նման բաշխում առկա է նաև Բայազետի բարբառում (տե՛ս **Վ.Կասովայան**, *Բայազետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ*, Ե., 2016, էջ 92-95):

<sup>40</sup> Ըստ Հ.Աճառյանի՝ Վանի բարբառի *է*-ն ավելի արագ է Մուշի *է*-ից, նրա նման ծանր ու դանդաղ չէ (տե՛ս **Հ.Աճառյան**, *Քննություն Վանի բարբառի*, էջ 15):

<sup>41</sup> Տե՛ս **Հ.Մուրադյան**, նշվ. աշխ., էջ 105:

ձայնավոր, գրաբարին հատուկ է եղել «յոտացիայի ենթարկված կամ քմայնացած «ե»»<sup>42</sup>: Համամիտ ենք Գ. Ջահուկյանի հետ, որ այս հատկանիշը հատուկ էր հին հայերենին, և մեր հերթին փորձել ենք հիմնավորել, որ *ե* երկբարբառը գրաբարյան շեշտակիր վանկում գործածվում էր ի սկզբանե<sup>43</sup>:

8(16>31). *Ո*-ի երկբարբառային արտասանություն. գոմ (~գուօմ).

Հատկանիշը բնորոշ է գրեթե նույն այն բարբառախոս տարածքներին, որոնք ունեն *ե*-ի երկբարբառային արտասանություն<sup>44</sup>: Կարելի է պնդել, որ այդ տարածքների բարբառային խոսքում առկա է երկբարբառային արտասանության միտում: Ա. Ղարիբյանի կարծիքով՝ *ա*-ն գրաբարում ունեցել է երկբարբառային արտասանություն՝ ո<sup>ն</sup>, ինչպես այն դրսևորվում է Ջեյթունի և Քեսաբի բարբառներում<sup>45</sup>, և այդ արտասանությունը Վանի բարբառում էլ ավելի է երկբարբառացել ու վերածվել ու<sup>ե</sup>-ի<sup>46</sup>: Հ. Մուրադյանը վկայակոչում է այն դիտարկումը, որ *ա*-ի երկբարբառային (ուօ) արտասանությունը բարբառից բարբառ ունի հնչյան որոշակի տարբերություններ, և նշում, որ նման արտասանությունը ավելի որոշակի է Վանի, Խոյի, Մարաղայի, Շատախի, Դիադինի և հարակից այլ վայրերի խոսվածքներում, իսկ ավելի թույլ՝ Արարատյան բարբառի Աշտարակի, Օշականի խոսվածքներում<sup>47</sup>: Արձանագրելով, որ կանայս երկբարբառի մեկ այլ տեսակ, որի մեջ երկրորդ բաղադրիչը *ե* է՝ Հ. Մուրադյանը հակադրվում է Ա. Ղարիբյանի այն տեսա-

<sup>42</sup> Տե՛ս Ա. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 110:

<sup>43</sup> Տե՛ս Վ. Կատվայան, *Մեսրոպյան Է, Ե գրերի ուղղագրությունը և հնչյունական արժեքը*, Ե., 2006, 104 էջ:

<sup>44</sup> Խոսքը վերաբերում է արևմտյան խմբակցության Եվրոկիայի, Սեբաստիայի, Կեսարիայի, Հաջընի, Ջեյթունի, Կարնո, Տավորիկ-Մոտկանի, Սշո, Վանի, Դիադինի և արևելյան խմբակցության Արարատյան, Բայազետի, Ջուղայի, Խոյի-Մարաղայի բարբառները ընդգրկող վայրերի մեծ մասին:

<sup>45</sup> Տե՛ս Ա. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 115:

<sup>46</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 116:

<sup>47</sup> Տե՛ս Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 94:

կետին, թե առհասարակ այդ երկբարբառը բոլոր վայրերում ունի ու՛ հնչում<sup>48</sup>: Ա. Ղարիբյանը այդպիսի հնչում վերագրել է նաև Բայազետի բարբառին<sup>49</sup>, որը ևս չի համապատասխանում իրականությանը: Նշենք, որ Բայազետի բարբառում երկբարբառային *n* հնչյունը հիմնականում հանդիպում է հինհայերենյան բառաշերտում (բառերի շեշտակիր վանկում)<sup>50</sup>, որը կարող է լրացուցիչ փաստարկ լինել այն բանի համար, որ երկբարբառային *n*-ն հինհայերենյան շրջանին ևս բնորոշ իրողություն է:

9(17>34). Ձայնավորների քմայնացման առկայություն. բարակ (~պնրակ).

Ըստ Գ.Ջահուկյանի՝ այս հատկանիշը ունի շատ մեծ ընդգրկում և բացակայում է քիչ բարբառային միավորներում (Արարատյան, Արդվին-Թբիլիսիի, Աստրախանի, Ջուղայի, Առդեալի բարբառներ, որոշ խոսվածքներ): Փաստվել է, որ ձայնավորների քմայնացումը ավելի ուժեղ է արտահայտվում արևելյան տարածքի բարբառներում (Վասպուրականի, Սյունիքի, Արցախի տարածքներ): Ընդհանրապես, քմայնացած ձայնավորները (յ, ք, ծ) առավել հատուկ են հայերենի եզրային բարբառներին, կենտրոնական և հարակից բարբառները հիմնականում կամ չեն ճանաչում այդ հրնչունները, կամ եթե ճանաչում են էլ, ապա միայն փոխառյալ բառերում<sup>51</sup>: Այստեղից էլ եզրակացվել է, որ հին գրական հայերենը, ձևավորված լինելով կենտրոնական խոսվածքների հիմքի վրա, չի ունեցել քմայնացած ձայնավորներ<sup>52</sup>: Բայց այդ չի խանգարում հնարավոր համարելու, որ նույն ժամանակներում եզրային բարբառները ունեցել են քմայնացած ձայնավորներ հատկապես ձայնեղներին հաջորդող դիրքում<sup>53</sup>: Հիմնավորումներից մեկն էլ վերը

<sup>48</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 95:

<sup>49</sup> Տե՛ս Ա. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 116:

<sup>50</sup> Տե՛ս Վ. Վասուկյան, *Բայազետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ*, էջ 67:

<sup>51</sup> Տե՛ս Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 44:

<sup>52</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 55:

<sup>53</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 56:

հիշատակված *գեամ* ձևն է, որում, ըստ Հ.Մուրադյանի, *ե*-ով արտահայտված քմայնացումը վերաբերում է ոչ միայն *գ*-ին, այլև *ա*-ին<sup>54</sup>: Գ.Ջահուկյանը նշել է, որ ձայնավորների քմայնացումը կարող է լինել ինչպես ներքին (ձայնեղների խլացումն ուղեկցող) գործընթաց, այնպես էլ ենթաշերտային կամ առշերտային ազդեցության արդյունք<sup>55</sup>: Նկատվել է, որ քմայնացած ձայնավորները բարբառներում հանդես են գալիս տարբեր պայմաններում (ձայնեղներից կամ նրանցից առաջացած խուլերից հետո<sup>56</sup>, հին ձայնորդներից առաջ ն), հնչույթային տարբեր արժեքներով (հնչույթ կամ հնչույթի տարբերակ)<sup>57</sup>:

10(21>46). *Ա*-ի շրթնայնացման երևույթի առկայություն. կատու (~կմտու).

Գ.Ջահուկյանը արդի բարբառներում նույն հատկանիշի տարբեր աստիճաններ է համարել շրթնայնացած *մ* ձայնավորի արտահայտությունը իբրև *ա*-ի տարբերակ և *ա* ~ *o//m* համապատասխանությունները<sup>58</sup>: Հ.Մուրադյանը նկատել է, որ *ա*-ի դիմաց շրթնային *օ*-ի կամ *ու*-ի առկայությունը որոշ բարբառներում կարող է բացատրվել շրթնային երանգ ունեցող *մ* ձայնավորով, որը *ա*>*մ*>*օ*>*ու* պատմական փոփոխությունների շղթայի մեջ միջանկյալ, կապող օղակ է<sup>59</sup>: Հետաքրքրական է Է.Աղայանի այն տեսակետը, թե՛ հնարավոր է ենթադրել, որ դասական գրաբարի *ա*-ն «որոշ դեպքերում արտասանվել է որոշ շրթնայնացումով, որ հանգեցրել է նրա փոխանցմանը *օ*-ի՝ մի շարք բարբառներում»<sup>60</sup>: 5-րդ դարի բարբառների հնչյունաբերականական հատկանիշների շար-

<sup>54</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 50:

<sup>55</sup> Տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 67:

<sup>56</sup> Տե՛ս Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 46:

<sup>57</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 47-49:

<sup>58</sup> Տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 65:

<sup>59</sup> Տե՛ս Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 59: Ավելի վաղ նման մի դիտարկում արել է նաև Ա.Ղարիբյանը (տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 108):

<sup>60</sup> Է.Աղայան, *Գրաբարի քերականություն*, Ե., 1964, էջ 221:

քում ընդգրկված «Ա-ի շրթնայնացման երևույթի առկայություն» գուգաբանությունը մեզ համար առավելապես հետաքրքրական է *ա* ձայնավորի շրթնայնացած տարբերակի առումով, որովհետև այս դեպքում իրողությունը ներկայանում է իր նախնական վիճակով: Բարբառներում հանդիպող այդ տարբերակի վերաբերյալ հայտնը-վել են տարբեր տեսակետներ: Հ.Աճառյանը Վանի բարբառի *ա*-ի մասին գրել է, որ այն հատկապես շեշտի տակ դրսևորվում է իբրև *ա* և *օ* ձայնավորների միջին աստիճան<sup>61</sup>: Ըստ Մ.Մուրադյանի՝ Շատախի բարբառի *ա* ձայնավորը «ունի կոշտ, որոշ չափով շրթնայնացված արտասանություն՝ լեզվի ստորին բարձրացմամբ: Կատկային ձայնավոր է»<sup>62</sup>: Տիգրանակերտի բարբառի *ա*-ին բնորոշ է համարվել աննշան շրթնայնացումը<sup>63</sup>: Մոկսի բարբառն ունի *ա* ձայնավորի միայն շրթնայնացած և քմային տարբերակներ<sup>64</sup>: Ժ. Միքայելյանը իրավացիորեն նկատել է, որ եթե Վանի, Շատախի, Մոկսի խոսվածքների՝ շրթնային երանգով *ա*-ի արտասանությանը շրթունքները գրեթե չեն մասնակցում, ապա Բայազետի բարբառի շրթնայնացած *ա*-ի արտասանությանը մասնակցում են<sup>65</sup>: Նշենք, որ Բայազետի բարբառի *ա*-ն ունի *ուա* սերտ արտասանություն և *ա*-ի դիրքային տարբերակ է<sup>66</sup>: Բայազետի բարբառի այս հնչյունի արտասանությանը բավականին մոտ մի տարբերակ գրեթե նույն դիրքերում արձանագրել ենք Հրազդանի տարածաշրջանի՝ Վանի բարբառի և Մակուի խոսվածքի դրսևորումներում<sup>67</sup>:

<sup>61</sup> Տե՛ս Հ.Աճառյան, *Քննություն Վանի բարբառի*, էջ 14:

<sup>62</sup> Մ.Մուրադյան, *Շատախի բարբառը*, Ե., 1962, էջ 28:

<sup>63</sup> Ա.Հանեյան, *Տիգրանակերտի բարբառը*, Ե., 1978, էջ 11:

<sup>64</sup> Տե՛ս Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 41. Մ.Մուրադյան, *Ուրվագիծ Մոկսի բարբառի*.-Հայերենի բարբառագիտական ատլաս, Ե., 1982, էջ 114:

<sup>65</sup> Ժ.Միքայելյան, *Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները (համաժամանակյա և տարաժամանակյա քննություն)*, Ե., 2009, էջ 16-17:

<sup>66</sup> Տե՛ս Վ.Կատվայան, նշվ. աշխ., էջ 81-83: Ավելի վաղ ուսումնասիրողները դիտել են բառի բոլոր դիրքերում (տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 108, 229. Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 82, Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 41) :

<sup>67</sup> Վ.Կատվայան, *Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր, Գիրք 2, Կոտայքի մարզ*, Ե., 2020, էջ 27, 70-71 :

### Եզրակացություններ

Հինհայերենյան շրջանին բնորոշ և արդի ողջ բարբառային հայերենն ընդգրկող առավել կարևոր հնչյունական իրողությունը բառասկզբում պայթականների ու հպաշփականների տարբերակային արտահայտությունն է, որն ունի տիպաբանական արժեք<sup>68</sup>: Տարբերակային այդ դրսևորումները, վերաբերելով միայն բնիկ հայերեն բառերին ու հին փոխառություններին<sup>69</sup>, հայերենի զարգացման նախորդ փուլերի առնչությամբ նույնպես փաստում են բարբառային տարբերությունների առկայությունը, այլև հնարավորություն են ընձեռում պարզաբանելու լեզվի զարգացման և՛ հին ու հնագույն, և՛ հետագա շրջաններին առնչվող էական հարցեր:

Դիտարկված հնչյունական հատկանիշները հանդես են բերում գործածության զանազանություններ: Նախ դա արտահայտվում է տարածական տարբեր ընդգրկումներով: Այսպես, բառասկզբում ձայնեղների դիմաց շնչեղ խուլերի առկայությունը հատուկ է միայն արևմտյան բարբառներին, հատկապես՝ պատմական Աղձնիքի և Չորրորդ Հայքի տարածքներին, այլ հատկանիշներ առավելաբար բնորոշ են արևմտյան բարբառներին (շնչեղ խուլերի ապաշնչեղություն, *է*-ի և *ռ*-ի երկբարբառային արտասանություն), իսկ բառասկզբում ձայնեղների դիմաց խուլերի գործածությունը, քմայնացած հետնալեզվայինների դրսևորումը գրեթե հավասար տարածում ունեցող իրողություններ են արևմտյան ու արևելյան բարբառախմբերում: Որոշ հատկանիշներ միասնաբար են երևան գալիս: Այսպես, *է* և *ռ* հնչյունները երկբարբառային արտասանություն ունեն նույն տարածքներում, *հ*-ի համապատասխանությունը և շրթնայնացած *ա*-ի գործածությունը հատուկ են Վասպուրականին ու Պարսկահայքին, ձայնավորների ու բաղաձայնների քմայնացումը ավելի ուժգին արտահայտվում է Վասպուրական-Սյունիք-Արցախ տարածքում: Իրենց արտահայտման բնույթով ևս

<sup>68</sup> Տե՛ս նաև **Ա.Ղարիբյան**, *Հայ բարբառագիտություն*, էջ 128:

<sup>69</sup> Տե՛ս **Հ.Աճառյան**, *Հայոց լեզվի պատմություն*, 2-րդ մաս, էջ 380, **Ա.Գրիգորյան**, նշվ. աշխ., էջ 91:

հատկանիշները տարբերվում են. տարածքից տարածք որակական ու դիրքային տարբեր դրսևորումներ ունեն շնչեղ ձայնեղները, երկբարբառային *է, ռ* հնչյունները, շրթնայնացած *ա*-ն, տարբեր աստիճաններով ու ընդգրկումով է դրսևորվում ապաշնչեղացման հատկանիշը: Կարևոր է, որ բարբառային որոշ հատկանիշներ վերագրվում են նաև գրաբարի հիմք բարբառներին, նաև՝ գրաբարին (շնչեղ ձայնեղներ, *է, ռ* երկբարբառային հնչյուններ, շրթնայնացած *ա*): Հինհայերենյան բարբառային հատկանիշների քննությունը, այսպիսով, կարևորում ենք թե՛ պատմական բարբառագիտության, թե՛ համեմատական բարբառագիտության տեսանկյուններից:

### Օգտագործված գրականություն

Աղայան Է., Գրաբարի քերականություն, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1964:

Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, հ. 6, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1971:

Աճառյան Հ., Հայ բարբառագիտություն.- Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների, Էմինյան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկվա – Նոր-Նախիջևան, հրատ. Լազարյան ճեմարանի արևելյան լեզվաց, 1911:

Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, մաս 2, Ե., ԵՊՀ հրատ., 2013:

Աճառյան Հ., Քննություն Վանի բարբառի, Ե., ԵՊՀ հրատ., 1952:

Այտընյան Ա., Քննական քերականությւնն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, տպ. Մխիթարեան, 1866:

Գրիգորյան Ա., Հայ բարբառագիտության դասընթաց, ԵՊՀ հրատ., 1957:

Կատվալյան Վ., Հայ բարբառների ծագման հարցը «Պատմա-բանասիրական հանդեսի» էջերում (1958-1960).- Պատմաբանասիրական հանդես, Ե., 2018, № 2:

Կատվալյան Վ., Բայագետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ, Ե., «Ասողիկ», 2016:

- Կատվայան Վ., Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր, Գիրք 2, Կոտայքի մարզ, Ե., «Ասողիկ», 2020:
- Կատվայան Վ., Հ-Խ համապատասխանությունը հայերենի բարբառներում.- ՊԲՀ, 2007, 3:
- Կատվայան Վ., Մեսրոպյան Է, Ե գրերի ուղղագրությունը և հնչյունական արժեքը, Ե., «Ապոլոն», 2006:
- Կարստ Յ., Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Ե., ԵՊՀ հրատ., 2002:
- Հանեյան Ա., Ձայնեղ շնչեղները հայերենի բարբառներում.- Հայերենի բարբառագիտական ատլաս, պր. 3, Ե., «Նաիրի» հրատ., 2010:
- Հանեյան Ա., Տիգրանակերտի բարբառը, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978:
- Ղարիբյան Ա., Հայ բարբառագիտություն, Ե., ՀՍՍՌ պետ. հեռ. մանկ. ինստ. հրատ., 1953:
- Մեյե Ա., Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., ԵՊՀ հրատ., 1978:
- Միքայելյան Ժ., Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները (համաժամանակյա և տարաժամանակյա քննություն), Ե., «Նաիրի», 2009:
- Մուրադյան Հ., Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Հնչյունաբանություն, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982:
- Մուրադյան Մ., Շատախի բարբառը, Ե., ԵՊՀ հրատ., 1962:
- Մուրադյան Մ., Ուրվագիծ Մոկսի բարբառի.-Հայերենի բարբառագիտական ատլաս, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982:
- Պեղերսըն Հ., Հայերենը և դրացի լեզուները, Վիեննա, տպ. Մխիթարյան, 1907:
- Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972:
- Бенвенист Э., Проблемы армянского консонантизма.- Вопросы языкознания, М., 1961, 3:
- Гарибян А., Об армянском консонантизме, Вопросы языкознания, М., 1959, 5:



Капанцян Г., Аштаракский говор, Историко-лингвистические работы, т. 2, Ер., изд. АН Арм. ССР, 1975:

Мсерианц Л., Этюды по армянской диалектологии, 1. Сравнительная фонетика мушского диалекта в связи с фонетикой Грабара, М., 1897:

Фурке Ж., Генезис системы согласных в армянском языке.- Вопросы языкознания, М., 1959, 6:

Pisowicz A., Le developpement du consonantisme armenien, Krakow, 1976:

**Katvalyan Victor-The Reflection of Several Phonetic Features of the Old Armenian Period in the Modern Armenian Dialects.-** In this work, we consider such phonetic features of modern dialectal Armenian, the roots of which, according to Armenian linguistics, are quite ancient, and whose manifestations are considered probable in the period of ancient Armenian. We are interested in the peculiarities of the distribution and manifestation of these features. Among the phonetic features that have become the subject of study, there are more of those that refer to consonants, which is due to the greater number of their manifestations and evidence about them in the manuscripts. In general, the most important phonetic phenomenon coming from the ancient Armenian period and covering the entire modern dialectal Armenian is the variant expression of explosive consonants and affricates at the beginning of the word, which has a typological value. It is noticeable that phonetic features have functional differences. In one case, it is expressed by differences in prevalence, in the other case, diversity is expressed by the nature of the manifestation of features. Some dialectal features are also considered characteristic of Grabar and related old dialects. Examining the dialectal features from the Old Armenian period is important from the perspective of both historical dialectology and comparative dialectology.

**Keywords:** Old Armenian, grabar, dialect feature, word onset, plosive consonant, palatalization, labialization.

Victor Katvalyan, Doctor of Philology, Institute of Language named after H. Acharyan of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Advanced Researcher.

**Катвалян Виктор- Отражение некоторых фонетических особенностей древнеармянского периода в современных армянских диалектах.**- В данной работе мы рассматриваем такие фонетические особенности современного диалектного армянского языка, корни которых, согласно армянскому языкознанию, достаточно древние, и проявления которых считаются вероятными в период древнеармянского. Нас интересуют особенности распространения и проявления этих признаков. Среди фонетических признаков, ставших предметом изучения, больше тех, которые относятся к согласным, что обусловлено большим количеством их проявлений и свидетельств о них в рукописях. В целом важнейшим фонетическим явлением, идущим из древнеармянского периода и охватывающим весь современный диалектный армянский язык, является вариантное выражение взрывных согласных и аффрикатов в начале слова, что имеет типологическое значение. Заметно, что фонетические признаки имеют функциональные различия. В одном случае оно выражается различиями в распространенности, в другом случае разнообразие выражается в характере проявления признаков. Некоторые диалектные черты также считаются характерными для грабара и родственных ему старых диалектов. Изучение диалектных особенностей древнеармянского периода важно с точки зрения как исторической диалектологии, так и сравнительной диалектологии.

**Ключевые слова:** древнеармянский, грабар, диалектный признак, начало слова, взрывной согласный, палатализация, лабиализация.

Катвалян Виктор, доктор филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, ведущий научный сотрудник.

**ԳՐԱԲԱՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՑԻՆ ԿՈՐՊՈՒՄԻ ՍՏԵՂԾՍԱՆ  
ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ\***

10.54412/2738277X-2022.1.2-58

**Հակոբյան Ֆրիդա**

բանասիրական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,  
գիտաշխատող. frida.hakobyan@gmail.com

**Բանալի բառեր.** կորպուսային լեզվաբանություն, էլեկտրոնային կորպուս, կորպուս, լեզվի ձևային նկարագրություն, էլեկտրոնային համաբարբառ, համակարգչային բառացանկ, տեքստային հենք:

**Նախաբան**

Հայոց լեզվի պատմության տարբեր փուլերում գրաբարի բառապաշարի և քերականական իրողությունների կրած փոփոխությունների, գրաբարի լեզվական համակարգի քննությունը կարող է լիակատար և ամբողջական լինել, եթե հետազոտողը լեզվական փաստերն ուսումնասիրի գրաբարագիր բոլոր հեղինակների երկերում: Այս դեպքում *գրաբարագիր տեքստերի էլեկտրոնային կորպուսը* անգնահատելի և բացառիկ արժեք կարող է ունենալ ինչպես գրաբարի, այնպես էլ առհասարակ հայոց լեզվի պատմության ուսումնասիրության համար:

Հայ լեզվաբանության մեջ գրաբար տեքստերի էլեկտրոնային կորպուսի ստեղծման ուղղությամբ տարվող աշխատանքները սահմանափակվել են միայն էլեկտրոնային գրադարանների և հա-

---

\* Ներկայացվել է 27.05.2022, գրախոսվել՝ 21.06.2022:

մացանցային տարբեր աղբյուրներում եղած գրաբար տեքստերի հղումների կայքերի ստեղծումով:

Այսպես՝ գրաբարագիր տեքստերի ամենախոշոր առցանց գրադարանը <https://www.digilib.am/> կայքում գործող *Հայ մատենագրութեան թուանշային գրադարանն է*, որտեղ ներկայացված են նաև գրաբարագիր շատ հեղինակների երկեր: Դրանք կարելի է միայն առցանց ընթերցել. կայքում որևէ բնույթի լեզվական աշխատանք (բառերի, արտահայտությունների որոնում, ըստ որոշակի հասկանիչների՝ դասակարգում և այլն) հնարավոր չէ կատարել:

Այբբենական և թեմատիկ գրացուցակները, հայալեզու գրադարանների ցանկը ներկայացված է <https://grahavak.blogspot.com/> կայքում: Ի տարբերություն այլ առցանց գրադարանների՝ այս կայքում կարելի է գտնել ոչ թե գրքեր, այլ համացանցային զանազան աղբյուրներում եղած գրքերի հղումներ:

Լեզվական կորպուսներն իրենց կազմության սկզբունքներով նկատելիորեն տարբերվում են առցանց գրադարաններից: Հետևաբար վերոնշյալ աղբյուրները կարող են միայն նպաստել էլեկտրոնային կորպուսի ստեղծմանը, քանի որ ոչ հղումների կայքը, ոչ էլեկտրոնային գրադարանը չի կարող համարվել լեզվական կորպուս: Կորպուսներն ունեն մի շարք տարբերակիչ հատկանիշներ:

Այս հոդվածում կխոսենք գրաբարագիր տեքստերի էլեկտրոնային կորպուսի կազմության սկզբունքների, կորպուսի ստեղծման նպատակի և այն գիտական խնդիրների մասին, որոնք հնարավոր կլինի լուծել կորպուսի միջոցով: Կորպուսը հնարավորություն կտա ոչ միայն կատարելու լեզվական միավորների ամբողջական ուսումնասիրություն բոլոր գրաբարագիր տեքստերում, այլև արդիականացնելու և մեքենայացնելու լեզվի կիրառական տարբեր բնագավառներում կատարվող աշխատանքները: Հոդվածի թեմայի արդիականությունը և գիտական նորույթը պայմանավորված են հենց դրանցով:

Հոդվածում կիրառվել են համեմատական, նկարագրական-վերլուծական մեթոդները:

## **Գրաբարի էլեկտրոնային կորպուսի կազմության սկզբունքները**

Գրաբարագիր տեքստերի էլեկտրոնային կորպուս ասելով ամենից առաջ նկատի ունենք գրաբարով ավանդված ողջ մատենագիտական ժառանգությունը ներկայացնող տեքստային հենք: Կորպուսը պետք է համալրված լինի նաև տեքստերի մատենագիտական ծանոթագրման համակարգով, որի միջոցով կներկայացվեն կորպուսում ընդգրկված յուրաքանչյուր տեքստի մատենագիտական տվյալները:

2003 թ. Մատենադարանում լույս է տեսնում մատենագիտության և առհասարակ հայագիտության համար բացառիկ նշանակություն ունեցող «Մատենագիրք Հայոց» բազմահատոր ձեռնարկը: Այս նախաձեռնության շնորհիվ առաջին անգամ մեկ մատենաշարում համախմբվում է 5-18 դդ. ստեղծված ողջ մատենագրական ժառանգությունը: Արդեն հրատարակվել են հարյուրից ավելի հեղինակներ, մի քանի հարյուր բնագրեր, որոնց մեծագույն մասն առաջին անգամ է տպագրվում: Հայագիտական ուսումնասիրություններին օժանդակելու նպատակով համարակալվել են տեքստերի բոլոր նախադասությունները: Բնագրերին նախորդում են առաջաբաններ, մատենագիտական համառոտ ցանկեր և բաղդատված ձեռագրերի համարներ: Քննական-համեմատական այս հրատարակությունն անփոխարինելի ու եզակի աղբյուր է հայագիտության տարբեր ճյուղերի՝ փիլիսոփայության, պատմագիտության, լեզվաբանության, հին գրականության և բանահյուսության ուսումնասիրությունների համար: «Մատենագիրք Հայոց»-ի գրքային տարբերակին զուգահեռ հրատարակության որոշ հատորներ արդեն հասանելի են թվային տարբերակով, որը մեծապես հեշտացնում է հայ և օտարագրի հայագետների հետազոտությունները՝ հնարավորություններ ստեղծելով նոր ուսումնասիրությունների համար:

Մասնագետների կանխատեսումների համաձայն՝ ողջ հայ մատենագրության հրատարակման դեպքում կունենանք մոտ հարյուր հատորից բաղկացած հսկայաձավալ մատենաշար<sup>1</sup>:

Կարծում ենք՝ գրաբարագիր տեքստերի էլեկտրոնային կորպուսում պետք է ամբողջապես ներառել հենց այս մատենաշարի մատենագրական նյութը, որի շնորհիվ կորպուսի տեքստային հենքը կլինի արտակարգ հարուստ: Նպատակահարմար կլինի ամբողջ կորպուսը բաժանել ենթակորպուսների՝ ըստ տարբեր շրջանների գրաբարագիր տեքստերի:

Կորպուսում ընդգրկվելիք տեքստերի ընտրությունից հետո անհրաժեշտ է կատարել գրաբարի ձևային նկարագրություն, որի շրջանակներում առանցքային պետք է համարել գրաբարի մեքենական մշակման համակարգի ստեղծումը: Դա ենթադրում է տեքստի մշակման գործողությունների հետևյալ հաջորդականություն.

1. Տեքստի հատույթավորում. այն բաժանվում է պարբերությունների, նախադասությունների և բառաձևերի:

2. Ըստ նախապես մշակված բառացանկի՝ մեքենական եղանակով կատարվում է բառաձևերի ձևաբանական վերլուծություն: Որոշվում է բառերի խոսքիմասային պատկանելությունը (POS-tagging), հատուկ պիտակների միջոցով ներկայացվում են բառաձևերի քերականական կարգերը, այլ կերպ ասած՝ կատարվում է ձևաբանական պիտակավորում:

3. Վերականգնվում է ձևաբանական փոփոխությունների ենթարկված բառերի ուղիղ ձևը (lemmatization), նշվում է, թե տվյալ բառը իմաստային-քերականական ինչ խմբի է պատկանում:

Հարկ է մեծապես կարևորել հայ քերականագիտության մեջ ընդունված գրաբարի բառաքերականական կարգերի ամբողջական ներկայացնելը ձևային նկարագրության միջոցով, որը բավական լուրջ գործ է, եթե հաշվի առնենք քերականական իմաստների և դրանց արտահայտման ձևերի բազմազանությունը գրաբարում:

---

<sup>1</sup> Տե՛ս <https://bit.ly/38Pk4Cf>

Կորպուսի ստեղծման վերջին փուլում պետք է մշակել դրա տեխնոլոգիական հենքը և տեխնիկական հնարավորությունները (լեզվական միավորների որոնում, համեմատություն, դասակարգում և այլն): Ինչ խոսք, այս հողվածում կորպուսի կազմության սկզբունքներն առավել համակողմանի ներկայացնելու հնարավորություն չունենք:

Այժմ անդրադառնանք այն խնդիրներին, որոնք հնարավոր կլինի լուծել գրաբարագիր տեքստերի էլեկտրոնային կորպուսի և գրաբարի քերականության ձևային նկարագրության շնորհիվ:

### **Լեզվի կիրառական տարբեր բնագավառներում կատարվող աշխատանքների մեքենայացում**

*Գրաբարի ամբողջ բառապաշարը ներկայացնող բառարանի ստեղծում, գրաբարագիր մատենագրությունից գրաբարի բառարաններում չվկայված բառերի դուրսգրման աշխատանքների մեքենայացում*

Միայն գրաբարագիր մատենագրության ողջ բառապաշարը ներկայացնող բառարանը հնարավորություն կտա ամբողջապես ուսումնասիրելու գրաբարի բառապաշարը, տարբեր փուլերում դրա կրած փոփոխությունները, կատարելու գրաբարի բառապաշարի հասկացական դասակարգում և իմաստային խմբերի քննություն:

Հայկազյան բառարանների հրատարակությունից հետո ուսումնասիրողները տարբեր առիթներով անդրադարձել են այդ բառարաններում չգետեղված նորահայտ կամ նոր բառերին: Տարբեր շրջաններում ստեղծվել են նաև գրաբարի բառարաններ, որոնցից հիշատակության է արժանի Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան»-ը: Բառարանում ընդգրկված են բառեր և դարձվածքներ, որոնք վկայված չեն հայ բառարանագրության գլուխգործոց համարվող «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» երկհատորյակում: Բառացանկի միավորները քաղված են գրաբարյան մատենագրությունից: Թեև ըստ ընդունված շրջաբաժանման՝ գրաբարյան փուլը ընդգրկում է 5-11-րդ դարերը, բառարանում ներառված են նաև ուշ շրջ-

ջանի գրաբարագիր որոշ սկզբնաղբյուրների նյութեր: Հունաբան հայերենի բազմաթիվ արհեստական կազմություններ բառարանում տեղ չեն գտել: Բառարանագրվել են միայն այն հունաբան կառույցները, որոնք տերմինային արժեք ունեն: Ինչպես ճշմարիտ կերպով նկատում է Լ. Հովհաննիսյանը, նույնիսկ ՆՀԲ-ից հետո հրատարակված գրաբարի բառարանները և գրաբարագիր հեղինակների երկերի համաբարբառները հնարավորություն չեն տալիս ամբողջացնելու գրաբարի բառապաշարը, ներկայացնելու գրաբար մատենագրության մեջ ավանդված, բայց բառարաններում չարձանագրված բոլոր նոր բառերը: Նման կարգի բառարան կազմելու համար անհրաժեշտ է գրաբար ինքնուրույն և թարգմանական գրականության համաբարբառների կամ բառացանկի համակարգչային շտեմարան<sup>2</sup>: Այս դեպքում էլեկտրոնային կորպուսը բառարանագրական հարուստ նյութ կտրամադրի և հնարավոր կդարձնի հետագայում գրաբարի ամբողջ բառապաշարը ներկայացնող պատմական բառարանի ստեղծումը: Ավելին՝ գրաբարի ձևային նկարագրությունն էլ իր հերթին կնպաստի գրաբարագիր մատենագրությունից գրաբարի բառարաններում չվկայված բառերի դուրսգրման աշխատանքների մեքենայացմանը:

Հաջորդ կարևոր խնդիրը, որը հնարավոր կլինի լուծել գրաբարի քերականական համակարգի ձևային նկարագրության և գրաբարագիր բոլոր հեղինակների երկերն ընդգրկող էլեկտրոնային կորպուսի միջոցով, *գրաբարագիր երկերի ընդհանրական էլեկտրոնային համաբարբառի* ստեղծումն է: Տեխնիկական հնարավորությունների բացակայության պատճառով մինչ այժմ հնարավոր է եղել կազմել միայն դասական և հետդասական շրջանի գրաբարագիր հեղինակների երկերի համաբարբառները: Տվյալ դեպքում կարելի է կազմել կորպուսում ընդգրկված բոլոր հեղինակների երկերի համաբարբառը: Գրաբարի քերականության ձևվային նկարագրության միջոցով էլ հնարավոր կլինի մեքենական եղանակով կազմել բնագրում ձևաբանական փոփոխությունների

<sup>2</sup> Լ. Հովհաննիսյան, *Գրաբարի բառարան*, Ե., 2010, էջ 5:



ենթարկված բառաձևերի ուղիղ ձևը, այն դարձնել էլեկտրոնային բառահոդված, որի տակ այբբենական կարգով կներկայացվեն այդ բառի թեքված ձևերը:

### **Գրաբարի լեզվական համակարգի մակարդակային տարբեր միավորների ուսումնասիրություն**

Ինչպես հայտնի է, գրաբարի լեզվական իրողություններն առավելապես ուսումնասիրվում են բնագրային համաբարբառների օգնությամբ: Իրենց հսկայական արժեքով հանդերձ՝ բնագրային համաբարբառներն ունեն մի շարք թերություններ: Եթե բառերի և բառաձևերի ուսումնասիրության համար բնագրային համաբարբառները կարող են օգտակար լինել, նախադասության հնչերանգային և կառուցվածքային տիպերի ուսումնասիրության տեսակետից դրանք ամբողջական լեզվական նյութ չեն տրամադրում լեզվաբանին, քանի որ հնարավոր չէ կատարել շարահյուսական ուսումնասիրություններ՝ առանց ամբողջական նախադասությունների: Գրաբարի ձևային նկարագրության միջոցով հնարավոր կլինի գրաբարագիր տեքստերի էլեկտրոնային կորպուսում որոնել լեզվական միավորները, համեմատել այլ օրինակների հետ, ըստ որոշակի հատկանիշների՝ դասակարգել և այլն:

Ցանկանում ենք ընդգծել, որ վերոնշյալ աշխատանքների իրականացումը միանգամայն հնարավոր է, ավելին՝ դրանց մի մասն արդեն կատարվել է: Օրինակ՝ մեր ստեղծած <http://concordance.am/> կայքում գործող *Հայ մատենագրության և գրականության էլեկտրոնային համաբարբառը*<sup>3</sup> կարելի է հաջողությամբ վերածել գրաբարագիր հեղինակների երկերի էլեկտրոնային կորպուսի: Կայքն արդեն իսկ ընդգրկում է երկու տասնյակից ավելի հեղինակների երկերի տեքստեր: Կայքի՝ նոր տեքստերով շարունակական համալրման շնորհիվ այն կարելի է վերածել 5-18 դդ. գրաբարագիր հեղինակների էլեկտրոնային կորպուսի: Հայ մատենագրության ընդհանրական համաբարբառի ստեղծումը ևս հնարավոր է, քանի

<sup>3</sup> Տե՛ս <http://concordance.am/>:

որ կայքում կազմվում են բոլոր բնագրերի էլեկտրոնային համաբարբառները<sup>4</sup>: Նույնը վերաբերում է նաև լեզվական միավորների որոնման հնարավորությանը, քանի որ կայքում կարելի է փնտրել գրաբար տեքստերում գործածված բառեր և բառաձևեր: Որոնման դաշտում տարբեր լեզվական միավորները փնտրելու հնարավորությունները զարգացնելու շնորհիվ հնարավոր կլինի կատարել առավել բարդ հարցումներ:

### **Եզրակացություններ**

Գրաբարագիր տեքստերի էլեկտրոնային կորպուսը, ինչպես տեսանք, կունենա հսկայական տեսագործնական արժեք և ըստ ամենայնի կծառայի ինչպես գրաբարի լեզվական համակարգի առավել ամբողջական ուսումնասիրությանը, այնպես էլ կնպաստի բազմաթիվ կիրառական խնդիրների լուծմանը: Հատկապես մեծ կլինի կորպուսի արժեքը գրաբարի պատմական բառարանի ստեղծման, գրաբարագիր մատենագրությունից գրաբարի բառարաններում չվկայված բառերի դուրսգրման, ընդհանրական համաբարբառի ստեղծման բնագավառներում:

### **Օգտագործված գրականություն**

Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառարան, Ե., Էդիթ Պրինտ հրատ., 2010:

<http://concordance.am/>

<https://www.digilib.am/>

<https://grahavak.blogspot.com/>

---

<sup>4</sup> Կայքում ընդգրկված բոլոր համաբարբառները կազմվել են արդի էլեկտրոնային բառարանագրության մեջ ընդունված էլեկտրոնային համաբարբառների ստեղծման ընդհանրական սկզբունքով (<https://www.opensourceshakespeare.org/concordance/>, <https://www.thomasgray.org/resources/concordance.shtml> և այլն): Բառահոդվածի կառուցվածքի տեսակետից էլեկտրոնային համաբարբառները նկատելիորեն տարբերվում են բնագրային համաբարբառներից:

---

<https://www.opensourceshakespeare.org/concordance/>

<https://www.thomasgray.org/resources/concordance.shtml>

**Накобыан Фрида - The Purpose and Objectives of the Creation of an Electronic Corpus of the Old Armenian Language.** – The electronic corpus of the Old Armenian language will have a huge theoretical and practical value. It will serve to the complete study of the language system of the Old Armenian language, as well as will contribute to the solution of many practical problems.

**Keywords:** corpus linguistics, electronic corpus, corpus, formal description of a language, electronic concordance, computer vocabulary, text database.

Накобыан Фрида, PhD of Philology, Institute of Language named after H. Acharyan of NAS RA, Researcher.

**Акопян Фрида – Цель и задачи создания электронного корпуса Древнеармянского языка.** – Электронный корпус древнеармянского языка будет иметь огромное теоретическое и практическое значение. Он послужит полному изучению языковой системы древнеармянского языка, а также будет способствовать решению многих практических задач.

**Ключевые слова:** корпусная лингвистика, электронный корпус, корпус, формальное описание языка, конкорданс, компьютерная лексика, текстовая база данных.

Акопян Фрида, кандидат филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, научный сотрудник.

**ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՂԱՐԱԲԱՂԻ (ԱՐՑԱԽԻ) ԲԱՐԲԱՌՈՒՄ\***

10.54412/2738277X-2022.1.2-67

**Հովհաննիսյան Լավրենտի**

բանասիրական գիտությունների դոկտոր,  
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,  
գլխավոր գիտաշխատող

**Բանալի բառեր.** հնաբանություն, թվական, քանակական թվական, անձներական թվական, գրաբար, բարբառ, Ղարաբաղի բարբառ:

**Նախաբան**

Արցախի բարբառում որոշ թվականներ պահպանել են մեզ հայտնի հնագույն ձևերն ու իմաստային կիրառությունները, ասել է թե գործ ունենք թվականների հնաբանությունների հետ:

«Մարդկությունը իր ամենից ավելի նախնական վիճակում հաշվական կարողության կողմից չէր կարող շատ բարձր մի դիրք ունեցած լինել: Արդի ամենից ավելի զարգացած ցեղերն ու ժողովուրդներն էլ նախապես մեկից մինչև երեք թվականներն էին միայն ճանաչում»<sup>1</sup>:

Հայ քերականագիտության մեջ երկար ժամանակ թվականն առանձին խոսքի մաս չի համարվել, այն համարվել է ածականի մի տեսակ:

«Թվական անունը որպես խոսքի մաս իմաստաբանորեն բնորոշվում է նրանով, որ ցույց է տալիս առարկաների թիվ, քանակ

\* Ներկայացվել է 11.05.2022, գրախոսվել՝ 18.05.2022:

<sup>1</sup> **Հ. Աճառյան**, *Լիակատար քերականություն հայոց լեզվի* (այսուհետև՝ ԼՔՀԼ), հ. 1, Ե., 1952, էջ 132 :

կամ թվային կարգ»<sup>2</sup>: Թվականներն արտահայտում են կոնկրետ թիվ և կարող են թվանշաններով արտահայտվել:

Բարբառային հնաբանությունները ակներև են հատկապես քանակական և անձներական թվականների համակարգում: Հին հայերենի թվականների բառային արտահայտությունները (գրությունը) վկայված են գրաբարում:

Ուսումնասիրությունը կատարվել է համաժամանակյա և տարաժամանակյա մեթոդների կիրառությամբ: Չուգահեռներ են անցկացվել թվականների հնագույն դրսևորումների և Արցախի բարբառում դրանց արտահայտության միջև: Դիտարկվել են աղերսները տարբեր լեզուների հետ, առնչությունը հնդեվրոպական հիմք լեզվին:

### Ա) Քանակական թվականներ

Գրաբարի 1-10 թվականներն են՝ *մի* - բարբառում՝ *մին*<sup>3</sup>, երկու-երկու, երեք-իրեք, չորք-չորք/ չորս...<sup>4</sup>, հինգ-հենգ, վեց-վեց, եւթն (եօթն) - օխտը<sup>5</sup>, ութ-օթ, ինն-իննը, տասն-տասսը. բարբառում *ն-ն* առկայանում է բաղադրություններում՝ տասնըմին, տասներկու...

Գրաբարի տասնավորները բարբառում նույնպես հնչյունափոխված են. *տասն-տասսը, յիսուն-իցցուն, վաթսուն-վացցուն*: Բարբառում կա և *քաթսուն* (հիմնականում տարեցների խոսքում): Ենթադրվում է, որ *քաթսունը* կազմվել է *վաթսուն* թվականի նմանությամբ<sup>6</sup>: Կարծում ենք՝ *քաթսունը* թվանիշ չէ և նշանակում է

<sup>2</sup> Մ. Ասատրյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1973, էջ 61:

<sup>3</sup> Բարբառում *մեկ* գրությունը վկայված է XVII դարից. «մեկ բերան ողորմի ասե»: (Մ. Բարխուդարյան, *Դիվան հայ վիմագրության*, պրակ V, Արցախ, Ե., 1982, էջ 162):

<sup>4</sup> *Չորք*-ը հանդիպում է հիմնականում տարեցների խոսքում:

<sup>5</sup> Գրաբարի որոշ բառեր *աւձ, աւտար, էաւթն* - բարբառում՝ *օխձը, օխտար, օխտը*: Այս հնչյունափոխությունը այնքան էլ նոր չէ: Հնչյունափոխության քննությունը տե՛ս Ա.Ե. Խաչատրյան, *Հայերենի պատմական հնչյունափոխության մի քանի հարցեր*. - «Հայերենագիտական միջազգային երրորդ գիտաժողով», Ե., 1987, էջ 78:

<sup>6</sup> Կ. Դավթյան, *Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը*, Ե., 1966, էջ 125:

«շատ»: Հնարանություն պետք է համարել 100 (հարյուր) և 1000 (հազար) թվականների «շատ, բազմաթիվ» նշանակությամբ գործածությունը:

Գրաբարում նույնպես «հազար, հարիւր վարին ուրեք փոխանակ անսահման թուոց, իբրև բազում, անթիւ, անհամար»<sup>7</sup>:

*Հազար*-ի «շատ, բազմաթիվ» նշանակությունը բնորոշ է նաև հնդեվրոպական լեզուներին:

Ենթադրվում է, որ ռուս. тьсяча-ն ծագում է հ.-ե. \*km̥tom-ից, նախնական «մեծ հարյուրներ»<sup>8</sup>:

Ռուսերենի որոշ խոսվածքներում тьсяча-ն նշանակում է նաև «թանկագին, անզնահատելի»<sup>9</sup>:

Գրաբարում *բիւր* նշանակում է 10.000, նաև՝ «շատ, բազմաթիվ»: *Հազար, բիւր* բառերը իրանական լեզուներից կատարված փոխառություններ են. միջին պարսկերեն bēvar<sup>10</sup>: Հայերենի բոլոր թվականները հնդեվրոպական ծագում ունեն՝ բացի *հազար*-ից և *բիւր*-ից:

Որոշ լեզուներ ունեն *հազար* թվականի անվանումը, բայց փոխառել են իրանական *hazar*-ը: Հնդկերենը պահպանել է սանսկրիտի բոլոր թվականները, բայց փոխառել է *հազար*-ը: Սլովեներենն ունի тисо «հազար» բառը: Սերբերենն ու բուլղարերենը իբրև սլավոնական լեզու ունեն իրենց բնիկ բառը, բայց գործածում են հունարենից փոխառված բառը (ԼՔՀԼ, I, 209):

<sup>7</sup> Մ. Բազրատունի, *Հայերեն քերականության ի պետս զարգացելոց*, Վենետիկ, 1852, էջ 66:

<sup>8</sup> М. Фасмер, *Этимологический словарь русского языка*, т. 4, М., 1973, стр. 133:

<sup>9</sup> В. Даль, *Толковый словарь живого великорусского языка*, т. IV, М., 1955, стр. 448:

<sup>10</sup> Տ. Դավայանը ենթադրում է, որ *բիւր*-ը ավելի մոտ է արևելաիրանական ձևերին՝ օսերենին և սակերենին («*Արևելաիրանական միջնաշերտի» որոշ նմուշներ հայոց բառապաշարում*», «Ջահուկյանական ընթերցումներ», Ե., 2008, էջ 69): *Բիւր* բառն առաջին անգամ վկայված է «Արտաշես և Սաթենիկ» վիպագրի պահպանված պատառիկում՝ ալանաց արքայի խոսքում. «Եւ ուստի՞ տացէ քաջն Արտաշէս/ Հազարս ի հազարաց և բիւրս ի բիւրոց / Ընդ քաջագգոյ կոյս օրիորդիս Ալանաց»:

### 11-19 թվականներ

Տարբեր լեզուներում միավորները նախորդում կամ հաջորդում են տասնավորին:

Հնդեվրոպական հին լեզուներում, «ինչպես և մասամբ գրաբարում առաջ դրվում էր միավորը, հետո տասնավորը» (ԼՔՀԼ, հ. I, 191):

Հին իրանական լեզուներից վկայված 15, 16-ի միավորները նախադաս են. *pančadasa* (15), *xšašdasa* (16): Այդպես է և միջին իրանական լեզուներում ու պարսկերենում: Միավորները նախադաս են հունարենում, լատիներենում (լատիներենում 16-ից սկսած միավորը կարող է լինել նախադաս կամ հետադաս) (ԼՔՀԼ, I, 192), ռուսերենում նույնպես միավորը դրվում է տասնավորից առաջ: Սեմական լեզուներից ասորերենում նախադաս է տասնավորը, իսկ եբրայերենում՝ միավորը (ԼՔՀԼ, I, 190):

### Դիտարկումներ

ա) 11-19 թվականների բառային գրությունը V դ. ինքնուրույն մատենագրության մեջ հաճախական չէր, ավելի հաճախական էր թարգմանական գրականության մեջ: Բերենք որոշ տվյալներ:

*Երկոտասան* (Կորյուն՝ 1, Եզնիկ՝ 4, Խորենացի՝ 4 - Աստվածաշունչ՝ 143):

*Երեքտասան* (Եղիշե՝ 1, «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»-ն<sup>11</sup> այլ վկայություն չունի - Աստվածաշունչ՝ 4):

*Չորեքտասան* (ՆՀԲ՝ 0 (զրո) - Աստվածաշունչ՝ 19):

*Հնգեքտասան* (ՆՀԲ՝ 4, առանց սկզբնաղբյուրը նշելու - Աստվածաշունչ՝ 15)\*:

բ) Գրաբարում երբեմն հանդիպում են *տասն և մի, տասն և երկու, տասն և երեք*<sup>12</sup>:

<sup>11</sup> Գ. Աւետիքեան, Խ. Միրմելեան, Մ. Աւգերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, (այսուհետև՝ ՆՀԲ), հհ.-1-2, Վենետիկ, 1836-1837:

\* Տվյալները նշված հեղինակների երկերի և Աստվածաշնչի համաբարբառներից են:

### Բ) Անձներական թվականներ

Անձներական թվականները ցույց են տալիս առարկաների քանակը՝ միաժամանակ նշելով նրանց միասնականությունը, ամբողջականությունը, նրանց միասնական առումը խոսքի մեջ. *երկուքին* կամ *երկուքեան* նշանակում է երկուսն էլ, երկուսը միասին: Անձներական թվականները կազմվում են քանակական թվականներից -եքին, -եքեան ածանցներով<sup>13</sup>:

Գրաբարում և բարբառում այս թվականները հոլովվում են միայն հոգնակի թվով՝ ուղղ. երկուքին, երկուքեան, սեռ. երկուցուն, երկուցունց. բարբառներում նույնպես պահպանվել է ուղղական հոլովի *ք*-ն և սեռականի *ց*-ն:

### Եզրակացություններ

Բարբառի 11-19 թվականների մեջ տասնավորների՝ միավորից առաջ դրվելու իրողությանը նպաստել են մի շարք գործոններ՝ գրաբարում վկայված բառաձևերը, հարևան ժողովուրդների լեզուների ազդեցությունը, V դարից գործածվող ԺԱ, ԺԲ, ԺԳ թվանշանային գրությունը (թե ինչպես են դրանք արտաբերվել, այլ հարց է):

Անձներական թվականները, անշուշտ, հնաբանություններ են: Գ. Ջահուկյանը գրում է. «Անձներական թվականների գործածությունը բնորոշ էր դասական գրաբարին»<sup>14</sup> (V դ. առաջին կես): Լեզվաբանը նկատի ունի գրավոր մատենագրության տվյալները: Անձներական թվականները կիրառվել են նախագրային շրջանից

<sup>12</sup> Ա. Բագրատունի, *Հայերեն քերականությունիս ի պէտս զարգացելոց*, էջ 66: Բագրատունու նշած բառաձևերը հիմնականում Եւսեբի Պամփիլեայ Կեսարացոյ «*Ճամանակականք*» (*քրոնիկոն*)-ից են: ՆՀԲ-ն այս երկը համարում է «պանծալի թարգմանությունիս ի յոյն բնագրէ քաջ հայկաբանութեամբ» (ՆՀԲ, I, 12):

<sup>13</sup> Ա. Աբրահամյան, *Գրաբարի ձեռնարկ*, Ե., 1976, էջ 71 (*առարկաների քանակը* կապակցությունից առաջ պետք է գրվեր *անձանց* բառը): Թերևս *անձներական* բառի առաջին բաղադրիչը *անձ* բառն է. Ա. Բագրատունիին գրում է. «Ասին անձանց և իրաց, առանձինն և ընդ գոյականս» (Ա. Բագրատունի, *Հայերեն քերականություն ի պէտս զարգացելոց*, էջ 69):

<sup>14</sup> Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի զարգացման փուլերը*, Ե., 1964, էջ 37:



շատ ավելի վաղ: Հայերենի բարբառներից անձներական թվականները պահպանվել են միայն Ղարաբաղի (Արցախի) և Մեղրու բարբառներում:

Այս իրողությունը թույլ է տալիս ենթադրելու, որ գրաբարի և բարբառի անձներական թվականները նախագրային շրջանի կազմություններ են, և բարբառային ձևերը գրաբարյան ժառանգություն չեն, դրանք իրարից անկախ հինհայերենյան բառեր են:

Բարբառում կան հնդեվրոպական ծագում ունեցող բազմաթիվ բառեր, որոնք գրաբարում վկայված չեն:

Ըստ երևույթին, անձներական թվականները նախապես գործածվել են Արցախ-Սյունիքի տարածքում:

### Օգտագործված գրականություն

Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976:

Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. I, Ե., 1952:

Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1983:

Բագրատունի Ա., Հայերեն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852:

Բարխուդարյան Ս., Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, Ե., 1982:

Դալլայան Տ., «Արևելաիրանական միջնաշերտի» որոշ նմուշներ հայոց բառապաշարում.- Ջահուկյանական ընթերցումներ, Ե., 2008:

Դավթյան Կ., Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Ե., 1966:

Խաչատրյան Ա.Ե., Հայերենի պատմական հնչյունափոխության մի քանի հարցեր. - Հայերենագիտական միջազգային երրորդ գիտաժողով, Ե., 1987:

Ջահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացման փուլերը, Ե., 1964:

Даль В., Толковый словарь живого великорусского языка, т. IV, Москва, 2008:

Фасмер М., Этимологический словарь русского языка, т. 4, Москва, 1957.

**Hovhannisyan Lavrenti - Archaisms of Numerals in Karabakh (Artsakh) dialect.** - The subject of study is the dialectical forms of cardinal and collective numerals as well as the peculiarities of their usage. In Artsakh dialect tens precede units in number words from 11 to 19. In Grabar units mostly precede tens. Dialectical forms have been influenced by a number of factors, particularly the alphabetical numeral system- ժԱ, ժԲ, ժԳ... (Ա – 1, Ժ – 10...). Collective numerals are used in Grabaras well as in dialects of Karabakh and Meghri.

**Keywords:** archaism, numeral, cardinal numeral, collective numeral, Grabar, dialect, Karabakh dialect.

Hovhannisyan Lavrenti, Doctor of Philology, Institute of Language named after H. Acharyan of NAS RA, Principal Researcher.

**Оганесян Лавренти - Архаизмы числительных в карабахском (арцахском) диалекте.** - Исследованы формы выражения и особенности употребления количественных и собирательных числительных. В диалекте при отображении чисел от 11 до 19 десятки ставятся перед единицами. В грабаре в основном единицы ставятся перед десятками. В диалекте словоформы были сформированы под воздействием нескольких факторов, в основном это связано с буквенными изображениями цифр – ժԱ, ժԲ, ժԳ... (Ա–1, Ժ–10...). Собирательные числительные существуют в грабаре, в карабахском (арцахском) и мегрийском диалектах.

**Ключевые слова:** архаизм, числительное, количественное числительное, грабар, диалект, карабахский диалект.

Оганесян Лаврентий, доктор филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, главный научный сотрудник.

## ԱՐՏԱԿ ԱՆՁՆԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ\*

10.54412/2738277X-2022.1.2-74

### Վարդանյան Արտակ

բանասիրական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,  
ավագ գիտաշխատող. artva@list.ru

**Բանալի բառեր.** հնդեվրոպական նախալեզու, զրադաշտականություն, հինդուիզմ, պահլավերեն, սանսկրիտ, Ավեստա, Վեդաներ:

### Նախաբան\*\*

Հայ պատմագիրների կողմից 4-րդ դարից ի վեր վկայված հայկական *Արտակ* արական անձնանունը Հրաչյա Աճառյանը կապել է պահլավական *Arta* անձնանվան հետ՝ համարելով վերջինիս փաղաքշական ձևը<sup>1</sup> (Արտա + ալ): Կարապետ Դուրգարյանը իր «Անվանագիրք» աշխատության մեջ անձնանունը նույնպես պահլավական է համարել և ստուգաբանել թերևս ոչ այնքան արժանահավատ «սրընթաց» նշանակությամբ<sup>2</sup>: Ա. Տեր Խաչատուրյանի, Հ. Գանգրունու, Փ. Տոնիկյանի «Հայոց լեզուի նոր բառարան»-ը անձնանունը մեկնում է որպես «փաղաքշական ձև Արտաազգ, Արտաաան անուններու»<sup>3</sup>:

Մինչև միջնադար հայերը կիրառել են նաև *Արտա* իգական անձնանունը, որը կրել է, օրինակ, Ռուբինյանների արքայատոհմի

\* Ներկայացվել է 22.04.2022, գրախոսվել՝ 04.05.2022:

\*\* Հոդվածը նվիրվում է հայ պատմագիտության երախտավոր Արտակ Մովսիսյանի պայծառ հիշատակին:

<sup>1</sup> Հ. Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան*, հ. 1, Ե., 1942, էջ 303-304:

<sup>2</sup> Կ. Դուրգարյան, *Անվանագիրք*, Ե., 1981, էջ 21:

<sup>3</sup> Ա. Տեր Խաչատուրեան, Հ. Գանգրունի, Փ. Տոնիկեան, *Հայոց լեզուի նոր բառարան. արական անձնանուններ*, Պեյրոթ, 1968, էջ 914:

հիմնադիր Ռուբեն Ա-ի թոռ և Երուսաղեմի թագավորության առաջին թագուհի Արտան (Արդա): Հ. Աճառյանն այս անձնանունը անհայտ ծագման է համարել<sup>4</sup>, թեև *Արտակ* անձնանվան հետ ակնհայտորեն միևնույն ծագումը պետք է ունենա:

Սույն հոդվածի արդիականությունն այն է, որ առավել համակողմանի քննությամբ առաջարկվում է անցյալում և մեր ժամանակներում լայնորեն տարածված հայկական այս անձնանվան ստուգաբանության նոր վարկած: Նորույթը և նպատակն են անձնանվան հնդեվրոպական ծագման հիմնավորումը:

Հետազոտությունն իրականացվել է լեզվաբանության մեջ կիրառվող համաժամանակյա և տարաժամանակյա մեթոդներով:

### Դիտարկումներ

Հնդեվրոպական նախալեզվի *art* արմատից բխող՝ հայերենի *արդ* («ձև, կարգավորություն, սարք») բառը ընդարձակ կիրառություն ստացած բառարմատներից է<sup>5</sup>, որը, ինչպես հայտնի է, բառաբարդմամբ և ածանցմամբ հայերենի բոլոր փուլերում բազմաթիվ բառերի հիմքն է դարձել՝ *անարդ* («անձև»), *մակարդակ*, *խորանարդ*, *գմբեթարդ*, *արդուկ*, *գարդարել*, *հարդարել*, *արդյունք*, *արդար* և այլն: Հնդեվրոպական մյուս լեզուներում նույնպես *art*-ը մեծ կիրառություն է ստացել. հունարենում տվել է *ἀρτύς* («կարգավորություն»), *άρτος* («զարդարուն»), *άρτι* («արդար, ճշմարիտ»), *ἀρτιεπής* («ճշմարտախոս»), *ἀρτι-voος* («արդարամիտ») և այլն, լատիներենում՝ *artis* («ճարտարություն, արվեստ, գեղարվեստ»), *artifex* («վարպետ») և այլն, սանսկրիտում՝ *ṛtá* («սուրբ հրաման, իրավունք, ճշմարտություն»), *ṛtávan* («սուրբ, արդար»), *ṛtú* («կարգ, կանոն») և այլն, հին պարսկերենում՝ *arta*, Ավեստայում՝ *aša*, *ašavan* («սուրբ») և այլն<sup>6</sup>:

<sup>4</sup> Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 303:

<sup>5</sup> Հ. Աճառյան, *Հայերէն արմատական բառարան*, հ. 1, Ե., 1926, էջ 306:

<sup>6</sup> Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 307-308:

Ի դեպ, Հ.Աճառյանը շեշտել է նաև, որ «արիական, հայ, յոյն, լատին և գերմանական ընտանիքներից դուրս ուրիշ տեղ չէ՛ պահուած այս արմատը»<sup>7</sup>:

Գևորգ Չահուկյանը, համակարծիք լինելով Հ. Աճառյանի հետ, հայերենի *արդ* բառը բխեցրել է բնիկ հնդեվրոպական \*ar-t (\*rt/\*ar) ճշգրտված արմատից<sup>8</sup>:

Հայտնի գրադաշտագետ Մերի Բոյսը իր «Ջրադաշտականներ. հավատալիքներ և սովորույթներ» մենագրության մեջ Ավեստայի *aša*-ն ստուգաբանում է որպես «տիեզերական կարգ, ճշմարտություն, արդարություն», իսկ *ašavan*-ը՝ «արդարամիտ, բարեպաշտ, սրբակյաց»<sup>9</sup>: Նա միաժամանակ նշում է, որ այն դժվար թարգմանելի բառ է, և տարբեր համատեքստերում տարբեր հասկացություններ են դրան համապատասխանում՝ «կարգ», երբ այն վերաբերում է նյութական աշխարհին, «ճշմարտություն», «արդարություն», «բարեպաշտություն», երբ այն վերաբերում է բարոյականությանը<sup>10</sup>:

Ջրադաշտական կրոնի գլխավոր աստված Ահուրամազդայի (հայկական զուգահեռը՝ Արամազդ) վեց անմահ սրբություն-ոգիներից երկրորդը կրակը խորհրդանշող Արտա-ճշմարտությունն է<sup>11</sup>, որի անունն է կրում հին պարսկական օրացույցի ամսանունների երկրորդ օրանունը (Ավեստայում՝ Աշա Վահիշտա՝ Վեհ Արտա)<sup>12</sup>, ինչպես նաև ժամանակակից պարսկական օրացույցի երկրորդ՝ Օրդիբեհեշտ (Ավեստայում՝ Արդվահիշտ) ամսանունը<sup>13</sup>:

Արդի իրանական անձնանունների համակարգում այսօր էլ կիրառական է գրադաշտական հավատքի գլխավոր խորհրդանիշ-

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> Գ. Չահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 88:

<sup>9</sup> M. Boyce, *Zoroastrians: Their Religious Beliefs and Practices*, London, Boston and Henley, 1979, էջ 239:

<sup>10</sup> M. Boyce, նշվ. աշխ., էջ 8:

<sup>11</sup> *Հին արևելքի պոեզիա*, խմբ. և կազմ. Հ. Էդոյան, Ե., 1982, էջ 582:

<sup>12</sup> E. Дорощенко, *Зороастрийцы в Иране*, М., 1982, էջ 65-67:

<sup>13</sup> Նույն տեղում:

ներից մեկը. 𐎠𐎼𐎷 *Arta* անունը՝ որպես արական, երբեմն էլ նաև իգական անձնանուն<sup>14</sup>, կիրառում են ոչ միայն զրադաշտական իրանցիները, այլև մահմեդականները: Իրանական *Արտան*, անկասկած, բխում է Ավեստայի Աշա-Արտա ոգու անունից, որին է նվիրված Ավեստայի հիմն-աղոթքներից՝ գաթերից մեկը.

«...Թող իմ կատարած գործերի համար  
 Ինքը՝ Ահուրան ինձ փոխհատուցի,  
 Քանի դեռ ապրում եմ,  
 Թող մարդկանց առաջնորդեմ  
 Արտայի՝ ճշմարտության ուղիով:  
 Արտա-ճշմարտություն, կրակի՝ Ոգի,  
 Կարո՞ղ եմ ընկալել, ըմբռնել  
 Վոհունանային<sup>15</sup> և քեզ...»<sup>16</sup>:

Հնդարիական *Ռիտա* 𐎠𐎼𐎷 իգական անձնանունը, ակնհայտորեն կապ ունի սանսկրիտի *ṛta*-ի (հետևաբար նաև՝ հնդեվրոպական նախալեզվի *art*-ի) հետ, քանի որ Հնդկաստանի հնագույն ավանդական անուններից է<sup>17</sup>: Ըստ Վեդաների՝ *ṛta*-ն հինդուիզմի տիեզերական կարգն ու ճշմարտությունն է, որի առջև մարդիկ ունեն որոշակի պարտականություններ (դիարմա), իսկ դրանք պահպանողներն ու խախտողները արժանանում են լավ ու վատ արարքների դիմաց փոխհատուցման (կարմա)<sup>18</sup>:

<sup>14</sup> ع. دهخدا، اُقت نامہ،

[https://www.vajehyab.com/dehkoda/%D8%A7%D8%B1%D8%AA%D8%A7-4?fbclid=IwAR1gaV\\_jfN1cASCQJxsNedrt5BmUm5K1C\\_El-SIN\\_sCOaztx4AS6bpX8sAg](https://www.vajehyab.com/dehkoda/%D8%A7%D8%B1%D8%AA%D8%A7-4?fbclid=IwAR1gaV_jfN1cASCQJxsNedrt5BmUm5K1C_El-SIN_sCOaztx4AS6bpX8sAg)

<sup>15</sup> Ահուրամագդայի վեց ամսահ ոգիներից առաջինն է:

<sup>16</sup> Ավեստա, յասնա 28.– *Հին արևելքի պոեզիա*, խմբ. և կազմ. Հ. Էդոյան, էջ 354-355:

<sup>17</sup> Թեև առավել ուշ շրջանում թյուրիմացաբար ընկալվում է որպես *Մարգարիտա* անձնանվան կրճատ ձև:

<sup>18</sup> <https://www.britannica.com/topic/rita-Hinduism>

Թերևս հնդեվրոպական *art* արմատի հետ կարելի է կապել նաև փոքրասիական *Արտագնես* դիցանունը (Կոմմագենե-Կամախ, Նեմրուժ լեռան սրբավայր) և համանուն անձնանունը<sup>19</sup>:

Հայտնի է, որ Հայկական լեռնաշխարհը և Հին Հայաստանը նույնպես բնապաշտական հավատալիքների, մասնավորապես՝ զրադաշտականության, տարածման սահմաններում են գտնվել<sup>20</sup> և ընդհանուր-արիական աշխարհայացքն ու արժեհամակարգը կրթողներից եղել: Բավական է հիշել Հայկական լեռնաշխարհում Ք. ա. 3-րդ հազարամյակում ձևավորված և շումերական սկզբնաղբյուրներում հիշատակված՝ սրբազան օրենքների Արատտա երկրի<sup>21</sup> գոյության և հին աշխարհում հայտնի նրա օրինակելի պետական կառավարման ձևի վերաբերյալ վկայությունները: Վերջիններս հավաստում են, որ հին Հայաստանում վաղնջական ժամանակներից նույնպես առաջնորդվել են տիեզերական կարգի պահպանման, ճշմարտության և արդարության սկզբունքներով:

### Եզրակացություն

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ հնարավոր ենք համարում *Արտակ* անձնանվան կապը ոչ միայն իրանական *Արտայի*, այլև հնդեվրոպական նախալեզվի միևնույն *art* արմատից բխող հնդարիական *Ռիտայի*, ինչպես նաև ընդհանուր-արիական հնագույն դավանանքային արժեհամակարգի հետ:

Ստուգաբանության սույն վարկածը, որի հիմքում բնիկ հրնդեվրոպական *art* («ձև, կարգ, կարգավորություն») արմատի «ճշմարիտ, արդար» ենթաիմաստներն են, թերևս հաստատում են նաև *Արտակ* անձնանվան հետ ակնհայտորեն նույնարմատ հայ-իրանական այլ անձնանունների դասական ստուգաբանությունները՝

<sup>19</sup> *International Nemrud Foundation*, <http://nemrud.nl/index.php/tourist-information/the-nomos/kommagene/>; *Вестник древней истории*, М., 1966, N 2.– Г. Саркисян, [Обожествление и культ царей и царских предков в древней Армении](#), էջ 3–26:

<sup>20</sup> **М. Бойс**, նշվ. աշխ., էջ 103-105:

<sup>21</sup> **Ա. Մովսիսյան**, *Հնագույն պետությունը Հայաստանում*. Արատտա, Ե., 1992:

*Արտաշես* («արդարությամբ իշխող»)՝<sup>22</sup> *Արտավազդ* («հավերժ արդար»)՝<sup>23</sup> *Արտավան* («արդարամիտ, արդարություն ճառագայթող»)՝<sup>24</sup> և այլն:

### Օգտագործված գրականություն

- Աճառեան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 1, Ե., 1926:  
 Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. 1, Ե., 1942:  
 Դուրգարյան Կ., Անվանագիրք, Ե., 1981:  
 Հին արևելքի պոեզիա, իմբ. և կազմ. Հ. Էդոյան, Ե., 1982:  
 Մովսիսյան Ա., Հնագույն պետությունը Հայաստանում. Արատտա, Ե., 1992:  
 Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:  
 Տէր Խաչատուրեան Ա., Գանգրունի Հ., Տոնիկեան Փ., Հայոց լեզուի նոր բառարան. արական անձնանուններ, Պէյրոթ, 1968:  
 Boyce M., Zoroastrians: Their Religious Beliefs and Practices, London, Boston and Henley, 1979.  
 Вестник древней истории, М., 1966, N 2.– Г. Саркисян, [Обожествление и культ царей и царских предков в древней Армении.](#)  
 Дорошенко Е., Зороастрийцы в Иране, М., 1982.  
 دهخدا ع، لقت نامه،  
[https://www.vajehyab.com/dekhoda/%D8%A7%D8%B1%D8%AA%D8%A7-4?fbclid=IwAR1gaV\\_jfN1cASCQJxsNedrt5BmUm5K1C\\_El-SIN\\_sCOaztx4AS6bpX8sAg](https://www.vajehyab.com/dekhoda/%D8%A7%D8%B1%D8%AA%D8%A7-4?fbclid=IwAR1gaV_jfN1cASCQJxsNedrt5BmUm5K1C_El-SIN_sCOaztx4AS6bpX8sAg)  
 International Nemrud Foundation, <http://nemrud.nl/index.php/tourist-information/the-nomos/kommagene/>  
<https://www.britannica.com/topic/rita-Hinduism>

**Vardanyan Artak - Etymology of the Personal Name *Artak*.**– Hrachia Acharian connected the Armenian male name *Artak* with the Parthian name *Arta*, considering the latter a diminutive form (*Arta* + *ak*). Other

<sup>22</sup> Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հ. 1, էջ 305:

<sup>23</sup> Հ. Աճառեան, նշվ. աշխ., էջ 310:

<sup>24</sup> Հ. Աճառեան, նշվ. աշխ., էջ 316:



researchers also attributed a Parthian origin to this name and etymologized it in the meaning of “fast moving” or considered it a diminutive form of the names Artavazd, Artavan.

The Iranian male-female name *Arta* آرتا comes from the name of Arta- truth, symbolizing the fire, the second of the six immortal shrines-spirits of the supreme Zoroastrian god Ahuramazda (Armenian parallel - Aramazd) - one of the most powerful spirits of the Zoroastrian religion.

The Indo-Aryan female personal name *Rita* रीता, although in later epochs it was considered to be a short form of the name *Margarita*, nevertheless, a direct connection of this personal name with the cosmic order and the truth of the Vedas - *ṛta*, is more likely, since it is one of the oldest traditional names of India.

The Armenian highlands and Ancient Armenia were also within the limits of pantheistic beliefs, in particular, the spread of Zoroastrianism, and were among the carriers of the general Aryan worldview and value system, therefore, it will be possible to consider the connection of the personal name *Artak* not only with the Iranian male-female name *Arta*, but also with the Indo-Aryan female name *Rita*, which comes from the same root *art* (“form, order, ordering”) of the Indo-European proto-language.

**Key words:** Indo-European parent language, Zoroastrianism, Hinduism, Parthian, Sanskrit, Avesta, Vedas.

Artak Vardanyan, PhD of Philology, Institute of Language named after H. Acharyan of NAS RA, Senior Researcher.

**Варданян Артак- Этимология личного имени Артак.**– Рачия Ачарян связывал армянское мужское имя *Артак* с парфянским именем *Арта*, считая последнюю уменьшительно-ласкательной формой (Арта + ак). Другие исследователи также приписывали этому имени парфянское происхождение и этимологизировали в значении "быстродвигающийся" или же считали его уменьшительно-ласкательной формой имен Артавазд, Артаван.

Иранское мужское-женское имя *Arta* آرتا происходит от имени символизирующего огонь Арта-иастины -второго из шести бессмертных святынь-духов верховного зороастрийского бога Ахурамазды

(армянский параллель- Арамазд) -одного из самых могущественных духов зороастрийской религии.

Индоарийское женское личное имя *Puma* पृमा, хотя и в более поздние эпохи принято было считать краткой формой имени *Margaritha*, тем не менее более вероятна прямая связь этого личного имени с космическим порядком и истиной Вед-*ṛta*, поскольку является одним из древнейших традиционных имен Индии.

Армянское нагорье и Древняя Армения также находились в пределах пантеистических верований, в частности, распространения зороастризма, и относились к числу носителей общеарийского мировоззрения и системы ценностей, следовательно, возможно будет считать связь личного имени *Артак* не только с иранским мужским-женским именем *Арта*, но и индоарийским женским именем *Puma*, происходящим от того же корня *art* ("форма, порядок, упорядочение") индоевропейского праязыка.

**Ключевые слова:** индоевропейский праязык, зороастризм, индуизм, парфянский язык, санскрит, Авеста, Веды.

Варданян Артак, кандидат филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, старший научный сотрудник.

## II

**ԳԵՏԻՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ  
ԻՄԱՍՏԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ\*1**

10.54412/2738277X-2022.1.2-82

**Խաչատրյան Հասմիկ**

բանասիրական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,  
ավագ գիտաշխատող. [khachhasmik@yahoo.com](mailto:khachhasmik@yahoo.com)

**Բանալի բառեր.** բարբառային հայերեն, բնիկ հայերեն բառ, գրաբար, բառիմաստային զարգացում, խոսվածք, բարբառախումբ, հնչյունական տարբերակ:

**Նախաբան**

Հայերենը, ինչպես հայտնի է, լավ է պահպանել բնակության, տան և դրա մասերի վերաբերյալ բնիկ հնդեվրոպական անվանումները:

Գևորգ Ջահուկյանի առանձնացրած 23 իմաստային (թեմատիկ) խմբերից 7-րդը «բնակարան, տուն, կահ-կարասի» խումբն է, որի բառացանկում ներառված են բնիկ հնդեվրոպական *տուն, ալթ, խոտ, դուռն, անդ, որմն, ձեղուն, առաստաղ, ցիւ, քիւ* և այլ բառանուններ<sup>2</sup>:

Հիշյալ խմբի հասկացությունները բարբառային հայերենում դրսևորված են բազմաթիվ ուշագրավ ու ինքնատիպ բառանուններով: Սույն հոդվածում մեր նպատակն է քննության ենթարկել

\* Ներկայացվել է 24.09.2022, գրախոսվել՝ 20.10.2022:

<sup>1</sup> Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T- 6B111 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

<sup>2</sup> **Գ. Ջահուկյան**, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան* (այսուհետև՝ ՀԼՊ ՆԺ), Ե., 1987, էջ 264:

*գետին* հասկացության բառանունները և նրանց իմաստային զարգացումները: «Տուն և տնտեսություն» իմաստային դաշտն արտացոլող բառանունների շարքում ներառել ենք նաև *գետին* բառանունը, քանի որ բարբառային հայերենում այն գործառում է ոչ միայն «հողի երես» իմաստով, այլև որպես «տան հողե հատակ» հասկացության նշանակելի:

Թեման արդիական է, քանի որ գիտականորեն առավել հանգամանալից անդրադառնալով «տուն և տնտեսություն» իմաստային դաշտի բարբառային դրսևորումներին՝ հնարավոր կլինի բացահայտել հայերենի բարբառներում եղած իմաստաբանական, բառագիտական, ծագումնաբանական բազմաթիվ տեղեկություններ:

Առաջին անգամ փորձ է արվում քննելու գետին հասկացության բառիմաստային զարգացումները հայերենի բարբառներում:

Հետազոտությունն իրականացվել է լեզվաբանության մեջ կիրառվող համաժամանակյա և տարաժամանակյա մեթոդներով:

### **Բառաքնական դիտարկումներ**

Գևորգ Ջահուկյանը ֆիզիկական աշխարհին վերաբերող բնիկ հնդեվրոպական բառերի թվում հնագույն ժամանակներից եկող և յուրաքանչյուր լեզվի անկապտելի մասը կազմող նշանակումների մեջ հիշատակում է նաև *գետին* բառանունը<sup>3</sup>: Վերջինս բարբառային հայերենում, ինչպես նշեցինք, գործառում է ոչ միայն *հողի երես*, այլև որպես *տան հողե հատակ* հասկացության նշանակելի:

Հին մատենագրության մեջ *գետին* բառանվան բազմաթիվ վկայություններ են արձանագրված (*գետնաբիր, զգետնել, գետնախշտեայ, գետնաշարժ, գետնատուն*)<sup>4</sup>:

---

<sup>3</sup> ՀԼՊՆԺ, էջ 258:

<sup>4</sup> **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 1, Ե., 1971, էջ 538:

*Գետին* հասկացությունը «տան հողե հատակ» իմաստով հայերենի բարբառներում դրսևորված է հիմնականում *գետին*, *տափ*, *տախտ* բառանուններով:

Բարբառային հայերենում *հատակ* հասկացության *գետին* բառանունը տարածքային ամենամեծ ընդգրկումն ունի: Հայերենի բարբառներում այն դրսևորված է բազմաթիվ հնչատարբերակներով:

1. Այն բարբառներում կամ խոսվածքներում, որոնք ունեն շնչեղ ձայնեղներ, *գետին*-ը դրսևորված է *գ* հնչյունի շնչեղ ձայնեղ տարբերակով՝ *գ՛էղին՝* Շիրակ, Մուշ, Եղվարդ, Արարատ գ., Գավառ, *գ՛իղին՝* Հադան, *գ՛էտին՝* Գոմաձոր, թույլ ձայնեղացմամբ՝ Հաջըն՝ *գ՛իղին*, և այլն:

2. *Գետին* բառանունը բառասկզբի *գ* հնչյունի քմայնացմամբ հանդես է գալիս *գ՛ստին* հնչաձևով Ագուլիսում, Տանակերտում, *գ՛էտին* տարբերակով՝ Մակուում, Հախվերիսում, Բոգդանովկայի Փոզա գյուղում:

3. Տիգրանակերտում, Մալաթիայում բառանունը վկայված է բառասկզբի *գ*-ի դիմաց *ք* շնչեղ խուլ՝ *քէղին*<sup>5</sup>, Բեյլանում՝ *քիղին* հնչաձևերով:

4. Բառասկզբի ձայնեղների իլացմամբ բառն առկա է *կետին* հնչատարբերակով Ախալքալաքի Գանձա, Մամգարա, Բալխո գյուղերում, Սևերեկում, Եղեսիայում, Ջրվեժում, Նորքում, Սասունի Իրիցանք գյուղում, Քանաքեռում՝ *կէղին*, Մարաշում, Սվեդիայում, Քեսաբում՝ *կիղէն*, իսկ Վանում, Խոյում, Սպարկերտում, Կարկանում *գետին* բառը դրսևորված է *կէտին*, Խաչիկ գյուղում՝ *գէղին* հնչատարբերակներով, որոնցում, ինչպես տեսնում ենք, նախ *գետին*-ի *գ*-ն իլացել է, այնուհետև քմայնացել: Մարաղայում, Նախիջևանի Ագա գյուղում *գետին* բառը վկայված է *ճէտին*, իսկ Աշտարակում, Նորատուսում՝ *ջէղին*, Քուչակում՝ *ջ՛էղին* ուշագրավ հրնչյունական տարբերակներով:

<sup>5</sup> Ա. Հանեյան, *Տիգրանակերտի բարբառը*, Ե., 1978, էջ 184:

Հ. Մուրադյանը, անդրադառնալով *գ, կ, ք* պայթականների փոխարկմանը ջ, ճ, չ պայթաշփականների, կարծում է՝ այս դեպքում քմայնացումը այնքան ուժեղ է եղել, «որ հիշյալ բաղաձայնների արտասանության ժամանակ արտաբերության բովը միջնալեզվայինից տեղափոխվել է դեպի ավելի առաջ, որի հետևանքով էլ պայթականները վերածվել են պայթաշփականների»<sup>6</sup>:

Բարբառների մեկ այլ խմբում էլ *գետին* բառանունը բառամիջի *ե*-ի երկբարբառային արտասանությամբ է վկայված՝ *կետին*՝ Շատախ, իսկ Մոկսի Մամոտանցում՝ *կէտէն*:

*Տախտ*: Հայերենի բարբառներում *գետին* հասկացության նշանակելի է դիտարկվել նաև *տախտ* բառանունը: Ըստ Հ.Աճառյանի և Գ.Զահուկյանի՝ *տախտ*-ը պահլավական փոխառություն է՝ *taxt*, և հին մատենագրության մեջ գործառվել է «գահ, աթոռ, թագավորական գահույք, ինչպես նաև մահճակալ» իմաստներով<sup>7</sup>: Հարկ է փաստել, որ հիշյալ բառանունը *թախտ* հնչյունական տարբերակով բարբառային հայերենում (Երևան, Ղարաբաղ, Մուշ, Թիֆլիս ևն) ավելի հաճախ հանդես է գալիս է որպես «տախտակե բազմոց» հասկացության նշանակելի<sup>8</sup>. տախտակե բազմոց, որի վրա գորգ կամ բարձ փռելով՝ նստել են կամ անկողին են գցել և քնել:

ՀԲԱ ծրագրով հավաքված նյութերում, սակայն, Մուշի, Վանի, Մոկսի, Ալաշկերտի, Մասունի որոշ խոսվածքներում *տախտ* բառանունը բառիմաստի ընդլայնմամբ ձեռք է բերել «սենյակի փայտամած կամ հողե հատակ» նշանակությունը: Բարբառներում այն դրսևորված է *տախտ* (Ալաշկերտ), *դախտ* (Մասունի Մառնիկ գ.), շրթնային *տմխտ* (Լճաշեն գ.) հնչատարբերակներով: Քեսաբում ևս վկայված է *թախտ* բառանունը, որը գործառվել է *դուօխտ* հնչաձևով և ունի «վերնահարկի տախտակամած հատակ» նշանա-

<sup>6</sup> Հ. Մուրադյան, *Հայոց լեզվի պատմական քերականություն*, հ. 1, Ե., 1982, էջ 312:

<sup>7</sup> ՀԱԲ, հ. 4, Ե., 1979, էջ 359: ՀԼՊՆԾ, էջ 547, 572:

<sup>8</sup> Հ. Աճառեան, *Հայերէն գաւառական բառարան* (այսուհետև՝ ՀԳԲ), Թիֆլիս, 1913, էջ 1008:

կուրթյունը: *Ղուօխտ*-ը, ի դեպ, ունեցել է փոքրիկ դոնակ (որին դիմսթ են ասել), որով գետնահարկ են իջել: *Տախտ* բառանվան «հատակ» նշանակությամբ Մարտունու Վարդենիկ գ.-ի խոսվածքից արձանագրել ենք հետևյալ օրինակները՝ *Տախտըն* ավլե՞ր էս՝ Հատակը ավլե՞լ էս: *Տախտըն* ջրըցընգա՛, ավլա՛ Հողե հատակին ջուր ցանի՛ր, մաքրի՛ր: Հ. Աճառյանը ևս վկայում է՝ *տախտ* բառանվան «սենյակի տախտակամած հատակ» իմաստով գործածությունը Մուշի, Վանի բարբառներում<sup>9</sup>:

*Տախ*: Բարբառների արևելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախիի և Ագուլիս-Մեղրիի բարբառախմբերի խոսվածքներում որպես *գետին* հասկացության բառանուն փաստված է *տախ*-ը (Ղարաբաղի Ուրգուրուն գյուղ, Գորիս, Խնձորեսկ, Տաթև, Շինուհայր, Իջևան, Վերին Ճամբարակ, Դաշքեսանի Բանանց գյուղ, Խանլար, Օրդուբադի Մեսրոպավան, Փարաղաշտ, Մարտակերտի Մեծ Շեն գյուղ, Կարճևան, Կոզեն ևն): Կոզենի բարբառից գրառել ենք հետևյալ օրինակները՝ «*Տախը* նիմ տանըիս»՝ գետինը մտնես: «Էտ *տախ* նիմ տասը գրդել չըմ հօրտիյեն դուս ըրէկ»՝ էդ գետին մտածը չգիտեմ՝ որտեղից դուրս եկավ: «Արախէքը *տախըրին* նըստած հաղ արէլին»՝ Երեխաները գետնին նստած խաղում էին: Սյունիքի Շինուհայր գյուղից՝ «Էն վէղրան տափին տիրած ա»՝ Էն դույլը գետնին (հատակին) դրած է: Տավուշի Թեղուտ գյուղից՝ «Բոյըդ տափըմը տընէմ»՝ Բոյդ գետինը դընէմ, Արցախից՝ «Տափը կ'աս տու»՝ Գետինը մտնես, «Խօխան տափին նըստած խաղ ա անըմ»՝ Երեխան հատակին նստած խաղում է:

Հին մատենագրության մեջ *տախ* բաղադրիչով՝ «հարթ, տափարակ դաշտ» նշանակությամբ, վկայված են հետևյալ բառանունները՝ *տափան*, *տափել*, *տափակողմն*, *գետնատափ*, *տափափուշ*<sup>10</sup>:

Գ. Ջահուկյանը, անդրադառնալով բառի ստուգաբանությանը, *տախ*-ը ենթադրաբար բնիկ հնդեվրոպական բառ է համարում՝

<sup>9</sup> ՀԳԲ, էջ 1008, ՀԱԲ, հ. 4, Ե., 1979, էջ 359:

<sup>10</sup> ՀԱԲ, հ. 4, էջ 390:

\*doph-`\*deph- «ծեծել, տրորել» արմատից, նշելով *տափ* բառի աղերսը *տոփեմ* բայի հետ: Գիտնականը կարծում է, որ «հարթ և տափարակ բառերն ակնհայտորեն փոխառություններ պիտի լինեն հնդեվրոպական այլ (իրանական<sup>11</sup>) լեզուներից»<sup>11</sup>: Սահակ վարդապետ Ամատունին ևս փաստել է *տափ*-ը «գետին» իմաստով, որը, ըստ նրա, գործառում է Ղարաբաղում, Լոռիում, Նուխիում, Գանձակում, և որպես օրինակ բերում է «*Տափը մտնես*» անեծքը<sup>12</sup>:

Հ. Աճառյանը «Հայերեն գաւառական բառարան»-ում արձանագրել է *տապան* բառանունը, որը Չենկիլերում գործառվել է որպես «սենեակի մեջ հողե յատակ (առանց տախտակամածի), որուն վրա չուլ կամ փսիաթ փռելով կը նստին», և բերում է հետևյալ օրինակը՝ «Տապանը մի՛ կոխեր, ոտքդ կը հողօտի»<sup>13</sup>: Գիտնականը, ի դեպ, հիշյալ բառը վկայում է նաև *տաբան* հնչաձևով, որը, ըստ նրա, Մուշի բարբառում «գիւղական տան յետնի մասն» է<sup>14</sup>: Համշենահայ բանահյուսության մեջ արձանագրված է նաև *դաբոն* բառանունը՝ «հատակ» նշանակությամբ<sup>15</sup>, որը, մեր կարծիքով, նույն տապանն է՝ պարզապես բարբառին բնորոշ (*ն* ռնգայինից առաջ *ա>օ*, իսկ բառասկզբի *տ>դ*) *տապան>դաբոն* հնչյունափոխությամբ:

Ինչպես գիտենք, տապանը արկղի նման չորս կողմը փակ նավն է (Նոյյան տապան), նաև «մեռելի սնդուկ, գերեզման, դամբան» նշանակություններն ունի: Բառի հստակ ստուգաբանություն չկա. ծագման տարբեր վարկածներ կան: Օրինակ՝ Մտ. Մալխասյանը այն համարում է փոխառություն պարսկերենից՝ *tabangū*<sup>16</sup>:

Կարծում ենք՝ *տապան* և *տափ* բառանունները հնարավոր է ծագումնաբանորեն առնչակից լինեն:

<sup>11</sup> ՀԼՊՆԺ, էջ 268, Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան* (այսուհետև՝ ՀՄԲ), Ե., 2010, էջ 726:

<sup>12</sup> Մ. Ամատունի, *Հայոց բառ ու բան*, Վաղարշապատ, 1912, էջ 620:

<sup>13</sup> ՀԳԲ, էջ 1014:

<sup>14</sup> ՀԱԲ, հ. 4, էջ 373:

<sup>15</sup> Հ. Գուրունյան, *Համշենահայ բանահյուսություն*, Ե., 1991, էջ 316.:

<sup>16</sup> Մտ. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, հ. 4, Ե., 1945, էջ 375:



*Յատակ* բառանունը՝ «տակը, խորքը, գետին, հողի երեսը» իմաստով, Հ. Աճառյանը համարում է բնիկ հայերեն բառ՝ հնիս. *pedo-* ոտք բառից, և, ըստ գիտնականի, բարբառային հայերենում այն փոխարինվել է նույնանիշ և նույնաձայն *տակ* բառով<sup>17</sup>:

Գ. Ջահուկյանը *յատակ* բառի աճառյանական ստուգաբանությունը կասկածելի է համարում՝ առաջարկելով բառի իրանական ծագման վարկածը, մեկ այլ աղբյուրով էլ այն համարելով հայկական և իրանական ձևերի բաղարկում<sup>18</sup>: «Հայերեն ստուգաբանական բառարան»-ում, սակայն, գիտնականը, հղում անելով Հ. Աճառյանին, *յատակ*-ը դիտարկել է որպես հնդեվրոպական ծագման հայերեն անվանում՝ \**pedo* - «ոտք» արմատից, որից նաև հետք, ոտք<sup>19</sup>:

*Հատակ* բառը բարբառային հայերենում բառիմաստային տարբեր ճյուղավորումներով է դրսևորված: Օրինակ՝ Լոռիում հասկ-ը գործածվում է *տտակ* հնչաձևով և ունի «գերեզմանի փոս, դժոխք, տան հիմք» նշանակությունները (*Ստակն* էն փօրում՝ «Գերեզմանի փոսն էն փորում», *Ստակն* ա գնացել՝ «Գրողի ծոցն է գնացել», *Ստակը* սարքում են՝ «Տան հիմքն էն գցում»): Ախլացիստում *հատակ*-ը սենյակի կամ տան հատակն է, Խարբերդում բառը դրսևորված է *աղագ* հնչատարբերակով՝ նույն «հատակ, տակ» նշանակությամբ: Հաճընում *հատակ*-ը՝ *աղոգ* հնչաձևով, փոխաբերացմամբ ձեռք է բերել «յուղի տականք» իմաստը, իսկ Ջեթունում գործածվել է *հատակ* բառից բաղադրված *ատկենալ* բայանունը՝ որպես «սուզվել, ջրի տակ խորասուզվել» հասկացության նշանակելի: Ս. Ամատունին հիշատակում է *տտակել* բայանունը, որը, ըստ նրա, Մուշում (*տտրկել*) և Արարատյան (*տտակել*) բարբառում գործառում է «բանից թեթևացած, պարապ մնալ, հանգիստ մնալ» իմաստներով (Բաններս շատ ա, գլուխ չէնք կարում *տտակել* (պարապուի), Պ. Պռոշյան, Կթօրգէ՛ն, որ քիչ ըմ *տտրկէնք*, զվըտենք,

<sup>17</sup> ՀԱԲ, հ. 3, Ե., 1977, էջ 386:

<sup>18</sup> ՀԼՊՆԺ, էջ 185, 551:

<sup>19</sup> ՀՍԲ, էջ 548:

տեսնենք ի՞նչ կա գեղ)<sup>20</sup>: Կարծում ենք՝ այս պարագայում ևս բառիմաստային ճյուղավորմամբ է ձևավորվել *ատրկէլ* (հատակել) բառանունը. *ատրկէլ*, այսինքն՝ գործի վերջը, հատակը տեսնել, որից հետո թեթևանալ, հանգստանալ:

Ըստ ՀԲԱ ծրագրով հավաքված նյութերի՝ «սենյակի կամ տան հատակ» իմաստով *հատակ* բառանունը բարբառային հայերենում գրեթե չի գործառվում: Հայերենի որոշ բարբառներում և խոսվածքներում (Շիրակ, Արարատյան խոսվածքներ, Միվիրիսար, Ջավախք), սակայն, առկա է *անատակ* բառանունը՝ ձևավորված *ան + ատակ* բաղադրիչներից՝ «անհատակ, անհուն, անդնդախոր» իմաստով<sup>21</sup>: Բարբառներում գործառում են նաև *անատակը զնալ* դարձվածքը՝ «անհետանալ, կորչել» իմաստով, և *անատակվելը* (*անտրկվել*)՝ որպես «կորչել, հետքը չերևալ»: Շիրակում գրի ենք առել՝ «Սէվ *հանատագն* էրտաս, չդառնաս» անեծքը, Արարատ գյուղում՝ «Չէմ հիմանրմ՝ հուր ւն անտըգվէ, Սէվանատագն ւն գ՛ընացէ» արտահայտությունը): Սասունում էլ ունենք *հատակ*-ից բաղադրված *ատակուկ* բառաձևը՝ «կորած, անհետացած» նշանակությամբ<sup>22</sup>:

*Ա՛տակ* բառանունը առկա է նաև Արցախում՝ 1. «խոր տեղ գետնի տակ», 2. «դժոխք» իմաստներով<sup>23</sup>: Արցախում ատակը նաև գետնի ամուր հողաշերտն է, որի վրա շենքի պատերն են դնում (Մըչանք քանդի, վեր *ատակը* պաց ընի)<sup>24</sup>:

Ա. Սարգսյանը Ղարաբաղի բարբառի բառարանում ևս վկայել է *ատակ* բառանունը, որը, ըստ նրա, գետնի ամուր հողաշերտն է, որի վրա շարում են շենքի պատերը (Փընթամէնտը էնքան բիդի քանդիս, վեր ատակը պէց ինի): Հիշյալ բառարանում փաստված են նաև անարգական *ատակը ընցընէլ*՝ «անհետանալ, անհետ կորչել»

<sup>20</sup> Ս. Ամատունի, *Հայոց բառ ու բան*, Վաղարշապատ, 1912, էջ 63:

<sup>21</sup> *Հայոց լեզվի բարբառային բառարան* (այսուհետև՝ ՀԼԲԲ), հ. 1, Ե., 2001, էջ 55:

<sup>22</sup> ՀԼԲԲ, հ.1, էջ 116:

<sup>23</sup> Կ. Դավթյան, *Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը*, Ե., 1966, էջ 434:

<sup>24</sup> ՀԼԲԲ, հ.1, էջ 116:

(Թօրքերը էտ վեր տըլեսն, ատակը ընցեն), *ատակը տըլժոխկ անէլ*՝ «սաստիկ վիճաբանել, կռվել» (Մաղ օր էն ուրուր նըհըլտ ատակը տըլժոխկ ընէյխ) իմաստներով դարձվածքները<sup>25</sup>:

Փոխաբերացմամբ *գետին* հասկացության բառանուններ են դիտարկվել նաև սահմանափակ կիրառությամբ գործածվող *հող* բառանվան՝ *հող, խող* (Խովա)<sup>26</sup>, *խէղ* (Օրդուի Չիբուխլու գ., Ծեբել-դա՝ Ճանիկ, Ալախաձե՝ Սամսոն), *ֆուօղ* հնչատաբերակները և *խողուն վըրըն* (Համշենի Ունիեի Բալլուղ գ.) բառակապակցությունը<sup>27</sup>: Բարբառային հայերենի մի քանի խոսվածքում գործառվել է նաև *ցած*-ը՝ «գետին» նշանակությամբ (Օրդու, Համշենի Ունիեի Բալլուղ գ., Ճենիկ), ինչպես և՛ *դէշիմսի*-ն (Համշեն) և *բարմալ*-ը «սենյակի հատակ» իմաստով: Թվարկված բառերից *հող*-ը և *ցած*-ը բնիկ հնդեվրոպական արմատներ են<sup>28</sup>, իսկ *դէշիմսի*-ն<sup>29</sup> և *բարմալ*-ը՝ փոխառյալ բառեր:

ՀԲԱ ծրագրով հավաքված նյութերում արձանագրված են հիշյալ բառանուններով հետևյալ օրինակները՝ Դըղին *ցածը* (կեղ-նին) նըստէժընիլ մի՛, բաղի գու (Երեխային հատակին մի՛ նստեցրու, կսառչի), *խողուն վըրըն* ինտուս էրգընձավ (Գետնի վրա փըռվեց), *դէշիմըն* իստագ ան (Հատակը մաքուր է):

Ի դեպ, հիշատակված բառանուններից *բարմալ*-ը՝ «տան հատակ» իմաստով, գործառում է Սասունում<sup>30</sup>, *ֆուօղ*-ը՝ Ստեփանավանի Կուրթան գյուղում, իսկ մնացյալ բառանունները հիմնականում արձանագրված են Համշենի և Տրապիզոնի տարբեր բարբառային միավորներում:

<sup>25</sup> Ա. Մարգարյան, *Ղարաբաղի բարբառի բառարան*, Ե., 2013, էջ 72:

<sup>26</sup> Ս. Վարդանյան, *Գրոնափոխի համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և էրգարվեստը*, Ե., 2009, էջ 300:

<sup>27</sup> Տե՛ս ՀԲԱ ծրագրով հավաքված նյութեր՝ տետրեր, հ. 52, 94, 39, 336

<sup>28</sup> ՀՄԲ, էջ 741, 465:

<sup>29</sup> Խաչատուր Թահմազ, *Ջենիգի բարբառի բառարան*, Սոչի, 2014, էջ 50:

<sup>30</sup> Վ. Պետոյան, *Սասունի բարբառը*, Ե., 1954, էջ 107, ՀԼԲԲ, հ. 1, էջ 172:

### Եզրակացություն

Այսպիսով՝ հիշյալ բառանունների քննությունից պարզ է դառնում, որ հայերենի բարբառների հարուստ բառապաշարում *գետին* հասկացության քննված բառանուններից հնդեվրոպական արմատներ դիտարկված *գետին*-ը, *յատակ*-ը, *տափ*-ը, *ցած*-ը և *հող*-ը դրսևորվում են իմաստային յուրահատուկ զարգացումներով: Բարբառային հայերենում դրանք չէին կարող չունենալ նշանակալից քանակությամբ տարբերակներ և պետք է որ արտահայտվեին ինչպես միևնույն կամ մերձավոր իմաստների համար՝ տարբեր բառերի առկայությամբ, այնպես էլ միևնույն բառի իմաստային տարբեր զարգացումների մեջ:

Ուշագրավ են հատկապես *յատակ* բառանվան բառիմաստային ճյուղավորումները՝ «*դժոխք, փոս, գերեզման, տան հիմք, յուղի տականք*», *ատակել*՝ «*սուզվել, վիճել, հանգիստ մնալ*» և այլն: Բառիմաստային փոփոխության է ենթարկվել նաև *տափ*-ը՝ «*հարթ, տափարակ*» իմաստից ձեռք բերելով «*տան հատակ*» նշանակությունը: Փոխաբերացմամբ *տան հատակ* հասկացության նշանակելիներ են դիտարկվել նաև *ցածր, խող, խէղ, ֆուռ*, բառանունները: *Թախտ (տախտ)* իրանական փոխառությունը բարբառային հայերենում գործառում է ոչ միայն «*տախտակե բազմոց*» նշանակությամբ, այլև որպես «*սենյակի փայտամած կամ հողե հատակ*»: Որոշ բարբառներում էլ *հատակ* հասկացության դիմաց առկա են փոխառյալ *բարմալ, դէշիմս* բառերը:

### Օգտագործված գրականություն

Աճառեան Հ., Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913,  
Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հհ. 1, 3,4, Ե., 1971,  
1977, 1979:  
Ամատունի Ս., Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 63:  
Գուրունյան Հ., Համշենահայ բանահյուսություն, Ե., 1991:

Դավթյան Կ., Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Ե., 1966:

Թահմազ Խ., Ջենիգի բարբառի բառարան, Սոչի, 2014:

Հանեյան Ա., Տիգրանակերտի բարբառը, Ե., 1978:

Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 1, Ե., 2001:

Մալխասեանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. 4, Ե., 1945:

Մուրադյան Հ., Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Ե., 1982:

Պետոյան Վ., Սասունի բարբառը, Ե., 1954:

Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:

Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:

Սարգսյան Ա., Ղարաբաղի բարբառի բառարան, Ե., 2013:

Վարդանյան Ս., Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը, Ե., 2009, էջ 300:

**Khachatryan Hasmik- The Words for the Concept "Ground" and Their Semantic Development in Dialectal Armenian.** - The word *գետին* (**ground**) in dialectal Armenian is used not only in the sense of "land surface", but also as a signifier of the concept "soil floor of the house".

We also considered the Pahlavi loanword *տախտ*, which was used in the ancient literature to mean "throne, chair, royal furniture, bed", as a signifier of the concept "soil floor of the house" in Armenian dialects. This word, sounded as *թախտ*, more frequently occurred in dialectal Armenian in the sense of "wooden sofa", meanwhile, also meaning "wooden or soil floor of the room" and sounded as *տախտ*, it appeared in Moks and in some speeches of Alashkert.

In the dialects of Karabakh-Shamakhi and Agulis-Meghri dialect groups, the word *տախ* is proved to be the name for the concept "ground".

In dialectal Armenian, the word *տապան* (with sound-forms *taban*, *dabon*) was also used in the sense of "ground floor of a room".

H. Acharyan considers the word *hwmwly* with the meaning "bottom, depth, ground, surface of the ground" as a native Armenian one derived from the Greek word *pedo* - foot.

The word "floor" is used in dialectal Armenian with different meanings: *hwmwly* - "floor of the house" (Akhaltsikha), *h'wlnwmwq* - "hell" (Shirak), *wmwly* - "solid ground layer on which the walls of the building are placed" (Artsakh), *wnoq* - "oil scum" (Hachin), *wmwly* - "hell" (Artsakh), *wmlyknywly* - "to dive under water" (Zeytun), *hwnwmwqr qnywly* - "to disappear, get lost" (Ararat), *wmwlynyly* - "lost, disappeared" (Sasun), etc.

We have considered the following words with limited usage as signifiers for the concept floor/ground: *gwadr*, *hwoynly vrrryly* (on the soil), *hoq*, *hwoq*, *hlyq*, *qkzhnyw*, *rwrynyw*, etc.

**Keywords:** Dialects of Armenian, native Armenian word, semantic change, ancient Armenian, semantic development, sub-dialect, group of dialects, phonal version.

Hasmik Khachatryan, PhD of Philology, Institute of Language named after H. Acharyan of NAS RA, Senior Researcher.

**Хачатрян Асмик - Словоформы понятия пол дома (земля) и их смысловые развития в диалектном армянском языке.-** Слово *земля* (*qkzhny* - *getin*) в диалектном армянском языке используется не только в смысле "поверхность земли, почва", но и как значимый компонент понятия "земляной пол дома". В качестве понятия "земляной пол дома" в армянских диалектах мы рассматривали также слово *taxt* (*wshhyn*), считающееся пехлевийским заимствованием. В армянском диалекте слово *taxt* чаще использовалось в значении "тахта, широкая доска – сиденье", а в некоторых говорах Мокса и Алашкерта – также как "дощатый или земляной пол комнаты".

В говорах диалектов регионов Карабах-Шамахи и Агулис-Мегри в качестве словаря понятия "*getin*" зафиксировано *wshh* (*man*).

В диалектном армянском языке в значении "земляной пол комнаты" использовалось также слово *тапán* (*ишициш*) в вариантах (*ишриш* - *табán*, *иширой* - *дабón*).

*Пол* (*һатáк*) в значении "под... (внизу), вглубь, на землю" Р. Ачарян считает исконно армянским словом - производным от слова *редо-* нога (индоевропейского праязыка). Слово *пол* (*һатáк*) в диалектном армянском языке используется в разных смыслах: *һишлш* - *пол дома* (Ахалцих), *һ'ишлшлш* (*һ'анатáк*) - *ад* (Ширак), *ишлш* (*атáк* - твердый слой земли, на который кладут стены здания (Арцах), *ишрoқ* (*адог*) – выварки, осадок топленого масла (Ачин), *ишлш* (*атáк*) - *ад* (Арцах), *ишлшккш* (*аткенáл*) - опуститься под воду (Зейтун), *һишлшшрр* *қлш* (*ханатáгэ гнал*) - исчезнуть, потеряться (Арагат), *ишлшлшл* (*атак'к*) - потерянный, исчезнувший (Сасун) и др.

В качестве значений понятия "*гетин*" мы рассмотрели следующие лексические названия, имеющие ограниченное применение: *гшáр* (цадз), *һоһлш* *црррл* (*һлһл* *црш*) *хог'ун* *вэрэн* (на земле), *һоһ*, *һоһ* (*һог*, *хог*), *һлһ* (*хег*), *һллһлш* (*дэшима*), *ршришл* (*бармáл*) и др.

**Ключевые слова:** диалектный армянский, исконно армянское слово, изменение звука (звукоизменение), грабар (древнеармянский язык), смысловое развитие, говор, диалектная группа, фонетический вариант.

Асмик Хачатрян, кандидат филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, старший научный сотрудник.

**ԿԱՐՆՈ ԲԱՐԲԱՌԸ 20-ԸՂ ԴԱՐԻ ՄԿԶԲԻՆ ԳՐԱՌՎԱԾ  
ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ\*<sup>1</sup>**

10.54412/2738277X-2022.1.2-95

**Կատվայան Վիկտոր**

բանասիրական գիտությունների դոկտոր,  
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,  
առաջատար գիտաշխատող. [viktorkatvalyan@mail.ru](mailto:viktorkatvalyan@mail.ru)

**Բանալի բառեր.** Բարբառ, պատմական հայեցակետ, բարբառային նմուշ, հեքիաթ, բանահյուսական նյութ, բառապաշար, բարբառագիտական ատլաս:

**Ներածություն**

Հայ բարբառագիտության արդիական խնդիրներից է բարբառների քննությունը պատմական հայեցակետով՝ նպատակ ունենալով դիտարկել բարբառային լեզվի ժամանակային շերտերը, զարգացման ընթացքն ու միտումները՝ այդպիսով նաև նպաստելով ընդհանուր լեզվի պատմությանն առնչվող զանազան հարցերի պարզաբանմանը: Այդ իմաստով՝ անցյալում գրանցված բարբառային նմուշների հետազոտությունը թույլ է տալիս վեր հանել լեզվի զարգացման տարբեր շրջանների վերաբերող իրողություններ, համակարգային ու մասնակի բնույթի տեղաշարժեր: Հասկանալի է, որ որքան ավելի վաղ շրջանի է վերաբերում բարբառային խոսքի գրառումը, այնքան այն արժեքավոր է, մյուս կողմից՝ որքան շատ ու բազմաբովանդակ են գրառված նմուշները, այնքան հավաստի կարող են լինել լեզվական փաստերը: Հայ բարբառների նկատմամբ բուռն հետաքրքրություն է սկիզբ առել 19-րդ դարի վերջին

---

\* Ներկայացվել է 28.09.2022, գրախոսվել՝ 21.10.2022:

<sup>1</sup> Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6B111 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:



տասնամյակներից, որն արտահայտվել է ինչպես բարբառային նյութի հավաքումով ու պարբերականներում բարբառային նմուշների հրապարակումով, այնպես էլ գիտական ուսումնասիրություններով: Այդ իրողությանը մեծապես նպաստել է նաև ժողովրդական բառ ու բանի հանդեպ աճող հետաքրքրությունը, բանահյուսական նյութի արժևորումն ու բանահավաքչական աշխատանքների լայն թափով ծավալումը: Ինչ խոսք, այդ շրջանում գրառված նյութը, բարբառագիտական առումով շատ հետաքրքրական լինելով, տարբեր պատճառներով ամբողջովին չի կարող ներկայացնել հնչյունական համակարգի յուրահատկությունները, հաճախ նաև քերականական ու բառապաշարային իրողությունները: Սակայն նմուշների հնությունը և բավարար քանակությունը կարևոր դեր կարող են ունենալ հարյուր և ավելի տարիների ընթացքում բարբառներում տեղի ունեցած տեղաշարժերը դիտարկելիս:

Այս աշխատանքում Կարնո բարբառի դրսևորումները դիտարկում ենք «Հայ ժողովրդական հեքիաթներ» գիտական հրատարակության 4-րդ հատորի ընձեռած նյութի շրջանակում: Հատորում ընդգրկված են հիմնականում 1911-1916 թթ. Երվանդ Լալայանի խմբարշավի հավաքած հեքիաթները, որոնք գրի են առնված Շիրակի (Գյումրի, Ադինի, Արթիկի, Ախուրյանի շրջաններ), Բասենի, Ջավախքի (Էրզրում, Ախալքալաք, Ախալցխա) տարածաշրջանների խոսվածքներով<sup>2</sup>: Կարնո բարբառի իրողությունները ներկայացնում ենք այդ երեք խումբ հեքիաթների լեզվական տվյալների համեմատական դիտարկմամբ՝ պայմանականորեն գործածելով *Շիրակի խոսվածք*, *Բասենի խոսվածք* և *Ջավախքի խոսվածք* եզրույթները: Ձեռք բերված փաստերը քննում ենք Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 20-րդ

<sup>2</sup> Հատորը կազմողները վկայում են, որ անադարտ կերպով պահպանել են հեքիաթների լեզուն. հեքիաթները տպագրված են այնպես, ինչպես գրի են առել բանահավաքները ասացողներից՝ վերածելով միայն նոր ուղղագրության (տե՛ս Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 4, Ե., 1963, էջ 9):

դարի վերջին քառորդում կատարված գրանցումների, ինչպես նաև Շիրակի մարզում մեր կատարած դաշտային աշխատանքների ընթացքում ձեռք բերված նյութերի հետ համեմատությամբ: Կարծում ենք՝ այս աշխատանքը կարող է խթան դառնալ Կարնո բարբառի պատմական զարգացումը ուսումնասիրելու համար:

### **Կարնո բարբառի ընդհանուր բնութագիրը**

Կարնո բարբառի կենտրոնը եղել է Կարին քաղաքը: Բարբառային այս միավորը Կը ճյուղի ամենատարածված բարբառներից մեկն էր: Այն, ինչպես վկայում է Հ.Աճառյանը, տարածվում էր մինչև Խնուս, Երզնկա, Գյումուշխանե<sup>3</sup>: 19-րդ դարի ռուս-թուրքական պատերազմների հետևանքով հայ գաղթականությունը Կարնո բարբառը հասցնում է մինչև Երևան և Թիֆլիս, և այդպիսով 20-րդ դարի սկզբներին Կովկասի չորս քաղաքների՝ Կարսի, Ալեքսանդրապոլի, Ախալքալաքի և Ախալցխայի ողջ հայությունը խոսում էր Կարինի հայության նույն բարբառով<sup>4</sup>: Կարնո բարբառը գործառում էր նաև Բասենում, Նարմանում, Խոտրջուրում և Բաբերդի գյուղերում<sup>5</sup>: Նախքան եղեռնը Էրզրումի նահանգի բազմաթիվ բնակավայրերում դեռևս ապրում էին տասնյակ հազարավոր հայեր<sup>6</sup>, սակայն եղեռնից հետո ինչպես ողջ Արևմտյան Հայաստանը, այնպես էլ հիշյալ նահանգը հայաթափվեց ու հայերենագրվեց: Հայաստանի Հանրապետությունում այս բարբառով ներկայում խոսում են հիմնականում Գյումրու, Արթիկի, Ախուրյանի տարածաշրջաններում, մերձակա այլ բնակավայրերում: Բարբառը գործառում է նաև Վրաստանի Ախալքալաքի, Ախալցխայի և Բոզդանովկայի տարածաշրջաններում: Ժամանակին Ա.Ղարիբյանը նշել է, որ Կարնո

<sup>3</sup> Տե՛ս Հ.Աճառեան, *Հայ բարբառագիտություն*, Մոսկվա-Նոր-Նախիջևան, 1911, էջ 104:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>5</sup> Տե՛ս Հ.Աճառեան, *Հայերեն գաղափարական բառարան*, Թիֆլիս, 1913, էջ 2:

<sup>6</sup> Տե՛ս Ա.Մելքոնյան, *The demography of the Province of Erzerum: Sixteenth Twentieth Centuries*. - Ցեղասպանություն և հայրենագրվում, Ե., 2015, էջ 42 – 52:

բարբառով խոսողների թիվը հասնում է շուրջ 100 000-ի<sup>7</sup>: Կարնո բարբառի մասին ամենահին վկայությունը համարվում է Ստ.Սյունեցու (8-րդ դար) կողմից «բառք եզերականք»-ի թվում Սպերի խոսվածքի հիշատակումը<sup>8</sup>: Ինչպես վկայում է Հ.Մկրտչյանը, 19-րդ դարում Կարնո բարբառով գրվել են բազում հողվածներ, գրքեր, պիեսներ, գրի են առնվել բանահյուսական նյութեր (սակայն՝ ոչ գիտական տառադարձությամբ)<sup>9</sup>: Նույն դարում բարբառի մասնակի ուսումնասիրության փորձ է կատարել ռուս լեզվաբան Ա.Տոմսոնը, սակայն այդ ուսումնասիրությունը հաճախ ճիշտ չի ներկայացնում բարբառի իրողությունները<sup>10</sup>: Հ. Աճառյանը նկատում է, որ Կարնո բարբառի ձայնավորները հինհայերենյանի համեմատությամբ գրեթե նույնությամբ պահպանված են: Բարբառը զանազանում է *է* և *ե*, *ռ* և *օ* հնչյունները (ընդ որում՝ երկբարբառային հնչյունները հանդես են գալիս միայն գյուղական խոսքում), քմայնացած *օ* և *ռ* հնչյուններ հանդիպում են միայն թուրքերենից փոխառված բառերում: Կարնո բարբառին օտար է նաև քմայնացած *ա*-ն, որը, հիմնականում դրսևորվելով թուրքերեն բառերում, հանդիպում է նաև առանձին հայերեն բառերում<sup>11</sup>: Բաղաձայնական համակարգում բարբառը բնութագրվում է միավանկ բառերում *ռ*-ից առաջ բառասկզբի *հ>Ֆ* անցմամբ (դարձյալ միայն գյուղական խոսքում): Կարնո բարբառը բնութագրվում է հպական և հպաշփական բաղաձայնական քառաստիճան համակարգով՝ շնչեղ ձայնեղների առկայությամբ, ինչպես նաև ձայնեղ *հ*՝ հնչյուն ունենալով<sup>12</sup>: Կը ճյուղի բոլոր բարբառների պես այս բարբառում ևս առկա է միջնավանկի *ա*-ի անկում: Բարբառի քաղաքային ու գյուղական դրսևորումները տարբերվում են նաև *այ* երկբարբառի պատմական

<sup>7</sup> Տե՛ս **Ա. Ղարիբյան**, *Հայ բարբառագիտություն*, Ե., 1953, էջ 407:

<sup>8</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 407:

<sup>9</sup> Տե՛ս **Հ. Մկրտչյան**, *Կարնո բարբառը*, Ե., 1952, էջ 8: Դրա մասին վկայություն ունի նաև Հ. Աճառյանը (տե՛ս **Հ. Աճառեան**, *Հայ բարբառագիտություն*, էջ 111):

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>11</sup> Տե՛ս **Հ. Աճառեան**, նշվ. աշխ., էջ 104:

<sup>12</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 105-106:

զարգացմամբ. քղք. *այ>ս*, գյուղ. *այ>է*: Հ. Աճառյանը կարծում է, որ Կարնո բարբառի շեշտը իր յուրահատուկ առոգանությամբ առանձնանում է նրանով, որ մյուս բարբառների համեմատ ավելի բարձր է<sup>13</sup>: Քերականական առումով Կարնո բարբառը Կը ճյուղի մյուս բարբառներից տարբերվում է նրանով, որ Ում ճյուղի բարբառների պես հայցականում տարբերակում է անձի և իրի առումները: Հոգնակիի կազմության մեջ դրսևորվում է *էստան* մասնիկը, որին կարող է կցվել նաև *նէր* մասնիկը (բ' աղնէստըններ): Մահմանականի ներկա և անկատար ժամանակներում *զը* մասնիկը դըրվում է բայից հետո, բայց հետաքրքրական է, որ ձայնավորով սկսվող բայերը սկզբից էլ ստանում են *զ* (գէնէմ գը): Չնայած իր գրաված ընդարձակ տարածքին՝ Կարնո բարբառը, ըստ Հ.Աճառյանի, ունի միայն երկու ենթաբարբառ (Բաբերդի և Խոտրջուրի<sup>14</sup>), և հիմնականում տարբերակվում են բարբառի քաղաքային և գյուղական դրսևորումները<sup>15</sup>: Բարբառի համառոտ նկարագիրը ներկայացրել են նաև Ա.Ղարիբյանը<sup>16</sup> և Ա.Գրիգորյանը<sup>17</sup>: Կարնո բարբառի հնչյունաբանության ու ձևաբանության ամբողջական ուսումնասիրություն է ներկայացնում Հ.Մկրտչյանի «Կարնո բարբառը» աշխատությունը<sup>18</sup>: Ըստ բարբառների բազմաահատկանիշ դասակարգման՝ Կարնո բարբառը Սեբաստիայի, Մարզվան-Ամասիայի, Ղրիմ-Նոր-Նախիջևանի, Կյուրիհնի, Մալաթիայի, Կեսարիայի, Խարբերդ-Երզնկայի, Ասլանբեկի, Ակնի, Արաբկիրի բարբառների և Շապին-Կարահիսարի, Եվդոկիայի, Պուլսի, Սիվրիհիսարի, Սյուլոզի միջբարբառների հետ կազմում է Փոքր Ասիայի կամ արևմտյան

<sup>13</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 108:

<sup>14</sup> Հետագայում այս միավորը Հ.Աճառյանը համարում է առանձին բարբառ (տե՛ս **Հ.Աճառյան**, *Հայոց լեզվի պատմություն*, հ. 2, 3013, էջ 337):

<sup>15</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 111:

<sup>16</sup> Տե՛ս **Ա.Ղարիբյան**, նշվ. աշխ., էջ 407-413:

<sup>17</sup> Տե՛ս **Ա.Գրիգորյան**, *Հայ բարբառագիտության դասընթաց*, 1957, էջ 333 – 349:

<sup>18</sup> **Հ.Մկրտչյան**, *Կարնո բարբառը*, էջ 190:

բարբառախումբը<sup>19</sup>: Իբրև Կարնո բարբառի տարածման վայրեր նշվում են Կարինը, Լենինականը (Գյումրի), Բաբերդը և Խնդաձորը<sup>20</sup>:

### Կարնո բարբառի հնչյունական յուրահատկություններ հեքիաթներում

Երեք խմբերի հեքիաթների լեզվում էլ բազմաձևանկ բառերի սկզբում պահպանվել են *է, օ* ձայնավորները (երես, էրթում, էրթալ, էրկու, էրկինք, էրկաթ, էրկան /երկար/, օսկի, օրձկալ, օսկօր /Օ. օսկօր/, օչխար, օդորմի, օտըման, օրօտում), միավանկ բառերի դեպքում առկա են *օ>ո, է>ե* անցումներ (եփ, ետ, ես, եզ, որ /դեր./), իսկ *որ* շաղկապն ունի *օր* արտասանություն: Բառամիջում սովորական են ձայնավորի անկմամբ ձևերը, ինչպես՝ *հասկնար, հավնել, բարկցավ, ուրախնալ, քառսուն, հարսնիք, հարսնիքվոր, արծել, ժողվել, հայլի*: Շեշտափոխական հնչյունափոխության ենթարկվում է նաև *ա-ն՝ քաղքի, իշխնի, կարթըլու, կօճկըները, էրծիս* (երագիս), *կարսի* (կարասի) և այլն: Հինհայերենյան *ոյ, իւ* երկբարբառների դիմաց առկա է *ու՝ լուս, քուր, ալուր, ախպուր*: Շիրակի և Բասենի խոսվածքներում բաղաձայնանախորդ *այ-ի* դիմաց առկա է *է* (եսօր, էնիկ, հէր, մէր, լէն, էլ), մինչդեռ Ջավախքի հեքիաթներում *այ-ի* դիմաց առկա է *ա՝ հար, մար, ախպար, քալել, փատ, գալ* (գայլ), *ալ* (>այլ)<sup>21</sup>: Այս օրինաչափությունը իր արտահայտությունն է գտել հնչյունափոխական մեկ այլ իրողության մեջ. բառավերջի *ա* ձայնավորը ավելացող մասնիկից առաջ, համաձայն դեռևս միջին հայերենից եկող օրինաչափության, Շիրակում և Բասենում դառնում է *է՝ մեշէն, բաղէն, փեսէր, տղէն, լալէն* (լալա՝ ծառա), *դավէք, տղէր* և այլն: Ջավախքում նման դեպքերում *ա-ն* պահպանվում է, քանի որ, ինչպես տեսանք, *այ-ի* դիմաց առկա է *ա*

<sup>19</sup> Տե՛ս **Գ.Ջահուկյան**, *Հայ բարբառագիտության ներածություն*, էջ 132-133:

<sup>20</sup> Նույն տեղում:

<sup>21</sup> Հ.Աճառյանը նկատել է, որ քաղաքացիների լեզվում առկա է *այ>ա* անցում, մինչդեռ գյուղացիների լեզվում՝ *այ>է* անցում: Նշել է նաև, որ Ախալցխան ունի *ա* ձևով, իսկ Ալեքսանդրապոլը՝ *է* ձևով (տե՛ս **Հ.Աճառեան**, *Հայ բարբառագիտություն*, էջ 107):

(տղան, տղաք, պախչաս): Ջավախքի խոսվածքում երբեմն նկատելի են բառավերջում *է>ը*, *ա>ը* անցումներ՝ *թը* (>թէ), *քընը* (>գնա), *չի կրնը* (>չի կրնա), Բասենում *գնա*՝ հրամայականի դիմաց հանդիպել է *գնե՛* ձևը:

Երեք տարբերակներում էլ ձայնեղ պայթականներն ու հալաշփականները բառակազմում պահպանվել են<sup>22</sup>, բայց Ջավախքում երբեմն հանդիպում են շեղումներ՝ *փերել>բերել*<sup>23</sup>, *քնալ* (նան՝ գնալ), *քցել* (զցել), *թնել>դնել*, *պախչա>բախչա*: Բառամիջում ու բառավերջում նկատելի է ձայնեղների շնչեղ խլացում, ինչպես՝ *ջարթան*, *կարթըրլու*, *պաքել*, *մարթ*, *ժողովուրթ*, *էրթիք*, *խափել*, *օղորթ*, Ջավախքում արձանագրվել են նաև խլացման դեպքեր, ինչպես՝ *սապախտան*, *չիպուխ*, *օճախ*<sup>24</sup>: Բոլոր խոսվածքներում շատ տարածված է բառակազմում ձայնավորից առաջ *հ* հազագի հավելումը, ինչպես՝ *հրնգեր*, *հելավ*, *հաշխարք*, *հառաջ*, *հերես*, *հառաջ*, *հո՛ւր*, *հաշխարք*, *համենքը*, *հերես*, *հախպուր*, *հարուն*, *հիմանան*, *հանկաջ*, *հիջի*, *հարեգակ*, *հաչք*, *հերկան*, *հառկեք* (ատամներ), *հրմմեն* և այլն: Թվում է՝ իրողությունը ավելի մեծ տարածում ունի Շիրակի խոսվածքում: Բառամիջում ու բառավերջում *հ*-ի դիմաց հանդիպում է *յ*՝ *պայել*, *մայ*, *մայվան*, *պայ մտի*, *կռայեց*, *թամայ* (թամահ): Շիրակում և Ջավախքում արձանագրվել է *հո>ֆո* անցում՝ *ֆոտ*, *ֆող*, *մե ֆորիմ մեջ*, Շիրակի հեքիաթներում հան-

<sup>22</sup> Դեռևս 1911 թ. Ն.Աճառյանը արձանագրել է, որ այդ բաղաձայնները Կարնո բարբառի բառակազմում ունեն շնչեղ ձայնեղ արտասանություն (տե՛ս **Ն.Աճառյան**, *Հայ բարբառագիտություն*, էջ 105-106): Այդ փաստը արձանագրել ենք նաև մենք՝ դաշտային աշխատանքների ընթացքում:

<sup>23</sup> Այս իրողությունը նկատել է նաև Ն.Մկրտչյանը (տե՛ս **Ն.Մկրտչյան**, *Կարնո բարբառը*, էջ 25):

<sup>24</sup> ՀԲԱ ծրագրով գրանցված թիվ 95 տետրում բառամիջում և բառավերջում *բ,գ,դ,ձ,ջ*-ի և *փ,ք,թ,ց,չ*-ի դիմաց առկա են խուլեր՝ *պ,կ,տ,ծ,ճ* (դ՛ ըստում, ձ՛ ակառ, հակնել, խապել, էրտալ, դ՛ էղնուծ, դ՛ ըրգիծ, հաճալ, լուրճ, փէսէկ, անէրօճ), իսկ խուլերի դիմաց ձայնեղներ (բ՛ ազուգ, բ՛ օրլիգ, բ՛ արեգամ, դ՛ աղէլ): Այդ վիճակն ենք արձանագրել նաև մենք՝ դաշտային աշխատանքների ընթացքում:

դիպել է նույնիսկ *ֆորս* (որս) ձև<sup>25</sup>: Հեքիաթները երևան են հանում նաև մի շարք ավելի մասնավոր բնույթի հնչյունական իրողություններ: Այսպես, երբեմն *բ*-ի դիմաց հանդիպում է *ռ* (ծառավ, կոտռել, կոտռել/կրոտռել, ծանտոռ, փնտռել, օսկոռ), *նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա *կայնել* (>կանգնել), *ըյնել* (>ընկնել) ձևերում, բառասկզբի *սս* կապակցությունը *սըս* է արտասանվում *սըսյանել* բառում, Բասենում բաղաձայնանախորդ դիրքում երբեմն նկատվում է հպաշփականի անցում շփականի՝ *կը հեզնի*, *պարզենցի* (պարծեցի), *կիշնի*, Շիրակում *գ*-ի դիմած *ծ* է հանդիպում *էրած* ձևում: Նկատելի են հնչյունի անկման դեպքեր՝ *դուս >դուրս*, *նես//նե>ներս*, *գողինք>անկողին*, *չիդէմ* (չգիտեմ), շատ տարածված է *էլ//ալ* շաղկապի՝ առանց *լ* բաղադրիչի գործածությունը<sup>26</sup> (դուն է հեր ունիս. ես է երթամ, իմ բախտս ա սս էր), գոյականակերտ - *ույթուն* ածանցն ունի -*ույթէն* ձևը՝ *կնկույթէն*, *սաղույթէն*, *կարողույթէն*, *ուրախույթէն*, *ավճույթէն*, *պատրաստույթէն*, *անօթույթէն*, բայական *ան* ածանցը երբեմն ունի *էն* ձևը (նեղենալ, հեռենալ) և այլն:

Հնչյունական հատկանիշների առումով բարբառի երեք տարբերակներում գերակշռում են ընդհանրությունները: Նկատելի է, որ յուրահատկություններ ավելի հաճախ հանդես է բերում Ջավախքի խոսվածքը (հատկապես՝ *այ>ա* իրողությունը):

### **Կարնո բարբառի անվանական համակարգի յուրահատկություններ հեքիաթներում**

Անորոշ հոդը հեքիաթներում ավելի հաճախ գործածվում է ն՝ նախադաս, ն՝ հետադաս միաժամանակ, ինչպես՝ *մե օրըմ*, *մե սև քարըմ*, *մե գլօխըմ*, *մե լավ ձիմ*, նաև հոլովված ձևերի դեպքում՝ *մե*

<sup>25</sup> Ըստ Ն.Աճառյանի՝ այս դիրքում *ֆ*-ի ծագման պատճառը *ռ*-ի երկբարբառային *ռլօ* արտասանությունն է, քանի որ *օ*-ի մոտ այդպիսի փոփոխություն տեղի չի ունենում, և քանի որ քաղաքացիները զուրկ են *ռ* տարբերակից, բնականաբար չունեն *հ*-ի դիմաց *ֆ* (տե՛ս **Ն.Աճառեան, Հայ բարբառագիտություն**, էջ 105):

<sup>26</sup> Այս երևույթը Շիրակի հեքիաթներում ավելի քիչ է հանդիպում:

*մենձ մեշիմ մեջ, մե դութկիմ մեջ, մե դովտիմ հետ*<sup>27</sup>: Նախադաս դիրքում կարող է հանդես գալ *մեկ* թվականը (մեկ խեղճ հալիվորըմ): Գործածվում է նաև միայն հետադաս *պառավրմ, ձուկրմ, անքամրմ, բուռրմ, շունրմ, հատրմ, քիչրմ*, Բասենում նաև *հաց մի* (մեկ հաց), *խրատ մի* (մեկ խրատ), *դաստե մի* (մեկ փունջ): Անորոշ հոդը կարող է դրվել ինչպես լրացյալի, այնպես էլ լրացման վրա *թաք տղեմ// մե թաքմ տղա*: Երեք տարբերակներում էլ բոլոր հոլովները կարող են ստանալ որոշիչ հոդ՝ *հորը տընեն, ծառներուն մեջը, ձեռքեն, գեղեն, ձեռքովը, աչքովը, են ծակիցը, բաղչիցը, աչքովը*<sup>28</sup>: Բասենում որոշիչ հոդը կարող է և չգործածվել (մեր թաքավոր կ'ըսե. ձկի խրատ միտքը բերեց. ախչիկ կըսե, դուռ փակեր է): Բարբառում ստացական դերանունը և հոդը գործածվում են միասին՝ *իմ անգաջրս, իմ բերանս, իմ խազնես, քու անունդ, իմ պալատիս և այլն*:

Բացի *եր* և *ներ* հոգնակերտներից, որ ամենատարածվածներն են, բարբառում հանդիպում են նաև *ք* (տղեք//տղաք, գուննաչիք, խնամիք, ջորիք, օսկիք), *դանք* (հընգերդանք), *տանք* (ախպրտանք, ընկերտանք), *տիք* (ախպըրտիք), *ստանք//ստան* (լալեստանք, փեսեստանքը, օսկեստանք, բալնեստան<sup>29</sup>), *իկ* (մարդիկ) հոգնակերտները: Ջավախքում հանդիպել են հոգնակիներ *վի* երկակիի թեքույթով՝ *աչվիք, օտվիդ* (քո ոտքերը): Այստեղ դիտվել է

<sup>27</sup> Ինչպես նկատել է Հ.Աճառյանը, Կարնո բարբառում հետադաս անորոշ հոդը այլ բան չէ, եթե ոչ *մեկ* թվականը: Այդ բանը չգիտակցվելու հետևանքով շատ հաճախ անորոշ հոդ ունեցող գոյականի հետ գործածվում է նաև *մե* (մեկ) թվականը (մե թովխտըմ) (տե՛ս **Հ.Աճառյան**, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 3, Ե., 1957, էջ 979):

<sup>28</sup> Հ.Աճառյանը գրել է, որ սեռական հոլովը այժմ հոդ է ստանում Ախալցխայի և Ախալքալաքի խոսվածքներում, իսկ բացառական և գործիական հոլովները հոդ չեն ստանում (տե՛ս **Հ.Աճառյան**, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 3, էջ 978): Դաշտային աշխատանքների ընթացքում սեռականի, *ից*-ով բացառականի և գործիականի հետ որոշիչ հոդի գործածություն մենք ևս չենք արձանագրել:

<sup>29</sup> Հ.Աճառյանը, նկատի ունենալով իր բերած օրինակները, նշում է, որ այս մասնիկը ստանում են *իք*-ով ավարտվող բառերը (տե՛ս **Հ.Աճառյան**, *Հայ բարբառագիտություն*, էջ 108):



նան հոգնակի ստացականության *նիս* կազմիչ՝ *հարերնիս*: Շիրակում հանդիպել են այլ հոգնակերտներ ևս՝ *րանք* (էս տեղրանք), *աննէր* (ձիաններ), *ան* (իծան, ձիան /ձիանոց՝ ձիերի/, գեղան), *անիք* (կնանիք/կնդիք)<sup>30</sup>:

Գոյականները հոգնակի թվում որպես կանոն ենթարկվում են Ու հոլովման (հարուստներու, ճիճուններու, ժամկոչներուն, փորոդներուն, ախպրներուն, ծնկներուն, դշերուն, ախչիկներուն), այդ հոլովման են ենթարկվում շատ բառեր նաև եզակի թվում՝ *ծովու*, *գ՛րիխուն*, *ճամփու*, *գիլու*, *իծու*, *դևու*, *գառու*: Ոջ հոլովմամբ հանդիպել են *քուր* (քրոջ/քուրոջ), *տէր* (տիրոջ), *կերսար* (կերսարոյ), *ընկեր* (ընկերոյ) բառերը: Կան գրաբարաձև հոլովման օրինակներ՝ *ծնողաց*, *ձեռաց*, *տեղաց*, *հ՛ընգերդանցը*, *փեսեստանց*, *լալեստանց*, *տողոց*, *մարդոց*, *գեղացոց*, *հարամոց*, *ճամփոց*, *ախպրտոց*, *երկնուց*, *ձեռոք*, *վախտոք*:

Հանդիպում են ուղևորման, հանգման, մատուցման տրակա-նի յուրօրինակ դեպքեր՝ *կէրթա թագավորին* (թագավորի մոտ), *բերե կը հորը* (բերում է հորը), *չայ կէփե գը էդ մարտուն* (թեյ է պատրաստում այդ մարդու համար): Շնչավոր գոյականների ուղիղ խնդիրը կարող է լինել և՛ ուղղականաձև, և՛ տրականաձև (կանոն *հարսներն ու մանչը*, գելնի կէրթա. *տղեն* կիջեցնե կը ձիեն. գնա սառաֆի *տղեն* բեր. բռնեք էդ *ձին* - *մանչուն* կը տեսնի, պատավը դրկեց *աղջկան*. ոչ էլ *մարդի* կը ճանչնան)<sup>31</sup>:

Բացառական հոլովն ունի է վերջավորություն, որը միշտ դրսևորվում է հողի հետ՝ *տնէն*, *գավազանէն*, *եստէն*, *ջահնամէն*, *հորոխպերէն*, *մսէն*, *տիրոջէն*, *ջրէն*, *կնկանէդ*, *խոսքէդ*, *կնկանէն*, *թագավորէն*, *իմ սաղութէնէս*, *դռնէն*, *էրեսէն*, *նէքսնէն*, *հ էտնէն*, *ձ էքքէն*, *ձոցէն*, *ինչէն*, *գեղէն*, *արտէն*, *մարդոցէն* (մարդկանցից), երբեմն էլ՝ *մենէն* (աստուծմենէն): Երբեմն հանդիպում են նաև

<sup>30</sup> ՀԲԱ ծրագրով գրանցված թիվ 95 տետրում արձանագրված են նաև *դիկ*, *վը-դանկ*, *վըդիկ* հոգնակերտներ (տեկըրդիկ, տիրվըդանկ, տիրվըդիկ):

<sup>31</sup> Հ.Աճառյանը նշել է, որ Կարնո բարբառում հայցականը տարբերակվում է ըստ շնչավոր-անշունչ հակադրության (տե ս **Հ.Աճառեան**, նշվ. աշխ., էջ 108):

բացառականի՝ *g*-ով ձևեր՝ *գոտկիցը, փանջարից, պալատից, ձեռնից, ուզածներուց, քնից, տանից, ձիուց, մորից*<sup>32</sup>: Հեքիաթներում բավականին տարածում ունեն է-ից առաջ *g* ունեցող ձևեր, ինչպես՝ *տղեցեն, խնոցոցեն, բախչեցեն, ճամբեցեն, փանջարեցեն, ձիուցեն/ձիոցեն, գլխեցեն, օտացեն, օսկեցե* (նսկուց), *շուշեցե* (ապակուց), *օղեցեն* (օղայից), *մեշեցեն, հերթըրցեն, աղեցեն* (աղայից), *վրցեն* (վրայից), *մաղարեցեն*: Ինչպես նկատել է Ն.Աճառյանը, Կարնո բարբառում ուղղականում *ա*-ով ավարտվող բառերը, հոգնակի ուղղականում ստանալով *ք*, սեռական հոլովում ունենում են *օց*, բացառականում՝ *օցեն*, գործիականում՝ *օցով* վերջավորություններ (տղա, տղեք, տղօց, տղօցեն)<sup>33</sup>: Կարծում ենք՝ վերը բերված եզակի բացառականի ձևերը ուղղակիորեն կապված են *տղօցեն* տիպի հոգնակի ձևերի հետ: Մեր օրինակների մեծ մասը եզակի ուղղականում *ա*-ով ավարտվող բառեր են (տղա, բախչա, ճամփա, փանջարա, օղա, մեշա, աղա, վրա, մաղարա), որոնց հոգնակի բացառականի ձևերն էլ, թերևս, ժամանակի ընթացքում հնչյունափոխվել (օցեն>էցեն) ու ձեռք են բերել եզակի բացառականի իմաստ: Թերևս դեր է խաղացել այն հանգամանքը, որ *ա*-ով ավարտվող բառերի եզակի բացառականի կազմությունը սեռականից՝ *էն* մասնիկով, կարող էր առաջ բերել քերականական համանունություն (տղա > սեռ. տղի > բաց. \**տղէն*, ինչպես որոշյալ ուղղականն է՝ *տղէն*), իսկ ուղղականից կազմությունը կարող էր առաջ բերել հնչյունաբանորեն չարդարացվող ձևեր (*տղա-տղայէն, ճամփա-ճամփայէն*) այն դեպքում, երբ բարբառում բառամիջի ձայնավորի սղումը կայուն օրինաչափություն է: Բացառականի կազմության հիշյալ ձևը տարածվել է նաև *ի* ձայնավորով ավարտվող բառերի վրա՝ *խնոցոցեն, օսկեցեն, ձիոցեն*, ինչպես նաև՝ բաղաձայնով ավարտվող որոշ բառերի վրա՝ *գլխեցեն, հերթըրցեն*: Թվում է՝ բա-

<sup>32</sup> ՀԲԱ ծրագրով գրանցված թիվ 95 տետրում զուգահեռաբար բերվում են բացառականի ձևեր *իծ* և *էն* վերջավորություններով, բերվում են նաև ուղղականից ու սեռականից կազմված զուգահեռ ձևեր՝ *գ իլուծ // գ էլէն // գ իլանուծ // գ իլանէն*: Մենք արձանագրել ենք *g*-ով բացառականի բացարձակ գերակշռություն:

<sup>33</sup> Տե՛ս Ն.Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 3, էջ 647;

ցառականի բերված բարբառային ձևերը ներկայացնում են եզակի բացառականի՝ *ց* կազմիչով ձևավորվելու գործընթացի մի աստիճանը, երբ հոգնակի սեռականը դառնում է եզակի բացառականի հիմք՝ ստանալով *էն* մասնիկ (տոց+էն>տղեցէն): Հաջորդ աստիճանը պետք է լիներ առանց *էն*-ի բացառականի իմաստի արտահայտությունը, որը և առկա է հեքիաթների լեզվում՝ *թոռեց թոռ*: Կարծում ենք՝ գործ ունենք *ց* բաղադրիչով եզակի բացառականի կազմավորման ուղիներից մեկի հետ, որը Կարնո բարբառում իր ավարտին չի հասել. բարբառում *ից* վերջավորությամբ բացառականի զուգահեռ ձևերը թերևս գրական լեզվի ազդեցության հետևանք են:

Հետաքրքրական է, որ *մեկ* բառի կողքին հոգնակի բացառականի իմաստով կարող է գործածվել եզակի սեռական (երբեմն էլ հոգնակի սեռական) հոլովով բառ, ինչպես՝ *ախպոր մեկը* (եղբայրներից մեկը), *թագավորի մեկը*, *օրվան մեկը*, *հարամու մեկը*, *ռանչպարի մեկը*, *ընկերոջ մեկը*, *տղոց մեկը*, *նաև՝ ավուր մեկը* (Ջ.):

Բարբառում ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ սեռականով և *մեջ* կապով՝ *մենակ կենամ էս մաղարեն*, *տունը պառկի*, *քաղքիմ մեջ*, *փորին մեջը*, *բաղի մեջը*:

Անձնական դերանուններն են՝ *ես*, *դու*, *ինքը*, սրանց քերականական ձևերից են՝ *ընձի//ինձի*, *ինձնէն//ինձնե*, *ընձնեն*, *մենք*, *մեր*, *մեզի*, *քու*, *քեզի //քեզիկ*, *քեզնեն*, *ձ'եր*, *ձեզի*, *ձեզնեն*, *իրեն //իրան // ուր*, *հինքն*, *իրանք* և այլն: Ջավախքում հանդիպում են *մ*-ով ձևեր՝ *իրմեն*, *մեզմով*, *քեզմով* և այլն: Կապերի հետ հանդես են գալիս անձնական դերանունների տրականի ձևերը՝ *մեզի հետ*, *ինձի հըմար*, *մեզի համար*, *ընձի համար*: Յուրակական դերանուններից են՝ *ես*, *էդ*, *էն*, *էսի*, *էդի*, *էնի*, *էսիկ* (նաև՝ այսիկ՝ այ+էսիկ), *էդիկ*, *էնիկ*, *էստեդ//իստեդ*, *էնտեդ*, *էսման*, *էդման*, *էման*, *էնմալ*, *էտդին*, *էնդին*, *էքով*, *էնքով*, *հոս*, *հոդ*, *հոն*, սրանց քերականական ձևերից են՝ *էնոր //ինոր*, *էդոր //իդոր*, *էտոր*, *էտորեն*, *էսոնք//ինոնք*, *ըտոնք*, *ըստուց-ընտուց*, *էսոնց*, *էդոնց //իդոնց*, *էնոնց*, *էդոնցեն*,

էնով և այլն<sup>34</sup>: Ջավախքում ցուցական դերանունները ներկայացնում են *այ>ա* անցումով ձևեր՝ *աս, ասիկ, ադ, ադիկ, ան, անիկ, անտեդ, անոր, անորեն, ատոնց, աստին, անտին, անպես* և այլն: Հարցահարաբերական դերանուններից են՝ *վեվ//վօվ*<sup>35</sup>, *վերը* (որը), *հ'ն'ըր, հո'ըրտից // ուրդից // ո'րդից, հո'ըրտեդ, ինչըխ, նան՝ վերին* (որին), *վե'րման* (ինչպես), *որմանը* և այլն: Դերանվանական այլ ձևերից հանդիպում են՝ *հիրար, իրարու, իրարմէնե, ամեն, ամենքեն, ուրուչ*:

Թվականների համակարգում զգալի զանազանություններ չկան: Հանդիպել են թվականների հետևյալ ձևերը՝ *երկու//երկուսըդ, իրեք/հ'իրեք, օխտը, տասվերկու, տասնըհինգ, տասնըվեց, քսանըհինգ, քսանըմեկ, եռեսունինը, քառասուն//քառսուն, հիթսուն, հարուր*: Դասականը կարող է արտահայտվել *վրա* կապով՝ *վրա իրեք անգամ* (երրորդ անգամ):

### Կարնո բարբառի բայական համակարգի յուրահատկություններ հեքիաթներում

Կարնո բարբառում բայն ունի Ե, Ի, Ա խոնարհումներ (վար կառնե, բ'ոնենք, բ'երենք, կը խոսին, ունիմ, հաքնիմ, կայնիմ, վառիս ու էրիս, հ'ելնիմ կովիմ, գտնիմ, էրթամ, կը հասկընար):

Բասենում հարակատար դերբայի ձևերը հանդիպում են *ուկ* և *աժ* վերջավորություններով՝ *գարկուկ, նիշանուկ, կատդուկ, գրուկ դրուկ, ծածկուկ, փլուկ, քաղցած, էրած, խաղցած, քնած, չգտած, կայնած, էրթած // էրթըցած, գալած, էկած*: Շիրակում և Ջավախքում հարակատարը ունի միայն *աժ* վերջավորություն (կապած, գալած, էկած, ծեքը չը ծեքած, մըռթըվորած, բերած, էղած-չե-

<sup>34</sup> ՀԲԱ ծրագրով լրացված թիվ 95 տետրում բերվում են ցուցական դերանունների գուգահեռ ձևեր՝ *է* և *ը* ձայնավորներով (էսիգ/ըսիգ, էդիգ/ըդիգ, էնիգ/ընիգ, էսոնկ/ըսոնկ, էդոնկ/ըդոնկ, էնոնկ/ընոնկ): Դաշտային աշխատանքների ընթացքում մենք ավելի հաճախ արձանագրել ենք *ը*-ով սկսվող ձևերի առկայություն:

<sup>35</sup> ՀԲԱ ծրագրով լրացված թիվ 95 տետրում, ինչպես նաև մեր դաշտային աշխատանքների տվյալներով՝ *վօվ*:

դած, շակված, ընկած): Վաղակատար դերբայը սովորաբար ունի էր վերջավորություն՝ *գնացեր է, հասկցեր է, հիվընդցեր էր, սըպաներ էս, զարկեր էս, գնացեր էր, էկեր էս, ցնդեր էս, պատրաստվեր է, կայներ է, նստեր էն*, բայց նաև հանդիպում են էլ վերջավորությամբ ձևեր (ըսել էի, օր էինք կտրել, գնացել է ընգել, չեմ բերել, ինքն է մտել)<sup>36</sup>: Երբ վաղակատարին օժանդակ բայ չի հաջորդում, բառավերջի լ//ր-ն ընկնում է՝ *չես իմացե, քուռակ է բերե, նե է մտե, չեմ էղե, չեմ զարկե հեծե ձին*: Ջավախքում և Շիրակում վաղակատարը հանդիպել է հարակատարին բնորոշ կիրառությամբ՝ *նստեր բորոն կուտեի, կայներ իմեն կը*: Ենթակայական դերբայը ունի օղ վերջավորություն (գալօղ, ըսօղ, գրօղ, էրթըցօղ): Բարբառի խոսվածքների բնորոշ է նաև համընթացական դերբայը՝ *քաշելեն, բոռալեն, փեկոլ էնելեն, քաշելեն, լողացնելեն* (լողացնելով), *գոռգոռալեն* (գոռգոռալով) և այլն: Բասենում հանդիպել է նաև ապառնի դերբայի ձև՝ *գալոց է*:

Երեք տարբերակներում էլ օժանդակ բայի ձևերն են՝ *էմ, էս, է, էնք, էք, էն և էի, էիր, էր, էինք, էիք, էին*:

Մահմանականի ներկյան և անցյալ անկատարը կազմվում են կը մասնիկի տարբերակներով: Ձայնավորով սկսվող բայից առաջ այդ մասնիկի ը-ն ընկնում է՝ *կընե, կանիծե, կըսե, կաշե, կէղնիս, հաց կուտեր, կըսէի*: Հագագային *հ*-ով սկսվող բառերի դեպքում մասնիկը ձուլվում է *հ*-ին և դառնում *գ՝ գելնե, գուգե, գիմանան, գիչնի*: *Գալ, լալ, տալ* բայերի համապատասխան ձևերն են՝ *գուքա, գուլա, կուտա*: Ըստ դիրքի՝ մասնիկը կարող է լինել նախադաս (կը զարկըվի, կը տեսնի, հօլ կը խաղան, կը հեծնի, կը հանե, կը թոնի, կը հասցնե, վար կը դնե, կը ջարդե, կը սաղնա), հետադաս (դառնա կը, դնե կը, տեսնի կը, թալնեն կը, սրբեիր կը, պահեն կը, վազգե կը,

<sup>36</sup> Հ.Մկրտչյանը Կարնո բարբառում արձանագրել է վաղակատարի էր վերջավորություն (տե՛ս **Հ.Մկրտչյան**, նշվ. աշխ., էջ 66), ՀԲԱ ծրագրով լրացված թիվ 95 տետրում վկայված է էլ վերջավորություն՝ *ցրել էմ*: Դաշտային աշխատանքների ընթացքում մենք ևս արձանագրել ենք վաղակատարի՝ միայն էլ վերջավորությամբ ձևեր:

տեսնի կը)<sup>37</sup>, միաժամանակ և՛ նախադաս, և՛ հետադաս (գուքա կը, կաշե կը, կըսե կը, կարծեցնե կը, կուտեր կը, գուքան կը, գուքան հասնին կը, կաշե կը, կը կանչե կը, կը պտտվի կը, կը դառնա կը)<sup>38</sup>: Ջավախքում և Շիրակում գործածական է միայն *կը* մասնիկ, ընդ որում՝ Ջավախքում նկատելի է այդ մասնիկի հետադաս, իսկ Շիրակում՝ նախադաս կիրառության գերակշռություն<sup>39</sup>: Բասենում հետադաս մասնիկը ավելի հաճախ սկսվում է ձայնեղ բաղաձայնով՝ *կը կապե գը, կը նստի գը, կը խոսի գը, կը խմե գը, կը պառկի գը*: Նաև առանձին գործածության ժամանակ հետադաս դիրքում հանդիպում է *գը խլլսին գը, մորթե գը, հանե գը, բերե գը, քաշե գը*: Բասենի խոսվածքներից մեկում (Նամրան-Էքրեկ) հանդես է գալիս *կը//կու//գու* տարբերակ՝ *կու մեռնինք, կու դնե, կու տանեինք, կու խրատեմ, կու մտածեր, կու հասկնար, խիկես գու, կու խոսեին գու, կու մտածեր գու, կու հասկնամ գու, կը վառի գու, կը մտածեր*

<sup>37</sup> Հ.Աճառյանը նշել է, որ Կարնո բարբառում *կը* մասնիկը դրվում է բայից հետո, և միայն ձայնավորով սկսվող բայերը սկզբից ստանում են նաև *կ* (տե՛ս **Հ.Աճառյան**, *Հայ բարբառագիտություն*, էջ 109): Այդպես են իրավիճակը ներկայացրել նաև Ա.Ղարիբյանը (տե՛ս **Ա.Ղարիբյան**, *Հայ բարբառագիտություն*, էջ 409) և Հ.Մկրտչյանը (տե՛ս **Հ.Մկրտչյան**, նշվ. աշխ., էջ 70):

<sup>38</sup> Հնարավոր է, որ ձայնավորով սկսվող բառերին *կը*-ի ձուլումը (կենե, կըսե) առաջ է բերել մասնիկի որոշ մթազնում, ուստի առաջ է եկել իմաստը ցայտուն արտահայտելու կարիք՝ այն հետադաս կրկնելով: Այնուհետև մասնիկի կրկնակի կիրառությունը համաբանությամբ տարածվել է նաև բաղաձայնով սկսվող բառերի վրա, ապա և սովորական է դարձել նաև մասնիկի միայն հետադաս կիրառությունը: Ի դեպ, թվում է, մասնիկի հետադաս կիրառություն ավելի հաճախ լինում է այն դեպքում, երբ իմաստը ընդգծելու կարիք կա (օրինակ՝ «կը զարկե՛ բացվի կը» կապակցության մեջ առկա է ենթակայի փոփոխություն, և երկրորդ բաղադրիչը ունի հետևանքի իմաստ):

<sup>39</sup> Հ.Մկրտչյանը նկատել է, որ *կը* մասնիկը Կարնո բարբառում դրվում է խոնարհվող բայից հետո (տե՛ս **Հ.Մկրտչյան**, նշվ. աշխ., էջ 70): ՀՖԱ նյութերի հավաքման ծրագրով լրացված թիվ 95 տետրում Լենինականի (Գյումրի) համար ներկայացված է զուգաձևություն՝ *կը*-ի նախադաս և հետադաս կիրառություններով, ընդ որում՝ հետադաս դիրքում եզակի առաջին, երրորդ և հոգնակի երրորդ դեմքերում հանդես է գալիս *գը* ձևը՝ *մընամ գը, մընաս կը, մընա գը, մընանկ կը, մընակ կը, մընան գը*: Մեր դաշտային աշխատանքների ընթացքում ևս այս պատկերն ենք արձանագրել:

*գու, կը բանաս գու, կը պայես գու: Ձուգաբայական հարադրություններում կամ իրար հաջորդող բայերի դեպքում կը-ն սովորաբար չի կրկնվում, ինչպես՝ դ'ատնա գուքա կը, կայնըցընեն կը տեսնին, կը հանե բանա, փաթովին գուլան, հագնի կապե կը, բերե գարի կուտա, փախչի մտնի կը, վերցնե դնե կը, բայց կարող է և կրկնվել՝ կերթա կը դիպնի, գուքամ կը տանիմ, գելլե կերթա կը. գելլեն կերթան կը<sup>40</sup>: Հետաքրքրական է, որ Շիրակի խոսվածքում Ի խոնարհման բայերի ըղձական անցյալի (նաև անցյալ անկատար ժամանակաձևի) երրորդ դեմքը հաճախ է-ի դիմաց ունի ի (եղնիր, չկտրիր /չկտրվեր/), չեղնիր /չլիներ/, իջնիր /իջներ/, մեռնիր /մեռներ/, պրծընիր, կապրիր /ապրում եր/)<sup>41</sup>:*

Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ցոյական, այնպես էլ անցոյական հիմքերից. մի կողմից՝ *կապեցիր, քաշեցին, բերեցիր, պահեցի, խմեցի, աղաչեցիր, բաշխեցի, պագեցին*, մյուս կողմից՝ *ազատիր* (ազատեցիր), *բերիր, սպանիր, երին, բերիր, տվիր, ըսին, կապին*: Այս ժամանակաձևն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ. ներգործաձև՝ *բերեց, վար դրեց, քելեց, բացեց, թթեց, փորեց, նեղեցրեց*, կրավորաձև՝ *կրցավ, թոփ էրավ, ըսավ, քնան, գլորավ, ընկավ, ճանչրցավ, քաշվավ, էրավ, խաշան, նստավ, շիվարավ, կայնավ, պառկան, կոտրավ, ազատվավ*: Ընդ որում՝ խոնարհման ձևը պայմանավորված է ոչ միայն սեռով (բերեց, փորեց, - գլորավ, ընկավ), այլ նաև բայի կազմությամբ (ներեցրեց - էրավ, քաշվավ):

Հարկադրականի մասնիկն է *պիտի/պրտի՝ պիտի ուզես, պրտի ըսեն, նաև ըսեր պիտի, լողանա պիտի, պտի էրթաւ*<sup>42</sup>: Շիրակի հեքիաթներից մեկում հանդիպել է կրճատ *տի ձև՝ իրեք բան տի ըսեմ. ըսել է՝ տիմանա*: Ըստ Հ.Մկրտչյանի՝ հարկադրականի կազմիչն է *պիդի*, որը հետադաս գործածվելիս Ախալքալաքի և

<sup>40</sup> Տե՛ս նաև **Հ.Աճառեան**, *Հայ բարբառագիտություն*, էջ 110:

<sup>41</sup> Կարնո բարբառը նկարագրելիս այս իրողությունը նկատել է նաև Հ.Աճառյանը (տե՛ս **Հ.Աճառեան**, նշվ. աշխ., էջ 111):

<sup>42</sup> ՀԲԱ ծրագրով լրացված թիվ 95 տետրում արձանագրված է *բըդի* ձևը:

Ախալցխայի խոսվածքում հանդես է գալիս *ղի* ձևով (պիղի վառեմ, վառեմ դի)<sup>43</sup>:

Եզակի հրամայականն ունի առանց վերջավորության և *ա, է, ի, ու* թեքությունով ձևեր, ինչպես՝ *ա՛ն, է՛լ, ցի՛ք* (զցիր), *լից, կե* (կեր), *բե* (բեր), *տո՛ւ, տե՛ս, աշե՛, քսե//ըսա՛, ուզե, թքե, հանե, խմե, կիսե՛, էրե՛//էրա, մորթե՛, կտրե՛, կատարե, պրծի, հաքի՛, դարձի, էկե // էգե* (եկ), *արի, կեցի՛, ցամքեցո՛ւ, խմցո՛ւ*: Հոգնակի հրամայականն ունի *էք* վերջավորություն՝ *բերեք, քելեք, կեցեք*, Շիրակում՝ *արիք//արեք*: Եզակի արգելական հրամայականը կազմվում է *մի* բառ-մասնիկով՝ *մի՛ էրթա, մի՛ էնե*, հոգնակին՝ *միք//մեք* մասնիկով (վերջինը հանդիպել է Բասենում)՝ *միք դիպի, միննաթ մեք էնե, մի ք լցնի, միք վախենա*:

Հեքիաթներում պատճառական ածանցը ներկայի և անցյալի հիմքերից կազմվող ձևերում տարբերակվում է: Ներկայի հիմքից կազմվող ձևերում, որպես կանոն, պատճառական ածանցն է *ցն՝ պրծրցնեին, զարմացնե կը, բանձրրցնենե կը, պառկեցնե կը, նստեցնե կը, պիտի կերցրնեն, կը թոցրնե, կը սատկեցրնե, կը պրծրցնեմ, կը բարձրացրնե*, բայց անցյալի հիմքից կազմված ձևերում սովորաբար հանդես են գալիս *ուց//ցուց*-ով ձևեր<sup>44</sup>՝ *վերուց, փախուց, դարձուց, փլուց, կերուցիր, կորուցած, իջուցին // հիջեցուց, հասուց//հասցուց, սովրեցուց, նեղեցուց, հազցուց, իմացուց, երկնցուց, վախեցուց, հարցուց, խրլլսցուց, պրծրցուցիր, խեղճրցուցեր է, փախուցեր է, սատկեցուցեր են, մտցուցին, հազցուցի, վերցուցեք*: Հանդիպում են (իսկ առանձին դեպքերում՝ տարածված են) պատճառական ածանցի՝ միայն *ու* տարրով ձևեր, ինչպես՝ *կը հարցում, կը հասկրցու, կանցու* (անցկացնում է), *անցո՛ւ* (անցկացրում), *էրկրնցո՛ւ, վերու, կը վերու* (վերցնում է), *կը կերու* (կերցնում է), *կը փլու գը* (փլցնում է), *պիտի փլում* (պետք է փլցնեմ), *ես դառում*

<sup>43</sup> Տե՛ս **Հ.Մկրտչյան**, նշվ. աշխ., էջ 71:

<sup>44</sup> Նման ձևեր վկայել է նաև **Հ.Մկրտչյանը** (տե՛ս նշվ. աշխ., էջ 81): ՀԲԱ ծրագրով լրացված թիվ 95 տետրում, ինչպես նաև մեր դաշտային աշխատանքների ընթացքում նման ձևեր չեն արձանագրվել:



(հետ են դարձնուն), *լողոց՝ ւր, անցո՝ ւր, անցու*: Վերջին կարգի ձևերը Գ.Ջահուկյանը համարել է չորրորդ (ուլ) լծորդության արտահայտություն՝ ընդ որում արձանագրելով դրանց պատճառական լինելը<sup>45</sup>: Հարկ ենք համարում նկատել, որ այդ ձևերում *ու*-ն հինհայերենյան Ու խոնարհիչի հետ որևէ առնչություն չունի: Այն նախ և առաջ պատճառականության ցուցիչ է, որը շատ հետաքրքիր կերպով կարող է աղերսվել լեզվի զարգացման նախորդ փուլերի ձևերի հետ: Ինչպես հայտնի է, գրաբարում պատճառական բայերի եզակի հրամայականը վերջավորվում էր շեշտակի *ո*-ով, որն առաջանում էր *ոյց* պատճառական ածանցից՝ սուր շեշտի հետևանքով *յց* մասի անկումով՝ *հեռացուցանել* > *հեռացոյց* > *հեռացո՛*, *անցուցանել* > *անցոյց* > *անցո՛*<sup>46</sup>: Միջին հայերենի շրջանում արդեն հանդես են գալիս պատճառական բայերի հրամայականի *ուր* վերջավորությամբ գուգահեռ ձևեր՝ *գորացուր, ցամաքեցուր, կերցուր*<sup>47</sup>: Շիրակի և Բասենի խոսվածքներով գրառված հեքիաթներում արձանագրել ենք *ապրեցո՛ւր* և *անցո՛ւ* ձևեր: Բնական է ենթադրել, որ երկրորդ կարգի ձևերը առաջացել են առաջիններից՝ *ր*-ի անկումով: Մեր նախորդ աշխատանքներից մեկում<sup>48</sup> նկատել ենք, որ եզակի հրամայականի և ըզձական ապառնու (Կր ճյուղի բարբառների դեպքում՝ ներկայի) եզակի երրորդ դեմքի ձևերը բարբառներում սովորաբար համընկնում են: Այդպես է իրավիճակը նաև դիտարկվող բարբառային խոսքում, ուր ունենք *անցո՛ւ* հրամայական և *կանցու* ներկա: Կարծում ենք՝ պատճառական բայերի հրամայականի *ո՛ւ* (>ո՛ւր) վերջավորությունից նախ ձևավորվել է ըզձական ապառնու եզակի երրորդ դեմքի *ու* վերջավորությունը, ապա՝ մյուս դեմքերի թեքույթները (անցում, անցուս,

<sup>45</sup> Տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 100:

<sup>46</sup> Տե՛ս Ա.Աբրահամյան, *Գրաբարի ձևնարկ*, Ե., 1976, էջ 183:

<sup>47</sup> Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Ա, Ե., 1972, էջ 339:

<sup>48</sup> Տե՛ս Վ.Կատվայան, «Եւ» բայը *Բայագետի բարբառում*.- Բանբեր Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի. Հայագիտություն և գուգադրական լեզվաբանություն, Ե., 2012, 2, էջ 94-99:

անցու, անցունք, անցուք, անցուն), որոնք էլ աստիճանաբար տարածվել են ներկայի հիմքից կազմվող այլ ձևերում (կշտացում, կը փու գը, պիտի փում, կը հարցում): Այնպես որ, պատճառական բայերի խոնարհման համակարգում հանդես եկող *ու-*ն նախ և առաջ պատճառականության ցուցիչ է, ապա միայն ստանձնել է խոնարհիչի դեր՝ հանդես գալով դիմաթվային բոլոր թեքություններում: Միաժամանակ փաստենք, որ անցյալի հիմքում դրսևորվող *ուց* ձևը գրաբարյան *ոյց* ածանցի հնչյունափոխված տարբերակն է:

Հիշատակենք մեկ երկու այլ հատկանիշներ ևս: Եղանակավորող բայի կողքին բարբառում հանդես է գալիս ոչ թե անորոշ դերբայ, այլ ըղձական ապառնու երրորդ դեմքի ձև՝ *կըրնաս էրթա բերե* (կարող ես գնալ բերել), *չեմ կրնա մոռանա*, *չեն կրնա հաղթե*, *չկրցան ջուր գտնին*, *կարա ս խրատ տա*, *կարա ս գտնի*, *չի կրնա գտնի*, *չեն կրա հասնե*, *չես կրնա բերե*, *չի կրնը գտնի*, *չկրցավ համբիրե*, *կրնա բերե*, *չես կրնա էրթա բերե*, *կրնաս էրթաս բերե*, *չեմ կրնա մոռանա*, *կոնանաք հաղթե*, *չէր ուզեցե խոսա* և այլն: Ջավախքում տարածված են երկրորդական վերլուծական ժամանակաձևերի կիրառությունները՝ *մե ժամըմ շինե էղե* (մեկ ժամ շինելիս է եղել), *կաշխատիր էղե* (աշխատելիս է եղել), *շինե կը էղե* (շինելիս է եղել), *վար իջնելու էղան* (վայր իջնելիս եղան), հանդիպել են նաև Շիրակում *կայնած կէղնիս*:

### Եզրակացություններ

20-րդ դարի սկզբներին գրառված հեքիաթներում հիմնականում հարազատորեն են արտացոլված Կարնո բարբառի՝ այդ ժամանակվա դրսևորումների յուրահատկությունները: Ճիշտ է, գրառված խոսքում չեն արտահայտվել այնպիսի կարևոր հնչյունական հատկանիշներ, ինչպիսիք են շնչեղ ձայնեղների առկայությունը բառասկզբում, ապաշնչեղացումը բառամիջում ու բառավերջում, սակայն հնչյունական այլ հատկանիշներ (բառասկզբում *n-o*, *ե-է* համապատասխանություններ, բառամիջի ձայնավորի անկում, *ա>է*, *այ>է//ա*, *հ>ֆ*, *հ>յ* անցումներ, բառասկզբում *հ-ի* հավելում և

այլն), ինչպես նաև քերականական հիմնական հատկանիշները իրենց համարժեք արտահայտությունն են գտել դիտարկվող լեզվական նյութում: Երեք տարածքների հեքիաթների լեզուն հավասարապես Կարնո բարբառն է՝ առանձին տարբերակային իրողություններով հանդերձ: Հնչյունական առումով առանձնանում է Ջավախքի խոսվածքը (*այ>ա* զարգացում, բաղաձայնական համակարգի երևույթներ), քերականական իրողություններում նկատելի են Բասենի առանձնահատկությունները (*ուկ*-ով հարակատար, ներկայի *կու//գու* մասնիկ, որոշիչ հոդի բացակայության դեպքեր), չնայած քիչ չեն Ջավախքի յուրօրինակությունները ևս (երկակիի *վի* մասնիկ, անձնական դերանունների՝ *ւ*-ով ձևեր, *կը* մասնիկի առավելաբար հետադաս կիրառություն): Այնպես որ, լեզվական փաստերը հիմնավորում են Աճառյանի այն դիտարկումը, որ Կարնո բարբառը, հակառակ իր ընդարձակ տարածվածության, չունի բազմաթիվ ենթաբարբառներ, ճիշտ է՝ կան որոշ զանազանություններ, բայց դրանք «առանձին որոշողական անջրպետ չեն կազմում»<sup>49</sup>:

Կարնո բարբառի հետագա գիտական ուսումնասիրությունները, հատկանիշների արձանագրումները և մեր դաշտային որոշ աշխատանքների արդյունքները վկայում են, որ բարբառի՝ Շիրակի մարզում գործածվող տարբերակները էականորեն չեն տարբերվում հարյուր և ավելի տարիներ առաջ գրանցված լեզվավիճակից: Նկատելի են միայն որոշ տեղաշարժեր: Այսպես, սեռական, բացառական և գործիական հոլովները այլևս որշիչ հոդ չեն առնում, բացառական հոլովը մեծ մասամբ ձևավորվում է *ցձ*/ կազմիչով վերջավորությամբ, *վօլ* ձևի կողքին չի հանդիպում *ուլ* դերանվան *վել* ձև, սովորական են դարձել դասական թվականի՝ *րորդ*, *երորդ* ածանցներով ձևերը, այլևս գործածական չեն վաղակատար դերբայի՝ *էր* վերջավորությամբ ձևերը, Շիրակի խոսվածքում մեծ տարածում են ստացել *կը* մասնիկի հետադաս կիրառությունները՝ ձայնեղ սկզբով, գործածական չեն պատճառականի *ուց //ցուց*

<sup>49</sup> Տե՛ս Ն.Աճառեան, *Հայ բարբառագիտություն*, էջ 111:

կազմիչով ձևերը և այլն: Բնչ խոսք, հնարավոր է, որ ժամանակային տարբերությունների մի մասի արձանագրումը կարող է պայմանավորված լինել սուբյեկտիվ գործոններով (հեքիաթների գրառման հանգամանքներ, ուսումնասիրողների ունեցած նյութի սակավություն և այլն), սակայն այլ դեպքերում տեղաշարժերը պայմանավորված են կամ գրական լեզվի ու այլ բարբառների ազդեցությամբ, կամ բարբառային խոսքի զարգացման յուրահատկություններով:

### Օգտագործված գրականություն

- Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Ե., «Լույս» հրատ., 1976:  
 Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Ե., 1972:  
 Աճառեան Հ., Հայերեն գաւառական բառարան, Լազարեան ձեռնարան արեւելեան լեզուաց, Թիֆլիս, 1913:  
 Աճառեան Հ., Հայ բարբառագիտութիւն, Մոսկուա-Նոր-Նախիջեվան, 1911:  
 Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, հ. 2, ԵՊՀ հրատ., 2013:  
 Գրիգորյան Ա., Հայ բարբառագիտության դասընթաց, ԵՊՀ հրատ., 1957:  
 Կատվայան Վ., «Եմ» բայը Բայագետի բարբառում.- Բանբեր Երեվանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի. Հայագիտություն և գուգադրական լեզվաբանություն, Ե., 2012թ., 2, էջ 94-99:  
 Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Ե., 1957:  
 Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 4, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1963:  
 Ղարիբյան Ա., Հայ բարբառագիտություն, Ե., 1953:  
 Մելքոնյան Ա., The demography of the Province of Erzerum: Sixteenth Twentieth Centuries.- Ցեղասպանություն և հայրենազրկում, Ե., 2015, Զանգակ, էջ 42 – 52:  
 Մկրտչյան Հ., Կարևո բարբառը, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Ե., 1952:

Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., 1972:

### Համառոտագրություններ

գյուղ. - գյուղական

դեր. - դերանուն

Ջ.- Ջավախքի խոսվածք

քղք. - քաղաքային

**Katvalyan V., The Karno Dialect in Fairy Tales Recorded at the Beginning of the 20th Century.**-In the work we consider the variant manifestations of Karno dialect within the framework of the material provided by the 4th volume of the scientific edition "Armenian Folk Tales". The volume includes fairy tales collected by Yervand Lalayan's expedition in 1911-1916, which recorded dialects of Alexandropol, Basen and Javakhk regions. We consider the obtained facts in comparison with the materials registered in the last quarter of the 20th century with the help of the program for collecting materials of the Dialectological Atlas of the Armenian Language. Observations show that the language of the fairy tales of the three regions is equally a Karno dialect with some variant realities. In terms of phonetics, the speech of Javakhk stands out, in terms of grammar, features of Basen are noticeable, although there are many features of the speech of Javakhk. Linguistic facts confirm Acharyan's observation that the Karin dialect, despite its wide distribution, does not have many subdialects. Over time, changes in dialect speech are due to the influence of the literary language and other dialects or to the peculiarities of the development of dialect speech.

**Keywords:** dialect, historical point of view, dialect sample, fairy tale, folklore material, vocabulary, dialect atlas.

Victor Katvalyan, Doctor of Philology, Institute of Language named after H.Acharyan of NAS RA, Leading Researcher.

**Катвалян В., Диалект Карно в сказках, записанных в начале 20 века.**- В работе рассматриваются варианты проявления диалекта Карина в рамках материала, предоставленного четвертым томом научного издания "Армянские народные сказки". В том вошли сказки, собранные экспедицией Ерванда Лалаяна в 1911-1916 гг., которые записаны по говорам регионов Александрополя, Басена и Джавахка. Полученные факты рассматриваем в сравнении с материалами, зарегистрированными в последней четверти XX века с помощью программы сбора материалов Диалектологического атласа армянского языка. Наблюдения показывают, что язык сказок трех регионов в равной степени является диалектом Карно с отдельными вариантными реалиями. В плане фонетики выделяется говор Джавахка, в плане грамматики заметны черты Басена, хотя есть немало особенностей и говора Джавахка. Лингвистические факты подтверждают наблюдение Ачаряна о том, что каринский диалект, вопреки его широкому распространению, не имеет множества поддиалектов. С течением времени изменения диалектной речи обусловлены влиянием литературного языка и других диалектов или особенностями развития диалектной речи.

**Ключевые слова:** диалект, историческая точка зрения, диалектный образец, сказка, фольклорный материал, лексика, диалектный атлас.

Виктор Катвалян, доктор филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, ведущий научный сотрудник.

## ՄԵՐ ԼԵԶՈՒՆ, ԽՈՍՔԸ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ\*

10.54412/2738277X-2022.1.2-118

### Հովհաննիսյան Նազիկ

բանասիրական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃառյանի անվան լեզվի ինստիտուտ,  
ավագ գիտաշխատող. instlingv@sci.am

**Բանալի բառեր.** լեզվամտածողություն, պատճենում, բառի-մաստ, գրագրության լեզու, գովազդի լեզու:

### Նախաբան

Լեզուն՝ իր տարբերակներով, ունի յուրահատկություններ, սակայն քաղաքական հաղորդագրություն-մեկնաբանությունները, գիտական աշխատությունները, ամենօրյա խոսակցականը, անգամ կենցաղային նյութերի վերաբերող ակնարկները տարբերություններով հանդերձ պահանջում են լեզվի ճշգրտություն, հակիրճություն, ընթերցողին, լսողին վարակելու գրավչություն, մատուցման բազմազանություն: Սա ընդհանուր պահանջ է, որը միաժամանակ ենթադրում է մայրենի լեզվի հարստության, արտահայտչական հնարավորությունների ու միջոցների զգացողություն և իմացություն: Մանավանդ մեր օրերում, երբ ահագնորեն մեծացել է նաև համացանցի ազդեցությունը խոսքի մշակույթի, խոսակցական լեզվի վրա:

Ստորև փաստական նյութով ներկայացվում են մեր խոսքում արձանագրվող լեզվական բազմապիսի սխալները, տրամաբանական խախտումները՝ որոշակի մեկնաբանություններով:

\* Ներկայացվել է 16.09.2022, գրախոսվել՝ 16.10.2022:

### Դիտարկումներ

Միջնադարում, հետազոտողների վկայությամբ, մտավոր ընդհանուր զարգացման հիմք ու նախապայման է եղել քերականությունը, որը դիտվել է «ամենայն իմաստասիրության դուռն ու բանալին»<sup>1</sup>: Տրամաբանությունն էլ « .... մինչև 17-րդ դարը .... ուսուցանվել է փիլիսոփայական մյուս գիտությունների և քերականության հետ միահյուսված: Այդ է պատճառը, որ այս շրջանում գրված քերականական և տրամաբանական աշխատություններն ուսումնասիրելիս դժվար է որոշել՝ որտեղ է վերջանում քերականությունը և որտեղ է սկսվում տրամաբանությունը կամ՝ ընդհակառակը»<sup>2</sup>: Եվ որքանով հաճախ տրամաբանությունը բնորոշվում է որպես մտածողության քերականություն, ուսումնական ծրագրերում առավել ուշադրություն է հատկացվել ճարտասանությանն ու տրամաբանությանը, ասել է՝ մտածել սովորելուն, խոսք կառուցելուն, տրամաբանորեն ընդհանրացնելուն, մտահանգումներին, փաստարկներն ապացուցելուն (կամ հերքելուն), դատողությունը, միտքն ունկնդրին հասցնելուն, այլն համոզելուն:

ա) *Օտար լեզվամտածողության ազդեցություն:* Այսօր էլ, ցավոք, հայերեն խոսքում հաճախադեպ են օտար լեզվամտածողության ազդեցությունները, օտար լեզուներից պատճենումները, ինչպիսին, օրինակ, հետևյալներն են՝ *խոսք է գնում* (ռուս. *речь идет*), *փոփոխությունների գնալ* (ռուս. *идти на перемены*), *լավատեսությամբ եմ տրամադրվել* (ռուս. *настроен оптимистически*), *կկապվենք ձեզ հետ* (ռուս. *свяжемся с вами*), *չեմ ուզում կրկնվեմ* (ռուս. *не хочу повторяться*), *մանրամասների մեջ մտնել* (ռուս. *войти в детали*), *այն մարդը, ով* (անգլ. *the man, who*), *մասնակցություն ունենալ/բերել* (ռուս. *принять участие*) և այլն, և այլն: Նշում եմ՝ ցավոք, որովհետև հայերեն մտածողը երբեք չի արտաբերի դրանք, ավելին՝

<sup>1</sup> Լ. Խաչերյան, Գլաձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մեջ (XIII-XIV դդ.), Ե., 1973, էջ 111:

<sup>2</sup> Հ. Միրզոյան, Միմեոն Ջուղայեցի, Ե., 1971, էջ 153:



երբևէ չի հնչեցնի «տրամաբանության շրջանակներում» անմեկնելի, անբացատրելի հետևյալ նախադասությունները. «Քաղաքացիների կողմից դիմակների կրման ատկայության բացակայության պայմաններում...» (պարզապես *Քաղաքացիների՝ դիմակ չկրելու դեպքում...* ասելու փոխարեն), կամ «Քննարկում ենք դիմակների պարտադիր կրման պահանջը հանելու հարցը»<sup>3</sup>. այս երկու նախադասություններում էլ, բացի լեզվին և տրամաբանությանն առնչվող այլ սխալներից և մեղանշումներից, նաև ռուսերեն *ношение масок*-ի հայերեն *դիմակների կրում* պատճենումն է. հավանաբար *դիմակ կրել* ասելն անպատվաբեր է ոմանց համար: Նմանօրինակ կաղապարներով են ձևավորվել «Երկար ժամանակով լույս չի լինի հետևյալ հասցեներում» (սա էլ ամենայն հավանականությամբ ռուսերեն *несколько часов*-ի *ով*-ի ազդեցությունն է. ճիշտը՝ *երկար ժամանակ*-ն է), «Այսօր ցերեկը *ձյան տեսքով տեղումները* հանրապետության ամբողջ տարածքում կպահպանվեն» (*ձյան տեսքով տեղումներ*-ն էլ է պատճենում ռուսերենից՝ *осадки в виде снега*), «... հողվածները տպագրվելու են գիտական հողվածների *ժողովածուի տեսքով...*» (սա նույնպես օտար լեզվի ազդեցություն է՝ ռուս. *в виде сборника статей*, և անչափ հետաքրքիր է *գիտական հողվածների ժողովածուի տեսք*-ով տպագրելը) և բազում այլ նախադասություններ:

բ) *Բառի սխալ գործածություն*: Ահագնացող չափերի է հասնում մարդկային մտածողությանը, տրամաբանել-փաստարկելու ունակությանը սպառնացող լեզվական փնթիությունը, մասնավորապես՝ բառիմաստը ճիշտ չընկալելու հետևանքով բառը սխալ գործածելը, ինչպես՝ «Պատվաստումը *կանխարգելում է* հիվանդության ծանր ընթացքը և *մահը*» գովազդային վահանակում. ըստ արդի հայերենի բացատրական բառարանների՝ *կանխարգելել*-ը «նախօրոք արգելել՝ առաջն առնել»-ն է<sup>4</sup>, հետևաբար պատվաստումը նա-

<sup>3</sup> <https://bit.ly/3D9wr93>

<sup>4</sup> Էդ. Աղայան, Արդի հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե., 1976, էջ 688: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), հ. III, Ե., 1974, էջ 44:

խօսողը չի կարող մահն արգելել, նախօրոք մահվան առաջն առնել: Անհասկանալի է, թե ինչն են վերականգնում «Ընթանում են *վթա-րավերականգնողական աշխատանքներ*» հաղորդագրությամբ, արդյոք վերականգնում են վթա՞րը, կամ ո՞րն է «... սահմանված *ժամկետների շրջանակում*» ձևակերպման «սահմանված ժամկետների շրջանակ»-ը, հետաքրքիր է նաև՝ որո՞նք են «Փաստաթղթերի ներկայացման *վերջնաժամկետը մինչև* մարտի 15-ն է» հայտարարության *վերջնաժամկետ*-ի *մինչև*-ի «տրամաբանության շրջանակները», որովհետև ըստ արդի հայերենի բացատրական բառարանների՝ *վերջնաժամկետ* նշանակում է՝ «Որևէ բանի վերջին ժամկետ, ժամանակով սահմանափակված որևէ բանի վերջին կետը՝ ժամանակը» (ԱՀԲԲ, էջ 1368: ԺՀԼԲԲ, հ. IV, 1980, էջ 406): Միսյալ է «*Շրջանների զգալի մասում* սպասվում է անձրև»<sup>5</sup> նախադասության մեջ *զգալի* բառի գործածությունը, որովհետև *զգալի* նշանակում է՝ «1. Չգայարաններով ընկալելի, առարկայական, նյութական: 2. Նկատելի, որևէ ձևով արտահայտվող, իրեն զգալ տվող: .... 3. Շոշափելի, աչքի ընկնող, բավականին:.... 4. Չգացվող, մտքով ըմբռնվող: 5. (հնց.): Չգացված, հուզված, հուզումնալից» (ԱՀԲԲ, էջ 368: ԺՀԼԲԲ, հ. 2, 1972, էջ 21-22): Հավանաբար նկատի են ունեցել *առաջընթաց*-ը «Եթե կարողանանք այս ամենն անել, դա մեծ *ընդառաջ կլինի* համայնքի համար» նախադասությունը կազմելիս: *Հաստափոր* նշանակում է «1. Հաստ՝ մեծ փոր ունեցող: 2. Գեր: 3. Ուրիշի աշխատանքով ապրող, անաշխատ եկամուտով ապրող: 4. փխբ. Հաստ, ստվար» (ԱՀԲԲ, էջ 831), հետևաբար այն տեղին չէ «Լույս է տեսել ՀՊՄՀ-ի Կիրառական ամբիոնի պրոֆեսորի պաշտոնակատար, հոգեբանական գիտությունների թեկնածու՝ Սուսաննա Փիլոսյանի հեղինակած *հերթական հաստափոր* գիրքը՝ «Ընդհանուր հոգեբանություն» ուսումնական ձեռնարկը» նախադասության մեջ, ինչպես նշվում է համալսարանի կայքում<sup>6</sup> և այլն, և այլն:

<sup>5</sup> <https://bit.ly/3T5RZJp> <https://bit.ly/3MR38vn> <https://bit.ly/3CEfPop> և այլն:

<sup>6</sup> <https://bit.ly/3eFh2UE>

Նույն «տրամաբանության շրջանակներն» են *մեկնարկ* և *մեկնարկել* բառերը գործածելիս. էդ. Ադայանը նշում է *մեկնարկ*-ի հետևյալ իմաստները՝ «1. Վազքի զանազան կարգի արշավների սկսելու պահը: 2. Թռչող մեքենայի՝ ապարատի թռիչքն սկսելու պահը: 3. Այն սահմանակետը, որտեղից սկսվում է վազքի (արշավների) մրցությունը: 4. Այն տեղը, որտեղից թռչում է թռչող մեքենան՝ ապարատը: 5. փխբ. Սկիզբ, ելակետ» (ԱՀԲԲ, էջ 992), ուստի և «Գիտաժողովի *մեկնարկը տեղի կունենա...*» նախադասությունը չեն փրկի անգամ փոխաբերական իմաստով կիրառելի *սկիզբելակետ*-ը, որովհետև գիտաժողովի սկիզբը (թե՛ ելակետը) չի կարող տեղի ունենալ, իսկ «Այս տարվա հունիսի 2-ը Մեծ Բրիտանիայում և ընդհանրապես ամբողջ անգլախոս աշխարհում բացառիկ օր է՝ *մեկնարկում է* Եղիսաբեթ երկրորդի «պլատինե *հոբելյանը*»<sup>7</sup>, «*Մեկնարկել է ....կայքը*», «*Մեկնարկել է ....համերգաշարը*» նախադասությունների համար էլ հարկ է նշել, որ *մեկնարկել*-ը «մեկնարկ վերցնել, մրցումը, մրցապայքարը սկսել» իմաստով մարզական եզրույթ է արձանագրվում միայն Ֆրիդրիխ Խլդաթյանի կազմած նոր բառերի և իմաստների բառարանում<sup>8</sup>: Ի դեպ, համացանցային որոնումները փաստում են, որ թեև բայը «սկսել» իմաստով կիրառվում է դեռևս 2014 թվականից («Մեկնարկել է երիտասարդների շրջանում մեծ հետաքրքրություն վայելող Ամերիա Սերունդ *ծրագիրը*, որը յուրաքանչյուր տարի կազմակերպվում է Ամերիաբանկի կողմից»<sup>9</sup>, սակայն անխնա և շռայլորեն գործածվում է հատկապես 2018-ից:

գ) *Քերականական կանոնների խախտումներ, տրամաբանության աղճատումներ, ոճական անհարթություններ*: Չմանրամասնելով տարբեր կազմակերպություններից (նաև ՀՀ Գիտության կոմիտե, ԳԱԱ նախագահություն, ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն) ստացվող գրություններում առկա քերականական կա-

<sup>7</sup> <https://bit.ly/3T5DIfy>

<sup>8</sup> Ֆ. Խլդաթյան, Բառարան-տեղեկատու: Նոր բառեր և իմաստներ, Ե., 1982, էջ 123:

<sup>9</sup> <https://bit.ly/3rYCAys>

նոնների խախտումները, տրամաբանության աղճատումները և ոճական անհարթությունները («Խնդրում եմ տեղեկացնեք Ձեր գիտական կազմակերպությունների ասպիրանտներին և հայցորդներին կցված գարնանային դասերի լրացված դասացուցակի մասին», «Ի լրումն մեր գրության՝ խնդրվում է ...», «Հարգելի գործընկերներ՝ կից ուղարկվում է մեր կողմից ուղարկված...Գրության մեջ նշված՝ Գիտության կոմիտեի կողմից ուղարկված գրության պատճենը») հարկ է նկատել, որ դրանցում կիրառվում են միայն *ան* հոլովմամբ բայանուններ. «ՀՀ պետական բյուջեի նախագծերի մշակման աշխատանքների իրականացման ժամանակացույցի պահանջներ» (ասել կուզի՝ *նախագծեր մշակելու ժամանակացույց*), «Ի լրումն ուղարկված գրության կապված ... հայտերի ներկայացմանը՝ հայտնում ենք», «...պահանջվում է սահմանել հսկողություն կատարման ընթացքի վրա», «...ներդրումային ծրագիրը միտված է զբոսաշրջության բազմազանության ու զարգացման ապահովմանը»<sup>10</sup> (*ենթադրելի է, որ չեն զարգացնելու, այլ միայն ապահովելու են զարգացումը*) և այլն: Անշուշտ անառարկելի է, որ «-ում (հին -ումն) ածանցով կազմված բայանունները» ենթարկվում են *ան* հոլովման, բայց այն, ինչ այսօր գրում են, և այն, ինչ լսում ես, պարզապես լեզվի ծաղր է. «Դեսպանը մասնակցել է *գաթայի կտրման արարողությանը*»<sup>11</sup>, «Քաղաքացիներին անձնագրերի *տրման կարգում* կատարվել է փոփոխություն»<sup>12</sup>. սույն -ման-ը այնքան և այնպես է մեխվել բոլորի ուղեղում, որ կայքերն ամենայն լրջությամբ «ավետում» են՝ «... նիստը չկայացավ *քվորման* բացակայության պատճառով»<sup>13</sup>, իսկ մանկավարժական գիտությունների թեկնածուի «գիտական աստիճանի հայցման ատենախոսության» սեղմագրում որպես հետազոտության խնդիր նշվում է՝ «...մշակել լեզվական նյութի բացատրման և իմաստավորման եղանակները»<sup>14</sup>:

<sup>10</sup> <https://bit.ly/3ME6vFD>

<sup>11</sup> <https://bit.ly/3ghMLvC>

<sup>12</sup> <https://bit.ly/3Tnu5t3>

<sup>13</sup> <https://bit.ly/3ezhYd9>

<sup>14</sup> <https://bit.ly/3EMGoud>

Նույն ձևով էլ ասվում է՝ «... պետք է .... աշխատենք .... արդյունավետ տնտեսության ձևավորման ապահովման համար ...», որը «Թարգմանաբար» թերևս նշանակի՝ «պետք է աշխատել արդյունավետ տնտեսության ձևավորում ապահովելու համար» (և դարձյալ *ապահովում են ձևավորում՝ տնտեսություն ձևավորել*-ու փոխարեն), ապա պահանջվում է «առաջարկությունների ներկայացման ձևաչափ» (*առաջարկություններ ներկայացնելու ձևաչափ*-ի փոխարեն): Եվ այս առիթով հարկ է նշել, որ *ներկայացում* և *գարգացում*՝ բայանունների սեռական-տրականի *ներկայացման* և *գարգացման* հոլովածները «ներկայացնելը, ներկայացվելը» և «գարգացնելը» իմաստներով *միշտ կիրառելը ճիշտ չէ*, որովհետև *առաջարկություններ-ն* իրենք իրենց չեն կարող *ներկայանալ*, ինչ-որ մեկը դրանք պետք է ներկայացնի (*կամ ներկայացվեն*), կամ «*զբոսաշրջության գարգացման ապահովման*» դեպքում *զբոսաշրջությունն էլ* ինքն իրեն չի կարող *գարգանալ*, այն պետք է *գարգացնել* (*կամ այն պետք է գարգացվի*): Ի դեպ, *ներկայացում* բայանվան «ներկայացնելը, ներկայանալը, ներկայացվելը» իմաստներն արձանագրվում են միայն Էդուարդ Աղայանի կազմած բառարանում (ԱՀԲԲ, էջ 1065):

Ինչ վերաբերում է գովազդի լեզվին, ապա նրանում իշխող «տրամաբանության շրջանակները» անքննելի են. «Biella՝ օրինակելի մսամթերքի գործարան», «Անարատ խտացրած կաթ շաքարով», "От Мартина" ապրանքանիշն էլ «աննահանջ աշխատանքի արդյունք» է (հավանաբար նկատի են ունեցել *համառ* (ռուս. *настойчивый*) բառը), օժանելիքի գովազդում ոչ միայն «սիրո», «հավերժության», այլև «հավատքի» բույրերն են, «Կոտայք»-ն էլ փաստորեն «առաջին անհրաժեշտության գարեջուր» է, մազերի խնամքի գովազդում ակնարկվում են «թույլ թափվող մազեր»-ը, հավանաբար գովազդվողը նպաստում է մազերն ավելի արագ զ թափելուն, Վիվա-USU-ում վստահ են, որ տրամադրում են «Փաթեթներ, որոնք հերիքում են», գովազդվում է նաև «Տաք-տաք Բեյքրի», թեև ըստ բառարանների՝ *bakery*-ն «հացի փուռ կամ խանութ»-ն է և այլն, և այլն ...

Զավեշտի «տրամաբանության շրջանակներում» են նաև ԲՈԿ-ի կայքում տեղադրվող «Մոտակա (ճիշտը՝ *տոաջիկա՝ Ն.Հ.*) պաշտպանություններ»-ի հարթակում<sup>15</sup> ներկայացվող խորագրերը, ինչպիսին, օրինակ, «Ֆիզիոլոգիա» մասնագիտությամբ գիտությունների դոկտորի գիտական աստիճան հայցողի ատենախոսության սեղմագրում է՝ «Հայաստանում բնակվող Չեռնոբիլյան ԱԷԿ-ի վթարի հետևանքների վերացման աշխատանքներին մասնակցած անձանց մոտ ֆիզիոլոգիական և պաթոֆիզիոլոգիական փոփոխությունների գնահատում»<sup>16</sup>, որից էլ պարզվում է, որ «Չեռնոբիլյան (ճիշտը՝ *չեռնոբիլյան՝ Ն.Հ.*) ԱԷԿ-ն» է բնակվում Հայաստանում, «ֆիզիոլոգիական և պաթոֆիզիոլոգիական փոփոխությունները» գնահատվում են «անձանց մոտ», այսինքն՝ այդ անձանցից դուրս ...., ճիշտը «... վթարի հետևանքները վերացնելու աշխատանքներին մասնակցած անձանց ֆիզիոլոգիական և պաթոֆիզիոլոգիական փոփոխությունները գնահատել»-ն է: Սույն ատենախոսության մեջ «բացահայտվել» են «*հիվանդացության մակարդակի զարգացման գործում (Sic.)* կարևոր տեղ» զբաղեցնող գործոնները, «լիկվիդատորների *վաղաժամ ծերացման տեսլերի* վրա ազդող» հիվանդությունները, «Նրանց բուժման, *հոգեբանական շտկման* և սոցիալական *ռեաբիլիտացիայի* խնդիրները», տրամաբանությունն աղճատող բազում այլ գործոններ ու խնդիրներ, և այս դեպքում, թերևս, կարելի է մեջբերել հեռուստահաղորդավարուհիներից մեկի (իհարկե ոչ այս առիթով ասած) հիացական խոսքերը. «Տեսնու՞մ եք, զգայուն հարցի շուրջ ինչպիսի զգացմունքներ կարող են առաջանալ ինչ-որ բաներից ....»:

«Գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման համար» ներկայացված ատենախոսության սեղմագրում<sup>17</sup> հավաստվում է, որ «Իրավագիտական այս կարևոր աղբյուրների *ուսումնասիրությունը նրպաստել է բացահայտելու իրավական մտքի ձևավորման ճանապարհը հարթած, սերնդեսերունդ փոխանցված մի շարք երև-*

<sup>15</sup> <https://www.bok.am/>

<sup>16</sup> <https://bit.ly/3D23GuJ>

<sup>17</sup> <https://bit.ly/3S8fMqK>

*ույթների առաջացման և գործադրման հիմքերը՝ սպահովելով սույն աշխատանքի գիտական ճշգրտությունն ու որակի բարձրացումը*» (Sic.), որովհետև ինչպես նշվում է. «Տարբեր դարաշրջաններում իրավական մտքի տարաբնույթ զարգացմամբ, հետևաբար մասնագիտական նոր աղբյուրների լույսընծայմամբ *հայ իրավաբանական բառապաշարը, ունենալով հնդեվրոպական նախալեզվից, ոսկեդարյան և միջնադարյան իրավագիտական աղբյուրներից ժառանգած տերմինների հարուստ պաշար, նոր ժամանակներում* լեզվական ներքին և արտաքին միջոցներով *համալրվեց մասնագիտական բառերի նոր որակներով*» (Sic.), և սրանից բացի՝ «Հայ իրավաբանական բառապաշարը ընդգրկուն է համադրական բաղադրություններով, որոնց բաղադրիչները, համադրական եղանակով միմյանց միանալով, կազմում են մեկ բառ՝ ստանալով մեկ հիմնական բառային շեշտ» (ընդգծ.՝ Ն.Հ.) և այլն, և այլն:

«Գիտությունների դոկտորի աստիճանի հայցման համար» ներկայացված ատենախոսության սեղմագրում<sup>18</sup> էլ նշվում է, որ «Հետազոտության օբյեկտը ...տարբեր հեղինակների կողմից ստեղծված ... նշանակալի ստեղծագործություններն են, դրանց լեզվաոճական և *հարակից առանձնահատկությունների* քննությունը», և «սույն հետազոտության նպատակից» բխող խնդիրներից են դիտվում՝ «երկերի *լեզվի յուրահատկությունների մեջ*» «խորամուխ լինելը»-ը՝ «բացահայտելով հեղինակների լեզվաոճական անհատական հատկանիշները և *տալ դրանց ընդհանուր պատկերային կողմը*»: Ատենախոսի կիրառած «լեզվաբանական մի շարք մեթոդներ»-ից են «նկարագրական»-ը, «կառուցվածքային»-ը, «ոճաբանական»-ը, և արձանագրվում է, որ վերջին «մեթոդով կատարվել է *տեքստի գուտ լեզվաբանական վերլուծություն*», ասել է՝ ըստ բառարանների՝ «լեզվաբանությանը՝ լեզվաբանին հատուկ՝ վերաբերող վերլուծություն» (ԱՀԲԲ, էջ 520: ԺՀԼԲԲ, հ. II, էջ 391): Նշվում է նաև, որ «Ատենախոսության դրույթները *հողվածների տեսքով* ներկայացվել են *Հայաստանում և արտերկրում լույս տեսնող միջազ-*

<sup>18</sup> <https://bit.ly/3S0RFu0>

*գային տարբեր գիտաժողովներում*» (Sic.): «Ատենախոսության եզրակացություններն» ամփոփող առաջին կետով էլ փաստվում է, որ «1. Հայ գեղարվեստական-վավերագրական արձակի հեղինակների կյանքը յուրօրինակ արտացոլում է: ...» և այլն:

Գրավոր լինի թե բանավոր, հարկ է հետևել խոսքին՝ ավելորդ, անիմաստ ձևակերպումներից խուսափելու համար: Բայց քանի որ լծակներ չկան, որևէ բան փոխելու անկարողությունից և լեզվական սխալների դեմ պայքարելու անգործությունից նյարդեր քայքայելով՝ հարկադրված ես շարունակ լսել և կարդալ. «ԱՄՆ-ը և նրա դաշնակիցները *հաշվարկում են նավթի պաշարների թողարկումը* գների կտրուկ աճի պայմաններում»<sup>19</sup>, «Այս ընդդիմությունից 6 հոգի *անցնում է այդ օրենքով*. նրանք *պայքարում են ապօրինի գույքի հարատևման համար*»<sup>20</sup>, «Աշոցքում *մեկնարկել է դահուկավազքի զարգացող երկրների* գավաթի խաղարկությունը»<sup>21</sup>, «Գազի գնի բարձրացումը *չի երևալու քաղաքացիների վրա*»<sup>22</sup>, իսկ Արդարադատության նախարարության ներկայացրած Հակակոռուպցիոն կոմիտեի նոր խորհրդանիշի ձևին վերաբերող նախագծում դրա հետևյալ նկարագրությունն է. «*Առյուծն ունի կանգնած դիրք, մի ձեռքում դեպի վերև ուղղած և շարժման մեջ գտնվող սուրն է, իսկ մյուս ձեռքով պահպանում է գանձարկղը: Առյուծի բերանը ունի բաց տեսք՝ լեզուն դեպի դուրս*»<sup>23</sup> (ընդգծ. Ն.Հ.). մեկնաբանությունները «*ըստ էության*» ավելորդ են...

### Եզրակացություն

• Ներկայացվող լեզվական սխալների, խաթարումների ու շեղումների պատճառները բառիմաստը ճիշտ չընկալելը, բառը սխալ գործածելը, օտար լեզվամտածողության ազդեցությունը և խոսքը կառուցելու տրամաբանական խախտումներն են:

<sup>19</sup> <https://bit.ly/3CEgrad>

<sup>20</sup> <https://bit.ly/3eBoFv7>

<sup>21</sup> <https://bit.ly/3yNSwaB>

<sup>22</sup> <https://bit.ly/3Tw0MUJ>

<sup>23</sup> <https://bit.ly/3VySRHN>



• Լեզվական պատշաճ զգացողությամբ, օր առ օր հղկվող-պատվաստվող ճաշակով միայն կարելի է խուսափել խոսքը կաշկանդող, հայերենին օտար, հայերենը ճապաղեցնող բազմատեսակ կաղապարներից, մաշված-ծեծված պատրաստի արտահայտություններից:

### Օգտագործված գրականություն

- Աղայան Էդ., Արդի հայերեն բացատրական բառարան, Ե., 1976:  
 Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. II, III, Ե., 1972, 1974:  
 Խաչերյան Լ., Գլխձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մեջ (XIII-XIV դդ.), Ե., 1973:  
 Խլղաթյան Ֆ., Բառարան-տեղեկատու: Նոր բառեր և իմաստներ, Ե., 1982:  
 Միրզոյան Հր., Միմեոն Ջուղայեցի, Ե., 1971, էջ 153:

### Համառոտագրություններ

անգլ. - անգլերեն  
 ռուս. - ռուսերեն  
 ընդգ. - ընդգծում

**Hovhannisyan Nazik - Our Language, Our Speech and Logic.**- The article gives examples of lexical errors, distortion of meanings of words, deviations from linguistic norms recorded in speeches of various personalities, in scientific works, in official documents and advertisements. According to the author, the reasons for such distortions are incorrect use of words, wrong perception/understanding of meanings of words, influence of foreign language of thinking and logical disturbances of construction of speech.

**Keywords:** language thinking, logic, calque, meaning of word, language of official documentation, advertisement language.

---

Hovhannisyán Nazik- PhD of Philology, Institute of Language after H. Acharyan of NAS RA, Senior Researcher.

**Оганесян Назик - Наш язык, наша речь и логика.** -В статье приведены примеры лексических ошибок, искажений значений слов, отклонений от языковой нормы, зафиксированные в речи разных деятелей, в научных трудах, в официальных документах и рекламе. По мнению автора, причинами таких искажений являются неправильное употребление слов, неправильное восприятие/понимание значений слов, влияние иноязычного мышления и логические нарушения построения речи.

**Ключевые слова:** языковое мышление, калька, значение слова, язык официальной документации, язык рекламы.

Оганесян Назик, кандидат филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, старший научный сотрудник.

## ԱՇՄԱՆՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ\*

10.54412/2738277X-2022.1.2-130

### Ներսիսյան Վարսիկ

բանասիրական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ Ն.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,  
ավագ գիտաշխատող. varsik.nersisyan@mail.ru

**Բանալի բառեր.** Մանուկ Աբեղյան, աճանցում, աճանցավոր բառեր, աճանց, աճանցական մասնիկ, անվանական աճանցներ, դերբայական աճանցներ:

### Նախաբան

Սույն ուսումնասիրության նպատակն է ներկայացնել աճանցման և աճանցավոր բառերի քննությունը Մանուկ Աբեղյանի աշխատություններում, բացահայտել, թե ի՞նչ սկզբունքով է գիտնականը դասակարգել դրանք և ի՞նչ նորամուծություններ է կատարել այդ բնագավառում: Թեմայի արդիականությունը պայմանավորված է արդի հայերենի բառակազմության մի շարք խնդիրների առկայությամբ և դրանց լուծման ուղղությամբ աշխատանքներ կատարելու անհրաժեշտությամբ:

Հայտնի է, որ Մ. Աբեղյանը քերականագիտության մեջ հետևել է այսպես կոչված ֆորմալիստական ուղղությանը, որի սկզբունքներով էլ ուսումնասիրել է աշխարհաբարի քերականական կառուցվածքը, բառակազմությունը, հնչյունաբանությունը<sup>1</sup>: Բառակազմության մասնավորապես աճանցման հարցերին Աբեղյանն անդրադարձել է նախ «Աշխարհաբարի քերականութիւն» դասագրքում, որում համաժամանակյա սկզբունքով ներկայացրել է

\* Ներկայացվել է 13.09.2022, գրախոսվել՝ 07.10.2022:

<sup>1</sup> Տե՛ս է. Աղայան, *Հայ լեզվաբանության պատմություն*, հ. 2, Ե.1962, էջ 148:

բառերի տեսակներն ըստ կազմության, սահմանել է արմատը, ածանցը, անդրադարձել է բառակազմության ժամանակ բառի մեջ տեղի ունեցող «ձայնավոխական» երևույթներին, հոդակապի գործածությանը ևն: Ըստ Աբեղյանի՝ «Արմատ ասում է բառերի այն մասը, որ հայոց լեզուի քերականութամբ բաղադրիչ մասերի չի վերածում ըստ կազմության, այլ միայն բաղադրիչ հնչյունների»<sup>2</sup>: Մինչդեռ Ա. Այտընյանի ձևակերպմամբ՝ «Պարզ բառ մը իւրմէ ելածներուն Արմատը<sup>3</sup> կամ Արմատականը կը կոչուի»<sup>4</sup>: «*Ածանցական* բառերը, գրում է Աբեղյանը, -կազմուած են մի բառից, կամ արմատից և մի *ածանցից*, այսինքն մի աննշանակ մասնիկից, որ դրուելով բառի, կամ արմատի վրայ՝ նոր բառի նշանակութիւն է տալիս նրան: Օրինակ՝ *գործ* բառից կազմում են՝ *գործել, գործիչ, գործօն, գործունեայ, գործնական, գործաւոր, անգործ* ևն»<sup>5</sup>: Այտընյանն ածանց է համարում «պարզ բառի վրայ մասնիկ մը կամ գիր» ավելացնելը<sup>6</sup>: Անշուշտ, Մ. Աբեղյանն ածանցումն առավել խորությամբ քննության է ենթարկում ավելի ուշ հրատարակված «Հայոց լեզվի տեսություն»<sup>7</sup> աշխատության մեջ՝ այս անգամ արդեն տարածամանակյա հայեցակետով: Հարցին անդրադարձել է Սարգիս Հարությունյանն իր «Մանուկ Աբեղյան. կյանքն ու գործը» գրքում, որում մասնավորապես գրում է. «Նա, ածանցները ըստ բառակազմական բնույթի, բաժանում է երկու մեծ խմբի. անվանական և դերբայական վերջածանցների: Եվ առաջին անգամ հայ լեզվաբանության պատմության մեջ ճշգրտված ու հանգամանակից ուսումնասիրության են ենթարկվում հայերենի վերջա-

<sup>2</sup> Մ. Աբեղյան, *Աշխարհաբարի քերականութիւն, դասագիրք ստորին դասարանների համար*, Վաղարշապատ, 1906, էջ 79:

<sup>3</sup> Մեջբերումներում ուղղագրությունը և կետադրությունը ներկայացվում են ըստ բնագրի:

<sup>4</sup> Ա. Այտընյան, *Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի*, Ե., 1987, էջ 292:

<sup>5</sup> Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 80:

<sup>6</sup> Տե՛ս Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 292-293:

<sup>7</sup> Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, Ե., 1965:

ծանցները իրենց աչքի ընկնող մի շարք նշանակություններով»<sup>8</sup>: Մինչև *անվանական* և *դերբայական* վերջածանցներին անդրադառնալը Մ. Արեղյանն առանձին ենթաբաժնով ներկայացրել է ածանցման երևույթը, բարդության «*մթնացման*» հետևանքով պարզ բառերի առաջացումը, «*ածանցական մասնիկների*» ծագումը հնչյունափոխությամբ, «*ածանցիկների*» ծագումն առանց հնչյունափոխության, «*ածանցական մասնիկների*» ծագումը երկու մասնիկների միացումից, հնացած հոլովական ու բայական ձևերը, վերջածանցների «բազմազան ձևական նշանակությունները»<sup>9</sup>:

### Ածանցների առաջացումն ըստ Մ. Արեղյանի

Արեղյանը նախ ներկայացնում է «բարդության մթնացումը» և պարզ բառերի առաջացումը. «Լեզվի հնագույն շրջանի բաղադրյալ բառերը լեզվի նորագույն շրջանում երբեմն այլևս բաղադրյալ բառի տպավորություն չեն թողնում: Սովորաբար բարդ բառերի այնպիսի փոփոխությունը, որով բարդ բառի զգացումը ոչնչանում է, առաջ է գալիս հնչյունների փոխվելով կամ դուրս ընկնելով, երբեմն նաև բաղադրիչ անդամները երկուսն էլ, կա՛մ նրանցից մեկը, գործածությունից դուրս են ընկնում, կա՛մ նրանց բաղադրությունն ու նշանակությունն անհասկանալի է դառնում: Այնպիսի փոփոխություններ առաջ են եկել և՛ նախագրաբարյան, և՛ ետգրաբարյան շրջանում»<sup>10</sup>: Բերում է այդ կարգի բազմաթիվ օրինակներ՝ *այժմ*, *իբր*, *զերդ*, *մյուս* ևն<sup>11</sup>: Արեղյանի ձևակերպմամբ՝ «Բարդ բառերի զգացումն իբրև պարզ բառեր, ինչպես կարելի է տեսնել բերած օրինակներից, մի անգամից չի առաջ գալիս, այլ երկար ժամանակի ընթացքում՝ աստիճանաբար»<sup>12</sup>: Այնուհետև առանձին-առանձին ներկայացնում է «*ածանցական մասնիկների*» ծագումը *հնչափոխությամբ*, *երկու մասնիկների միացումով* ևն: Ըստ Արեղյանի՝ «Երբ

<sup>8</sup> Տե՛ս Մ. Հարությունյան, *Մանուկ Արեղյան. կյանքն ու գործը*, Ե., 1979, էջ 584:

<sup>9</sup> Տե՛ս Մ. Արեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, էջ 222-236:

<sup>10</sup> Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 222:

<sup>11</sup> Տե՛ս Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 222-223:

<sup>12</sup> Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 223:

բաղադրիչ մասերից մեկը հնչափոխությամբ իբրև բառ կորչում է, այսինքն՝ մենակ գործ չի ածվում իբրև բառ և ոչ էլ իբրև արմատ ուրիշ բառերի, և այդ մասն այլևս չենք նույնացնում այն բառի հետ, որից ծագել է այդ փոխված բառը, -այն ժամանակ բարդ բառը թողնում է մի առաջադիր կամ վերջադիր մասնիկով (նախածանցով կամ վերջածանցով) կազմված բառի տպավորություն»<sup>13</sup>: Իբրև օրինակ է բերում բարբառային մի քանի բառ, ինչպես՝ *ինչեղ* (ինչը), որ նշանակում է «ինչպես»՝ այն ներկայացնելով որպես միջին հայերենում գործածված *ինչ+ցեղ* բառերից կազմված («ցեղ» միջին հայերենում նշանակում էր տեսակ, կերպ, «ինչցեղ», այսինքն՝ ինչ տեսակ, ինչպես)<sup>14</sup>: «Այդպիսի բաղադրիչ մասերը, որ կորցրել են իրենց ձևը և անկախ բառական նշանակությունը, այն ժամանակ են միայն ածանցական մասնիկ դառնում, երբ միևնույն ձևով և միևնույն ընդհանուր ձևական նշանակությամբ երևան են գալիս, սկզբից կամ վերջից ավելացած, մի շարք բառերի մեջ, որոնք մեր լեզվական զգացումով ըմբռնվում են իբրև մի առանձին խումբ մի ընդհանուր ձևական նշանակությամբ, որ այդ մասնիկներով ավելանում է այդ խմբի բառերի նյութական նշանակության վրա»<sup>15</sup>: Ըստ Աբեղյանի՝ «Ածանցական մասնիկների մի մասն այսպիսի հնչյունական փոփոխությամբ է առաջ եկել նախագրաբարյան շրջանում»<sup>16</sup>: Բերում է բազմաթիվ օրինակներ, ինչպես՝ «վոր» (-աւոր) ծագել է «բեր» բառի մի երկրորդ «բոր» ձևից (ինչպես քերել-քորել), որի *բ*-ն դարձել է *վ*<sup>17</sup>: «Ածանցական մասնիկներ առաջ են գալիս նաև առանց հնչյունափոխության: Երբ բաղադրիչ մասերից մեկը իբրև անկախ բառ կորչում է կամ չկա լեզվի մեջ, այլ մնալով բաղադրությունների մեջ՝ ստանում է մի նոր, ձևական նշանակություն, -այն ժամանակ,-գրում է Աբեղյանը,-այդպիսի մասն զգացվում է իբրև ածանցիկ, և դրա անալոգիայով նոր բառեր են կազմ-

<sup>13</sup> Մ. Աբեղյան, նշվ.աշխ., էջ 224:

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>15</sup> Մ. Աբեղյան, նշվ.աշխ., էջ 225:

<sup>16</sup> Նույն տեղում:

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղում:

վում, դա դառնում է իսկապես մի առաջադիր կամ վերջադիր մասնիկ<sup>18</sup>: Երևույթը ներկայացնում է *թափանցել, թափանցում, թափանցիկ* բառերի օրինակով, որոնց երկրորդ մասը նույնացվում է *անցնել* բառի հետ, բայց առաջին մասի՝ *թափ* բառի նշանակությունն աշխարհաբարում չկա, և չենք կարող նույնացնել ոչ մի բառի հետ, ո՛չ «թափել», «թափ տալ» բառերի հետ, ո՛չ էլ շարժման «թափի» հետ: Ըստ Աբեղյանի՝ գրաբարում *թափ* նշանակում էր նաև *տակ, հատակ, խորք*<sup>19</sup>: Այս նշանակությամբ կան «թափ անցանել», «գթափ անցանել», որ նշանակում է՝ մինչև տակը, մինչև խորքը անցնել, ուստի և «թափ անցանել» նշանակում է *նաև մի կողմից մինչև մյուս կողմը, մի ծայրից մինչև մյուսն անցնել, անցկացնել մի բանի միջով*: Եվ որովհետև «թափ» բառ չկա «տակ», «հատակ» նշանակությամբ, ուստի «թափ» մասն ըմբռնում ենք իբրև մի նախամասնիկ<sup>20</sup>: *Վերջածանց մասնիկ* է համարում նաև *ձիաթափ, ուժաթափ, զինաթափ, քնաթափ* բառերի «թափ» բաղադրիչը: Այսպիսիք են նաև *արդ (խորանարդ, գմբեթարդ), հար (ծնկնահար, լանջահար), հան (շապկահան, մեծահան), վար (հայավար, մարդավար), վարի (քաղաքավարի, մարդավարի)* «ածանցիկները» (նկատի ունի ածանցակերպները Վ.Ն.), որոնցով կազմված բառերը հանգամանորեն ներկայացնում է այս շարքում՝ որպես նշանակության փոփոխությամբ առաջացած ածանցներ, ավելացնելով հին հայերենի *բար, օրեն, կից, գոյն* վերջածանցները, *հաս, մակ, տրամ, ենթ* և այլ նախածանցներ, առաջադիր մասնիկներ<sup>21</sup>: Նկատենք, որ Աբեղյանի բերած օրինակներում *թափ* բաղադրիչը արդի հայերենում դիտարկվում է որպես արմատ<sup>22</sup>:

<sup>18</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 226-227:

<sup>19</sup> Հմմտ. **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հ. II, Ե., 1973, էջ 164: **Գ. Ջանուկյան**, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 262:

<sup>20</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, էջ 226-227:

<sup>21</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 227-233:

<sup>22</sup> Տե՛ս Մ. Գալստյան, *Դպրոցական բառակազմական բառարան*, Ե., 2011, էջ 56, 63, 223:

Աբեղյանի դիտարկմամբ՝ վերջապես մասնիկները լեզուների մեջ առաջ են գալիս նաև *երկու մասնիկների միացումից*, որոնք ըմբռնվում են իբրև մի միություն և մի նոր ընդհանուր նշանակություն են ստանում: Օրինակ՝ մեր հին և նոր լեզվի մեջ կա բայերից ածանցող ՈԻԿ մասնիկը, ինչպես՝ *վաղվադուկ, նախանձուկ*...ևն, որոնց վրա ավելանում է ՈՏ մասնիկը, և կազմվում են՝ *վաղվադկոտ, մոռացկոտ* և այլ բառեր: Այսպիսով առաջացել է ԿՈՏ մասնիկը, «որ իր ծագման պատճառով, չնայելով որ բաղաձայնով է սկսվում, չի պատահում «ակոտ» ձևով», այսինքն՝ չի միանում «ա» հոդակապով: Այդպես է նաև բարբառային ԿԱԿ, ԿԵԿ, ԿՈԻԿ մասնիկների դեպքում (*ուկ+ակ=կեկ, իկ+ակ=կակ, իկ+եակ=կեակ>կեկ*): Այսպես նաև «հին լեզվում՝ այ=աժ+ոյ, անք=ան+ք, ակի=ակ+ի, կյան, կեն=իկ+եան, անակ=ան+ակ, անի, ենի=ան+ի, եան+ի, անուտ=ան+ուտ, եք=ե+ք<եայ+ք» են<sup>23</sup>:

*Հնացած հոլովական և բայական քարացած ձևերի* մասին Աբեղյանն այն տեսակետն է հայտնում, որ «հին լեզվի հոլովական և բայական ձևերի մասնիկները մեռնելով՝ մեկ-մեկ բառերի մեջ քարացած մնում են՝ այլևս չզգացվելով իբրև կենդանի բառափոխության ձևական մասեր, այլ իբրև բառակազմության ածանցական մասնիկներ»: Ինչպես՝ հոգնակի *ք*-ն, որ շատ բառերի դեպքում գրեթե չի ըմբռնվում իր հին նշանակությամբ, այլ «լոկ իբրև մի ածանցական մասնիկ, որով կազմվում են շատ բառեր՝ *գիր-գիրք, տես-տեսք*» են: Կամ «գրաբարի «ումն» վերջացած» բառերի հոգնակի ուղղականի «վերջը»՝ «մունք», ըմբռնվում է որպես ածանց *բաժանումն, բաժանմունք, պատահումն-պատահմունք* են: *Բարի* բառի գործիական հոլովի *բարեալ* ձևից ունենք *բարև, առաջի* բառի գործիականը՝ *առաջեալ*, դարձել է *առաջև, առջև*» են, դրանց համաբանությամբ՝ «*վերև, ներքև, ներքսև, դրսև, միջև*, որով *և-ը*, դարձել է մի «մակբայական ածանց»: Այսպես նաև՝ *ու ամոթու, ուց*

<sup>23</sup> Տե՛ս Մ.Աբեղյան, նշվ. աշխ., էջ 233-234: Հմմտ. Ա. Սուքիասյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1989, էջ 294:



*առավոտուց, վաղուց*, բարբառներում նաև՝ *ուլթ՝ (g=թ+u)*<sup>24</sup>: Հանգամանորեն ներկայացնելով ածանցների ծագման բոլոր հնարավոր ուղիները՝ Աբեղյանն այնուհետև անդրադառնում է դրանց իմաստային առանձնահատկություններին:

### **Վերջածանցների բազմազան ձևական նշանակությունները**

Վերջածանցները, ըստ Աբեղյանի, «միանալով բառերի ետևից, շատ անգամ բառի հիմնական նշանակության վրա ավելացնում են այնպիսի ձևական գաղափարներ, որ միայն շրջաբանությամբ կարելի է արտահայտել: Դրանք լեզվի բառամթերքի համար հարստության բազմազան աղբյուրներ են, մանավանդ որ մինևույն վերջածանցը, նայելով հիմնական բառերին, տարբեր իմաստներ կարող է ստանալ»<sup>25</sup>: Վերջածանցները Աբեղյանը բաժանում է *անվանական* և *դերբայական* տեսակների, ներկայացնում է դրանց «մի քանի աչքի ընկնող նշանակությունները»: Իբրև անվանական վերջածանց ներկայացնում է՝ ԱՕ, ԱԿ, ՅԱԿ, ԵԿ, ԱԿԱՆ, ԱՅԻՆ, ԱԿԻ, ԱՅԻՆ, ԱՅՆ, ԱՆ, ԱՆՔ, ՈՒՔ, ՈՒՆՔ, ՈՒՔ, ԱՆԱԿ,ՆԱԿ (ԱՆԿ), Կ, ՅԱԿ, ԵՂ, ԱՆԻ, ԱՆՈՆՑ, ՆՈՑ, ԱՆՈՒՑ, ԱՆՑ, ԵՆՑ, ԱՆՔ, ԱՆ, ԵՆՔ, ԱՇ, ԱՎԵՑ, ՎԵՑ, ԱՎՈՐ, ՈՐ, ԱՏ, ԱՐ, ԱՐՔ, ԱՐԱՆ, ԲԱՆ, ԱՐԴ, ԱՐԵՆ, ԵՐԵՆ, ԱՐԵՆՔ, ՈՐԱՅՔ, ԱՑԻ, ՑԻ, ԱՑՈՒ, ՑՈՒ, ԲԱՐ, ԳԱՐ, ԳԻՆ, ԳՈՒՅՆ, Ե, ԵՂԵՆ, ԵՂԻ, ԵՆ, ԵՆԻ, ԵՆԻՔ, ԵՆՑ, ԱՆՑ, ՅԱՆ, ԵՆՔ, ԱՆՔ, ՈՆՔ, ՈՒՆՔ ևն<sup>26</sup>: Դերբայական ածանցների մեջ տարբերակում է՝ «բայաբնի ածանցներ», «անվանածանց բայեր և բայածանց անուններ», «բայածանց բայեր»<sup>27</sup>:

*Ա.Բայաբնի ածանցներ «ա», «յաց», «ույց»*: Ըստ Աբեղյանի՝ «Այս բայածանցներն ավելանում են որոշ տիպի բայաբնատների վերջից, որոնք սովորաբար մենակ չեն գործածվում, այլ բարդու-

<sup>24</sup> Տե՛ս **Մ.Աբեղյան**, նշվ. աշխ., էջ 234- 235:

<sup>25</sup> **Մ.Աբեղյան**, նշվ. աշխ., էջ 235-236:

<sup>26</sup> Տե՛ս **Մ.Աբեղյան**, նշվ. աշխ., էջ 237-282:

<sup>26</sup> Տե՛ս **Մ.Աբեղյան**, նշվ. աշխ., էջ 282-294:

<sup>27</sup> Տե՛ս **Մ.Աբեղյան**, նշվ. աշխ., էջ 282:

թյան առաջին կամ երկրորդ մասն են կազմում, կամ թե ետևից մի ուրիշ ածանցական մասնիկ են ընդունում: Բացի այդ՝ դրանցով կազմվում են բայաբները, որոնց ետևից ավելանում են բառափոխության ձևական մասնիկները և կազմում բայերի ձևերը»<sup>28</sup>: *Ա, հին այ, - օր. լվալ- արյունլվա, ամանլվա, ոտնալվա, զգալ-անզգա, գնալ-բարձրագնա, վիրալ- վարսավիրա, կամ - ենթակա, ինքնակա, գալ- ապագա, շրջագայություն: Աց - հաճախ Ք տառով գործածվում են և իբրև առանձին բառեր. օր. լվալ, լվանալ-լվացք, անլվաց, լվացարան, մնալ-մնացք, մնացական, կարդալ- գրակարդաց, խնդալ-չարախնդաց, խաղալ-խաղացք: Յաց, ագ, հին եաց, եց- ավելանում է «ել», «ենալ վերջացած» բայերի արմատների վրա, օրինակ՝ հայել-հայացք (հայեաց), շրջահայաց են, ատել- մարդատյաց, ատեցում, մերձենալ- մերձեցում են: Ույց, ուց, հին ոյց- գրաբարի «ուցանել», աշխարհաբարի «ցնել» «վերջացած» պատճառական բայերի արմատների վրա, ինչպես՝ գրաբ. սառուցանել, աշխ. սառցնել-սառուց, սառոյց են»<sup>29</sup>:*

*Անորոշ դերբայի կազմությունը: Քարացած կամ մեռած կազմություններ:* Հանգամանորեն քննելով անորոշ դերբայի կազմությունը՝ նշում է. «Անորոշ դերբայի կազմության, ինչպես և ընդհանրապես բոլոր ածանցական մասնիկներով կազմությունների համար, պետք է նկատի ունենալ՝ 1) կենդանի կազմության եղանակներ, որոնց անալոգիայով նորանոր բառեր ենք կազմում, և 2) քարացած կամ մեռած կազմություններ, որոնց անալոգիայով այլևս նոր բառեր չենք կազմում, և որ սովորելով՝ հիշողությամբ միայն վերականգնում ենք»<sup>30</sup>: Դեռևս «Աշխարհաբարի քերականության» մեջ խոսելով անորոշ դերբայի կազմության մասին՝ առանձնացնում է «հիմք, վերջաւորութիւն, լծորդ և միջածանց»: Ըստ Աբեղյանի՝ «հիմքի մեջ է բայի կամ դերբայի հիմնական իմաստը», «վերջաւորութիւն է անորոշ դերբայի վերջին լ-ն, լծորդը վերջաւոր-

<sup>28</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, նույն տեղում:

<sup>29</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 282-283:

<sup>30</sup> Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 284:

րութիւնից առաջ եղած ձայնաւորն է՝ *ա, է, ի*, որ վերջաւորութեան հետ միասին հիմքի նշանակութեան» վրա ավելացնում են *անելու* կամ *լինելու* իմաստ», իսկ միջածանցը հիմքի (այն կարող է լինել մի արմատ կամ մի բառ, լինի պարզ, բարդ, թէ ածանցական») և «լծորդի մէջ մտած» ածանցն է, ինչպէս՝ տեսնել, մօտենալ<sup>31</sup>:

Գրաբարի «ԱԼ, ԵԼ, ԻԼ, ՈԻԼ, կամ ԱՆԵԼ, ՆԵԼ, ԱՆԻԼ, ՉԻԼ, ՆՉԻԼ, ԱՆԱԼ, ԵՆԱԼ, ՆԱԼ, ՆՈԻԼ և պատճառական ՌԻՑԱՆԵԼ կազմութիւններից» աշխարհաբարում «կենդանի բեղմնավոր» են ԱԼ, ԵԼ, ԱՆԱԼ, ՌԻՑԱՆԵԼ, ՑՆԵԼ, իսկ մյուս ձևերը մեռած են: ՈԻԼ-ով ավարտվող ձևերը «շուտ են եկել» ԵԼ ձևին՝ *արգելուլ-զենուլ* ևն, դարձել են *արգելել, զենել*: Բոլոր «ԻԼ վերջացած բայերը աշխարհաբարում վերածվել են ԵԼ-ի, ինչպէս՝ *համարիլ-համարել, դատիլ-դատել*» ևն: Գրաբարում «*ուլ-անել կամ ուլ-անիլ* ձևերն ունեն նաև ԵԼ ձև, ինչպէս՝ *լիզուլ, լիզանել-լիզել ևն. զրոսնուլ-զրոսանիլ, զրոսնել*» ևն: «ԱՆԵԼ, ԱՆԻԼ կազմութեան բայերն աշխարհաբարում մեծ մասամբ դարձած են սոսկ «ել» կազմութիւն, ինչպէս՝ սուզանել-սուզել, խփանել-խփել» ևն: «ԱՆԱԼ, ԱՆԻԼ կազմութեան բայերից» աշխարհաբարում մնում են «ա» ձայնավորի սղումով հետևյալները՝ «*անել* վերջածանցներից՝ *մտնել, էլնել, անցնել, իջնել, հասնել, տեսնել, գտնել*, բարբառներում նաև՝ *ցուցնուլ, պագնել, խածնել* (նաև *խածել*): *Անիլ* վերջածանցներից՝ *հագնել* (գրաբար՝ *ագանիլ*), *բուսնել, մեռնել, պրծնել, ընկնել* (անկանիլ), *հատնել, փրծնել*, նույնպէս բարբառային «եղնել»: Իսկ «փլանիլ» բայի համար ունենք «փլչել»: «ՉԻԼ, ՆՉԻԼ, ՆՈԻԼ վերջացած բայերից մի քանիսը մնում են աշխարհաբարում *չել, նել, էլ* ձևով. ինչպէս՝ *փախչիլ, փախնուլ-փախչել. թռչիլ, թռնուլ-թռչել, թռնել...*» ևն<sup>32</sup>:

*Բ. Անվանաձանց բայեր և բայաձանց անուններ*: Ըստ Մ. Արեղյանի՝ «կենդանի կազմութեան բայերը», ԱԼ, ԵԼ, ԱՆԱԼ վերջավորութիւններով, մասամբ անուններից են ածանցվում, մասամբ՝ բայերից: Եթէ մի կողմից՝ բայերից այսպէս նոր անուններ են

<sup>31</sup> Տե՛ս Մ. Արեղյան, *Աշխարհաբարի քերականութիւն*, էջ 91:

<sup>32</sup> Տե՛ս Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 282-283:

ածանցվում, մյուս կողմից՝ անուններից ԵՄ, ԱՄ, ԱՆԱՄ կազմու-  
թյուններով նոր բայեր են ածանցվում «հին բայերի անալոգիայով»:  
«ԵԼ կազմությամբ հնուց ունինք» բազմաթիվ չեզոք և ներգործական  
բայեր ամեն տեսակի անուններից կազմված, ինչպես՝ *տեք-տիրել,*  
*փառավոր-փառավորել* ևն, որոնց «անալոգիայով այժմ էլ ազատ  
կերպով նոր բայեր են կազմվում՝ ավելի ներգործական սեռի.  
*հողել, թելել, սիրահարվել*» ևն: «ԱՆԱԼ (ենալ) կազմությամբ»  
բայերը, բացի մի քանիսից (գողանալ, ստանալ ևն), չեզոք են և ցույց  
են տալիս մի բան դառնալ, մի վիճակից մի ուրիշ վիճակի փոխվել՝  
*հողանալ, փայտանալ...* ևն: Այս «անել» կազմությունից «ծագում է  
ԵՆԱԼ ձևը գրաբարի սովորական ԵԱ>Ե ձայնափոխությամբ».  
ինչպես՝ «լկտի» բառից լկտիանալ, «լկտեանալ», լկտենալ»: Գրա-  
բարում կան թշնամենալ, խնամենալ ևն ձևեր, միջին հայերենում՝  
սրանց «անալոգիայով՝ *ամաչենալ, ճանաչենալ*» ևն: Աշխարհա-  
բարում մնում են միայն սակավաթիվ այդպիսի բառեր արդեն  
մեռած «ենալ» ձևով, ինչպես՝ *մոտենալ, մերձենալ, պարձենալ* ևն»:  
«ԱԼ կազմությամբ» բայերը մեծ մասամբ չեզոք են և նշանակում են  
մի գործողություն կամ մի դրության, մի վիճակի մեջ լինել, ինչպես՝  
«կադալ» նշանակում է՝ կադի տալ, կադաբար գնալ, մինչդեռ «կա-  
դանալ» -կադ դառնալ, հոխորտալ-հոխորտաբար խոսել, շարժվել,  
հոխորտանալ-հոխորտ դառնալ ևն<sup>33</sup>: Ուշագրավ է Աբեղյանի  
հետևյալ դիտարկումը ժամանակակից հայոց լեզվի –*ալ* վերջա-  
վորությամբ ավարտվող բայերի վերաբերյալ. «Հին լեզվի մեջ չեզոք  
բայերից կան այնպիսիները, որոնք ունեն կրկին ձևեր՝ *ել, իլ, ալ*  
կազմություններով. աշխարհաբարում դրանցից գործածվում է սո-  
վորաբար «ալ» ձևը լողալ, ծփալ, սողալ, որոճալ...ևն: Առհասարակ  
նոր լեզվի մեջ ձգտում է երևում՝ հին լեզվի *ել, իլ* կազմության չեզոք  
բայերը վեր ածել ԱԼ կազմության, այսպես հին՝ *ճչել, ժպտիլ,*  
*թրթռել, կսկծել* (կսկծիլ), երեւիլ և այլ բայերի փոխանակ այժմ  
սովորաբար գործածում ենք՝ *ճչալ, ժպտալ, թրթռալ, կսկծալ, երևալ.*  
նույնպես՝ *ցավել, խոսել, հազել, ծիծաղել, կայթել* և այլ ձևերի հետ

<sup>33</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 287-291:

արդեն գործածում են նաև՝ *ցավալ, խոսալ, հագալ, ծիծաղալ, կաթալ*։ ժողովրդական լեզվի մեջ այս փոխանցումը մեծ ծավալ ունի, ավելի արևելյան բարբառների մեջ։ Կան, սակայն, սակավաթիվ բայեր ևս *եմ* և *ամ* կազմությամբ, մեկը ներգործական, մյուսը չեզոք նշանակությամբ. *ծփել-ծփալ, թվել-թվալ, ծխել-ծխալ, ցողել (ամանը ջրով ցողել)-ցողալ (անձրև շաղալը), խլրտել (շարժել տեղից)-խլրտալ, գուժել-գուժալ*<sup>34</sup>։ Խոսելով «բայաբներից» ածանցվող բայերի մասին՝ գրում է. «Կան բայեր, որոնք կազմված են բայաբներից՝ ուրիշ բայերի և սրանց համապատասխան անունների («ույն», «արան» և այլ ածանցներով) անալոգիայով. օրինակ՝ հին լեզվի մեջ «բառնալ» «խնուլ», «լալ» բայերի բներն են՝ *բարձ, խից, բաց, լից, լաց*. սրանցից կազմված են՝ «բարձումն», «խցումն», «բացումն» անունները. և քանի որ «ույն» ածանցով կազմված անունների համար կան համապատասխան բայեր՝ ծագումն-ծագել, շարժումն-շարժել, թաղումն-թաղել, դրանց անալոգիայով կազմված են նաև «բարձումն», «խցումն», «բացումն» անունների համապատասխան բայեր՝ բարձումն-բարձել, խցումն-խցել, բարբառային ձևով նաև՝ բացումն-բացել» (բացում եմ...), լցել (լցում եմ...), լացել (լացում եմ...)»<sup>35</sup>։ Այսպես նաև՝ *ընթերցումն-ընթերցել, հատուցում-հատուցել, ուսուցում-ուսուցել, զեկուցում-զեկուցել* ևն<sup>36</sup>։

*Գ.Բայածանց բայեր*։ Այս բաժնում դարձյալ հանգամանորեն քննում և ցույց է տալիս, որ բայերից ածանցվում են *բազմապատկական, պատճառական* և *կրավորական* բայերը։ *Բազմապատկական* բայերը ցույց են տալիս գործողության կրկնություն, կամ շատ գործող առարկաների միանման գործողություն։ «Կազմվում են «ԵԼ» վերջացած բայերից *ԱՏ, ՈՏ, Տ, ՈԼ, ԱՏԱԿ, ՏԿ* և ուրիշ ածանցներով, ինչպես կտրել-կտրատել ....ն։ .... Այս վերջինների անալոգիայով *ՌՏ* մասնիկով՝ քանդել-քանդոտել....ն։ ....Կրկնականների մեջ *ՈՏ, ՈԼ* մասնիկով՝ խափխփել- խափխփոտել,

<sup>34</sup> Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 290:

<sup>35</sup> Նույն տեղում:

<sup>36</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 291

պաշպչել-պաշպչորել...նն: ԱՏԱԿ, ՏԿ մասնիկներով՝ փայլել-փայլատակել...»<sup>37</sup>: Աբեղյանը նկատում է, որ «Բազմապատկական *ոտել* վերջացած բայերը՝ *մորթոտել, կծոտել* նն, չպիտի շփոթել *ոտ* մասնիկն ունեցող ածականներից կազմված բայերի հետ, ինչպես են՝ ժանգոտ-ժանգոտել, մրոտ-մրոտել, ալրոտ-ալրոտել և այլն»<sup>38</sup>: Այդ առիթով Ալ. Մարգարյանն իրավացիորեն նշում է, որ մասնակի դեպքերում *-ոտ*-ը կարող է գործածվել և՛ բայական, և՛ անվանական նշանությամբ<sup>39</sup>: *Պատճառական* բայերը կազմվում են *ՅՆ* մասնիկով. «ել, ենալ կազմության բայերը դառնում են *եցնել, իսկ ալ, անալ* կազմության բայերը՝ *ացնել, և նել, չել* կազմության բայերը՝ *ցնել, ինչպես՝ նստել-նստեցնել...*» նն, բայց՝ վեր կենալ- վեր կացնել. դառնալ-դարձնել (փոխանակ՝ դարձցնել), անցնել-անցրնել (փոխ. անցցնել): Գրաբարյան *մատուցանել, զեկուցանել* ձևերը փոխարինվել են *մատուցել, զեկուցել* նն բառերով<sup>40</sup>: *Կրավորական բայերը* կազմվում են «Վ» (*ու*) մասնիկով. *ել, նել* կազմության բայերը դառնում են՝ *վել, նվել. ալ, անալ, ացնել* կազմության բայերը դառնում են *ացվել*, իսկ «ենալ, եցնել կազմության բայերը դառնում են *եցվել, և ցնել* կազմության բայերը՝ *ցվել, ինչպես՝ գրել-գրվել*» նն<sup>41</sup>: Ենթակայական դերբայը, որ ցույց է տալիս գործողի անուն, կազմվում է բոլոր բայերի համար ՈՂ մասնիկով, որ դրվում է՝ «ել վերջացած» անորոշ դերբայի այս «ել» վերջի տեղ, «ալ, անալ, ենալ վերջացած» անորոշ դերբայների «այս վերջերի տեղ բայաբնի «աց», «եց» ածանցների հետ», ինչպես նաև կատարյալի բնից անկանոն կազմություններ, ինչպես՝ գալ-եկա-եկող նն<sup>42</sup>: Անկատար դերբայը, որ ցույց է տալիս մի կատարվող եղելություն, որ դեռ տևում է հարաձիգ. ունի երկու ձև ՈԻՄ և ԻՄ վերջավորություններով, որոնցից առաջինը դրվում է անորոշ դերբայի «ալ, էլ վերջերի»

<sup>37</sup> Նույն տեղում:

<sup>38</sup> Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 291-292:

<sup>39</sup> Տե՛ս Ալ. Մարգարյան, *Հայոց լեզվի քերականություն*, Ե., 2004, էջ 369:

<sup>40</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 292:

<sup>41</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>42</sup> Տե՛ս նույն տեղում:

տեղ, իսկ երկրորդն ավելանում է անորոշ դերբայի վերջից: Երկրորդ կազմությամբ անկատարն ունի մակբայական նշանակություն: Անցյալ դերբայը ցույց է տալիս կատարված, վերջացած եղելություն, ունի երկու տեսակ վերջավորություն՝ վաղակատար ԵԼ (հին՝ *եսլ*) և հարակատար ԱԾ: Երկու վերջավորություններն էլ դրվում են՝ 1) Պարզ «*ել* վերջացած», ինչպես և բազմապատկական ու կրավորական բայերի անորոշ դերբայի «*ել*» «վերջի տեղ»։ 2) «*ալ, անալ, ենալ* վերջացած» անորոշ դերբայների այս «վերջերի տեղ» դրվում են *ած, էլ* բայաբնի *աց, եց* ածանցների հետ։ 3) «*Նել, չել* վերջացած» անորոշ դերբայների այս «վերջերի տեղ» դրվում են *ած, էլ*։ 4) «Ցնել վերջացած» պատճառական բայերի անորոշ դերբայի այս «վերջերի տեղ» դրվում են *ած, էլ* դրանց կատարյալի բնի *ցր* մասնիկի հետ: Կան նաև անկանոն կազմություններ՝ *գալ-եկա-եկել, եկած* են<sup>43</sup>: Ապամնի դերբայը, որ ցույց է տալիս եղելության դեռ նոր կատարելի լինելը, կազմվում է ՈԻ, Ի, ԻՔ վերջավորություններով, որոնք ավելանում են անորոշ դերբայի վերջից: Ի, Իք ածանցներով կազմություններն առնվում են իբրև գոյական և ածական անուններ, ուստի դրված են անվանական ածանցումների մեջ: Բայական ձևերի կազմության համար «առնվում է միայն ՈԻ վերջացած» ապամնի դերբայը, որին համապատասխանում է գրաբարի ՈՅ վերջավորությամբ կազմությունը, օր.՝ *գալու-գալոց, գրելու-գրելոց*<sup>44</sup>:

Ինչպես իրավացիորեն մեկնաբանում է Հ.Բարսեղյանը, «Ս. Աբեղյանը դերբայական վերջավորությունները դասում է վերջածանցների շարքը և սրանց մեջ տեսնում է բառակազմական արժեք ու այդպես էլ դերբայական ձևերը քննում է բառակազմության և ոչ թե ձևաբանության կամ թեքման մեջ: ... Ածանցման մեջ որպես տարբեր բառեր և ոչ բայաձևեր քննված *ուլ* վերջավորությամբ անկատար, ինչպես և վաղակատար դերբայները, չունենալով անկախ (ինքնուրույն) գործածություն, չեն մտցվում անուն խոսքի մասերի շարքը, թեև մտցվում են բայական հարացույցը, որպես

<sup>43</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 293:

<sup>44</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 293-294:

օժանդակ բայի հետ դիմավոր ձևեր բաղադրող դերբայներ, բայց Մ. Աբեղյանի սահմանմամբ, միևնույն է, բայ չեն համարվում, քանի որ առանձին վերցրած, դեմքի և թվի գաղափար չեն արտահայտում»<sup>45</sup>:  
 Հ. Բարսեղյանի գնահատմամբ՝ «... բայի մեկնաբանությունը Մ. Աբեղյանի խոսքի մասերի համակարգում մնում է նրա դեմ մղված վեճերի կենտրոնը: Սակայն այդ վեճերից ազատվելու համար էթե փորձենք հրաժարվել Աբեղյանի բայի ըմբռնումից, դրանով հրաժարված կլինենք նաև նրա հորինած համակարգի միասնականությունից, ամբողջությունից և հետևողականությունից»<sup>46</sup>: Ուստի բառակազմության՝ մասնավորապես ածանցման վերաբերյալ Մ. Աբեղյանի մոտեցումները ևս, կարծում ենք, պետք է դիտարկել նշված համակարգի մեջ, այլապես դրանց վերաբերյալ պատկերացումներն ու ընկալումները (հատկապես բայական վերջավորությունների հետ կապված) կլինեն թերի կամ ոչ ճիշտ:

### Եզրակացություն

Ամփոփելով ածանցման և ածանցների վերաբերյալ Մ. Աբեղյանի առաջ քաշած տեսակետների քննությունը՝ նշենք, որ լեզվաբանը երևույթը քննում է երկու տեսանկյուններից. նախ ներկայացնում է ածանցների առաջացման ուղիները՝ «*ածանցական մասնիկների*» ծագումը հնչյունափոխությամբ, «*ածանցիկների*» ծագումն առանց հնչյունափոխության, «*ածանցական մասնիկների*» ծագումը երկու մասնիկների միացումից, հնացած հոլովական ու բայական ձևերից: Այնուհետև ածանցները բաժանում է *անվանական* և *դերբայական* տեսակների և հանգամանորեն քննում դրանցից յուրաքանչյուրը: Թեև շատ հարցերում Աբեղյանի մոտեցումներն ու դիտարկումները կարող են անընդունելի կամ հնացած համարվել, սակայն նրա կատարած մանրակրկիտ և նախատիպը չունեցող ուսումնասիրությունը հայերենի ածանցման, ածանցների և նրանցով կազմված բառերի վերաբերյալ, կարծում ենք, այսօր էլ

<sup>45</sup> Հ. Բարսեղյան, *Հայերենի խոսքի մասերի ուսմունքը*, Ե., 1980, էջ 202:

<sup>46</sup> Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 203-204:



շարունակում է մնալ որպես նորանոր հետազոտությունների և բացահայտումների հիմք հանդիսացող յուրահատուկ շտեմարան:

### Օգտագործված գրականություն

- Աբեղեյան Մ., Աշխարհաբարի քերականություն, տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, Վաղարշապատ, 1906:
- Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, «Միտք» հրատ., Ե., 1965:
- Աղայան Է., Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1962:
- Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1973:
- Այտընյան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Ե., 1987:
- Բարսեղյան Հ., Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1980:
- Գալստյան Ս., Դպրոցական բառակազմական բառարան, «Զանգակ-97» հրատ., Ե., 2011:
- Հարությունյան Ս., Մանուկ Աբեղյան. կյանքն ու գործը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1979:
- Մարգարյան Ալ., Հայոց լեզվի քերականություն, Երևանի համալսարանի հրատ., Ե., 2004:
- Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, «Աստղիկ» հրատ., Ե., 2010:
- Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1989:

**Nersisyan Varsik- Study of the Affixes Issues in the Works by Manuk Abeghyan.** - The given study aims at presenting affixation and affixal words in the works by Manuk Abeghyan as well as finding the principle according to which the scholar classified them. The relevance of the topic is explained by the fact that there are several issues in contemporary

Armenian word-formation which need to be solved. M. Abeghyan studies this phenomenon from two perspectives: firstly, he presents the ways of origin of affixes, then he classifies them into noun and adverb affixes giving their detailed analysis.

**Keywords:** Manuk Abeghyan, affixation, affixal words, affix, affixoid, noun affixes, adverb affixes.

Nersisyan Varsik, PhD of Philology, Institute of Language after H. Acharyan of NAS RA, Senior Researcher.

**Нерсисян Варсик-Исследование проблем аффиксации в трудах Манука Абегамяна.**-Целью данного исследования является представление анализа аффиксации и аффиксальных слов в трудах Манука Абегамяна, выявление принципа, согласно которому учёный классифицировал их. Актуальность темы обусловлена наличием в современном армянском языке ряда проблем в области словообразования и необходимостью проведения работ по решению последних. М. Абегамян исследует данное явление с двух ракурсов: во-первых, представляет пути происхождения аффиксов, а затем классифицирует аффиксы на *именные* и *наречные*, детально анализируя их.

**Ключевые слова:** Манук Абегамян, аффиксация, аффиксальные слова, аффикс, аффиксоид, именные аффиксы, наречные аффиксы.

Варсик Нерсисян, кандидат филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, старший научный сотрудник.

**ԻՄԱՍՏԱՑԻՆ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՐԱԿԱՆ  
ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ\***

10.54412/2738277X-2022.1.2-146

**Ֆելեքյան Մանուկ**

բանասիրական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,  
գիտաշխատող. manukfelegyan@gmail.com

**Բանալի բառեր.** գրական արևմտահայերենի բառապաշար, նորաբանություններ, նորակազմություններ, բառակազմական պատճենումներ, իմաստային պատճենումներ, նորաբանությունների բառարաններ:

**Նախաբան**

Վերջին երեք տասնամյակներում՝ անկախությունից ի վեր, մեր գրական լեզվում (դրա երկու տարբերակներում էլ) կատարվել են նկատելի տեղաշարժեր: Դրանք բնականաբար առավելապես շատ են բառապաշարում, քանի որ քաղաքական, սոցիալական, տնտեսական խոշոր, շրջադարձային փոփոխությունների ժամանակ լեզվի բառապաշարը առաջինն է արձագանքում այդ իրադարձություններին:

Մոտավորապես այս ժամանակահատվածում՝ անկախացումից և դրան նախորդող հնգամյակից հետո, մեր լեզու մտած բառերը և բառիմաստներն են այժմ նորաբանություն համարվում<sup>1</sup>: Գրական արևելահայերենի համար վերջին տասնամյակներում

\* Ներկայացվել է 13.09.2022, գրախոսվել՝ 05.10.2022:

<sup>1</sup> Նորաբանությունների առանձնացման, տեսակների, դասակարգման մասին տե՛ս, օրինակ, **Ա. Մարտիրոսյան**, *Նորաբանության ըմբռնումը արդի հայերենում*։ Բանբեր Երևանի համալսարանի, № 1 (115), 2005, էջ 55-67:

կազմվել են նորաբանությունների մի քանի բառարաններ<sup>2</sup>: Այսօր էլ շարունակվում է ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի «Նոր բառեր» բառարանի պրակների հրատարակումը<sup>3</sup>:

Արևմտահայերենի համար նորաբանությունների որևէ ընդգրկուն բառարան դեռ չի կազմվել: ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժինն այդ ուղղությամբ աշխատանքներ է նախաձեռնել. 2021 թ. կազմել ու հրատարակել է «Նոր բառեր արևմտահայերենի մեջ» (Ա գիրք) բառարանի էլեկտրոնային տարբերակը (շուրջ 1000 բառ ծավալով): Այժմ ընթացքի մեջ է դրա Բ գրքի կազմումն ու խմբագրումը: Այս երկու գրքերը արևմտահայերենի նորաբանությունների մեկտեղման և բառարանագրական մշակման առաջին փորձերն են մեր իրականության մեջ:

Այդ փոփոխությունների և նկատելի տեղաշարժերի համակարգային ուսումնասիրմանը նպաստելը պայմանավորում է սույն ուսումնասիրման նյութի ընտրությունը և *արդիականությունը*: Այս ժամանակահատվածում մեր լեզվի բառապաշար են ներմուծվել հսկայական քանակությամբ նորաբանություններ, հարյուրավոր բառերում կատարվել է բառիմաստի ընդլայնում և վերաիմաստավորում:

Ուսումնասիրության *նպատակներն* են՝ որոշել իմաստային նորաբանությունների դերը ժամանակակից հայերենի բառապաշարի հարստացման գործում, վեր հանել դրանց իմաստաբանական, բառակազմական, մասամբ՝ ձևաբանական և ոճական առանձնահատկությունները: Փորձել պարզել նոր բառերի և նշանակությունների առաջացմանը նպաստող լեզվական և արտալեզվական գործոնները: Սա կարող է նպաստել զարգացման արդի փուլում մեր բառապաշարի համալրման և կատարելագործման հիմնական միտումների բացահայտմանը:

<sup>2</sup> Ս., **Էլոյան** *Արդի հայերենի նորաբանությունների բառարան*, Ե., 2002, Փ. Մեյթի-խանյան, *Նոր բառերի բացատրական բառարան*, Ե., 1996:

<sup>3</sup> *Նոր բառեր*, Ա-Ե պրակներ, Ե., 2015-2020:

Հոդվածում *համաժամանակյա* մոտեցմամբ քննվում են «Նոր բառեր արեւմտահայերէնի մէջ» բառարանի Ա և Բ գրքերի էլեկտրոնային տարբերակում տեղ գտած իմաստային նորաբանությունները: Արեւմտահայերէնի նորաբանությունների քննության հիմնական *մեթոդը* հավաքված լեզվական նյութի նկարագրման եղանակն է:

### **Իմաստային նորաբանությունների առաջացման պատճառները և եղանակները**

Բառարանի Ա և Բ գրքերից առանձնացրել ենք իմաստային նորաբանությունները, որոնք սույն ուսումնասիրության առարկան են: Սրանց առաջացման հիմնական պատճառը բառիմաստի ընդլայնումն է, որը հայերենում պայմանավորված է հիմնականում լեզվի ներքին գործընթացներով, թեև շոշափելի է նաև օտար ազդեցությունը՝ բառիմաստի պատճենումը: Նորաբանությունների բառարանների այս գրքերում բացատրված են այդպիսի բառիմաստների՝ բերված բնագրային օրինակներում դրսևորած նշանակությունները: Իմաստային նորաբանությունները բառարանում առանձնանում են աստղանիշով (\*)՝ գլխաբառից առաջ:

«Նոր բառեր արեւմտահայերէնի մէջ» գրքերում տեղ գտած իմաստային նորաբանությունների ճնշող մեծամասնությունը իմաստային պատճենումների արդյունք է: Սա փոխառության յուրօրինակ տեսակ է, երբ փոխառվում է օտար բառի ոչ թե արտաքին՝ հնչյունական կողմը, այլ միայն բովանդակությունը՝ բառիմաստը: Այս դեպքում բառը, փաստորեն, իր հնչյունական կազմով, բառաքերականական կառուցվածքով բնիկ, սեփական է, իսկ նրա մեկ կամ երբեմն մեկից ավելի իմաստները փոխառություն են որևէ օտար լեզվից<sup>4</sup>: Այս դեպքում կարևոր նախապայման է այդ բառերի

<sup>4</sup> Ա.Սուքիասյան, Ք.Սուքիասյան, Մ. Ֆելեքյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 2017, էջ 240:

առարկայական (նյութական) իմաստների նույնությունը փոխատու և փոխառող լեզուներում:

Արևմտահայերենը թե՛ կառուցվածքային և թե՛ իմաստային պատճենումները ավանդաբար կատարել է անմիջականորեն փոխատու լեզվից, որը մինչև անցյալ դարի կեսերը հիմնականում ֆրանսերենն էր, իսկ վերջին տասնամյակներում՝ անգլերենը և հատկապես նրա ամերիկյան տարբերակը: Արևելահայերենը նույնպես վերջին երեք տասնամյակներում փոխառությունները հիմնականում ուղղակիորեն անգլերենից է կատարում (առանց ռուսերենի միջնորդության): Դրա պատճառով երբեմն դժվար է պարզել բառային պատճենման կամ իմաստային նորաբանության՝ նախապես արևելահայերենում, թե՛ արևմտահայերենում ստեղծված լինելը: Սրանց մի մասը մեր լեզվի երկու տարբերակներ զուգահեռաբար մուտք է գործում գրեթե միաժամանակ: Ներթափանցումը մեծավ մասամբ գրավոր ճանապարհով է կատարվում, թեև նկատելի են նաև բանավոր ճանապարհով փոխառման դեպքեր:

### **Իմաստային փոխառությունները՝ ըստ բառապաշարի իմաստային խմբերի**

Այս փոխառությունները, արտալեզվական գործոններով պայմանավորված, ավելի շատ վերաբերում են քաղաքագիտական-դիվանագիտական, տնտեսագիտական, տեղեկատվական տեխնոլոգիաների, կրթական, սպորտի, թերևս նորաձևության ոլորտների:

Իմաստային նորաբանությունները ոչ սակավ դեպքերում տարբեր բնագավառների տերմիններ են, որոնց մի մասը հաճախակի կիրառվելու պատճառով կարող է ապատերմինացվել, դառնալ համագործածական և մուտք գործել լեզվի ընդհանուր բառապաշար: Այսպես, մեր լեզվի թե՛ արևելյան և թե՛ արևմտյան տարբերակները ամենայն հավանականությամբ գրեթե միաժամանակ և միմյանցից անկախաբար անգլերենից իմաստային պատճենում են

կատարել *թվային* // *թուային* ածականի համար: Այս բառի նախնական իմաստը, որ արձանագրված է հայերենի բոլոր բացատրական բառարաններում<sup>5</sup> («թվերին հատուկ, թվերով արտահայտվող, թվերի») այժմ դառնում է անգործածական. ակտիվանում է նոր՝ փոխառյալ նշանակությունը («ինֆորմացիան էլեկտրոնային համակարգերի միջոցով երկակի՝ մեկերի և զրոների կողի փոխարկող»), որը հաշվողական տեխնիկայի տերմինային համակարգից արդեն անցել է ընդհանուր գործածական բառապաշար և սկսել է կիրառվել նաև այլ բնագավառներում: Այդպիսի մի կիրառության օրինակ է բերված «Նոր բառեր արեւմտահայերէնի մէջ» բառարանի Բ գրքում. «Այլապէս ելոյթը կը վերածուի անջատ մենախօսութիւններու տաղտկալի շարանի մը: Այդ «ագուցումը» ձեռով մը թուային տարբերակն է դերակատարներու բեմական տեղադրումին («Ազդակ», 9 Սեպտեմբեր 2021, էջ 3): Դեռևս իրենց տերմինային արժեքը պահպանում են Նորաբանությունների Բ գրքում արձանագրված այսպիսի փոխառություններից շատերը՝ *ինքնակառավարում*, *համամասնական*, *փաթեթային* (քաղաքագիտ.), *խթանիչ* (բժշկ., դեղագիտ.) և այլն: Իհարկե, քիչ չեն նաև սովորական՝ ոչ տերմինային բառերը: Ասենք, *մագոզային* // *մաքոքային* ածականի համար հայերենի բառարանները տալիս են միայն մեկ, այն էլ բառակազմական նշանակություն («մաքոքին հատուկ, մաքոքի»): Սակայն արդի լեզվում այն իմաստային պատճենմամբ ձեռք է բերել նաև նոր՝ փոխաբերական իմաստ՝ «երկու վայրերի հաստատությունների՝ անձերի միջև կանոնավոր երթևեկությամբ՝ փոխայցելություններով կատարվող», ինչպես լուսաբանող օրինակում է. «Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան ղեկավար Ուալիտ Ժոմպլաթ երեկ շարունակեց իր մագոզային այցելութիւնները առնչակից կողմերու պատասխանատուներուն» («Ազդակ», 20 Հոկ-

<sup>5</sup> Արևելահայերենում բառիմաստների բացատրությունների համար դիմել ենք հետևյալ բառարաններին՝ **Էդ. Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, հհ. I-IV, Ե., 1969-1980: Արևմտահայերենի համար դիմել ենք «*Հայոց լեզուի նոր բառարան*» (հհ. I-II, Բեյրութ, 1992) բառարանին:

տեմբեր 2021, էջ 2)»: Նույնպիսի բացատրություն ունի *խորքային* բառը բացատրական բառարաններում («խորքին վերաբերող՝ հատուկ, խորքի»), այնինչ բառն ունի նաև փոխաբերական նշանակություն՝ «ներքին օրինաչափություններով պայմանավորված, հիմնական, էական». հենց այդ իմաստով էլ բառը գործածված է բառարանի բնագրային օրինակում՝ «Հեռաձայնային հաղորդակցութեան ...ընթացքին երկու նախագահները համաձայնած էին շարք մը ռազմավարական հարցերու շուրջ խորքային խորհրդակցութիւններո սկսելու՝ վստահութիւնը երաշխաւորելու եւ հասարակաց նպատակներու իրագործման համար շօշափելի քայլեր իրագործելու համար («Ազդակ», 2 Հոկտեմբեր 2021, էջ 1)»: Եվ կամ օտար *պանդեմիա* բառի համար արևելահայերենում կերտվել է *համավարակ* նորակազմությունը (*համաճարակ*-ի համաբանությամբ): Արևմտահայերենը գնացել է այլ ճանապարհով. *ժահր* («թույն, թարախ, աղտեղություն») գոյականի փոխաբերական «ախտ» նշանակությունը վերաիմաստավորմամբ դարձրել է հիմնական, որից էլ արդեն բուն արևմտահայերենում կերտվել են նոր ածականներ՝ *ժահրային*, *հակաժահրային*. «Մոլնուփիրաիր» (Molnupiravir) հակաժահրային բերնի դեղամիջոցը նախատեսուած է բուժելու մեղմ եւ չափաւոր «Քորոնա» այն մեծահասակներուն մօտ, որոնք կը գտնուին ծանր «Քորոնա»-ի պարագայի կամ հիւանդանոցային վտանգի տակ («Ազդակ», 19 Հոկտեմբեր 2021, էջ 5)»: Արևելահայերենում *հետհոկտեմբերյան* և *հետնոյեմբերյան* բառերը դարձել են հնաբանություններ՝ պատմաբառեր: Դրանցից երկրորդը այսօր, ցավոք, ձեռք է բերել նոր նշանակություն և մեր լեզվի երկու տարբերակներում էլ ընկալվում է իբրև իմաստային նորաբանություն. «Դասախօսը իր զեկուցումը բաժնեց երեք մասի. առաջին՝ յետնոյեմբերեան ժամանակահատուածին Թուրքիոյ արձանագրած հռետորաբանական փոփոխութիւնը ... («Ազդակ», 2 Հոկտեմբեր 2021, էջ 2)»:



## Իմաստային նորաբանությունների առաջացման ներլեզվական պայմանները

Բառիմաստի ընդլայնումը կատարվում է բնականաբար ոչ միայն արտաքին ազդեցությունների պատճառով: Իմաստափոխությունը կատարվում է հայերենի ներքին իմաստափոխական հիմունքներով (ըստ գուգորդության, ըստ առընթերության, հոմանիշների տարբերական հիմունք, ապաստուգաբանություն, նույնիսկ իմաստի թյուրըմբռնում և այլն)<sup>6</sup>: Այսպես, *սպայակոյտ // սպայակոյտ* բառը արձանագրված է թե՛ արևելահայերենի և թե՛ արևմտահայերենի բառարաններում: Սակայն դրանցում այն ունի միայն հավաքական գոյականի իմաստ՝ «սպաների խումբը, սպաների ամբողջությունը»: Այս բառը արևմտահայերենում բառիմաստի ընդլայնմամբ ձեռք է բերել նոր նշանակություն՝ «գորքերի դեկավարման մարմին, շտաբ», որը այսօր մասամբ գործածվում է նաև արևելահայերենում: Սա բուն արևմտահայերենում կերտված նորակազմություն է և ոչ թե պատճենում, քանի որ նրա օտար գերմաներեն համարժեքը (*der Stab*) նախնական, էլակետային իմաստով նշանակում է «գավազան» (իբրև իշխանության խորհրդանիշ): Այս նոր իմաստից կերտվել է *սպայակոյտային* նորակազմականը, որը բնագրային կիրառությամբ արձանագրված է «Նոր բառեր արևմտահայերենի մեջ» (Բ գիրք) բառարանում. «Ազրպեյճանական լրատուամիջոցները, վկայակոչելով պաշտպանութեան նախարարութիւնը, կը հաղորդեն, որ հրամանատարական-սպայակոյտային ռազմափորձերը կը կատարուին կապի եւ կողմնորոշման տարատեսակ միջոցներու լայնածաւալ կիրարկումով («Ազրպեյ», 20 Հոկտեմբեր 2021, էջ 8)»:

<sup>6</sup> Սրա մասին մանրամասն տե՛ս Աղայան Էդ., *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., 1984, էջ 78-101: Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, *Ժամանակակից հայոց լեզու*, հ. I, Ե., 1979, էջ 180-192 («Բառիմաստի փոփոխությունները ժամանակակից հայերենում» բաժնի հեղինակը Ս. Էլոյանն է): Ա. Մարգարյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1993, էջ 60-66: Ա.Սուքիասյան, Բ.Սուքիասյան, Մ. Ֆելեքյան *Ժամանակակից հայոց լեզու*, էջ 135-140:

Օտար բառերը, մանավանդ նորաստեղծ տերմինները ավանդաբար առավել հաճախ արևմտահայերենն է վերածում հայերենի, այնուհետև դրանցից առավել հաջողները անցնում են նաև արևելահայերենին և դառնում են ընդահանուրհայերենյան բառեր: Հակառակ ուղղությամբ անցումները համեմատաբար սակավ են, քանի որ մեր լեզվի արևելյան տարբերակը փոխառությունների նկատմամբ չունի կտրուկ մերժողական վերաբերմունք: Այնուամենայնիվ կան նաև այդպիսի «ներքին փոխառություններ»: Արևմտահայերենի նորաբանությունների Բ գրքում գրանցված է *կրկնապատկեր* իմաստային նորաբանությունը. «Օրուան իրաւարարը, ՎԱՐ համակարգով դիտել է եռք կրկնապատկերը, Հայաստանի ի նպաստ տուաւ փենալթի մը («Ազդակ», 9 Մեպտեմբեր 2021, էջ 7)»: Այս բառը չկա արևմտահայերենի ծավալուն բառարաններում, սակայն «կրկնակի՝ երկրորդ պատկեր, պատկերի պատճեն» նշանակություններով արձանագրված է արևելահայերենի բառարաններում: Այն այժմ ձեռք է բերել «մարզական միջոցառման հեռուստատեսային հեռարձակման որևէ դրվագի կրկնություն» իմաստը: Վստահաբար կարելի է ասել, որ այս իմաստը նախ առաջացել է արևելահայերենում, ապա ներթափանցել նաև արևմտահայերեն, քանի որ հայալեզու սպորտային հաղորդումները, կրկին արտալեզվական գործոններով պայմանավորված, առավել տարածված են հայրենիքի հեռուստաընկերություններում: Կամ *փաթեթ* գոյականի նոր՝ «առաջարկությունների՝ որոշումների՝ քայլերի ևն խումբ՝ ամբողջություն» նշանակությունը և դրա հիման վրա կերտված *փաթեթային* ածականը մեր լեզու մուտք գործեցին 1990-ական թվականների երկրորդ կեսին, երբ հայաստանյան հասարակության մեջ բուռն քննարկումներ էին ընթանում մի քաղաքական խնդրի լուծման տարբերակների ընտրության շուրջ: Այժմ այս իմաստները անցել են նաև արևմտահայերենին. «Նոր բառեր արեւմտահայերէնի մէջ» բառարանի Բ գրքում ունենք արձանագրված հետևյալ կիրառությունը. «Մեր կողմէ ողջունենք Պաքուի եւ Երեւանի դրական տրամադրուա-

ծութիւնը փոխադարձաբար ընդունելի, փաթեթային համաձայնութիւններու հասնելու հարցին մէջ, ինչ որ հեռանկարին մէջ թոյլ պիտի տայ միացեալ աշխատանքը տեղափոխել գործընկերային համագործակցութեան հարթութիւն», ընդգծած է Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան ներկայացուցիչը («Ազդակ», 2 Հոկտեմբեր 2021, էջ 1)»:

### **Եզրակացություններ**

- Իմաստային նորաբանությունները մնում են հայերենի բառապաշարի հարստացման գործուն միջոց:
- Ընդ որում, դրանք ստեղծվում են թե՛ օտար բառերի իմաստային պատճենմամբ և թե՛ հայերենի ներքին իմաստափոխական հիմունքներով:
- Իմաստային պատճենման ժամանակ կարևոր նախապայման է փոխատու և փոխառող լեզուներում այդ բառերի առարկայական (նյութական) իմաստների նույնությունը:
- Արդի հայերենում իմաստային պատճենումները կատարվում են անմիջականորեն փոխատու լեզվից (հիմնականում անգլերենի ամերիկյան տարբերակից), առանց երրորդ լեզվի միջնորդության:
- Եթե խորհրդային շրջանում իմաստային պատճենումներ առավելաբար արևմտահայերենից էին անցնում արևելահայերենին, այսօր նորաբանությունների փոխադարձ ներթափանցումները ունեն երկկողմանի բնույթ:
- Այս է պատճառը, որ երբեմն դժվար է պարզել բառային պատճենման կամ իմաստային նորաբանության՝ նախապես արևելահայերենում, թե՛ արևմտահայերենում ստեղծված լինելը:

Օգտագործված գրականություն

Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., «Հաստան» հրատ., 1976:

Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., ԵՊՀ հրատ., 1984, 372 էջ:

Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., Ժամանակակից հայոց լեզու, հ. I, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, 488 էջ:

Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Ե., «Նաիրի» հրատ., 2002, 492 էջ:

Ժամանակակից Հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. I-IV, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969-1980:

Հայոց լեզուի նոր բառարան, հհ. I-II, Պէիբրութ, 1992:

Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե., ԵՊՀ հրատ., 1993, 232 էջ:

Մարտիրոսյան Ա., Նորաբանության ըմբռնումը արդի հայերենում.- Բանբեր Երևանի համալսարանի, № 1 (115), 2005, էջ 55-67:

Մելիքիսանյան Փ., Նոր բառերի բացատրական բառարան, Ե., «Փյունիկ» հրատ., 1996, 210 էջ:

Նոր բառեր, Ա-Ե պրակներ, Ե., «Գիտություն» հրատ., 2015-2020:

Սուքիասյան Ա., Սուքիասյան Ք., Ֆելեքյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, Ե., ԵՊՀ հրատ., 2017, 462 էջ:

**Felekyan Manuk - Semantic Neologisms in Western Armenian Literary Language.-** The article analyzes about two dozen semantic neologisms of the Western Armenian literary language, included in the first two editions of the dictionary of the Institute of Language of the Academy of Sciences of the Republic of Armenia "New Words in the Western Armenian language". The main reason for the emergence of semantic neologisms is the expansion of the meaning of Armenian words and semantic tracing of mostly English lexical units. In semantic calque, the equivalence of the original meanings of the word of the source language and the recipient language is important.

**Keywords:** vocabulary of the western Armenian literary language, neologisms, derivational and semantic calques, dictionaries of new words.

---

Felekyan Manuk, PhD of Philology, Institute of Language after H. Acharyan of NAS RA, Researcher.

**Фелекян Манук - Семантические неологизмы в западноармянском литературном языке.-** В статье проанализированы около двух десятков семантических неологизмов западноармянского литературного языка, вошедшие в первые два выпуска словаря Института языка АН РА "Новые слова в западноармянском языке". Основная причина возникновения семантических неологизмов - расширение смысла армянских слов и семантическое калькирование в основном английских лексических единиц. В случае семантического калькирования важна эквивалентность исходных значений слова языка-источника и языка-реципиента.

**Ключевые слова:** лексика литературного западноармянского языка, неологизмы, словообразовательные кальки, семантические кальки, словари новых слов.

Манук Фелекян, кандидат филологических наук, Институт языка им. Р. Ачаряна НАН РА, научный сотрудник.

---

---

## BIBLE TRANSLATION AS A FACTOR IN THE PRESERVATION AND DEVELOPMENT OF THE ARMENIAN LANGUAGE\*

10.54412/2738277X-2022.1.2-157

**Mkhitarian Gayane**

PhD of Philology,

Institute of Language after H. Acharyan of NAS RA,

Senior Researcher. [gayane.mkhitarian@lang.sci.am](mailto:gayane.mkhitarian@lang.sci.am)

**Keywords:** Bible, Armenian writing, Grabar, translation, vocabulary, vernacular Armenian, national scientific thought.

### Introduction

The Bible has always been the most translated book in human history. The Armenian translation of the Bible is of exceptional importance in the spiritual and cultural life of Armenia. Medieval literature, art and science were inspired by the ideas of the Holy Book. Bible translators provided the final victory of the Christian religion in Armenia.

In the history of the development of the written languages of the world, Armenian writing, being a means of creative creation of the Armenian people and a guarantor of its national identity has a specific contribution to the world treasury of culture. Translation of the Bible shows that the literary and translation work of Armenian personalities is not carried out spontaneously but on the basis of well-thought-out, pre-designed programs. The aim is to create the preconditions for the national spiritual literature through translations, in the shortest possible time which was necessary for strengthening the position of the Armenian language, Armenian identity, Armenian culture and, of course the Armenian Church.

**The goal of the research** is to emphasize that in the history of the Armenian language, the origin and development of writing led to the verbal preservation of spiritual values and their written transmission to future generations. The translation was made in the classical Armenian language

---

\* Ներկայացվել է 03.10.2022, գրախոսվել՝ 14.11.2022:

Grabar, which is still the official language of the Armenian Apostolic Church. The importance of ancient and medieval Armenian translations is not limited to Armenological considerations. They are also of great value in terms of studying world culture for many monuments of Greek and Assyrian literature, which original texts were lost and have been preserved and become the heritage of modern civilization solely due to Armenian Bible translations. Armenian-translated literature was a new and powerful weapon of patriotism, language preservation which gave the Armenian people permanence and vitality during the following centuries full of trials.

Even today, **it is relevant** to refer to the translation of the Bible, as it is linked to the urgent requirements of the current geopolitical reality. Nowadays, there is a need to inspire our contemporaries with the idea of preserving Armenian statehood and the example of the past. "It is necessary to comprehend and realize on the international level the defense of cultural-historic heritage of each people (the monuments of architecture, the works of art, manuscripts etc.), especially, of Armenian people in the Motherland, including its historic parts"<sup>1</sup>.

Many scholars have studied the issue of Bible translation, but there are still number of questions requiring further investigation.

The research **methods** of this paper are the following: combination, comparison, analysis of existing facts as well as using descriptive methods if necessary.

## Discussion

V century was one of the most challenging periods in the historical life of Armenian people. Armenians fought against foreign invaders, but during this period, the alphabet was invented and literature was created (405 y.). Thanks to the activities of Mesrop Mashtots, the Armenian people acquired a national script, Armenian was declared as the state language. The first translations of the Bible in Armenian were made orally immediately after the adoption of Christianity as the state religion in 301<sup>2</sup>.

---

<sup>1</sup> **E.L. Danielyan**, *The Historical Significance of Armenian Writing, Translation and Original Literature in the Aspect of the Dialogue of Civilization*, <https://fundamentalarmenology.am/datas/pdfs/194.pdf>

<sup>2</sup> **Agop Jack Hacikian, Gabriel Basmajian, Edward S. Franchuk, Nourhan Ouzounian**. *The Heritage of Armenian Literature: From the Oral Tradition to the Golden Age*. Wayne State University Press, 2000, Vol. I., p. 97. [https://books.google.am/books?id=uvA-V0alP8C&pg=PA23&hl=hy&source=gbs\\_toc\\_r&cad=3#v=onepage&q&f=false](https://books.google.am/books?id=uvA-V0alP8C&pg=PA23&hl=hy&source=gbs_toc_r&cad=3#v=onepage&q&f=false)

At that time there was no alphabet in Armenia, and the clergy orally translated the Bible to spread Christianity in the country and conduct rites<sup>3</sup>. It should be highlighted that a stable tradition of translation art was formed in Armenia in the early period. Christianity finally entrenched itself in the Armenian people and in the future, together with writing, became the backbone of the Armenians in the struggle against assimilation. The Armenian translation of the Bible had a great impact on almost all areas of the spiritual life of the people. It played a decisive role in the formation of Armenian national scientific thought<sup>4</sup>. From the translation of the Bible all directions of the new worldview were formed, which in their content are directions of the new faith and the new science. Mashtots and his students launched fruitful literary activities along with literacy. The translated literature played a highly important role in the starting period of Armenian writings. The Bible became the first monument of the Armenian translation literature. The ancient Armenian language was so rich, and the translation and original literary heritage created by the Mesropian alphabet was so perfect that the 5th century is considered the “Golden Age” of the history of Armenian culture<sup>5</sup>.

Armenian is the only language in the world where the Holy Book name has a direct and literal relationship to God. The Armenian Bible sounds like “Astvatsashunch”, which in reality means “God's Breath”. In difficult social conditions, literature was wholly subordinated to the preservation of the independence of the people restoration of lost political independence, affirmation of the Christian religion, and the rights of the Armenian church. In the first years after the creation of the Armenian alphabet, the translation was carried out from the Syrian Peshitta, and in the 431 years following the Council of Ephesus, again on the basis of the Greek Septuagint<sup>6</sup>.

---

<sup>3</sup> **John Wilson**, *Oral Culture and Written Scripture*, Bible Translator, 44. 2 (April 1993), p. 234-242.

<https://archive.translation.bible/tbt/1993/02/TBT199302.html?num=234&x=-365&y=-78&num1=>

<sup>4</sup> **S. S. Arevshatyan**, *Formation of philosophical science in ancient Armenia (V-VI centuries)*, Pub. of the Academy of Sciences of Arm. SSR, Yerevan, 1973, pp. 142-143.

<sup>5</sup> Biblical Literature: The Armenian Version <https://www.britannica.com/art/Armenian-literature>

<sup>6</sup> **П. А. Юнгеров**, *Введение в Ветхий Завет. Книга 1, Язык перевода LXX*. стр. 338. <http://saint-serge-russe.com/wp-content/uploads/2016/10/07.-YUngerov-Vvedenie-T.1.pdf>



The translation was made in classical Old Armenian, which is now the official language of the Holy Armenian Apostolic Church.

The translation of the Bible expressed the high level of development of the Armenian language as well as became a powerful way to turn Armenian into a national literary language.

The language of the Bible is the vernacular spoken Armenian that was used in the provinces of Ayraratyan and Turuberan. Their vocabulary includes the bulk of the Bible vocabulary<sup>7</sup>.

This is proven by the thousands of words, phrases, currently active patterns of word formation, main semantic fields, which are still in use today. This is due to the fact that the Bible is the most read, memorized, and teaching book. All types of Armenian complex word formations are mentioned in the Bible. Especially juxtaposes should be noted, which have a semantic and stylistic expression, for example: հոտ առնուլ (հոտառություն) olfactory, բողոք արկանել (բողոքարկել) appeal, դաս վարել (դասավարտություն) lawsuit, ծունր դնել (ծնրադրություն) kneel, հոգ տանել (հոգատարություն) care, միտ դնել (մտադրություն) intention, ունկն դնել (ունկնդրություն) listening, փորձ առնուլ (փորձառություն) experience, յանձն առնուլ (հանձնառություն) commitment, վրեժ խնդրել (վրեժխնդրություն) revenge, սակ արկանել (սակարկել) bargain, etc.

The vast material provided by the Bible can still reveal exciting facts and bring out new words and word forms. Translators have tremendous knowledge of the language and other skills, which were developed and nationalized and have become typical usages of Armenian and have been passed down from generation to generation<sup>8</sup>. Patterns of using synonyms, inversions, pleonasms, antithesizes and comparisons are applied in Scripture and passed down through the generations.

Translations as a rule reached their highest development during periods of upsurge and flourishing of Armenian culture, when the spiritual life of people felt the need for new and rich sources of ensuring their

<sup>7</sup> V.D. Arakelyan, *language and style of Armenian translated literature of the fifth century*, 1984, Pub. of the Academy of Sciences of Arm. SSR, Yerevan, p.18.

<sup>8</sup> Bible translations are discussed more thoroughly by G. Zарphanalian in his book *Matenadaran of Ancient Armenian Translations (IV-XIII centuries)*, Venice, 1889, pp. (Ե-ԲԱ), 5-21.

growing needs and interests. Translations are vivid reflection of the cultural relations of Armenia with other nations over the centuries, during the long history, they introduced the Armenian reader to the literature of other nations.

In that period, there was a need to take into account the needs of theological and church book translations. In a relatively short period, Greek and Syrian have translated Bible and Church fathers' works, such as Ephraim Sirin (Ephraim), Basil of Caesarea, Gregory of Nazianzus, also John Chrysostom, Cyril of Alexandria, Athanasius of Alexandria, Cyril of Jerusalem and etc<sup>9</sup>. They began to translate not only biblical books and works of ancient and early Christian authors but also to compose original works that initiated the beginning of ancient Armenian literature which was closely connected to the life of the country and the fate of the people.

The Bible has books of verse: Job, Psalms, Proverbs, Song of Songs, Ecclesiastes, Lamentations Jeremiah, in which there are many verses that are blessings, hymns, lamentations, praises, and admonitions. Although the Armenian translation was made from Greek, the influence of Hebrew is also felt<sup>10</sup>.

In Hebrew, for example the poem is unrhymed but the long and short lines have a non-releasable boundary, a disturbance of the rhythm of speech. The lines don't rhyme the same way, it's the content that important. Often the next line is a repetition of the content of the previous one but with a completely different wording so that the lines are separated<sup>11</sup>.

Example: Psalm 150

1. Praise God in his sanctuary; praise him in his mighty heavens. (Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան նորա, օրհնեցէք զնա ի հաստատութեան զօրութեան). 2. Praise him for his acts of power; praise him for his surpassing greatness. (Օրհնեցէք զնա ի զորութեան նորա, օրհնեցէք զնա ի բազում մեծութեան նորա). 3. Praise him with the sounding of the trumpet; praise him with the harp and lyre. (Օրհնեցէք զնա ի ձայն օրհնութեան, օրհնեցէք զնա սաղմոսիւք եւ օրհնութեան)

<sup>9</sup> **Claude E. Cox**, *The Armenian Translation of the Bible*.

[https://www.academia.edu/3796949/The\\_Armenian\\_Translation\\_of\\_the\\_Bible](https://www.academia.edu/3796949/The_Armenian_Translation_of_the_Bible).

<sup>10</sup> **Graham S. Ogden**, *Translating Psalm 10:11*, Bible translator, 42.2, pp.231-233.

<sup>11</sup> **Jefim Schirmann**, *Hebrew Liturgical Poetry and Christian Hymnology*, The Jewish Quarterly Review, Vol. 44, No. 2, 1953, pp. 124-125.

եամբ). 4. Praise him with timbrel and dancing; praise him with the strings and pipe. (Օրհնեցէ՛ք զնա ցնծութեամբ, գովեցէք զնա ուրախութեամբ).

5. Praise him with the clash of cymbals; praise him with resounding cymbals. (Օրհնեցէ՛ք զնա ի բանս քաղցունս, օրհնեցէ՛ք զնա ի ձայն գոհութեան)<sup>12</sup>:

It is obvious that the Armenian translation is close to the original, since it retains the main features of ancient poetry, especially the rhythm and repetition of lines. It should be noticed that this is not just a repetition. The lines complement each other in various subtleties, making the speech more lyrical and affecting.

The Book of Proverbs is also interesting and stands out for its semantic contrast of lines. The thought expressed in the first line of Solomon's parable is contrasted with the content of the next, and the meaning of the parable is expressed by the merger of the two opposing thoughts.

Example: Parables

8. Listen, my son, to your father's instruction and do not forsake your mother's teaching. (Լու՛ր, որդեակ, իրաստ հօր քո, եւ մի՛ մերժեր զօրէնս մօր քո). 9. They will be a garland to grace your head and a chain to adorn your neck. (Զի պսակ շնորհաց ընկալցի գլուխ քո, եւ մանեակ ոսկի ի պարանցի քում). 15. My son, do not go along with them, do not set foot on their paths (Որդեակ, մի՛ երթար ճանապարհ ընդ նոսա, իտտորեա զոտն քո ի շաւղաց նոցա). 16. For their feet rush into sin, they are swift to shed blood (Զի ոտք նոցա ի չարիս ընթանան, եւ երագունք են ի հեղուլ զարիւն). 25. Since you ignored all my advice and would not accept my rebuke (Այլապախտ առնէիք զխորհուրդս իմ, եւ յանդիմանութեանց իմոց ոչ անսայիք).

The Bible vocabulary is comprehensible and picturesque. Brief and detailed comparisons, metaphors, expressive means of language are scattered throughout the Holy Book, and from here the Armenian authors learned the speech art. There are various stylistic treatments of the Song of

<sup>12</sup> Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց, Վիեննա, 1929: *Biblia Hebraica* Stuttgartensia, 1977.

Songs, Psalms, Proverbs, and other books: one as a lyric poem, as wisdom or advice, another as an admonition, and a covenant as well as morality and history. Moreover, there should be added the phrases of the Holy Book, winged words, wise sayings, and proverbs, which are big and steady steps leading the language to stable development and improvement. The Armenian language not only developed the figurative thinking skills of the biblical language, but also became a guide and beacon on the long and dangerous path of the Armenian people.

### Conclusion

The study of the history of a language requires reliance on precisely dated monuments, and the Armenian translation of the Bible fully meets this requirement, since it is one of the rare originals of the 5th century. Actually, the language of today's Armenian Bible is the linguistic state of the 30s of the 5th century, after which it was not subjected to radical proofreading. Armenian translators turned the Bible into a self-standing book, nationalizing and making it Armenian.

### References

- Arakelyan V.D., *Language and Style of Armenian Translated Literature of the Fifth Century*, 1984, Pub. of the Academy of Sciences of Arm. SSR, Yerevan, p.18.
- Arevshatyan S. S., *Formation of philosophical science in ancient Armenia (V-VI centuries)*, Pub. of the Academy of Sciences of Arm. SSR, Yerevan, 1973, pp. 142-143.
- Biblia Hebraica Stuttgartensia, 1977.
- Biblical Literature: The Armenian Version  
<https://www.britannica.com/art/Armenian-literature>
- Claude E. Cox, *The Armenian Translation of the Bible*.  
[https://www.academia.edu/3796949/The\\_Armenian\\_Translation\\_of\\_the\\_Bible](https://www.academia.edu/3796949/The_Armenian_Translation_of_the_Bible)
- Danielyan E.L., *The Historical Significance of Armenian Writing, Translation and Original Literature in the Aspect of the Dialogue of Civilization*, <https://fundamentalarmenology.am/datas/pdfs/194.pdf>
- Graham S. Ogden, *Translating Psalm 10:11.*-"Bible translator," 42.2, pp.231-233.
- Hacikian Agop Jack, Basmajian Gabriel, Franchuk Edward S., Ouzounian Nourhan. [\*The Heritage of Armenian Literature: From the Oral Tradition to\*](#)

*the Golden Age*. Wayne State University Press, 2000, Vol. I., p. 97.

[https://books.google.am/books?id=uvA-oV0alP8C&pg=PA23&hl=hy&source=gbs\\_toc\\_r&cad=3#v=onepage&q&f=false](https://books.google.am/books?id=uvA-oV0alP8C&pg=PA23&hl=hy&source=gbs_toc_r&cad=3#v=onepage&q&f=false)

Jefim Schirmann, *Hebrew Liturgical Poetry and Christian Hymnology*.—"The Jewish Quarterly Review", Vol. 44, No. 2, 1953, pp. 124-125.

[John Wilson, \*Oral Culture and Written Scripture\*. - "Bible Translator", 44. 2 \(April 1993\), p. 234-242.](https://archive.translation.bible/tbt/1993/02/TBT199302.html?num=234&x=-365&y=-78&num1=)

<https://archive.translation.bible/tbt/1993/02/TBT199302.html?num=234&x=-365&y=-78&num1=>

G. Zarphanalian, *Matenadaran of Ancient Armenian Translations (IV-XIII centuries)*, Venice, 1889, pp. (Ե-ԻԱ), 5-21

Юнгеров П. А., *Введение в Ветхий Завет. Книга 1, Язык перевода* LXX. стр. 338.

<http://saint-serge-russe.com/wp-content/uploads/2016/10/07.-YUngerov-Vvedenie-T.1.pdf>

Աստուածաշունչ մատեան շին եւ Նոր Կտակարանաց, Վիեննա, 1929:

**Մխիթարյան Գայանե – Աստվածաշնչի թարգմանությունը որպես հայոց լեզվի պահպանման և զարգացման գործոն.** - Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը մեծ ազդեցություն է ունեցել հայ ժողովրդի մշակութային կյանքի գրեթե բոլոր բնագավառների վրա՝ ձևավորելով հայ ազգային գիտական միտքը: Հայոց մշակույթի, առավել ևս հայոց արժեքային համակարգի վրա Ս.Գրքի գործած ազդեցությանն անդրադառնալիս ընդգծվում է հատկապես լեզվի դերը. լեզու, որի ծաղկումը V դարում պայմանավորված էր Աստվածաշնչի հայերեն թարգմանությամբ: Գրերի գյուտը ևս միտված էր Աստվածաշնչի թարգմանությանը և Ս.Գրքի բովանդակությունը բնակչությանը հասու դարձնելուն: IV դարում ազգային ինքնապաշտպանության խնդիրը պետական և հոգևոր գործիչներին մրդեց մասնատված ժողովրդի ներքին դիմադրության կազմակերպման և համախմբման գաղափարին: Մեր օրերում ևս արդիական է Ս.Գրքի թարգմանությանն անդրադառնալը՝ պայմանավորված ներկայիս աշխարհքաղաքական նոր զարգացումներով, հայկական

պետականության պահպանման գաղափարով, ինչպես նաև անցյալի օրինակով ժամանակակիցներին ոգեշնչելու անհրաժեշտությամբ:

**Բանալի բառեր.** Աստվածաշունչ, հայոց գրեր, գրաբար, թարգմանություն, բառապաշար, խոսակցական հայերեն, ազգային գիտական միտք:

Մխիթարյան Գայանե, բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ավագ գիտաշխատող: [gayane.mkhitaryan@lang.sci.am](mailto:gayane.mkhitaryan@lang.sci.am)

**Мхитарян Гаяне - Перевод Библии как фактор сохранения и развития армянского языка.**- Армянский перевод Библии оказал большое влияние практически на все сферы культурной жизни армянского народа, сформировав армянскую национальную научную мысль. Говоря о влиянии Священного Писания на армянскую культуру, особенно на систему ценностей армян, особо подчеркивается роль языка, расцвет которого в V веке был обусловлен переводом Библии на армянский язык. Изобретение письменности также было направлено на перевод Библии и на то, чтобы сделать содержание Священного Писания доступным для населения.

В наши дни актуально обращаться к переводу Священного Писания в связи с текущими геополитическими событиями, идеей сохранения армянской государственности, а также необходимостью вдохновлять современников примером прошлого.

**Ключевые слова:** Библия, армянская письменность, Грабар, перевод, лексика, разговорный армянский язык, национальная научная мысль.

Мхитарян Гаяне – кандидат филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, старший научный сотрудник. [gayane.mkhitaryan@lang.sci.am](mailto:gayane.mkhitaryan@lang.sci.am)

## ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

### ՉԺԽՏԱԿԱՆ ՆԱԽԱԾԱՆՑՈՎ ԴԻՊԿԱԾԱՅԻՆ ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ\*

#### Գրիգորյան Գայանե

բանասիրական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,  
գիտաշխատող. gayane.grig.grigoryan@gmail.com

**Բանալի բառեր.** բառապաշարի փոփոխություն, չ ժխտական նախաձանց, դիպվածային նորակազմություններ, ժխտում-հակադրում:

#### Նախաբան

Հայտնի է, որ լեզուն անընդհատ փոփոխվում և զարգանում է: Փոփոխության է ենթարկվում առաջին հերթին բառապաշարը. ստեղծվում են նոր բառեր. որոշ բառեր դառնում են համագործածական, որոշ բառեր էլ մնում են դիպվածային և հազվադեպ են կիրառվում: Ինչպես նշում է Հ. Պետրոսյանը, «Լեզվի բառապաշարը գտնվում է անընդհատ փոփոխությունների մեջ. այն ավելի հեշտ է ենթարկվում գործոնների ազդեցության, զգայուն է բնության մեջ ու հասարակական կյանքում կատարվող տեղաշարժերի նկատմամբ, դրանց ուղեկցում է բառեր կորցնելով, դուրս մղելով և նորերը ստեղծելով»<sup>1</sup>:

Բառապաշարի փոփոխության ցայտուն օրինակներ են նորակազմությունները, որոնց մեջ առանձին խումբ են չ ժխտականով կազմությունները. դրանք հիմնականում դիպվածային են:

\* Ներկայացվել է 10.04.2022, գրախոսվել՝ 18.04.2022:

<sup>1</sup> Հ. Պետրոսյան, *Հայերենագիտական բառարան*, Ե., 1987, էջ 116-117:

Թեման արդիական է, քանի որ քննվում և դասակարգվում են ժամանակակից արևելահայերենի՝ մասնավորապես նրա խոսակցական տարբերակում ի հայտ եկած դիպվածային նորակազմությունները: Ուսումնասիրության նպատակն է՝ ներկայացնել խոսակցական լեզվում գործածական չ ժխտական նախածանցով դիպվածային բառերը, ցույց տալ դրանց իմաստային առանձնահատկությունները, գործածության հաճախականությունը՝ կիրառելով նկարագրական-վերլուծական, ինչպես նաև համեմատության մեթոդները:

Բառարաններում չ գլխաբառի ներքո հանդիպում են գրեթե նույն նկարագրությունները: Ներկայացնենք մի երկուսը: Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ում չ-ն հետևյալ կերպ է բացատրվում. «Չ, Չա, Չայ, գ. 1. Հայերեն այբուբենի քսան և հինգերորդ գիրը և տասնհիններորդ բաղաձայնը: ... 2. Չ (ձայնաւորից առաջ՝ չ, բաղաձայնից առաջ՝ չը), (բացասական մասնիկ, առաջ եկած Ոչ՝ի տղումից), 1. Գործ է անելով բայերի հետ՝ կցվելով սկզբին, ոչ՝ի նշանակութեամբ: *Չասել, չիմանալ, ...* 2. Գոյական և անական անունների սկզբից կցվելով՝ հերքում է այդ անունների նշանակութիւնը, ցոյց է տալիս որ նրանք չունին իրանց նշանակած յատկութիւնը: *Չախորժելի* (ոչ ախորժելի), *չանարգական*, (ոչ անարգական), *չանձնաւոր* (ոչ անձնաւոր), *չգիտութիւն* (չգիտենալը, գիտութեան բացակայութիւն), *չգազան* (ոչ գազան, գազանութիւն չունեցող), *չտես* (չտեսած), *չգոյ* (ոչ գոյ, գոյութիւն չունեցող): 3. Գոյականների սկզբից կցվելով՝ տալիս է բառին հակառակ նշանակութիւն, անարգական մտքով, իբրև անպիտան, անարժան այդպէս կոչվելու: *Չազգ* (անպիտան ազգ), *չաստուած* (սուտ աստուած, որ սխալմամբ աստուած անունն է կրում)»<sup>2</sup>:

<sup>2</sup> Ստ. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, հ. IV, Ե., 1945, էջ 7:



«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»-ում այբուբենի 25-րդ տառը լինելու, անվանման և թվային արժեքի հետ միասին նշվում է չ-ի ժխտական նախածանց լինելը, որը «գործածվելով բայերի հետ՝ կցվելով սկզբից՝ ժխտում է բայի արտահայտած գործողության իմաստը. *չանել, չերևալ, ...* 2. Որոշ բայարմատների սկզբից դրվելով և ժխտելով նրանց իմաստը՝ կազմում է ածական անուններ. *չբեր, չկամ, չհաս, չտես*, 3. մի քանի ածական և գոյական անունների կցվելով՝ ժխտում է նրանց արտահայտած իմաստը. *չխոսկան, չունևոր*: 4. (հզվդ.) Որոշ գոյականների սկզբից ավելանալով՝ տալիս է նրանց հակառակ, անարգական կամ ծաղրական իմաստ՝ *չմարդ, չաշխատավարձ*»<sup>3</sup>:

Մ. Աբեղյանը, անդրադառնալով բացասական մասնիկներին, նշում է, որ «...առաջադիր մասնիկների կամ նախամասնիկների մեջ առանձին տեղ են բռնում *ան, ապ, դժ, տ, չ*, որոնցով կա՛մ բացասվում է բառի հիմնական նշանակությունը, կա՛մ ցույց է տրվում մի հատկություն, մի բան չունենալը»<sup>4</sup>: Չ ժխտական նախածանցի հետ կապված՝ գրում է. «2 - որոշ թվով բառերի հետ, ինչպես՝ *չբեր* (ամուլ), *չկամ*, *չխոսկան*, *չտես*, *չլուր*, *չհաս*. նաև անարգական իմաստով, ինչպես՝ *չազգ*, *չգարդ*, *չաստված*, *չմարդ-չմարդահավան*»<sup>5</sup>: Գ. Ջահուկյանը, խոսելով ժխտական մասնիկների մասին, նշում է, որ չ-ն «հանդես է գալիս որպես ածականակերտ ածանց՝ *չբեր, չխոս (կան), չկամ, չհաս, չտես* և այլն. չ-ով բառերը փաստորեն չձևավորված ժխտական դերբայների արժեք ունեն՝ *չբեր=չբերող, չկամ=չկամեցող, չտես=չտեսած* և այլն»<sup>6</sup>:

### Լեզվական և վիճակագրական վերլուծություն

Դասագրքերում և ուսումնական ձեռնարկներում չ ժխտական մասնիկը ներկայացվում է 2 բաժիններում՝ բառակազմության

<sup>3</sup> Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Ե., 1980, հ. IV, էջ 123:

<sup>4</sup> Մ. Աբեղյան, *Երկեր*, հ. 2, Ե., 1974, էջ 179:

<sup>5</sup> Մ. Աբեղյան, նույն տեղում, էջ 180:

<sup>6</sup> Գ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., 1974, էջ 156-157:

մեջ, որում չ-ն ածանց է՝ ժխտման իմաստով, և ձևաբանության մեջ՝ բայի ժխտական ձևերի կազմության ժամանակ:

Արդ, մեզ հետաքրքրում է չ ժխտական նախածանցը, որը, դրվելով անուն խոսքի մասերին պատկանող բառերի վրա, արտահայտում է հակադիր, երբեմն՝ անարգական, ծաղրական իմաստներ: Ի դեպ, այս բառերը շատ չեն, այլ ընդամենը մի քանի տասնյակ, որոնք ներկայացրել ենք աղյուսակով՝ ցույց տալու դրանց գործածության հաճախականությունը՝ ըստ գրականության ցանկում նշված բառարանների: Ներկայացված բառացանկում կան բառեր, որոնք ստեղծվել և գործածվել են վերջին տարիներին և հիմնականում արձանագրված չեն բառարաններում (դիտարկվել են 12 բառարաններ)<sup>7</sup>, ՋԼՄ-ներում՝ համացանցային սոցկայքեր, մամուլ, հեռուստատեսություն և ռադիո, յուրուբյան հարցազրույցներ և այլն:

Բառարաններից առաջին հերթին առանձնացվել են չ-ով ժխտական իմաստ արտահայտող, ոչ բայ, անուն խոսքի մասի պատկանող բառերը: Եթե հաշվի չառնենք չ ժխտական նախածանցով (ուրացական մասնիկներ, ժխտական ածանցներ, ժխտա-

<sup>7</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Ե., 1979: Սո. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, հ. 4, Ե., 1945: *Շամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, հ. IV, Ե., 1980: **Գնէլ արքեպիսկոպոս ՃԼԻՃԵԱՆ, Փարամազ Կ. Տօնիկեան և Արտաշէս Տէր Խաչատուրեան**, *Հայոց լեզուի նոր բառարան*, ՊԷՐՄԻՅ, 1992: **Ս. Գալստյան**, *Դպրոցական բառակազմական բառարան*, Ե., 2014: **Ա. Սուքիասյան, Զ. Սուքիասյան**, *Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան*, Ե., 2002: **Գ. Ջահուկյան**, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010: **Առցանց բառարանը** (<https://bararanonline.com/>), որն ընդգրկում է հետևյալ բառարանները (շուրջ 136000 բառ և 11000 դարձվածաբանական միավոր)՝ **Է. Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ա. Սուքիասյան, *Հայոց լեզվի հոմանիշների բառարան*, **Ե. Գալստյան**, *Հայ-ռուսերեն բառարան*, *Հակահիշների բառարան* (միավորված մի քանի աղբյուրներից), *Հայերեն-անգլերեն բառարան*, **Ա. Ղարիբջան**, *Ռուսերեն-հայերեն բառարան*: **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, Ե., 1977: *Նոր բառեր*, պրակներ Ա-Զ, Ե., 2015-2021: **Փ. Մելքիսյանյան**, *Նոր բառերի բացատրական բառարան*, Ե., 1996: **Ս. Էլոյան**, *Արդի հայերենի նորաբանությունների բառարան*, Ե., 2002:

կան նախամասնիկներ)<sup>8</sup> կազմված ածականների շարքը (*չբեր, չկամ, չհաս, չխոս, չխոսկան, չտես, չյուր, չգետ*), ապա մեր ուսումնասիրած բառարաններում չ ժխտականով կազմված բառերի քանակը մի քանի տասնյակ է: Նշենք, որ բառարաններից հավաքած ցանկերում չենք ներառել չ ժխտական նախաձեռնումով վերը նշված ածականները, որոնց անդրադարձել են շատ լեզվաբաններ՝ բավարար չափով ուսումնասիրելով դրանք:

Ամենից շատ բառեր (135) առկա են Մտ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ում: «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանից ընտրվել է 67 բառ, «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»-ից՝ 26, «Հայոց լեզուի նոր բառարան»-ից՝ 12, «Դպրոցական բառակազմական բառարան»-ից՝ 18, «Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան»-ից՝ 16 բառ և այլն: Վերջին տարիներին տպագրված նոր բառերի բառարաններից երկուսում «Նոր բառերի բացատրական բառարան», «Նոր բառերի» պրակներ չ ժխտականով կազմված բառերի քանակը 6-7 է<sup>9</sup>:

Լեզվաբանական ուսումնասիրություններում նշվում է, որ չ նախաձեռնոցն արտադրողական չէ. դրանով սակավաթիվ բառեր են կազմվել ինչպես գրաբարում, այնպես էլ հետագայում<sup>10</sup>: Սակայն վերջին տարիներին այդ պնդումը կասկածի տեղիք է տալիս, քանի որ նկատելի են չ ժխտական մասնիկով բազմաթիվ և բազմապիսի նոր կազմություններ:

Ակնհայտ է, որ վերջին տարիներին հասարակության ուշադրությունը բնեռված է քաղաքական, իրավական, հասարակական դաշտին, և այդ պայքարի լարված մթնոլորտում ստեղծվել են այս ժամանակահատվածին բնորոշ բառեր կամ բառաձևեր, որոնք ա-

<sup>8</sup> Հ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարազյուլյան, *Լեզվաբանական բառարան*, Ե., 1975, էջ 115:

<sup>9</sup> Excel ծրագրով առկա է նշված բոլոր բառարաններից հավաքած բառերի հավելվածը, որը ծավալուն է, կարելի է ձեռք բերել ցպահանջ:

<sup>10</sup> Լ. Մանթրյան, *Ժխտման արտահայտությունը հայերենում*, Ե., 2011, էջ 35:

ռավելապես քննադատական են. դրանցում երբեմն նկատելի են նույնիսկ ասեղության և դժգոհության երանգներ, ժխտումներ, որոնք ցայտուն երևում են ստորև ներկայացվող օրինակներում.

- Մենք խոսում ենք Հայաստանի ձեռքբերումներից կամ *չձեռքբերումներից*:
- Սա պետություն չէ, սա *չպետություն* է:
- Նա խոսում է մեղավորների, *չմեղավորների* մասին:
- Որպեսզի խորհրդարանը արձակվի, այս դեպքում *չընտրություն* է պետք:
- Թե իրենց *Չնախագահներն* ինչպես դարձան միլիարդատերեր:
- Գուցե քննադատելի ուստիկանության ապուշ *չմեկնաբանություններ*:
- Դուք շատ էիք, դրա համար դուք որոշեցիք մեր *ՉԱՊԱԳԱՆ*:
- Անհերքելի է նաև, որ 18 թվականի *չհեղափոխությունը* Կրեմլը կազմակերպեց:
- Էս դեգեներալներին քի՞չ էին չթոչող ՍՈՒ *չինքնաթիռներն* ու չպայթող *չիսկանդերները*:
- Իսկ եթե *չսերը* տան անդամ է....
- Քաղաքական դաշտում չկա *չնախկին*:
- Այդ ընտրությունները եղել են *չընտրություններ*:
- Գերիների *չվերադարձի* մասով....
- *ՉԵրևան*:
- Ասեմ ավելին, այդ *չմարդները* անգամ գրում են, որ գերիները հերոսներ չեն:
- Մյուս «*չերգիչների*» պարագայում, ինչպես նրանց ներկայացնում էին նախագծում, դա այդպես չէր:
- .... որից գողացված հացի մասին վայրահաչեց իր ողջ քաղաքական *չգործունեության* ընթացքում: Եվ դեռ կան հարյուր հազարավոր *չմարդիկ*, որոնցից յուրաքանչյուրն իր տհասության չափով հավատում է այս առասպելական հրեշին:

Հարկ է նկատել, որ չ ժխտականի գործածությամբ ավելի է ընդգծվում ժխտումը (սովորական ժխտման կամ *ոչ* մասնիկով

ժխտման համեմատ), քանի որ լինելով ոչ սովորական կազմություն՝ ուշադրությունն ավելի է սևեռում ժխտման փաստին և որոշակի նրբերանգ հաղորդում (համեմատիր՝ *ոչ-իշխանություն* և *իշխանություն*):

Առանձնացվել է 109 դիպվածային միավոր. 87 տոկոսը գոյականներ են, 13 տոկոսը՝ ածականներ, օրինակների մեջ կա չ ժրխտականով կազմված մեկ մակբայ՝ *չգիտակցաբար*: Թեև ուսումնասիրության նյութից դուրս են բայերի ժխտական կազմությունները, սակայն առկա է բայական գործածության մեկ դեպք, որն անկանոն է այնքանով, որ չ ժխտական մասնիկը, որը սովորաբար դրվում է օժանդակ բային կից, այս դեպքում կցվել է անկատար դերբային՝ իմաստային նրբերանգ հաղորդելով նախադասությանը (Չապրում ենք՝ կարծելով թե ապրում ենք...):

Գոյականների մեջ առանձին խումբ են կազմում *-ություն* վերջածանցով բառերը (34 բառ)՝ *չհեղափոխություն, չընտրություն, չգոյություն, չպետություն, չցանկություն* և այլն:

Գոյականների մեջ մեկ այլ խումբ են կազմում *-ում* վերջածանցով և բայարմատով կազմված բառերը (8 բառ)՝ *չձեռքբերում, չբավարարում, չհեռացում, չբարեփոխում, չկատարում (2 անգամ), չհանձնում, չշահում*:

Արդ, հարկ է ներկայացնել՝ 1) բառարանից բառարան կրկրնվող բառերը, այսինքն՝ նրանք, որոնք կան ուսումնասիրված 12 բառարաններից գոնե երկուսում, 2) այն բառերը, որ տեղ չեն գտել բառարաններում, դիպվածային են, բայց գուցե մի օր հայտնվեն նոր կազմվելիք բառարաններում, և վիճակագրական տվյալներից ելնելով՝ ցույց տալ՝ որոնք են չ ժխտականով կազմված ամենից հաճախ գործածված բառերը:

1. Համեմատությամբ պարզվում է, որ դիպվածային բառերի մի մասն առկա է մի քանի բառարաններում, սակայն կան բառեր, որոնք հանդիպում են միայն մեկ բառարանում (օրինակ՝ *չախորժելի, չահավոր, չաջողակ, չայնպիսի, չանարգական, չբարկություն*, և այլն):

Ստորև ներկայացվում են չ ժխտականով կազմություններից առավել շատ բառարաններում տեղ գտած բառերը՝

- Չմարդ – 19
- Չաստուած/ Չաստված - 11
- Չեպիսկոպոս – 4
- Չէական – 4
- Չէություն – 4
- Չերեց – 2
- Չգիտանք – 3
- Չմեղ (արմատով) - 9
- Չուտելի(ք) – 4
- Չքահանայ – 6
- Չգոյ արմատով – 16

2. Մեր ուսումնասիրած 109 բառերի շարքում, ըստ գործածության հաճախականության, առաջին տեղում են *չհեղափոխություն* և *չընտրություն* բառերը, որոնք կրկնվել են 8-ական անգամ: Ընդհանուր պատկերը հետևյալն է՝

- Չհեղափոխություն - 8
- Չընտրություն – 8
- Չմարդ - 6
- Չգոյություն - 6
- Չկաթողիկոս - 5
- Չբարեփոխում - 3
- Չդերասան - 3
- Չքաղաքական - 3
- Չպետություն - 2
- Չնախագահ - 2

Կազմված բառաշարքի բառերի 6 տոկոսը կա բառարաններում, 94 տոկոսը նոր կազմություններ են: Կրկնվող բառերից են՝ *չկաթողիկոս*, *չգոյություն*, *չմարդ*, *չընտրություն* (առկա է միայն 1

բառարանում)<sup>11</sup>, *չնախագահ* (առկա է միայն 1 բառարանում)<sup>12</sup>, *չաստված*:

Ամբողջովին նոր կազմություններից են (ավելի ճշգրիտ՝ չկան նշված 12 բառարաններում)՝ *չինքնաթիռներ*, *չխեղճ*, *չհարգելի*, *չսեր*, *չնախկին*, *չցանկություն*, *չիշխանություն*, *չպետություն*, *չդե-րասան*, *չհեղափոխություն*, *չընտրություն*, *չհերոսներ*, *չդեկավար*, *չխորհրդանիշ*, *չիրավարան*, *չմասնագետ*, *չմահ*, *չպատերազմ*, *չհիվանդություն* և այլն:

Չ ժխտականն ակտիվ կիրառելու փաստի մասին է խոսում նաև մեկ օրինակ, որը հանդիպեց համացանցում սույն երևույթն ուսումնասիրելիս: Երբորդ դասարանի դպրոցական մի ծրագրում պահանջվում էր կազմել բառեր, որոնք սկսվում էին չ-ով: Աշակերտները հիանալիորեն զգացել էին չ ժխտականի իմաստը և կազմել բառեր՝ *չբարև*, *չխորհրդանիշ*, *չծառ*, *չհասմիկ*, *չտուն*, *չհե-ռախոս*, *չֆոտոխցիկ*, *չհամակարգիչ*, *չհագուստ*, *չնապաստակ* և այլն: Մեկ նախադասություն էլ կազմել էին, որում ցայտուն արտահայտվում էր չ-ի ոչ միայն ժխտականությունը, այլև ժխտողականությունը. «Նա բացատրեց, որ այդ քաղաքի մարդիկ այնքան ցավ ու տառապանք են տեսել, որ մտածել են՝ եթե ցավ պատճառող բառերը չ-ով սկսվեն, այլևս չեն տառապի: Օրինակ՝ *չմահ*, *չպատերազմ*, *չհիվանդություն*, *չհանցագործություն*»<sup>13</sup>: Երեխաների կազմած չ-ով բոլոր բառերը գոյականներ են:

## Եզրակացություն

Այսպիսով՝ որպես ամփոփում՝ նշենք, որ.

<sup>11</sup> Ս. Էլոյան, *Արդի հայերենի նորաբանությունների բառարան*, էջ 386:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 387:

<sup>13</sup> Երևույթը նման է Անահիտ՝ «անբիծ, անարատ» նշանակությամբ բառի կազմությանը, որում, ըստ Աճառյանի, առ բացասական մասնիկն է և ahita «պիղծ, կեղտոտ» բառը: Առ բացասական մասնիկը, կցվելով ahita «պիղծ, կեղտոտ» բառին, նրան տալիս է հակադիր նշանակություն՝ «անբիծ, անարատ»: Տե՛ս Ն. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հ.1, Ե., 1942, էջ 145:

1. Ժողովուրդը չի դադարում ստեղծագործել, բառաստեղծել, բառերից ստեղծել «Չբառեր»:
2. Չ ժխտականով կազմված դիպվածային բառերի գերակշիռ մասը գոյականներ են:
3. Գոյականների մեջ առանձին խումբ են կազմում *-ու՛մ* վերջածանցով և բայարմատով կազմված բառերը, ինչպես նաև *-ու՛թյուն* վերջածանցով կազմությունները: 94 տոկոսը նոր կազմություններ են (չկան բառարաններում):
4. Մարդիկ, մասնավորապես երեխաները, չ ժխտական մասնիկի գործածության տեսակների մեջ ստեղծել են չ ժխտական մասնիկի նոր՝ հակադրության գործառույթը, որը ցայտուն երևում է չ-ով կազմություններում (*չմահ, չպատե-րազմ*):

#### Օգտագործված գրականություն

- Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1977:
- Գալստյան Ս., Դպրոցական բառակազմական բառարան, «Ձանգակ» հրատ., Ե., 2014:
- Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, «Նաիրի» հրատ., Ե., 2002:
- Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., հ. IV, հրատ., Ե., 1980:
- Ճերէճեան Գնէլ արքեպիսկոպոս, Փարամազ Կ. Տօնիկեան եւ Արտաշէս Տէր Խաչատուրեան, Հայոց լեզուի նոր բառարան, Կ. Տօնիկեան եւ Որդիք հրատարակչատուն, Պէյրոթ, 1992:
- Մալխասեանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. IV, Հայկական ՄՍՌ պետ. հրատ., Ե., 1945:
- Մէյթիխանյան Փ., Նոր բառերի բացատրական բառարան, Ե., «Փյունիկ», 1996:



Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Երևանի համալսարանի հրատ., հ. 2, Ե., 1979:

Նոր բառեր, պրակներ Ա-Զ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» Ե., 2015-2021:

Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, «Հայաստան» հրատ., Ե., 1987:

Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարազյուլյան Թ., Լեզվաբանական բառարան, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., Ե., 1975:

Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, «Ասողիկ» հրատ., Ե., 2010:

Ջահուկյան Գ, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., Ե., 1974:

Սանթրյան Լ., Ժխտման արտահայտությունը հայերենում, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ, Ե., 2011:

Սուքիասյան Ա., Սուքիասյան Ք., Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան, Մակմիլան Արմենիա, Ե., 2002:

**Grigoryan Gayane - Occasional New Formations with the Negative Prefix չ[չ].** - The language is a living organism and is constantly changing. First of all, the vocabulary is changing. New words are created, some words continue to be used, become commonly used, some words are used accidentally and are rarely used. In this process of vocabulary changing, there is a separate group which consists of words with the negative prefix չ[չ]. These words are mostly coincidental and have not found a place in dictionaries. This group of words is not numerous, just a few dozen, which were analyzed in the article from different angles, according to which the negative prefix չ[չ] became more active and more emphasizes the negation in these random constructions.

**Keywords:** vocabulary change, negative suffix, accidental new formations, negation-opposition.

Grigoryan Gayane, PhD of Philology, Institute of Language named after H. Acharyan of NAS RA, Researcher.

**Григорян Гаяне - Случайные новообразования с отрицательным суффиксом չ[ʃ].** - Язык - живой организм и постоянно меняется. В-первых, меняется словарный запас. Создаются новые слова, некоторые слова продолжают употребляться, становятся общеупотребляемыми, некоторые слова употребляются случайно и используются редко. В изменение словарного запаса отдельную группу составляют слова с отрицательным суффиксом չ[ʃ], которые в преобладающей части являются случайными и не нашли места в словарях. Этим словам не много, всего несколько десятков, которые в статье были проанализированы с разных сторон, согласно которым отрицательная частица չ[ʃ] стала более активной и больше подчеркивает отрицание в этих случайных конструкциях.

**Ключевые слова:** изменение лексики, отрицательный суффикс, случайные новообразования, отрицание-противопоставление.

Григорян Гаяне, кандидат филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, научный сотрудник.

## ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ\*

**Մարաշյան Հարութ**

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,  
կրտսեր գիտաշխատող.harout.k.marashlian@gmail.com

**Բանալի բառեր.** արևմտահայերեն, բառարան, բառիմաստի քննություն, նորաբանություն, համընդհանուր լեզվաբանական տեսություն, լեզվաբանական կարգեր, գոյորոշ և առգոյորոշ կարգեր, բառաձանցում:

### Նախաբան

Անցյալ տարի լույս տեսած արևմտահայերենի նորաբանությունների բառարանի<sup>1</sup> ընդգրկած բառապաշարը այս հայեցակետով՝ իմաստաբանական, չի քննվել առ այսօր, ուստի այս հոդվածը նպատակ ունի նախ՝ Գ. Ջահուկյանի մշակած իմաստաբանական և բառակազմական տեսական միասնական սկզբունքների հիման վրա քննելու հիշյալ բառարանի բառամթերքը՝ մասնավորապես ածանցավոր բառերի իմաստային բնութագրումը և կազմությունը, ապա, այդ քննության արդյունքները նկատի ունենալով, նպաստելու նոր բառերի (արևմտահայերեն և արևելահայերեն) իմաստային ճշգրիտ բնութագրման և կազմության բազմազանությանն ու գիտական հիմնավորվածությանը:

Նորակազմ բառերի իմաստաբանական քննություն ասելով՝ նկատի ունենք համընդհանուր լեզվաբանական տեսության մշակած կարգերի՝ սուբստանցիոնալ-գոյաբանական, իրադրական, լեզվագործառական, տրամաբանական-իմացաբանական, հիման

\* Ներկայացվել է 14.09.2022, գրախոսվել՝ 30.09.2022:

<sup>1</sup> *Նոր բառեր արևմտահայերենի մէջ*, Ա. գիրք, Կազմողներ՝ Ս. Տիոյեան, Ա. Ֆիշենկճեան, Հ. Մարաշլեան, Ե., 2021:

վրա կատարված քննություն, այսինքն՝ «...բառիմաստների այդպիսի քննությունը պետք է նկատի ունենա, որ մինևույն իմաստները կարող են արտահայտվել միանգամայն տարբեր խոսքի մասերով և լեզվական կախման տարբեր (լրացյալի, լրացման, ենթալրացման) տիպերով. հմմտ. լեզվում գոյություն ունեն հատուկ ածանցներ, որոնք կարող են մի խոսքի մասից մի այլ խոսքի մաս կերտել առանց բուն իմաստի փոփոխության՝ *ընկեր- ընկերական-ընկերաբար, մեծ- մեծություն- մեծապես*»<sup>2</sup>: Նման քննության դեպքում պետք է բացառել բառերի գործառական արժեքները՝ խոսքիմասային գործածությունները<sup>3</sup>:

### Բառերի իմաստային քննություն

Բառաձանցման տիպերի, եղանակների, տարբեր խոսքի մասերից ածանցման եղանակով նոր բառերի կազմության կաղապարների իմաստային քննությունը նույնպես ենթադրում է վերոհիշյալ կարգերի հիմքի վրա կատարված քննություն, այսինքն՝ ածանցների և նրանցով կազմված բառերի իմաստային քննությունը չի սահմանափակում նրանց գործառական արժեքով (գոյականակերտ, ածականակերտ), այլ ցույց է տալիս նրանց արտալեզվական արժեքը, որովհետև «... լեզուն ստեղծված է արտալեզվական աշխարհի առարկաները, երևույթներն ու հարաբերությունները արտահայտելու համար<sup>4</sup>», սա նշանակում է «որ մենք պետք է նախ քննենք իրական աշխարհի փոխհարաբերությունների հնարավոր տիպերը, ապա անցնենք լեզվին, որպես այդ փոխհարաբերությունների դրսևորումներից մեկի»<sup>5</sup>: Ուստի լեզվական իմաստների բնույթի հետ կապված հարցերի պարզաբանման փորձերը՝ մնալով

<sup>2</sup> Գ. Ջահուկյան, *Մամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն*, Ե. 1989, էջ 40:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 13:

<sup>5</sup> Գ. Ջահուկյան, *Մամանակակից հայերենի տեսության հիմունքներ*, Ե., 1974, էջ 17:

լեզվի սահմաններում, այսինքն՝ լեզվականը լուծել լեզվականով, մնում են թերի, ոչ ամբողջական:

Արտալեզվական աշխարհի առարկաներն ու հարաբերությունները արտահայտող բառերի (արմատական, ածանցավոր, բարդ) իմաստաբանական բնութագրումը պայմանավորված է գոյորոշ և առգոյորոշ կարգերով: Ըստ Գ. Ջահուկյանի՝ հիմնական կամ գոյորոշ կարգերը բնութագրվում են «նյութականություն, բաղկացականություն, որակայնություն» հատկանիշներով՝ արտահայտելով կազմի, քանակի, կախման, դասի, ձևի, չափի, ուղղության և տեղի իմաստներ: Գործընթացային կամ առգոյորոշ կարգերը բնութագրվում են ընթացայնության հատկանիշով՝ արտահայտելով պատճառայնության, համեմատության, հաճախայնության, կերպի, ընթացքի, տևողության, փոփոխության և ժամանակի իմաստները<sup>6</sup>: Այսպիսով՝ տեղի կարգը կամ ժամանակի կարգը, որոնք էլ բնութագրում են տվյալ բառի «արտալեզվական» իմաստը, բառի բացատրությունը չեն: Այս աշխատանքը նոր բառերի վերոնշյալ իմաստաբանական բնութագրման փորձ է՝ առանձնացնելով յուրաքանչյուր կարգին վերաբերող ածանցավոր բառերը և ցույց տալով մեկից ավելի կարգերով բնութագրվող բառերը:

Կազմի գոյորոշ կարգով են բնութագրվում, իրենց բառարանային տարբեր իմաստներով հանդերձ, հետևյալ բայերը՝ *բրզանալ*, *ընդխառնել*, *համակազմաւորել*, *համահիւսել*, *յօդատուիլ*: Կազմի իմաստին զուգահեռ բոլոր հինգ բայերին հատուկ է փոփոխության առգոյորոշ կարգը, իսկ վերջին *յօդատուիլ* բային հատուկ է նաև հաճախայնության կարգը՝ մեկից ավելի անգամ կատարված լինելու իմաստը, որն էլ ցույց է տալիս բառարանում մեջբերված օրինակ-նախադասությունը. «Խորանարդապաշտ նկարիչը զայն ենթարկեց իր անողոք քմայքներուն, իր ցանկատեսութեան, անոր կազմին տալով յօդատուած ձեւեր»<sup>7</sup>: Այս շարքում ուշագրավ է

<sup>6</sup> Գ. Ջահուկյան, *Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն*, էջ 16:

<sup>7</sup> Նոր բառեր արևմտահայերենի մէջ, էջ 100:

*բրզանայ* բայը, որը կազմի փոփոխության հետ արտահայտում է նաև թվի («դեզ, դիզել» իմաստով), չափի («մեծանալ, աճել» իմաստով) կարգերի իմաստներ:

Կազմի կարգի հատկանիշներով են բնութագրվում նաև հետևյալ գոյականները. *ամպոտում, ամպում, անմասնություն, զարդարաւորում, կարճում, յոդատում, լուծարկում, նահանջականություն*: Լրացուցիչ երկրորդ եզրի՝ ձևի իմաստ ունի *զարդարաւորում* բառը, իսկ *անմասնությունը* ժխտական իմաստ ունի՝ կազմում մաս, տեղ չունեցող, կազմից կախում չունեցող, հետևաբար նաև արտահայտում է կախման գոյորոշ կարգի իմաստ, ինչպես սույն նախադասության մեջ. «Պէտք չկայ պարագծելու այս արտադրութեան շրջարկը՝ յիսունական-վաթսունական թուականներու հայ բանաստեղծությունը, Սփիւռքի եւ Հայաստանի մէջ, հաստատելու համար անոր անմասնությունը ժամանակէն»<sup>8</sup>:

Տեղի (դիրքի) կարգով կարելի է բնութագրել հետևյալ բայերն ու գոյականները. *պատնէշանալ, վերացականացնել, վերկայացնել (վերկայացում), թանգարանում, դրսություն, անդրահայեցություն, արտաբեւեռացում, ենթաբնաբան, ենթախորք, ենթարմբան, ճեմաստան, տարերկիր*: Հետաքրքիր են այս բառերից մի քանիսի արտահայտած լրացուցիչ իմաստները. *պատնէշանալ* բայը արտահայտում է նաև ընթացքի և փոփոխության իմաստներ: Նկատի ունենալով այս բառի փոխաբերական իմաստը՝ «Հայութեան վերջին բեկորները, իրենց վերջին կարողականութեամբ պատնէշանալով»<sup>9</sup>, կարող ենք ասել, որ այն նաև ունի թվի (հավաքականության), չափի (դիմացկունության չափը) իմաստներ: *Թանգարանում*, իր բացահայտ և առաջնային տեղի կարգից բացի, ունի նաև թվի կարգի հատկանիշ, որովհետև թանգարանի մեջ հավաքելու միտքն է արտահայտված նորակազմ այս բառի մեջ: Իսկ փոխաբերական իմաստով այն ունի ժամանակի առգոյորոշ կարգին հատուկ իմաստ՝ նշանակելով «հնացած, թանգարանային դարձած»:

<sup>8</sup>Նոր բառեր արևմտահայերենի մէջ, էջ 13:

<sup>9</sup>Նոր բառեր արևմտահայերենի մէջ, էջ 113:

Այս բառին նման է, առանց փոխաբերական իմաստի, *արխիւացում* բառը, որը թե՛ տեղի, թե՛ ժողովելու՝ արխիվում հավաքելու, իմաստներն ունի: *Դրսութիւնը* փոխաբերական իմաստով արտահայտում է նաև կախման ժխտական իմաստ, այսինքն՝ անկախություն, այս դեպքում՝ անկախություն ներսից՝ պատկանելիությունից, նեղ ու սահմանափակ շրջանակից. «Դրսութիւնը կը սրէ անհատականութիւնները երբ զանոնք կը զրկէ համայնութենէ»<sup>10</sup>: Այն ունի նաև նշանային (հոգեվիճակ արտահայտող) իմաստ՝ ցույց տալով անհարագատ վայրում գտնվելու՝ օտարության զգացումը: Հստակ է նաև *վերկայացնել* բայի պատճառայնության իմաստը. «Քերթուածը չ'ընթրիսակեր տուեալ մը, չի վերկայացներ զայն կամ պատկերացներ»<sup>11</sup>:

Ուշադրության արժանի է *աստղայնանալ* բառը, որովհետև աստղը բնութագրվում է իր բարձր, անհասանելի տեղով/ դիրքով, իսկ փոխաբերությունը պայմանավորվում է հենց այդ բարձրության, անհասանելիության հատկանիշով. «Հեթանոսութիւնը վերածնութեան մէջ կը շարունակուի աւելի բարդ, խորհրդաւոր եւ անիմանալի: Անհատը կը ծառանայ, կ'առիւծանայ, կ'աստղայնանայ»<sup>12</sup>:

Չափի կարգի հատկանիշներն են արտահայտում մի քանի նորակազմ բառեր, օրինակ՝ *ապաճիլ* բայը, որ չափի փոքրացում է ենթադրում (չափի ժխտական եզրը), *ժայռանալ* բայը, որը ամրության, տոկունության չափն է ցույց տալիս և ունի փոխաբերական իմաստ: *Զեղոյթ*, որ զեղելու թափն է նկարագրում: *Շուտիկնալ*, որ արագության չափի մեծացում է նշանակում: Այս նույն իմաստով կա նաև *սուրնալ* բայը: *Սեղմրտկել* բայը չափի փոփոխության հետ միասին արտահայտում է հաճախականության իմաստ: Չափի կարգի իմաստն ունեն նաև *կոթողականութիւն*, *հնչեղականութիւն*, *շեշտաւորում*, *շեշտայնութիւն* նորաբանությունները:

<sup>10</sup> Նոր բառեր արևմտահայերէնի մէջ, էջ 40:

<sup>11</sup> Նոր բառեր արևմտահայերէնի մէջ, էջ 124:

<sup>12</sup> Նոր բառեր արևմտահայերէնի մէջ, էջ 19:

Կախման կարգի իմաստն են արտահայտում *ցանցարկում, ցանցարկել, վերատիրացում, ապաստերում* բառերը, որոնցից առաջին երկուսը փոխադարձ կախման մեջ դնելու իմաստն են արտահայտում, իսկ երկրորդը՝ կախման մեջ դնելու միտումը (նշանայնություն, կամային գործողություն) և պատճառայնություն է արտահայտում: *Ապաստերում* բառը սերման կախվածությունն է, բայց ժխտական իմաստով՝ սերելուց կախված չլինելը: *Չսպուրին* նորակազմ բառը մեկի կամ իր իսկ անձի կողմից կաշկանդվելու միտքն է արտահայտում. «Իսկ երբ պատահեր որ այս կամ այն առիթով իր մասին ակնարկութիւններ ընէր, այդ կ'ըլլար զսպութեամբ մը»<sup>13</sup>:

Հետաքրքիր է հաճախայնության առգոյորոշ կարգը արտահայտող *թութակել* բայը, որը հաճախ, շարունակ կրկնելու իմաստն է արտահայտում և ունի բացասական՝ գնահատողական իմաստ, այսինքն՝ հոգեվիճակ, դատողություն ցույց տվող նշանային եզր. «Յաջող են, որովհետեւ անլի քարոզներ թութակելու տեղ՝ անձնական ապրում մը կը քանդակեն»<sup>14</sup>:

Թվի գոյորոշ կարգի հետ է կապված *զանգուածայնացնել* բայը՝ հստակ արտահայտված հավաքականության իմաստով, որին հատուկ են նաև առգոյորոշ՝ հարաբերություն և ընթացք ցույց տվող իմաստները, այսինքն՝ պատճառայնության ու փոփոխության կարգերը. «Անպայման պետք է զանգուածայնացնել «Ազդակ»-ի էփը»<sup>15</sup>:

Ձևի կարգով է բնութագրվում *ծալոտուիլ* բայը, որը ձևի փոփոխության (փոքրացման) իմաստին զուգահեռ արտահայտում է նաև հաճախայնության առգոյորոշ կարգին հատուկ իմաստ. «Երեսը ծալոտուելով կ'ելէւէջէր, կը բացուէր ու ահագին ակոռները կը փայլատակէին»<sup>16</sup>: *Ապաձեւ* նորակազմ բառը ձևի փոփոխություն չի

<sup>13</sup> Նոր բառեր արևմտահայերենի մեջ, էջ 47:

<sup>14</sup> Նոր բառեր արևմտահայերենի մեջ, էջ 52:

<sup>15</sup> Նոր բառեր արևմտահայերենի մեջ, էջ 46:

<sup>16</sup> Նոր բառեր արևմտահայերենի մեջ, էջ 66:



ենթադրում, այլ ձևի բացակայություն, որը իր բացակայությամբ հակադրվում է ձևին, այդ հակադրության շնորհիվ էլ բացատրվում է այս կարգին հաստուկ իմաստներով:

*Արքայականություն* բառը դասի կարգին է պատկանում, որովհետև աստիճանավորում ու կարգ է ենթադրում:

### Եզրակացություն

Գ. Ջահուկյանի տեսության հիման վրա նոր առարկաներն ու երևույթները բնորոշելու, նրանց հարաբերությունները արտահայտելու համար կազմված նոր բառերի իմաստային առանձնահատկությունների քննության փորձը ցույց է տալիս, որ արևմտահայերենի բառապաշարը (գոնե այս մասը) ամբողջությամբ կարելի է մեկնաբանել տեսության ընձեռած հնարավորություններով, և որ նման իմաստային քննությունը անհրաժեշտ է արևմտահայերենի բառերը ավելի ճիշտ բնութագրելու ոչ միայն ըստ արտալեզվական կարգերի, այլև գործառական իմաստները բացատրելու համար, որը կնպաստի բառարանի բառերի ավելի ամբողջական ըմբռնմանը:

### Օգտագործված գրականություն

Ջահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989:

Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Ե., 1974:

Նոր բառեր արևմտահայերենի մեջ, Կազմ.Ս. Տիոյեան, Ա. Ֆիշենկ-ճեան, Հ. Մարաշլեան, Ե., 2022:

**Marashlian Harout - The Semantic Study of Western Armenian Neologisms.** - The study of the newly-developed derivatives in the dictionary "New Words in Western Armenian", based on G. Jahukyan's universal theoretical principles of semantics and word formation, leads us to the following conclusion. The semantic analysis of word-form derivation

types and patterns should not be limited to their functional value (noun-based, adjective-based, etc.), but it should also include and indicate their extra-linguistic meanings: composition, size, causality, number, dependence, time, place, etc.

The analysis of the extra-linguistic meanings of the new words coined to define new objects and phenomena and their relations, makes it possible to expand the semantic field of the newly coined words. Besides, the study of neologisms according to the existential and non-existential orders developed by the Universal Linguistic Theory (substantive-ontological, situational (contextual), lingvo-functional, logical-epistemological) expands their functional meanings and improves the dictionary explanations of these words.

**Keywords:** Western Armenian, dictionary, semantic examination of words, neologism, universal linguistic theory, linguistic classes, attributive and substantive categories, derivation

Marashlian Harout, Institute of Language after H. Acharyan of NAS RA, Junior Researcher.

**Марашлян Арут - Семантический анализ западноармянских неологизмов.** - Анализ словарь производных слов "Новые слова в западноармянском языке", основанный на разработанном Г. Джаукяном единых теоретических принципов семантики и словообразования, приводит нас к выводу, что семантическое изучение типов и способов словообразования не должно ограничиваться их функциональным значением (существительное, прилагательное и т.п.), а должно показать и их внеязыковые значения: состав, размер, причинность, число, зависимость, время, место и т. д. Изучение особенностей внеязыковых значений новых слов, образованных для определения новых предметов и явлений, а также выражения их отношений, позволяет расширить семантическое поле новообразованных слов. Рассмотрение новых слов по экзистенциально-метафорическим порядкам, выработанным универсальной лингвистической теорией (субстантивно-онтологической, фактологической, лингво-функциональной, логико-гносеологической), обогащает их функциональные

---

значения и может способствовать корректировке словарных толкований этих слов.

**Ключевые слова:** западноармянский язык, словарь, семантический анализ слов, неологизм, универсальная лингвистическая теория, лингвистические категории, атрибутивные и субстантивные категории, суффиксация.

Маршлян Арут, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, младший научный сотрудник.

**ԱՐՑԱԽԻ ՏԵՂԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՑԵՂԱՆՈՒՆ  
ՀԻՄՔՈՎ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ\***

**Մարգարյան Լուսինե**

բանասիրական գիտությունների թեկնածու,  
Արցախի պետական համալսարան,  
բանասիրական ֆակուլտետի դեկան.  
margaryan.lusine@yandex.ru  
margaryanlusine06@asu.am

**Բանալի բառեր.** տեղանուն, ցեղանուն, Ծառղք(Սողք), Քաշաթաղ, Վայկունիք, Հաբանդ, Հաթերք:

**Նախաբան**

Արցախի տեղանվանական համակարգում ցեղանուն հիմքով տեղանունների մասին տեղեկանքներ կան, որոնք կարևոր են այդ տեղանունների վաղնջական գոյության հաստատման փաստը լինելու հանգամանքով, իսկ իբրև ստուգաբանական վարկածներ՝ հետաքրքրական են և տրամաբանական հենք ունեն: Եվ որ հատկանշելի է, այդ տեղանունները հիմնականում Արցախ-Սյունիք երկրամասի մերձակցությունը հավաստող տեղեկանքներ են՝ ի հաստատումն տեղանվանագուգաբանություն իրողության առկայության և տարածաշրջանի մեկ ամբողջականություն լինելու փաստի:

**Տեղանվանաքննության դիտարկումներ**

Արցախի տեղանվանահամակարգի միավորներից քննվող տեղանվանաշարքն է՝ *Ծառղք(Սողք), Քաշաթաղ, Վայկունիք, Մյուս Հաբանդ, Հաթերք:*

---

\* Ներկայացվել է 15.09.2022, գրախոսվել՝ 20.09.2022:

*Ծաւղք (Սողք)*: Արցախին տրված անուններից էր *Ծաւղէից աշխարհ* անվանումը: *Ծաւղէացիք* անունը մեր գրչագրերում հանդիպում է *Ծաւղացւոց*, *Ծովղէացւոց*, *Ծողէից* ընթերցումներով: Թեքված այս ձևերի ուղղականն է Ծաւղք(Սողք), որը բարբառային միջավայրում հնչվել է Սաւղք(Սողք):

Ազաթանգեղոսը և Խորենացին Ծաւղէացւոց իշխանությունը հիշատակում են Աղվանից երկրի իշխանությունների շարքում, այսինքն՝ Ծաւղէացւոց նախարարությունը պատկանում էր Մեծ Հայքի կազմ մտնող Աղվանից երկրի կողմնակալությունների թվին: Խորենացին նշում է՝ *ի սորա (այսինքն՝ Առանի) զաւակաց ասէն սերեալ*<sup>1</sup>: Այս հանգամանքն է հիմք տվել Ն. Ադոնցին հավասարության նշան դնելու Ծաւղէք-Չաւղէքի և Արցախի միջև:

Երեմյանը հաստատում է Ադոնցի տեսակետը՝ իբրև փաստ նշելով, որ մեզ անհայտ ժամանակաշրջանում, թերեւս Տիգրան Մեծի օրոք, Սևանի ավազանում կազմվել է փոխարքայություն սատրապություն, որին միացվել է Աղվանքից նվաճված Արցախը: Այս փոխարքայության կենտրոնը գտնվել է Սևանա լճի հարավարևելյան ափին գտնվող Ջող գյուղում, որն այն ժամանակ եղել է գյուղաքաղաք և կոչվել է Ծաւղք (Սաւղք): Այս անունից էլ առաջացել է *ծաւղէացի* անվանումը: Այս բնակավայրի անվան ձևը էթնիկական անուն է և կարող է ենթադրել տալ, որ, հիրավի, այստեղ բնակեցվել է *Ծաւղէացի ցեղը կամ տոհմը*<sup>2</sup>: Ինչ էլ եղած լիներ, մի բան պարզ է, որ այստեղ հիմնված փոխարքայությունն իր կենտրոնի անունով կոչվել է *Ծաւղէացւոց իշխանութիւն*:<sup>3</sup> Իսկ Սողք ավառանունը Ստ. Օրբելյանը բացատրում էր հետևյալ կերպ. *սակս*

<sup>1</sup> **Մ.Խորենացի**, *Պատմագիրք Հայոց*, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց ի ձեռն Գ. Տէր Մկրտչեան, Ստ. Մալխասեանց, Ստ. Կանայեանց, Մ. Աբեղեան, Ս. Յարութիւնեան եւ այլոց, ընդ վերակազմութեամբ Ստ. Մալխասեանց, հ. II, գիրք I, Էջմիածին-Տիֆլիս, 1913, էջ 113:

<sup>2</sup> **Մ.Երեմյան**, *Ծաւղէացւոց իշխանութիւն*, Հայկ. ՍՍՌ ԳԱ տեղեկագիր, N 7-8, 1960, էջ 45:

<sup>3</sup> **Н. Адонцъ**, *Армения в эпоху Юстиниана, политическое состояние на основе нахарского строя*, С-Петербург, 1908, стр. 251-252

*հանապազորդեան բբոցն և սառնաշունչ օդոցն կոչեցալ Մոթք<sup>4</sup>*: Ուլուբաբյանը նշում է, որ այդ բացատրության մեջ պատճառն ու հետևանքը փոխել են իրենց տեղերը: Այսինքն՝ Մոթք գավառից փչող ցուրտ քամիներն են, որ ժողովրդական լեզվում հիմք են տվել *սոթ` ցուրտ* նշանակությամբ<sup>5</sup> բառանվան գոյությանը<sup>6</sup>:

*Ծաւղք* (Սօդք)-ը Գր. Ղափանցյանը բխեցնում է *sodi* ցեղանունից<sup>7</sup>: Գ. Ղափանցյանն այդպիսի տեղանուններ է դիտում ոչ միայն *Ծաւղ* (Սօդք)-ը՝ *sodi*-ից, այլև Քաշաթաղը՝ *khaš* – քաշ ցեղանունից:

*Քաշաթաղ*: Քաշաթաղը Գ. Ղափանցյանը բխեցնում է մ.թ. ա. 15-րդ դարի իտալական արձանագրություններում հիշատակվող *galyga, kalbka* ժողովրդի անունից, որոնք ապրում էր վերին Եփրատից մինչև Ազգի երկիրն ընկած շրջաններում<sup>8</sup>:

Ստեփանոս Օրբելյանն էլ համակարծիք է տեղանվան էթնիկական ծագման վարկածին: Իր ուսումնասիրության մեջ Քաշաթաղ գավառը մեկնաբանվում է՝ թաղ քաշերի (*քաշ* ցեղանունից)<sup>9</sup>: Այդ ցեղը ապրում էր Եփրատ գետի վերին հոսանքի շրջանում և իր ռազմատենչ գործողություններով հայտնի էր հին աշխարհի շատ երկրներում: Ք.ա. 8-րդ դարի վերջին կամ 7-րդ դարի սկզբին նրանք, նեղվելով կիմերներից, թողեցին իրենց բնակության վայրերը և Արաքս գետի հովտով շարժվեցին եկան ու բնավորվեցին Սյունիքում:

Արմեն Ղարազյոզյանը մերժում է *Քաշաթաղ* անվան էթնիկական ծագման վարկածը և նշում, որ այդ անվանումը կարելի է մեկնաբանել բարբառի ընձեռած տվյալներով, այսինքն՝ *քաշ` ցած, ներքև* իմաստով և *Քաշաթաղ* կնշանակի՝ ներքևի թաղ, ու հետա-

<sup>4</sup> *Պատմութիւն նահանգին Միսական (Ղ), Արարեալ Սո. Օրբելեան Արքեպիսկոպոսի Միւնեաց, Ղուկասեան մատենաշար Ղ, Թիֆլիս, 1910, էջ 12:*

<sup>5</sup> *Սո.Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հ.4, Ե., 1944, էջ 238:*

<sup>6</sup> *Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դդ., Ե., 1975, էջ 37:*

<sup>7</sup> *Гр.Капанцян, Историко-лингвистические работы, К началу истории армян, 1956, стр. 130.*

<sup>8</sup> *Լույն տեղում:*

<sup>9</sup> *Սո.Օրբելեան, նշվ. աշխ., էջ 617:*

քրքրական մի դիտարկում է առանձնանշում. Տաթևի վանքի հարկատու գյուղերի հին ցուցակում Աղահեճք գավառի գյուղերի թվում կողք կողքի նշված են Քաշաթաղը և Վերին շեն, որը ենթադրել է տալիս, որ ժամանակին իրար մոտ գտնվել են այդ երկու բնակավայրերը:

*Վայկունիք*: Վայկունիքը Մեծ Հայքի Արցախ աշխարհի գավառներից էր. ընկած էր Հարձլանք և Ծար գավառի սահմանների մեջ<sup>10</sup>: Այս գավառի անվան ծագման մասին Վերին ու Ներքին՝ այսինքն՝ բարձրում գտնվող գյուղ ու ներքևում՝ ցածրում գտնվող թաղ<sup>11</sup>:

Հիշատակություններ կան մասնավորապես Մովսես Խորենացու մոտ. «...Վայկուն ոմն անուն յելուզակ խոովեր գերկիրն Հայոց, զլեառն Ամուր կալեալ, որ մինչև ցայժմ յանուն յելուզակին կոչին Վայկունիք»<sup>12</sup>:

Հյուբշմանը նշում է, որ Խորենացին «...լաւագոյն ըրած կըլլա, եթե Վայկոյն դներ, վասնզի Վայկուան+իքէ միայն Վայկնիք կրնար յառաջ գալ: Վայկուանիք՝ աւելի Վայկ և ուանի մասնիկ»<sup>13</sup>:

Ակադեմիկոս Հ. Մանանդյանի կարծիքով Խորենացու մոտ Լուկուլլոսի կերպարը արտահայտված է Վայկուն ելուզակի անունով, որը խախտել էր Հայոց երկրի խաղաղությունը և հարկադրել Տիգրանին վերադառնալու Պողոմայիդ քաղաքից Հայաստան<sup>14</sup>:

<sup>10</sup> Վ.Բալայան, *Արցախի պատմություն*, Ե., 2002, էջ 21:

<sup>11</sup> Ա.Ղարազյոզյան, *Մյունիքի Բաղը և Քաշունիք գավառանունների ստուգաբանության շուրջ*, Լրաբեր հասարակական գիտությունների, N12, Ե., 1978, էջ 71-76:

<sup>12</sup> Մ.Խորենացի, նշվ. աշխ., էջ 129: Տե՛ս նաև Բ. Վիլվեսերեան, Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային մատենադարանի հայոց, Անթիլիաս, 1961, էջ 199:

<sup>13</sup> Հ. Հիւբշման, *Հին հայոց տեղոյ անունները* : Հայոց աշխարհին պատմական տեղեկագրութեան մասին ուսումնասիրութիւններով (Թարգմ.՝ Հ.Բ. Պիլէզիկ-ճեան), Վիեննա, 1907, էջ 227:

<sup>14</sup> Հ.Մանանդյան, *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության*, հ. Ա, Ե., 1944, էջ 189:

Ղ. Ալիշանն էլ նշում է, որ ինչպես Վայոց ձորի այնպես էլ Արցախի գավառներից մեկի՝ Վայկունիքի անվանումը Վայկուն ելուզակի տոհմի անունից է սերվել:

Իսկ ահա Գր. Ղափանցյանը թե՛ Վայոց ձորը և թե՛ Վայկունիքը ամենից առաջ դիտում է որպես էթնիկական անուններ և նշում, որ դրանք բնավ կապ չունեն «վայ»՝ ողբ իմաստով հասարակ անվան հետ: Գիտենք, որ *Վայոց ձոր* անվան այդպիսի մեկնություն տալիս է Ստ. Օրբեյյանը՝ հիմքում դնելով Սյունյաց եպիսկոպոս Ստեփանոսի սպանության ավանդապատումը<sup>15</sup>: Եվ Գր. Ղափանցյանը նշում է, որ Վայոց ձորում ապրել է *vay* ցեղը, որը նա կապում է հինավուրց *biai* կոչվող ժողովրդի հետ, որն իր անունը տվել է պատմական Biainili-ին, այսինքն՝ Ուրարտուին: Նա գտնում է, որ այդ անունը պահպանվել է Վայոց ձոր գավառի անվան մեջ և որ այդ *bia*-ները եղել են տեղաբնիկ ցեղ՝ մինչև ուրարտացիների Վան գալը: Ու Վայոց ձոր անվանումը նույնպիսի էթնիկական բնույթ ունի, ինչպիսին Հայոց ձորը:

Մերգեյ Ումառյանը հերքում է Ղափանցյանի վարկածը: Նա նշում է, որ ճիշտ լինել չի կարող այդ մեկնությունը, որովհետև *biaina* (*viaina*) նորիսուռներն է, իսկ *Վայոց* տեղանունը նորիսուռներն ծագում չունի: Ու տեղանվան ստուգաբանության մեկ այլ տարբերակ է առաջ քաշում՝ *Վայոց ձոր և Վայկունիք գավառանունների հիմքը հնդեվր. uas>vaj հնչյունափոխության արդյունք համարելով*<sup>16</sup>:

Անվան ստուգաբանությամբ զբաղվել է Հովսեփ Սանդալջյանը<sup>17</sup>. ըստ նրա մեկնաբանության՝ գավառանունը ծագում է ուրարտական հողմերի աստված Հուաիս-ի անունից: Նա հավանական է համարում, որ այդտեղ ապրող ժողովուրդը կոչվել է *huai*, այսինքն՝ *Huas* աստծո երկրպագուներ: Ա. Ղարիբյանը նույնպես կապ էր

<sup>15</sup> Ստ.Օրբեյյան, *նշվ. աշխ.*, էջ 139—143:

<sup>16</sup> Ս.Ումառյան, *Սյունիքը դիցարան*, Ե., 1981, էջ 48-52:

<sup>17</sup> J. Sandaldjian, *Histoire Documentaire de l'Arménie des Âges du Paganisme* (1410 Av.-305 Apr. J.-C.), Vol. 2 (Classic Reprint) Hardcover – August 24, 2018. *Histoire documentaire de l'Arménie des ages du Paganisme.*, 1410 av.-305 apr. J.S.



տեսնում *Վայոց ձոր* անվան ու սեպագիր արձանագրություններում հիշատակված Ուայ աստծո երկրանվան միջև, բայց և չի ժխտում անվան էթնիկական ծագումը՝ գավառանունը մերթ ցեղանուն, մերթ աստծու անուն ենթադրելով<sup>18</sup>:

Այդ ցեղանվամբ տեղանվանական այլ վկայություններ էլ կան, ինչպիսիք են՝ Վայունիք գյուղը՝ Վայկունիք գավառում: Կաղանկատվացին նշում է. «... և զապարանս իւր դնէ ի գիւղն, որ կոչի Վայունիք, ուր և Բաղանիք են արքունականք»<sup>19</sup>: Կար Վայիսիր անունով գյուղ Նախիջևանի մահալում:

Այն, որ *Վայոց ձորի* և *Վայկունիքի* հիմքը վայ ցեղանունն է, լիակատար համոզմունքով հաստատում է Բաբկեն Հարությունյանը: Ըստ այդմ՝ Վայկունիք տեղանունը բառակազմական հետևյալ վերլուծությունն ունի.vay-k-uni-k', որում vay/վայ-ը ցեղանունն է, k-ն ցեղային պատկանելություն նշող հնդեվրոպական մասնիկ, ինչպես՝ Հայ-կ, Արմեն-ակ, Մանդա-կ և այլն: Uni-ն ուրարտական տեղանվանիչ մասնիկ է, իսկ k'-ն հոգնակիի նշանն է, որը նաև հայկական տեղանվանակերտ մասնիկ է<sup>20</sup>:

*Հաբանդ*: Պատմաաշխարհագրական իրողությունների նույնականության հավաստում է նաև Հաբանդ-Մյուս Հաբանդ գավառանունների երբեմնի համագոյակցությունը: Անդրադառնալով Հաբանդ-ին՝ նշելի է, որ Հաբանդ գավառանունն օգտագործվել է տարբեր տառադարձություններով՝ Հաբանդ, Աբանդ, Աբանտ, Բաբանդ, Խաբանդ, Համբանդ, Խաբանստան, Համբադ, Հանպատ, Հարբանդ<sup>21</sup>: Ալիշանը նշում է, որ «*ուղղագոյնն է Հաբանդ... յոր անուն կայ գաւառ մի Արցախոյ՝ միւս Հաբանդ կոչեցեալ... յորմէ*

<sup>18</sup> Ա.Ղափրջան, *Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն*, Ե., 1937, էջ 62:

<sup>19</sup> Մ.Կաղանկատվացի, *Պատմություն Աղվանից աշխարհի* (թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վ. Առաքելյանի) Ե., 1969, էջ 389:

<sup>20</sup> Բ.Հարությունյան, «*Վայոց ձոր* տեղանվան ստուգաբանության հարցի շուրջ-Լրաբեր հասարակական գիտությունների, 1967, N 9, էջ 85-96:

<sup>21</sup> Սո. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Թ. Հակոբյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 3, Ե.1986, էջ 297:

*երևի ի հնունս սահմանակից լինել երկոցուն»<sup>22</sup>*: Անվան ծագումն ու իմաստը Հյուբշմանը մթին է համարում: Ու նաև Հաբանդը համեմատելով Վանանդ, Մարանդ տեղանունների հետ՝ կասկածով առանձնացնում է -անդ մասնիկը<sup>23</sup>:

Գիտական հրապարակումներում Հաբանդ-ի ստուգաբանությունները տարբեր են: Ամենատարածված մեկնությունը բառի պարսկական ծագմամբ է տրվում: Բառի արմատը բանդն է համարվում, որը, ըստ Աճառյանի, նշանակում է լեռների մեջ կիրճ, կապան: Թ. Հակոբյանն էլ գավառանունը մեկնում է Աբանդ-Հաբանդ՝ *ահա բանդը* նշանակությամբ, նշելով, որ աղբյուրը պարսկերեն բանդ-ն է<sup>24</sup>:

Սերգեյ Հախվերդյանը հավանական չի համարում բառի պարսկերենից առաջացումը, քանի որ գավառանունը հին է, և անհավանական է նրա վրա պարսկերենի ազդեցությունը: Ու նաև նշում է, որ նմանապես մերժելի է հունական ազդեցությունը: Նա բառը ստուգաբանում է ոչ թե Հա-բանդ, այլ Հաբ-անդ երկատման ձևով: Հաբ-ի ծագումը կապում է քաշերի՝ Հարբ աստվածության անվան հետ: Այդ անունն ավելի ուշ հայերենում կարող էր հնչել *Հարբա*: Ահա այդպես կարող էր ծագել Հարբա-Հաբա-Հաբանդը՝ ցույց տալով այդ Աստծո պաշտամունքի վայրը<sup>25</sup>: Բառի երկրորդ մասը հին հայերենով հեշտ բացատրելի է: Նա նշում է, որ անդ վերջածանցով *Անդ*-ը հանդ, դաշտ, հովիտ նշանակությամբ է մեկնաբանում Վ. Գայսերյանը<sup>26</sup>: Նա նշում է, որ նման կազմութ-

<sup>22</sup> Միսական, *Տեղագրություն Միսնեաց աշխարհի*, ի Չ. Ղեւոնդեայ Մ. Ալիշան, Վենետիկ, 1893, էջ 254-255:

<sup>23</sup> Հ. Հյուբշման, *նշվ. աշխ.*, էջ 100-101:

<sup>24</sup> Սո. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Թ. Հակոբյան, *նշվ. աշխ.*, էջ 2:

<sup>25</sup> Ս. Հախվերդյան, *Մեծ Հայքի Մյունիք նահանգի Հաբանդ գավառանվան ստուգաբանության նոր փորձ*, Հայոց պատմության հարցեր, հ. 8, Ե., 2007, էջ 16-20:

<sup>26</sup> Վ. Գայսերյան, *Մեպագիր աղբյուրներում հանդիպող մի քանի երկրների տեղադրությունը*, -Պատմա-բանասիրական հանդես, N. 1, 1985, էջ 213:

յամբ տեղանունները հայոց աշխարհում տարածված են Մարանդ, Բագրևանդ, Վանանդ, Ջարևանդ: Անդ՝ նշանակում է այնտեղ<sup>27</sup>:

Հայաստանում բավականին շատ են, ինչպես՝ Մարանդ, Հաբանդ, Ջարևանդ և այլն:

Ըստ Գր. Ղափանցյանի՝ հունաբանության հնարավոր ազդեցության վկայություն է անդ-այ/անդա տեղանվանակերտ ցուցիչը: Արցախի *Հաբանդ*, *Վարանդա* գավառանուններում, Գ. Ղափանցյանի դիտարկմամբ, *-anda* տեղանվանակազմական մասնիկի առկայությունը Հայոց, Վրաց աշխարհներում է նկատելի, և հին սեպագրական փաստերը այդ ածանցով տեղանուններ չեն վկայում Հայոց աշխարհի տարածքում<sup>28</sup>:

Սերգեյ Ումառյանն էլ բառը ստուգաբանում է՝ 3 բաղադրիչների տրոհելով՝ Հա-բան-դ-: Նա նշում է, որ այն ունի խեթական հիմք՝ հա, որը հետո հնչել է ուրարտերեն տառադարձությամբ՝ հալու, ապա հաղ-հաղորդություն, բան-ը հնչյունափոխված վանն է, որ նշանակում է սրբատեղ, զոհասեղան: Իսկ դ-ն փոքրասիական տեղանվան հոգնակին է: Ըստ Ումառյանի՝ Հաբանդը զոհարան է, ծխարան<sup>29</sup>:

Բանահավաք Լևոն Հարությունյանն էլ նշում է, որ Հաբանդը կազմված է հայ և բանդ բաղադրիչներից: Բանդը Արցախում նշանակում է դուռ, ճանապարհ, կապ: Այսինքն՝ հայի դուռ<sup>30</sup>:

*Հաբանդ* տեղանվան էթնիկական ծագման համոզումն ունի Ա. Ղարազյոզյանը: Այդ անվանումը Ղարազյոզյանը կապում է Բալկաններից թրակիացիների և հեռավոր Էվբեա (Աբանտիդա) կղզուց Էվբեացիների (աբանտցիների) Հայաստան տեղաշարժման հետ<sup>31</sup>: Մյուս Հաբանդը Արցախի կենտրոնական գավառներից էր:

<sup>27</sup> Ս.Հախվերդյան, *նշվ. աշխ.*, էջ 19:

<sup>28</sup> Գր.Капанцян, *նշվ. աշխ.*, էջ 415

<sup>29</sup> Ս.Ումառյան, *նշվ. աշխ.*, էջ 37-38:

<sup>30</sup> Լ.Հարությունյան, *Նշխարներ Արցախի բանահյուսության*, Չորրորդ գիրք, Ստեփանակերտ., 2009, էջ 269:

<sup>31</sup> А.Каргезян, *К ЭТИМОЛОГИИ ТОПОНИМА Абанд*, Լրաբեր հասարակական գիտությունների, N1, 2000, էջ 160-165:

Այս տեսակետը շրջանառել է նաև Բ. Հարությունյանը<sup>32</sup>: *Աշխարհացոյցում* այն նշված է որպես Արցախ աշխարհի առաջին գավառ<sup>33</sup>:

Ավելի ուշ Մյուս Հաբանդ գավառը կոչվում էր Ամարաս: Մյուս Հաբանդ գավառի կենտրոնն էր Քթիշ ամրոցը, որը հետագայում հայտնի Տող ավանն էր: Քթիշի մոտ հիմնվեց Գտիչ վանքը: Այս գավառում էր նաև հռչակավոր Ամարասի վանքը<sup>34</sup>:

Արցախի Մյուս Հաբանդ անվանումը, ծագմամբ կապվելով Մյունիքի Հաբանդ գավառանվան հետ, կարող է պայմանավորված լինել թե՛ վերջինիս սահմանակցությամբ, թե՛ արցախյան գավառի՝ նույնական դերակատարության, այսինքն՝ Աստծու պաշտամունքի կենտրոնատեղի լինելու փաստով:

*Հաթերք*: *Հաթերք* տեղանվան առաջացման վարկածները նույնպես տարբեր են, և առկա տարբերակների մեջ անվան առաջացումը առավելաբար կապվում է հաթեր ցեղանվան հետ: Ջահուկյանը խեթերեն լեզվանվան առաջացման փաստը մեկնաբանելիս, նշում է, որ այն առաջացել է շատ ավելի ուշ ծագած աստվածաշնչյան խեթեր ժողովրդանունից, որի հիմքում խեթական պետության անվանումն էր՝ KURURU Hatti- «Հաթթի քաղաքի երկիր», իսկ Hatti-ն հաթերի ինքնանվանումն է, և հաթերը Կենտրոնական Անատոլիայի և Հայկական բարձրավանդակի բնիկ (autochtone) ժողովուրդներից են, որոնք ձուլվեցին խեթերին<sup>35</sup>: Լեոն նշում է, որ նրանք այն ցեղն են, որ Ասորեստանի արձանագրության մեջ կոչված են *Խաթթա* կամ *Խաթ*, իսկ եգիպտական արձանագրությունների մեջ՝ *Խեթա* կամ *Խաթա*, որոնք դարձել են *Հաթ* կամ *Հեթիթ*<sup>36</sup>: Բ. Ուլուբաբյանը այդ առիթով նշում է, որ հայ ժողովրդի կազմավոր-

<sup>32</sup> Բ.Հարությունյան, *Մեծ Հայքի Մյունիք աշխարհն ըստ «Աշխարհացոյց»-ի*, Պատմա-բանասիրական հանդես, N 1, 2003, էջ 231:

<sup>33</sup> Ա.Շիրակացի, *Մատենագրություն* (թարգմ., առաջաբանը և ծանոթագր. Ա. Աբրահամյան և Գ. Պետրոսյան), Ե., 1979, էջ 295:

<sup>34</sup> Ս.Երեմյան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, Ե., 1963, էջ 70:

<sup>35</sup> Գ.Ջահուկյան, *Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները*, Ե., 1970, էջ 124:

<sup>36</sup> Լեո, *Երկերի ժողովածու (տասը հատորով)*, հ. 1, Ե., 1966, էջ 177:

րումից առաջ Արցախի տարածքում ապրել են Հաթերը, այն ցեղը, որն իր անունը տվել է կազմավորված ամբոխին, ապա և հաստատում, որ հաթերը Արցախի բնիկ ամենախոշոր ցեղերն էին: Եվ նրանց անունից *Հայթերք* կամ *Հաթերք* է կոչվել Թարթառի հովտի ամենախոշոր գավառը<sup>37</sup>:

Ղ. Ալիշանը նաև այլ կարծիք է հայտնում. Հաթերքը առաջներում կրել է նաև *Հասանրիզ* (Հասանրիս կամ Հասանարիս) անունը, որի ծագումը բխեցնում է Ջալալյան Հասան իշխանների անունից<sup>38</sup>: Միքայել Աղաջանյանն այդ առիթով նշում է, թե ինչու և Հասանրիսը պետք է ծագի Ջալալյան Հասան իշխանների անունից և ոչ թե Հաթերքի Հասան Վախթանգյան իշխանի անունից: Ու նաև իբրև եզրակացություն հանգում ցեղանունից առաջացած լինելու վարկածին<sup>39</sup>:

### Եզրակացություն

Արցախի տեղանվանական համակարգի այս միավորների ծագումնաբանության քննությունը, առկա վարկածների զուգադրումը ու դրանց մերձավորությունը հատկապես Սյունյաց երկրի նույնահիմք տեղանուններին փաստում են, որ Արցախի տեղանվանական համակարգի բնութագիրը հիմնավորապես համընկնում է հայկական տեղանվանական համակարգի ընդհանուր բնութագրին, և լեզվական բոլոր օրինաչափություններով էլ տեղանվանական ընդհանուր տիպն ու շերտագրումն են առկա, մյուս կողմից հաստատում է արցախյան տեղանունների վաղնջականությունը, հնագույն ժողովուրդների հետ ունեցած հարաբերությունները և այդ հարաբերությունները տեղանուններով վկայելու փաստը:

<sup>37</sup> Բ.Ուլուբաբյան, *Արցախի պատմությունը*, Ե., 1994, էջ 85:

<sup>38</sup> Ղ.Ալիշան, *Արցախ*, Ե., 1993, էջ 43:

<sup>39</sup> Մ.Աղաջանյան, *Հաթերք. պատմությունը հնադարից մինչև մեր օրերը*, Ստեփանակերտ, 2012, էջ 33:

Սա ևս հերթական լիարժեք հավաստիքն է նրա, որ Արցախը վաղնջական շրջանից հայկական մեկ միասնական ընդհանուր տարածքի մաս էր:

### Օգտագործված գրականություն

- Ալիշան Ղ., Արցախ, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1993:
- Միսական, Տեղագրութիւն Միւնեաց աշխարհի, ի Շ. Ղեւոնդէայ Մ. Ալիշան, Վենետիկ, 1893:
- Աղաջանյան Մ., Հաթերք. պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, «Դիզակ պլուս», Ստեփանակերտ, 2012:
- Բալայան Վ., Արցախի պատմություն, «Ամարաս», Ե., 2002:
- Գայսերյան Վ., Մեպագիր աղբյուրներում հանդիպող մի քանի երկրների տեղադրությունը, Պատմա-բանասիրական հանդես, N 1, 1985:
- Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., Ե., 1963:
- Երեմյան Ս., Ծաղեացոց իշխանութիւն, Հայկ. ՍՍՌ ԳԱ տեղեկագիր, N 7-8, 1960:
- Լեո, Երկերի ժողովածու, հ. 1, Ե., 1966:
- Խորենացի Մ., Պատմագիրք Հայոց, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց ի ձեռն Գ. Տէր Մկրտչեան, Ստ. Մալխասեանց, Ստ. Կանայեանց, Մ. Աբեղեան, Ս. Յարութիւնեան եւ այլոց, ընդ վերակազմութեամբ Ստ. Մալխասեանց, հ. II, գիրք I, Էջմիածին-Տփղիս, 1913, էջ 113:
- Կաղանկատվացի Մ., Պատմություն Աղվանից աշխարհի (թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վ. Առաքելյանի), Ե., 1969:
- Հախվերդյան Ս., Մեծ Հայքի Սյունիք նահանգի Հաբանդ գավառանվան ստուգաբանության նոր փորձ, Հայոց պատմության հարցեր, հ. 8, Ե., 2007:

- Հարությունյան Բ., Մեծ Հայքի *Սյունիք* աշխարհին ըստ «Աշխարհացոյց»-ի, Պատմա-բանասիրական հանդես, N 1, 2003:
- Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, Չորրորդ գիրք, «Իզգակ Պլյուս», Ստեփանակերտ, 2009:
- Հիրշման Հ., Հին հայոց տեղոյ անունները: Հայոց աշխարհին պատմական տեղեկագրութեան մասին ուսումնասիրութիւններով (Թարգմ.՝ Հ. Բ. Պիլեզիկճեան), Վիեննա, Մխիթարեան տպարան, 1907:
- Ղարազյոզյան Ա., Սյունիքի Բաղք և Քաշունիք գավառանունների ստուգաբանության շուրջը, Լրաբեր հասարակական գիտությունների, N 12, Ե., 1978:
- Ղարիբյան Ա., Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, Ե., 1937:
- Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, հ. Դ, Ե., Հայկ. ՍՍՌ Պետհրատ., 1944:
- Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր Ա, Ե., 1944:
- Շիրակացի Ա., Մատենագրություն, թարգմ., առաջաբանը և ծանոթագր. Աբրահամյան Ա. և Պետրոսյան Գ., Երևան, 1979:
- Սարգսյան Ս., Արցախ. պատմաաշխարհագրական ճշգրտումներ, Հայ էդիթ, Ե., 1996:
- Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը, Ե., 1994:
- Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դդ., Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ, Ե., 1975:
- Ումառյան Ս., Սյունիքը դիցարան, Ե., 1981:
- Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910:
- Н. Адонцъ, Армения въ эпоху Юстиніана, политическое состояніе на основе нахарарского строя .- типографія Императорской Академіи наукъ, С-Петербургъ, 1908, стр. 251-252
- Капанцян Гр., Историко-лингвистические работы, К началу истории армян, Изд. Акад. Наук Арм. ССР, Ереван, 1956.

Карагезян А.А., *К этимологии топонима Абанд*, Լրաբեր հասարակական գիտություններ, N1, 2000.

Sandalgian J., *Histoire Documentaire de l'Arménie des Âges du Paganisme (1410 Av.-305 Apr. J.-C.)*, Vol. 2 (Classic Reprint) Hardcover – August 24, 2018.

**Margaryan Lusine - Toponyms Based on the Tribename of the Toponymy of Artsakh.**- In the toponymy of Artsakh, some toponyms were named after their tribe: Tsodk / Sodk - from the Tso dei tribe (from sodi), Kashatag - from the Kash tribe (khaš), Vaykunik - from the Wai tribe (identical to the people with the name biai), Khaband - associated with the people of the Euboeans (Abantines), Aterk - from the Hut tribe. Such etymological interpretations are just a hypothesis however they sound convincing and have a high value in research. On the one hand, they prove that the toponymy of Artsakh coincides with the description of the pan-Armenian toponymy, thereby confirming that Artsakh has been part of the common Armenian area. On the other hand, they confirm firstly the antiquity of Artsakh toponyms, and secondly, the relations of Armenians with ancient nations, as evidenced by the geographical names.

**Keywords:** tribe name, Tsodk / Sodk, Kashatagh, Vaikunik, Khaband, Aterk.

Margaryan Lusine, PhD of Philology, Artsakh State University, Dean by Philological Faculty.

**Маргарян Лусинэ- Этнотопонимы в топонимической системе Арцаха.**- В топонимической системе Арцаха есть топонимы, которые получили свое наименование от названия племени: Цодк / Содк – от племени цодей (из sodi); Кашатаг – от племени каш (khaš); Вайкуник- от племени вай (идентичны с народом, называющимся biai); название Хабанд связано с народом эвбейцами (абантийцами), Атерк - с племенем хат. Подобные этимологические интерпретации - лишь гипотеза, однако звучит она убедительно и имеет высокую исследовательскую ценность. С одной стороны, она доказывает, что топонимическая система Арцаха в основном совпадает с описанием общеармянской топонимической системы, тем самым подтверждая,



что Арцах был частью единого армянского ареала. С другой стороны, она подтверждает исторические корни топонимов Арцаха и факт взаимодействия армян с древними народами, о чем также свидетельствуют географические наименования.

**Ключевые слова:** топоним, этнотопоним, Цодк / Содк, Кашатах, Вайкуник, Хабанд, Атерк.

Маркарян Лусинэ, кандидат филологических наук, Арцахский Государственный Университет, декан филологического факультета.

**ԵՂԱՆԱԿԱԻՈՐԻՉ ՄԱԿԲԱՅ ԵԶՐՈՅԹՆ ԸՍՏ  
ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԱԳԻՔԵՐՈՒ\***

**Ֆիշենկճեան Անի**

պատմական գիտութիւններու թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտ,  
գիտաշխատող. fishenkjianani@gmail.com

**Տիոյեան Սուսաննա**

բանասիրական գիտութիւններու թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտ,  
աւագ գիտաշխատող. [susannatoyan@yahoo.com](mailto:susannatoyan@yahoo.com)

**Բանալի բառեր.** եղանակաւորող բառ, մակբայ, սփիւռք, արեւմտահայերէն, շարահիւսութիւն, վերաբերական, քերականական կարգ:

**Նախաբան**

Վերջին երկու տասնամեակներուն լեզուաբաններու կողմէ եւ առհասարակ մամուլի մէջ ու ցանցերու վրայ առաւել արծարծուող, քննարկուող թեման արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի մերձեցման<sup>1</sup> խնդիրներու շուրջ մասնագէտներու մեկնաբանութիւններն ու առաջարկներն են, մինչդեռ, մեր կարծիքով, նախ եւ առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել արեւմտահայերէնի քերականու-

\* Ներկայացվել է 14.10.2022, գրախոսվել՝ 29.10.2022:

<sup>1</sup> Ռ. Թոխմախեան, Ս. Տիոյեան, *Արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի մերձեցման միտումները.* - *Արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի մերձեցման ուղիները*, Ե., 2016, էջ 7-34: Ռ. Թոխմախեան, Ս. Տիոյեան, *Արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի մերձեցման հարցի լուծումը՝ երկու ուղղագրութիւններու միասնականացումով, դասականի հիմքի վրայ, Արեւմտահայերէնի փրկութեան բանալին.* - <https://akunq.net/am/?p=46163>, Դոկտ. Հիլտա Գալֆայեան-Փանոսեան. <http://language.sci.am/hy/eastern-western-armenian-convergence/arewelahayereni-ew-arewmtahayereni-merdzetsman-hartsi-lowtsowme>.

թեան ընթացած պատմական ուղին, Սփիւռքի արեւմտահայերէնի քերականութեան դասագիրքերու մէջ տեղ գտած քերականական կարգերու՝ հնչիւնաբանութեան, բառագիտութեան, ձեւաբանութեան, եւ մանաւանդ շարահիւսութեան նկարագրութիւնը՝ աստոնց դրսեւորած առանձնայատկութիւններով, կառուցուածքային, մեթոտաբանական ու եզրոյթային ոչ միատարր դրսեւորումներով:

Մենք տարբեր յօդուածներով<sup>2</sup> եւ մենագրութեամբ<sup>3</sup> փորձած ենք ուսումնասիրել Սփիւռքի տարբեր մայրցամաքներու վրայ լոյս ընծայուած արեւմտահայերէնի քերականութեան դասագիրքերը /յետԱյտրնական շրջանէն մինչեւ 21-րդ դարու առաջ տասնամեակը/՝ մատնացոյց ընելով անոնց ձեւաբանական առանձնայատկութիւնները, քերականութեան դասագիրքերու մէջ խօսքի մասերու եզրոյթային տարբեր անուանումներն ու համակարգման հարցը, որովհետեւ դասագիրքերու կառուցուածքային, բովանդակային ու մեթոտաբանական այլազանութիւնները յաճախ շփոթ յառաջացուցած են (եւ կը յառաջացնեն) ե՛ւ դասաւանդող ուսուցիչներու, ե՛ւ աշակերտներու, ե՛ւ հայագիտական հիմնարկներու ուսանողներու քով: Չկան խօսքի մասերու քերականական յստակ եւ տրամաբանական ձեւակերպումներ եւ հետեւողական սահմանազատումներ. այսպէս, Լեւոն Թորոսեան «Հայ քերականագիտու-

<sup>2</sup> **Ս. Ֆիշենկճեան**, *Արեւմտահայերէնի խոնարհման համակարգի հերթական տարբերութիւնները*.- Ջահուկյանական ընթերցումներ, գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2016, էջ 237-242; **Ս. Ֆիշենկճեան**, *Արեւմտահայերէնի դասագիրքերու զուգարական քննութիւն (ձեւաբանութիւն)*.- Արեւմտահայերէնի հարցեր (գիտական ուսումնասիրութիւններ), Ա. պրակ/ [http://language.sci.am/sites/default/files/arm\\_hartcer.pdf](http://language.sci.am/sites/default/files/arm_hartcer.pdf); **Ս. Ֆիշենկճեան**, *Ածական եւ դերանուն խօսքի մասերու համեմատական քննութիւն (ըստ Ջարեհ Մէլքոնեանի եւ Մկրտիչ Մկրտիչեանի դասագիրքերու)*.- / [http://language.sci.am/sites/default/files/lezow\\_ew\\_khosk\\_0.pdf](http://language.sci.am/sites/default/files/lezow_ew_khosk_0.pdf)/ «Լեզու և խոսք» խորագրով գիտական հոդվածների էլեկտրոնային ժողովածուում, Ե., 2019; **Ս. Ֆիշենկճեան**, *Արեւմտահայերէնի խօսքի մասերու քերականական կարգերու քննութիւն (անորոշ ածական թէ՛ անորոշ դերանուն)*, Ջահուկյանական ընթերցումներ, Ե., 2020, էջ 147-159:

<sup>3</sup> Տե՛ս **Ս. Ֆիշենկճեան /Ֆչնկճեան/**, *Արեւմտահայերէնի քերականութեան պատմութիւն (Յետայտրնեանական շրջան)*, Ե., 2018:

թեան արդի ցաւերը» յօդուածով կ'անդրադառնայ հայոց լեզուի ուսուցման եւ գոյատեւման, նոր սերունդի լեզուամտածողութեան, գործնական հաղորդակցութեան, եզրաբանական խոչընդոտներուն եւ «բարդ ու թերի դասագիրքերու»-ն: Յօդուածագիրը միաժամանակ կ'առաջարկէ հայերէնի ուսուցման համար պատրաստել (մշակել) այնպիսի դասագիրքեր, «որոնք ըլլան իրերահաշտ, մասնագիտական նոյն բառամթերքով եւ համարժեք, առանց զիրար հակասող դրոյթներու»<sup>4</sup>:

### **Քերականական կարգերու ճշգրտումներ**

Արեւմտահայերէնի քերականութեան դասագիրքերու մէջ հեղինակներու միջեւ արձանագրուած տարակարծութիւնները սկիզբ կ'առնեն «Խօսքի Մասեր»-ու (Մասունք Բանի) անոնց ընդունած թիւէն եւ անուանումներէն (աւելի ճիշդ պիտի ըլլար ըսէինք բառերուն տուած եզրոյթներէն). օրինակ՝

1. Հրանդ եւ Չապլլ Ասատուրներ կը նշեն, որ «*Տաս տեսակ բառ կայ, որոնք խօսքի մասերը կը կազմեն*». անոնք են. «*Անուն, յօղ, ածական, դերանուն, բայ, դերբայ, մակբայ, նախադրութիւն, շաղկապ եւ ձայնարկութիւն*»<sup>5</sup>:

2. Յովհաննէս Գազանճեանի, Սկրտիչ Սկրտիչեանի եւ Շահնուր Շահէնի<sup>6</sup> համաձայն բառերը «*խօսքի մէջ իրենց ունեցած պաշտօնին եւ բնութեան նայելով*»<sup>7</sup> եւ կամ «*իրենց ընդհանուր իմաստին համաձայն*»<sup>8</sup> կը բաժնուին ութ տեսակի, որոնք կը կո-

<sup>4</sup> **Լեւոն Թորոսեան**, *Հայ քերականագիտութեան արդի ցաւերը*.- «Շիրակ» ամսագիր, Պէրոյթ, ԽՍ. տարի, թիւ 9-10, 1997, էջ 94:

<sup>5</sup> **Հրանդ եւ Չապլլ Ասատուր**, *Գործնական քերականութիւն արդի աշխարհաբարի* Կ. Պոլիս, 1902, էջ 23:

<sup>6</sup> **Շահէն բժ. Շահնուր**, *Համառոտ քերականութիւն եւ ուղղագրութիւն հայերէն լեզուի*, Բ. գիրք, Ը. տպագրութիւն, Իսթանպուլ, 2001, էջ 29:

<sup>7</sup> **Յովհաննէս Գազանճեան**, *Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի, միջին դասընթացք*, Անթիլիաս-Լիբանան, 1980, էջ 17:

<sup>8</sup> **Սկրտիչ Սկրտիչեան**, *Քերականութեան դասեր*, Բ. գիրք, (Նախակրթարանի Ե.-Զ. կարգերուն համար), Հալէպ, 1962, էջ 31:

չուին խօսքին մասեր՝ *անուն կամ գոյական, դերանուն, բայ, ածական, մակբայ, առընթերադրութիւն* / (Մկրտիչ Մկրտիչեան)- նախադրութիւն (Յովհաննէս Գազանճեան)/, *շաղկապ եւ ձայնարկութիւն*: Այս խումբին կը միանայ նաեւ Ե. Տասնապետեան, սակայն «ածական»-ը կը կոչէ «մականուն»<sup>9</sup>:

3. Մինչդեռ Կարօ Առաքելեանի, Յակոբ Չոլաքեանի մօտ խօսքի մասերը թիւով տասն են՝ *անուն կամ գոյական, ածական, դերանուն, թուական, բայ, մակբայ, կապ (նախադրութիւն, առընթերադրութիւն, հոյովառու), շաղկապ, վերաբերական կամ եղանակաւորող բառեր եւ ձայնարկութիւն*<sup>10</sup>:

4. Իսկ Յարութիւն Քիրքճեանի *Քերականութեան* մէջ աներեւութացած են «ածական» եւ «դերանուն» եզրերը. նաեւ չէ ճշդուած թէ քանի մասունք բանի կ'ընդունի<sup>11</sup>:

5. 2001թ. Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի Ազգային վարչութեան հրատարակութեամբ եւ Յարութիւն Քիրքճեանի ու Մարօ Գալայճեան-Քիրքճեանի հեղինակութեամբ լոյս կը տեսնէ «Մեր Լեզուն» հայ լեզու եւ գրականութիւն արեւմտահայերէնի դասագիրքերու շարքը (*Բ., Գ., Դ., Ե., Զ., Է., Ը., Թ.*), որոնք իրենց կողքին ունին Լեզուական վարժութիւններու գիրք իրաքանչիւր դասարանի համար: Վարժութիւններու Զ. կարգի նախատեսուած բաժինին մէջ խօսքի մասերը բաժնած են ութ խումբերու հետեւեալ բաժանումով.

ա. փոխառող բառեր. բայ, գոյական, դերանուն.

<sup>9</sup> Եզրուարդ Տասնապետեան, *Քերականութիւն*, Անթիլիաս, 1990, էջ 64:

<sup>10</sup> Տե՛ս Ա. Ֆիշենկճեան /Ֆչնկջեան/, նշուած աշխատութիւն (յետայսու՝ նշ. աշխ.), էջ 10-11:

<sup>11</sup> Քիրքճեան *դերանուն* հասկացութեան փոխարէն կը նշէ՝ անձնականներ, յարաբերականներ, ստացականներ, ցուցականներ, հարցականներ, անորոշներ եզրոյթները: Իսկ «յապաւում “անուն” հասկացութեան Գոյական անուն, Ածական անուն եւ Թուական անուն խօսքի մասերը կը դառնան պարզապէս՝ Գոյական, Որակական եւ Թուական». (տե՛ս **Յարութիւն Քիրքճեան**, *Նոր քերականութիւն հայերէն լեզուի* (Արեւմտահայերէն), (Միջնակարգ բաժնի Ա. տարի), Աթէնք, 1989, էջ 93:

բ. անփոփոխ բառեր. ածական, մակբայ, կապ, շաղկապ եւ ձայնարկութիւն<sup>12</sup>:

Կարեւոր կը համարենք նշել այն, որ հայր Արսէն Վ. Այտընեան եւս խօսելով «Մասանց բանի» մասին, կը գրէ. «Բառ կամ Մասն-բանի ութ տեսակ է». չորսը փոփոխական. անուն, դերանուն, բայ, դերբայ», միւս չորսը անփոփոխ՝ «մակբայ, նախադրութիւն, շաղկապ, միջարկութիւն»<sup>13</sup>:

Մինչդէռ մերօրեայ քերականական դասագիրքերու հեղինակները կ'ընդունին տասը խօսքի մասեր:

Ինչ կը վերաբերի եզրոյթներուն, կը նկատենք՝ «*Խօսքի եղանակաւորիչներ*<sup>14</sup>, եղանակաւորիչներ<sup>15</sup>, եղանակաւորող բառեր<sup>16</sup> կամ վերաբերականներ»<sup>17</sup> եզրոյթը սոսկ քանի մը հեղինակներու դասագիրքերու մէջ. այդ եզրոյթը կը տրուի արեւմտահայերէնի քերականութեան չտրուող այն խօսքի մասին, որ կ'արտայայտէ խօսողին իմացական կամ գնահատական վերաբերումը եւ կ'եղանակաւորէ կամ կ'երանգաւորէ նախադասութիւնը կամ անոր անդամներէն մէկը<sup>18</sup>: Կամ «կ'արտայայտեն խօսողին վերաբերմունքը որ-եւէ միտքի կամ գաղափարի նկատմամբ»<sup>19</sup>:

<sup>12</sup> Խօսքի մասերու այս դասակարգումը, մեր համոզմամբ, համահունչ է Տասնապետեանին, միայն «մականուն»-ի փոխարէն, «ածական» եզրոյթի վերականգնմամբ:

<sup>13</sup> **Հ. Արսէն Վ. Այտընեան**, *Քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի*, Վիեննա, 1883, էջ 3:

<sup>14</sup> **Եղուարդ Տասնապետեան**, նշ. աշխ., էջ 101:

<sup>15</sup> **Յարութիւն Քիրքճեան**, նշ. աշխ., էջ 75: **Զարեհ Մելքոնեան**, *Գործնական քերականութիւն արդի հայերէնի լեզուի*, Դ. տպ., Պէյրութ, 1972, էջ 116:

<sup>16</sup> **Ս. Աբրահամեան, Բ. Վերդեան, Վ. Քոսեան**, *Հայերէն լեզուի դասագիրք, երկրորդ հրատարակութիւն*, Ե., 1966: **Ս. Աբրահամեան, Բ. Վերդեան, Վ. Քոսեան**, *Հայերէն լեզուի դասագիրք, երկրորդ հրատարակութիւն*, Ե., 1968, էջ 245:

<sup>17</sup> **Կարօ Առաքելեան, Աղանի Ֆրստրգճեան, Դիւրին հայերէն**, Գ. գիրք, Բ. հրատարակութիւն՝ բարեփոխուած, Պէյրութ, 2010, էջ 114: **Յակոբ Չոլաքեան**, *Անդաստան*, Գ., Հալէպ, 2010, էջ 131:

<sup>18</sup> **Կարօ Առաքելեան, Աղանի Ֆրստրգճեան**, նշ. աշխ., էջ 114: **Յակոբ Չոլաքեան**, նշ. աշխ., էջ 131:

<sup>19</sup> **Յ. Չոլաքեան**, նշ. աշխ., էջ 131:

Զապէլ Տօնէլեան եղանակաւորող եզրոյթը չի գործածեր: Հեղինակի համաձայն մակբայի չորս տեսակներու կողքին կան հարցական (*ինչո՞ւ, հապա՞, ե՞րբ, մի՞թէ՞, արդեօ՞ք*), հաստատական (*այո՞, անշուշտ, հարկաւ, հապա՛ եւ այլն*), ժխտական (*ամենեւի՛ն, ո՛չ, ո՛չ երբեք, բնա՛ւ, մի՛, չէ՛, քա՛ւ լիցի, եւ այլն*) եւ տարակուսական (*թերեւս, գուցէ, արդեօք, մի՛ գուցէ, եւ այլն*) մակբայներ<sup>20</sup>:

Յովհաննէս Գազանճեան եւս եղանակաւորիչ մակբայներու գլխաւորները կը համարէ «*գրեթէ, այո՛, ոչ, անշո՛ւշտ, իրա՛ւ, բնաւ, երբեք, ահա՛, ամենեւին, թերեւս, գուցէ, արդեօ՛ք, միթէ, հապա, մի գուցէ եւ այլն*»<sup>21</sup>: Գազանճեանի աշխատութեան մէջ կը հանդիպինք «*մակբայական ասացուած*» բառակապակցութեան, որ ըստ երեւոյթին «մէկէ աւելի բառերով կազմուած կամ գրաբարածէ հոլովեա լ ամէն տեսակէ կարգ մը մակբայներ» են: Կը յիշատակէ առաւել գործածականները. «*Ստուգիւ, հարկաւ, իհարկէ, քաւլիցի, ո՛չ երբեք, յիրաւի, նոյն իսկ, եւ այլ*», որոնց հեղինակը կ'անուանէ եղանակաւորիչ մակբայական ասացուածներ<sup>22</sup>:

Զարեհ Մելքոնեանը եւս խօսքի մասերու մէջ չի յիշատակէր եղանակաւորիչ, եղանակաւոր, վերաբերական բառերը: Այլ ընդհակառակը, «Մակբայ»-ի մասին խօսելով զանոնք կը դասէ եղանակաւորիչ մակբայներու շարքին. «*այո՛, ո՛չ, գրեթէ, անշուշտ, բնաւ, իրա՛ւ, ահա՛, թերեւս, երբեք, արդեօք, գուցէ, հապա, ինչո՛ւ, միթէ, արդարեւ, ամենեւին*» եւ այլ բառեր<sup>23</sup>:

Մկրտիչ Մկրտիչեանի քով նոյն մօտեցումը կայ [ձեւական մակբայներու շարքին կը դասէ եղանակաւորիչը՝ զայն կոչելով եղանակաւորիչ մակբայ]: Մկրտիչեանի համաձայն եղանակաւորիչ մակբայը ցոյց կու տայ, թէ գործողութիւնը ի՛նչ եղանակով

<sup>20</sup> Զապէլ Տօնէլեան, *Գործնական քերականութիւն արդի աշխարհաբարի*, Բ. գիրք, Կ. Պոլիս, 1899, էջ 193: **Հրանդ եւ Զապէլ Ասատուր**, *Գործնական քերականութիւն արդի աշխարհաբարի*, էջ 205:

<sup>21</sup> Յովհաննէս Գազանճեան, *Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի*, միջին դասընթացք, Կ. Պոլիս, 1925, 110:

<sup>22</sup> Յովհաննէս Գազանճեան, նշ. աշխ., 112:

<sup>23</sup> Զարեհ Մելքոնեան, նշ. աշխ., էջ 116:

կատարուած է՝ «հաստատակա՞ն, ժխտակակա՞ն, տարակուսակա՞ն»։ կը թուէ եղանակաւորիչ մակբայները. «*Ահա, ամենէին, այս անշուշտ, անպատճառ, արդարեւ, արդեօք, բնաւ, գուցէ, գրեթէ, երբեք, թերեւս, իրաւ, ի հարկէ, կարծես, հապա, հարկաւ, հազիւ, միթէ, մի գուցէ*»<sup>24</sup>։

Եղուարդ Տասնապետեան, ի տարբերութիւն վերեւ յիշուած հեղինակներու դասագիրքերու մէջ տեղ գտած բացատրութեանց, *խօսքի եղանակաւորիչներ եւ ձայնարկութիւններ* կ'անուանէ քերականօրէն անկախ դիրք զբաղեցնող բառական ուրոյն այն տեսակներ, որոնք «խօսքին կ'ընկերանան առանց մասնակցելու անոր օրկանական կազմին, բայց իրենց արտաքին դիրքովն իսկ» կ'եղանակաւորեն, կ'երանգաւորեն անոր իմաստը։ Տասնապետեան քաջատեղեակ է, որ քերականագէտներէն ոմանք լեզուին այս տարբերը կը համարեն մակբայ խօսքի մասի մէկ տեսակ՝ եղանակաւորիչ մակբայ<sup>25</sup>։

Եթէ պահ մը ընդունինք որ վերեւ յիշուած բառերը, իրօք կը դասուին մակբայ խօսքի մասի համակարգի մէջ, ուրեմն որպէս մակբայ հանդէս գալով նախադասութեանց մէջ պէտք է ցոյց տան յատկանիշի յատկանիշը եւ դրուին բային վրայ, որպէս բայական լրացում։ Սակայն վերելը նշեցինք որ եղանակաւորող բառերը թէեւ մտածական վերաբերմունք արտայայտող բառեր են, սակայն չունին նիւթական յատկանիշի իմաստ. ուստի կարելի է ենթադրել, որ այդ բառերը կը հակադրուին ե՛ւ մակբայներուն, ե՛ւ նիւթական իմաստ ունեցող միւս խօսքի մասերուն՝ դրուելով նախադասութեան որեւէ անդամի վրայ անկախ թէ այդ բառը ո՞ր խօսքի մասին մաս կը պատկանի։

1966թ. եւ 1968թ. Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի կողմէ հրատարակուած եւ սփիւռք ուղարկուած «Հայերէն լեզուի դասագիրք»-ի համահեղինակները՝ Ս. Աբրահամեան, Բ. Վերդեան, Վ. Քոսեան, եւս կը նշեն Սփիւռքի արեւմտահայերէնի

<sup>24</sup> Մկրտիչ Մկրտիչեան, նշ. աշխ., էջ 124։

<sup>25</sup> Եղուարդ Տասնապետեան, նշ. աշխ., էջ 101։



քերականութեան դասագիրքերու մէջ եղանակաւորող բառերու չներգրաւելու վերաբերեալ: Հեղինակները խօսքի մասերու (յատկապէս դերանուններու եւ եղանակաւորող բառերու) դասակարգման մէջ կ'օգտագործեն «արեւելահայերէնի քերականութեան նուաճումները» նկատի ունենալով բառերու իմաստային ու քերականական ընդհանուր յատկանիշները<sup>26</sup>: Հեղինակները ուսումնասիրելով Սփիւքի քերականութեան դասագիրքերը տեղեակ էին, որ եղանակաւորները *«որպէս առանձին խօսքի մաս չեն դիտուած նոյնացուելով ձեւի մակբայներուն հետ: Ճիշդ է, անոնք ունին որոշ արտաքին նմանութիւն, բայց էապէս կը տարբերին իրարմէ»*<sup>27</sup>, կը գրեն հեղինակները. ուստի եղանակաւորող բառերը կը դասեն չթերւուող խօսքի մասերու կարգին<sup>28</sup>:

Կարօ Առաքելեան եւ Յակոբ Չոլաքեան եղանակաւորող բառերը կ'անուանեն «Վերաբերական»-ներ: Յ. Չոլաքեան կը գրէ, որ «Վերաբերականները» կը նմանին ձեւի մակբայներուն, բայց *էապէս կը տարբերին անոնցմէ*<sup>29</sup>: Ան թէեւ չի պարզաբաներ, բայց օրինակներով կը փորձէ հիմնաւորել, թէ շարահիւսօրէն մակբայները բայական լրացումներ են, իսկ վերաբերականները նախադասութեան անդամ չեն, որեւէ անդամի լրացում չեն, այլ կրնան դրուիլ նախադասութեան մէջ որեւէ տեղ, ստորակէտով տրոհուիլ եւ շեշտ ստանալ<sup>30</sup>: Իսկ Կ. Առաքելեան, ի տարբերութիւն Յ. Չոլաքեանին, կը բացատրէ, որ վերաբերականները «մակբայներուն պէս կը դրուին ստորոգիչին վրայ, սակայն գործողութեան հանգամանքներ (պարագաներ) չեն արտայայտեր, նախադասութեան անդամ չեն դառնար»<sup>31</sup>:

<sup>26</sup> Ս. Աբրահամեան, Բ. Վերդեան, Վ. Քոսեան, *Հայերէն լեզուի դասագիրք*, Երկրորդ հրատարակութիւն, էջ 4:

<sup>27</sup> Ս. Աբրահամեան, Բ. Վերդեան, Վ. Քոսեան, նշ. աշխ., էջ 248:

<sup>28</sup> Ս. Աբրահամեան, Բ. Վերդեան, Վ. Քոսեան, նշ. աշխ., էջ 248:

<sup>29</sup> Յ. Չոլաքեան, նշ. աշխ., էջ 131:

<sup>30</sup> Յ. Չոլաքեան, նշ. աշխ., էջ 131:

<sup>31</sup> Կարօ Առաքելեան, Աղանի Տըստըզճեան, նշ. աշխ., էջ 114:

Հետաքրքիր գուգադիպութեամբ միայն Կ. Առաքելեանի ու Յ.Չոլաքեանի քով կը հանդիպինք «վերաբերական» արտայայտութեան: Հեղինակները չեն մատնանշեր, թէ ինչո՞ւ «վերաբերական» եւ ոչ թէ՛ «եղանակաւորող» եզրոյթը, չէ որ այդ բառերը կ'արտայայտեն ո՛չ միայն խօսողին իմացական կամ գնահատական վերաբերմունքը, այլեւ միաժամանակ կ'եղանակաւորեն խօսքը տարբեր բանգներով: Ուրեմն, ինչո՞ւ չանուանել «*Եղանակաւորող բառեր*»:

«Հայերէն լեզուի դասագիրք»-ին մէջ, Կ. Առաքելեանի եւ Յ. Չոլաքեանի քով կը հանդիպինք եղանակաւորող /վերաբերականներու/ բառերու տեսակներուն իրենց արտայայտած իմաստներուն համաձայն, որոնք կախեալ են խօսողի արտայայտած վերաբերմունքէն՝ հաստատական, երկբայական, ցուցական, զիջական, սաստկական, սահմանափակման եւ կամային (Կ. Առաքելեանի քով նաեւ ժխտական). տե՛ս աղիւսակները /1,2/:

/աղիւսակ 1/  
«Հայերէն լեզուի դասագիրք»<sup>32</sup>

հաստատական	երկբայական	ցուցական	զիջական	սաստկական	սահմանափակման	կամային
ապաքէն, արդարեւ, անշուշտ, անկասկած, ի հարկէ, անպատճառ, անտարակոյս անպայման,	կարծեմ, կարծես, կարծեօք, թերեւս, երեւի, իբր, իբր թէ, գուցէ, մի-	ահա, ահաւասիկ	ինչեւիցէ, ինչեւէ, ինչ որ է, յամենայն դէպս,	նոյնիսկ, անգամ, մինչեւ իսկ, մինչեւ անգամ, մանաւանդ	գէթ /միայն/, գոնէ, միայն, միմիայն	թող, դէհ

<sup>32</sup> Ս. Աբրահամեան, Բ. Վերդեան, Վ. Քոսեան, նշ. աշխ., էջ 250-253:

իսկապէս, հարկաւ, հաւաս- տեաւ, իրօք, իրաւ	գուցէ, գոգցես, միթէ, ար- դեօք,					
---	--	--	--	--	--	--

Եղանակաւոր են նաեւ այո եւ ոչ պատասխանական բառերը<sup>33</sup>:

աղիսակ 2  
/ Կ. Առաքելեան. 3. Չոլաքեան/

հաստատական	երկբայական	ցուցական	զիջական	սաստկական	սահմանափակ- ման	կամային	ժխտական	զգացական/զնա- հատական
ար- դարեւ, անշուշտ անկաս- կած, ան- պատ- ճառ, ան- տարա- կոյս, անպայ- ման, իրաւ, իրաւ որ, իրաւ- ամբ, իրօք, իրօք որ, իսկա-	գուցէ, երեւի թեր- եւս, կար- ծեմ, կար- ծես, կար- ծես թէ, մի գուցէ, իբր թէ, դժ- ուար թէ, հա- զիւ	ահա, ահաւ ասիկ	ի դէպ, ի միջի- այլոց, ինչ որ է, յամէ նայն դէպս, <b>այսու ամեն այ- նիւ, այ- նու- ամեն այ- նիւ, այսու</b>	անգամ, իսկ, նոյ- նիսկ, մինչեւ իսկ, հէնց /արեւել ահայեր էն/	զէթ /միայն/ գունէ, միայն, միմիայն, սուկ	թող, երա- նի	ո՛չ, չէ	երնէ՛կ, երնէ՛կ թէ, <b>երանի՛, երանի՛</b> <b>թէ,</b> ո՛ր էր թէ, իցի՛ւ թէ, բարե- բախ- տա- բար, դժբախ տա- բար, ցաւ ի սիրտ, ցաւօք,

<sup>33</sup> Ս. Աբրահամեան, Բ. Վերդեան, Վ. Քոսեան, նշ. աշխ., էջ 251:

պէս, իսկա- պէս որ, ի հարկէ, հարկաւ, հաւաս- տեաւ, յիրաւի, այո.	թէ, ար- դեօք, միթէ, չըլ- լա յ թէ.		<i>հան- դէրճ, այ- նու- հան- դէրճ</i> <sup>34</sup> , ընդ- հա- կա- ռակն, մէկ խօս- քով /ինչ որ ալ ըլլայ, ճիշդ է, ինչ- պէս կ'ե- րեւի					ցաւօք սրտի
---	---	--	--	--	--	--	--	---------------

### Եզրակացութիւն

Ա. Այտընեանէն ետք մինչեւ անցեալ դարու վաթսունական թուական ինկած ժամանակահատուածին Սփիւռքի մէջ պատրաստուած արեւմտահայերէնի քերականութեան դասագիրքերը մեծ մասամբ իրենց վրայ կրած էին Ա.Այտընեական ազդեցութիւն: Նոյն

<sup>34</sup> «Սահմանափակման, ընդգծման առանձնացման վերաբերական նշանակու-  
թեամբ կը գործածուին, առաւելապէս (առաւելաբար), գերազանցապէս,  
գլխաւորաբար (գլխաւորապէս), յատկապէս, մասնաւորաբար (մասնաւորապէս)  
եւ այլ մակբայներ, երբ կը դրուին նախադասութեան՝ ոչ թէ բայով, այլ ուրիշ խօսքի  
մասով արտայայտուած անդամի վրայ»։ օրինակ՝ «Աշակերտները կը սիրէին  
մասնաւորաբար թուարանութիւն» եւ այլն: Տե՛ս Կարօ Առաքելեանի համաձայն,  
աստղանիշ (\*) կրող բառերը եւ շաղկապ, եւ վերաբերական են: Տե՛ս **Կարօ  
Առաքելեան, Արդի հայերէնի քերականութիւն**, Գ. գիրք, Պէրյուր, 1998, էջ 158-159:

դարու իննսունական թուականներուն (1998թ.) Կ. Առաքելեանի «Արդի հայերէնի քերականութեան» Գ. հատորի մէջ<sup>35</sup> հեղինակը *եղանակաւորող բառեր* խօսքի մասի փոխարէն կը գործածէ *վերաբերական* եզրոյթը: Նոյն տեսակէտը կը յայտնէ Յ. Չոլաքեան իր «Անդաստան» Գ. գրքի մէջ<sup>36</sup> (2010 թ.): Այսպիսով՝ արեւմտահայերէնի հայերէնագիտութեան մէջ պէտք է ընդունիլ տասը խօսքի մաս (ինչպէս արեւելահայերէնի մէջ)՝ ասոնց մէջ ընդգրկելով *եղանակաւորող բառերը (վերաբերականը)*:

### Օգտագործուած գրականութիւն

Արրահամեան Ս. Գ., Վերդեան Բ. Հ., Քոսեան Վ. Ա., Հայերէն լեզուի դասագիրք, երկրորդ հրատարակութիւն, Ե., 1966:

Արրահամեան Ս. Գ., Վերդեան Բ. Հ., Քոսեան Վ. Ա., Հայերէն լեզուի դասագիրք, երկրորդ հրատարակութիւն, Ե., 1968:

Այտընեան Հ. Արսէն Վ., Քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1883:

Առաքելեան Կարօ, Արդի հայերէնի քերականութիւն, Գ. գիրք, Պէյրութ, 1998:

Առաքելեան Կարօ, Տըստըզճեան Աղանի, Դիւրին հայերէն, Գ. գիրք, Բ. հրատարակութիւն բարեփոխուած, Պէյրութ, 2010:

Ասատուր Հրանդ եւ Զապէլ, Գործնական քերականութիւն արդի աշխարհաբարի, Կ. Պոլիս, 1902:

Ասատուր Հրանդ եւ Զապէլ, Գործնական քերականութիւն արդի աշխարհաբարի, Կ. Պոլիս, 1922:

Գազանճեան Յովհաննէս, Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի, միջին դասընթացք, Կ. Պոլիս, 1925:

Գազանճեան Յովհաննէս, Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի, միջին դասընթացք, Անթիլիաս-Լիբանան, 1980:

<sup>35</sup> Առաքելեան Կարօ, Տըստըզճեան Աղանի, նշ. աշխ., էջ 114:

<sup>36</sup> Չոլաքեան Յ., նշ. աշխ., էջ 131:

Թորոսեան Լեւոն, Հայ քերականագիտութեան արդի ցաւերը, «Շիրակ» ամսագիր, ԽԱ. տարի թիւ 9-10, 1997:

Մելքոնեան Ջարեհ, Գործնական քերականութիւն արդի հայերէնի լեզուի, Դ. տպագրութիւն, Պէրոյթ, 1972:

Մկրտիչեան Մկրտիչ, Քերականութեան դասեր, Բ. գիրք, (Նախակրթարանի Ե.-Ջ. կարգերուն համար), Հալէպ, 1962:

Շահէն բժ. Շահնուր, Համառօտ քերականութիւն եւ ուղղագրութիւն հայերէն լեզուի, Բ. գիրք, Ը. տպագրութիւն, Իսթանպուլ, 2001:

Չոլաքեան Յակոբ, Անդաստան, Գ., Հալէպ, 2010:

Տասնապետեան Եղուարդ, Քերականութիւն, Անթիլիաս, 1990:

Տօնէլեան Ջապէլ, Գործնական քերականութիւն արդի աշխարհաբարի, Բ. գիրք, Կ. Պոլիս, 1899:

Քիրքճեան Յարութիւն, Նոր քերականութիւն հայերէն լեզուի (Արեւմտահայերէն), (Միջնակարգ բաժնի Ա. տարի), Աթէնք, 1989:

Ֆիշենկճեան /Ֆչնկջեան/ Ա., Արեւմտահայերէնի քերականութեան պատմութիւն (Յետայտընեանական շրջան), Ե., 2018:

Ֆիշենկճեան Ա., Արեւմտահայերէնի դասագիրքերու զուգադրական քննութիւն (ձեւաբանութիւն).- Արեւմտահայերէնի հարցեր (գիտական ուսումնասիրութիւններ), Ա. պրակ/ [//http://language.sci.am/sites/default/files/arm\\_hartcer.pdf](http://language.sci.am/sites/default/files/arm_hartcer.pdf).

Ֆիշենկճեան Ա., Ածական եւ դերանուն խօսքի մասերու համեմատական քննութիւն (ըստ Ջարեհ Մելքոնեանի եւ Մկրտիչ Մկրտիչեանի դասագիրքերու).- [/http://language.sci.am/sites/default/files/lezow\\_ew\\_khosk\\_0.pdf/](http://language.sci.am/sites/default/files/lezow_ew_khosk_0.pdf) /«Լեզու և խոսք» խորագրով գիտական հոդվածների էլեկտրոնային ժողովածուում, Ե., 2019/.

Ֆիշենկճեան Ա., Արեւմտահայերէնի խօսքի մասերու քերականական կարգերու քննութիւն (անորոշ ածական, թէ՛ անորոշ դերանուն), Ջահուկյանական ընթերցումներ, Ե., 2020, էջ 147-159:

**Fishenkjian Ani, Tioyan Susanna- The Term Modal adverb According to Western Armenian Language Textbooks .-** From the time of Arsen Aydnyan until the 1960s, textbooks of Armenian grammar made in the Diaspora were mostly carried by A. Their influence. In the nineties of

the same century (1998) In Volume C of K. Arakelyan's "Modern Armenian Grammar", the author uses the term "relative" instead of the part that uses words. H. Cholakyan expresses the same opinion in the book "Andastan" C (2010). That is, in Armenology, one should accept ten parts of a word (as in Eastern Armenian), including in them (modal word).

**Keywords:** modal word, adverb, diaspora, Western Armenian, syntax, relative, grammatical order.

**Fishenkjian Ani-** Candidate of History Sciences, Institute of Language after H. Acharyan of NAS RA, Researcher.

**Tioyan Susanna-** PhD of Philology, Institute of Language after H. Acharyan of NAS RA, Senior Researcher.

**Фишенкджян Ани, Тиюян Сусанна- Термин модальное наречие по учебникам западноармянского языка.-** После Арсена Айтняна до 1960-х годов учебники армянской грамматики, издаваемые в диаспоре в основном находились под влиянием А. Айтняна. В 90-х годах того же века (1998 г.) в 3-м томе "Современной армянской грамматики" К. Аракеляна автор вместо слова модифицирующий упоминает соответствующий термин. Такую же точку зрения высказывает А. Чолакян в книге "Андастан" Г (2010 г.). Другими словами, в арменоведении следует принимать десять частей речи (как в восточноармянском), включая модифицирующие слова (относительные).

**Ключевые слова:** модифицирующее слово, наречие, диаспора, западноармянский, синтаксис, модальное, грамматический порядок.

**Фишенкджян Ани-** кандидат исторических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, научный сотрудник.

**Тиюян Сусанна-** кандидат филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, старший научный сотрудник.

## ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

### Հ.-Ե. \*(A)Ս(E)- «ՄԻՐԵԼ, ՈՒԶԵԼ, ՕԳՆԵԼ» ԱՐՄԱՏԻՑ ՍԵՐՎԱԾ ՀԱՅԵՐԵՆ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ<sup>1</sup>

**Զաքարյան Հովհաննես**

բանասիրական գիտությունների թեկնածու,

«Տաթև» գիտակրթական համալիր,

Լեզվաբանության բաժանմունքի ղեկավար.

hovzakaryan@yahoo.com

**Բանալի բառեր.** հայոց լեզու, հ.-ե. նախալեզու, արմատային տարբերակներ, սկզբնահնչյուն, աճական, ձայնդարձ, ածանց:

### Նախաբան

Հոդվածը նվիրված է հ.-ե. \*(a)ս(e)- «սիրել, ուզել, օգնել» պարզական արմատից անմիջականորեն սերված հայերեն մի շարք այնպիսի բառերի կամ արմատների ստուգաբանությանը, որոնք սկսվում են *վ-*, *գ-*, *ու-* կամ *աու-* հնչյուն(ներ)ով: Մրանցից խնդրահարույց են *վ-*ով սկսվողները, որոնք մինչ այժմ ավանդաբար համարվել են ոչ բնիկ ծագման: Այդ նախապաշարումը փորձել ենք հաղթահարել հայերենի *վ-* սկզբնահնչյունի՝ հ.-ե. սահող \*s-ին կամ անկայուն սկզբնաձայնավորին հաջորդող \*y ձայնորդից ծագած լինելու հիմնավորմամբ, որը տրված է հեղինակիս այլ հոդվածներում<sup>2</sup>. դա տեղի սղության պատճառով չենք կրկնում:

<sup>1</sup> Ներկայացվել է 10.04.2022, գրախոսվել՝ 11.05.2022:

<sup>2</sup> Տե՛ս **Հ. Զաքարյան**, *Հայերենի վ- սկզբնահնչյունի հնդեվրոպական ծագման մասին*. - «Հայոց լեզվի պատմական ուսումնասիրության արդի խնդիրներ» (խմբ.՝ Վ. Կատվայան), Ե., 2019, էջ 34-45, **Հ. Զաքարյան**, *Հ.-ե. \*(a)ս(e)- արմատից սերված հայերեն մի քանի բառերի ստուգաբանություն*. - «Հայերենագիտական առցանց գիտաժողով», ՀՀ ԳԱԱ ԼԻ, Ե., 2021. -

[http://language.sci.am/sites/default/files/zakaryan\\_hovhannes\\_0.pdf](http://language.sci.am/sites/default/files/zakaryan_hovhannes_0.pdf)



### Խնդրի դրվածքը և հետազոտության նպատակը

Հ.-ե. \*(a)u(e)- «սիրել, ուզել, օգնել» պարզական արմատի հայերեն ածանցյալներից մի քանիսը ստուգաբանված են և տեղ են գտել հանրահայտ բառարաններում: Սակայն հետազոտությունները ցույց են տալիս, որ դեռևս կան նույնարմատ չստուգաբանված կամ ոչ բավարար ճշգրտությամբ ստուգաբանված բառեր: Դրանց հայտնաբերումն ու ստուգաբանությունը կամ ճշգրտումը կարևոր խընդիր է հայերենի բառապաշարի բնիկ՝ հ.-ե. շերտի գիտական ուսումնասիրության ամբողջացման առումով: Միաժամանակ խնդիր է դրված ցույց տալու, որ իմաստով առնչվող բառերը հաճախ ունեն նաև ընդհանուր ծագում: Մա փաստում է բառերի՝ իմաստային փնջերով հետազոտությունների արդյունավետությունը: Խնդիրներից մեկն էլ կասկածի ենթարկելն է հայերենագիտության մեջ ընդունված կարծրատիպային այն կարծիքը, թե *ւ/ս* կզբնահնչյունը բնորոշ է բնիկ հայերեն արմատներին:

### Հետազոտության ընթացքը և արդյունքները

Այս արմատը գիտական աղբյուրներում ներկայացված է տարբերակներով՝ № 134. \*au-7, \*auē-, \*auēi- «սիրել, օգնել», № 2123, \*uek- «ուզել, կամենալ, ցանկանալ», № 2127, \*uel-2, \*ulei-, \*ulē(i)- «ցանկանալ, ընտրել», № 2137, \*uen-1, \*uenə- «ջանալ, ձգտել; ցանկանալ, սիրել», № 2221, (\*ureth- :) \*uroth-, \*urath- «աջակցել»<sup>3</sup>, \*awə- «ձգտել, ցանկանալ, բաղձալ», \*wek'- <\*w- «ցանկանալ, ուզել», \*wenə- «ցանկանալ, սիրել»<sup>4</sup>, \*au- «լավ վերաբերվել, սիրել, տրամադրված

<sup>3</sup> Տե՛ս J. Pokorny, *Indogermanisches etymologisches Wörterbuch*. Bern-München, 1959. - <http://dngnu.org/indoeuropean.html> (այսուհետև՝ Պոկ.):

<sup>4</sup> Տե՛ս S. Nikolaev, *Database of Indo-European etymology*.- <http://starling.rinet.ru/cgi-bin/response.cgi?root=config&morpho=0&basename=\data\ie/piet&first> (այսուհետև՝ Նիկ.):

լինել»<sup>5</sup>, \*(a).el «ցանկանալ, ընտրել»<sup>2</sup>, \*au-, \*Hauə- «սիրել, հաճել, տենչալ, օգնել»<sup>6</sup>, \*av- «հոգալ, օգնել, նպաստել»<sup>7</sup> և այլն:

Նշված աղբյուրներում առկա են այդ արմատից առաջացած հայ. աւ «1. խենթություն, մոլեգնում, կիրք, 2. շվարում», աւ-իւն «1. սեռական ցանկություն՝ կիրք, 2. ոգևորություն, եռանդ»<sup>8</sup> (Պոկ. № 134. \*աւ-7, \*աւե-, \*աւեի-, Նիկ. \*awə-, ՀՄԲ, 98, ՀԼՊ, 113), հաւան-իւմ «համակրել, դուրը գալ, հաճություն հայտնել» <\*Hauə-՝ \*աւ-7 (ՀԼՊ, 113)<sup>9</sup>, աւշ (օշ) «երանի (թե)» <\*au-sk- <\*au- (ՀՄԲ, 103), բաղձ-ալ «ցանկանալ, փափագել», գեղձ-ալ «ցանկանալ, ըղձալ», իղձ «ցանկություն, փափագ» <\*uel-d- <\*(a)uel- (Ջահ., 1967, 268-270, ՀՄԲ, 155)<sup>11</sup>, աւզն (օզն), աւզ-ուտ «օգնություն, նպաստ, վաստակ» <\*աւ-ս- <\*աւ-ս-ի սաստկական կրկնությանը (ՀՄԲ, 4, 606՝ ըստ Մեյերի)<sup>12</sup>, յաւժար (յօժար, յուժար) «հաճ և հավան, պատրաստակամ, հա-

<sup>5</sup> Տե՛ս նաև **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀՄԲ), հ. 4, Ե., 1979, էջ 606:

<sup>6</sup> Տե՛ս նաև **Գ. Դձաուկյան**, *Очерки по истории дописьменного периода армянского языка*, Ե., 1967 (այսուհետև՝ Ջահ., 1967):

<sup>7</sup> Տե՛ս նաև **Գ. Ջահուկյան**, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010 (այսուհետև՝ ՀՄԲ), էջ 98, **Գ. Ջահուկյան**, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987 (այսուհետև՝ ՀԼՊ), էջ 113:

<sup>8</sup> Տե՛ս նաև **Է. Աղայան**, *Բառարանական և ստուգաբանական հետազոտություններ*, Ե., 1974 (այսուհետև՝ Աղ.):

<sup>9</sup> Հ. Աճառյանը **աւ-իւն** բառը (ածանցի համար հմտ. *արիւն, աճիւն, անկիւն, հերիւն, արդիւն* ևն) համարել է **աւիլ** «1. ցնորվել, մոլեգնել, կրքոտել, 2. շփոթվել, շվարել, 3. խրտնել» բայի ածանցյալ առանց ստուգաբանելու (ՀՄԲ, 1, 360-361):

<sup>10</sup> Այս բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀՄԲ, 3, 68): Գ. Ջահուկյանը ավելի ուշ ենթադրել է իրանական փոխառություն՝ առանց ստույգ աղբյուր մատնանշելու (ՀՄԲ, 453): *Wiktionary* էլ. բառարանը (<https://en.wiktionary.org/wiki>, այսուհետև՝ ՎԲԱ) համարել է փոխառություն մ.իրան. *\*havvān* <իրան. *\*ham-vāna*- <նախահնդիրան. *\*van-* «հավանել, ցանկանալ, սիրել» սկզբնաղբյուրից:

<sup>11</sup> Հետազայում Գ. Ջահուկյանը *բաղձալ, իղձ* հոմանիշների ծագման փոքր-ինչ այլ մեկնաբանություններ է տվել (ՀՄԲ, 115, 285):

<sup>12</sup> Տե՛ս նաև **Մ. Աղաբեկյան**, *Հայերենի համեմատական ուսումնասիրության հարցեր*, Ե., 2017, էջ 16: Գ. Ջահուկյանն այս բառը ենթադրել է իրանական փոխառություն՝ վկայակոչելով Բենվենիստի (<\*apīgūn- <abi-gūna-), Մեմերենյիի (<\*abigan) ստուգաբանական փորձերը, և նվազ հավանական է համարել կապը հ.-ե. \*au- «լավ վերաբերվել, սիրել, տրամադրված լինել» արմատի հետ (ՀՄԲ, 99), թեև նախապես ընդունել է հ.-ե. \*au-g- նախածնը \*g աճականով (Ջահ., 1967, 319):

մաձայն» <\*au-gh- (ՀՄԲ, 550՝ կասկածով)<sup>13</sup>, *գուն* «ջանք, ճիգ, փույթ, փորձ» <\*von- կամ \*vōn- <\*ven- «1. ջանալ, նվաճել, 2. սիրել, ցանկալ» (ՀՄԲ, 1, 592-593, 4, 302), <\*uon- «ձգտել, ցանկանալ, ձեռք բերել, հաղթել» (ՀՄԲ, 172), <\*wenə- «ցանկանալ, սիրել» (Նիկ.) բառերը:

Հ.-ե. այս արմատի այլալեզու ածանցյալները իմաստային բազմաթիվ ճյուղավորումներ ունեն, որոնց արտացոլումները հաճախ կարելի է գտնել նաև հայերենում: Դրանք էլ դարձել են սույն հետազոտության առարկան: Այդ բառերն են՝ *վայել*, *գոհ*, *գողտր(իկ)*, *վոնդիկ*, *աւժիտ*, *աւժանդակ*, *աւձան*, *վիզ(ն)*, *նուէր*:

*Վայել* «1. բերկրանք, հաճույք, զվարճություն, 2. արժանի, պատշաճ, հարմար» (որից՝ *վայելել* «1. հաճույք ստանալ, բավականությունը օգտվել, ըմբռնել, անուշ անել, ճաշակել, արժանանալ, 2. փառավորվել, գոհանալ, 3. հարմարել, պատշաճել», *վայելուչ* «1. պատշաճ, կարգին, օրինավոր, 2. բարետես, գեղեցիկ, սիրուն») բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀՄԲ, 4, 299-300): Գ. Ջահուկյանը սկզբնապես, ըստ Տերվիշյանի, բխեցրել է հ.-ե. \*uei- «նետվել; ձգտել, տենչալ» արմատից (Ջահ., 1967, 265), բայց հետագայում, հրաժարվելով Հ. Աճառյանի կողմից նախապես մերժված այդ կարծիքից, ենթադրել է փոխառություն իրանական աղբյուրից՝ «սակայն բուն աղբյուրը չի հավաստված» նշումով (ՀՄԲ, 702): Այս արմատը Հ. Մարտիրոսյանը ևս, ըստ Տերվիշյանի, Շեֆթելովիցի և Ջահուկյանի, կասկածով համարել է հ.-ե. Ծագման<sup>14</sup>: Այս տարակարծությունները, ինչպես նաև այլալեզու նույնարմատ գուգահեռները<sup>15</sup>

<sup>13</sup> Հ. Աճառյանն այս բառը չի ստուգաբանել (ՀՄԲ, 3, 413), իսկ Գ. Ջահուկյանն իր իսկ առաջարկած բնիկ ծագման վարկածի համեմատ ավելի հավանական է համարել իրանական աղբյուրից փոխառություն լինելը, թեև որևէ իրական կամ ենթադրյալ սկզբնաձև չի մատնանշել (ՀՄԲ, նույն տեղում): Բայց հմմտ. վերոհիշյալ *h-ai-an* բառը, որ թե՛ իմաստով, թե՛ ձևով համահունչ է *j-ai-ǰ-ur*-ին:

<sup>14</sup> **H. Martirosyan**, *Etymological dictionary of the Armenian inherited lexicon*, Brill, 2008, էջ 591-592:

<sup>15</sup> Հմմտ. հ.հնդկ. *vánati*, *vanóti* «հավանել, սիրել», թոխ. *A wañi*, թոխ. *B wīna* «հաճույք, բավականություն, վայելք», իեթ. *wen-*, *went-* «սեր անել», լատ. *venus*, *-eris* «սեր, սիրո հաճույք», կիմր. *gwēn* «ծիծաղ, ժպտալ», մ.իռլ. *fohn* «հաճույք, զվարճանք», հ.անգլ. *wynn* «երանություն», հ.բ.գերմ. *wunna* «երանություն, խաղաղություն», մ.բ.գերմ. *wunne*, *wünne* «ուրախ, հավես, հաճելի, երանելի, փառավոր», գերմ.

նկատի ունենալով՝ առաջարկում ենք նոր՝ *վայել* \*(a)uai-ել- < \*(a)u(e)- «սիրել, ուզել, օգնել» ստուգաբանությունը<sup>16</sup> (-ել/-ալ/-իլ ածանցի համար հմմտ. *այց-ել-ել, արգ-ել-ել, տապ-ալ-ել, թավ-ալ-ել, ծավ-ալ, տարգ-ալ, տես-իլ, կաթ-իլ* և այլն (տե՛ս ՀԱԲ, արգել)):

*Գոհ* «հավան, հոժար, բավական, բավարարված, շնորհակալ» (որից՝ *գոհանալ* «1. բավարարվել, բավականանալ, հավան՝ հոժար լինել, 2. բավականություն ստանալ, ուրախ լինել, 3. շնորհակալ լինել») բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 1, 572): Գ. Ջահուկյանը ենթադրել է փոխառություն իրանական աղբյուրից՝ «բայց բուն աղբյուրը չի հավաստված» նշումով (ՀՄԲ, 166): Իսկ այն փաստարկը, թե «իրանական ծագման վկայություն պետք է համարել *դժգոհ* ձևը, որ հավանաբար բուն իրանական կազմություն է (*duž-góh*)» (նույն տեղում), թույլ է, քանի որ *դժ* ժխտական նախածանցը՝ թեկուզ փոխառյալ, բայց հայերենում հստակ գիտակցվում է, և դրա վկայությունն է բնիկ հայերեն հիմքով *դժվիտ* կազմությունը: Իսկ *դժգոհ* ածանցյալը Հ. Աճառյանի «Արմատական բառարանում» որպես գլխաբառ չի տրվում իբրև իրանական պատրաստի փոխառություն ոչ՝ իրական և ոչ էլ նույնիսկ ենթադրյալ նախաձևից (ինչպես, օրինակ՝ *դժխեւ, դժգոյն, դժկամ, դժկերպ* բառերը): Եվ չնայած Գ. Ջահուկյանն իր «Ստուգաբանական բառարանում» ավելացրել է *դժգոհ* գլխաբառ՝ ենթադրելով իրանական ամբողջական փոխառություն, սակայն որևէ սկզբնաղբյուր ոչ մատնանշել է, ոչ էլ վերականգնել (ՀՄԲ, 196): Այս իրավիճակում մեզ իրավունք ենք վերապահում առաջարկելու *գոհ* արմատի բնիկ հայերեն ծագման վարկած՝ *գոհ* <\*u-ti- <\*(a).(e)- «սիրել, ուզել, օգնել» ստուգաբանական բանաձևով, որում \*ti-ն ածանց է (հմմտ. *բահ* <\*bhər-ti- (ՀՄԲ, 192, 113))<sup>17</sup>:

Wunsch «ցանկություն», Wonne «երանություն» (Նիկ., \*wənə-), հ.անգլ. īoe «դյուրին, հեշտ, հաճելի», ēaœ (ēœ, ūœ) «դյուրին, հարթ» (Նիկ., \*awə-), հուն. αἴτας «ընկեր, սիրեցյալ», հ.լիտվ. auštis «թարմանալ, կազդուրվել, վայելել» (Պոկ., № 134) և:

<sup>16</sup> Հմմտ. համանուն *վայ-ել* «ավաղել» <\*yai- (ՀԼՊ, 155, 198) կամ <\*(o)way- (Նիկ) բառը:

<sup>17</sup> Այլալեզու նույնարմատ զուգահեռներից հիշենք՝ հ.հնդկ. ávati «հավանություն տալ, բավարարել», ávas- «բավարարվածություն», գոթ. awi-լիսի «շնորհակալություն, զոհունակություն» (Պոկ., № 134), հ.նորվ. una «զոհ լինել» (Նիկ., \*wənə-) և:

*Գողտր(իկ)* «1. փափուկ, քնքուշ, մեղմ, 2, դուրեկան, սիրունիկ, 3, խխրթեղի, հաճելի, 4. լույծ, հեղուկ» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀՄԲ, 1, 574): Գ. Ջահուկյանը կասկածով դուրս է բերել հ.-ե. \**uol-d-ur-* \**uel-* «պտտել, ոլորել» նախաձևից՝ «թեքվող, դյուրաթեք, ճկուն» > «փափուկ» իմաստային անցումով (ՀՄԲ, 166): ՎԲԱ-ում տրված են այս երկու կարծիքները, այնուհանդերձ բառը համարված է անհայտ ծագման: Կարծում ենք՝ ավելի հարմար է այս բառը կապել հ.-ե. *ayē-* «սիրել, ուզել, օգնել» արմատի հետ<sup>18</sup>: Հետևաբար առաջարկում ենք *գողտր* <\**uo-l-d-r* <\*(a)(e)- «սիրել, ցանկանալ» ստուգաբանությունը, որտեղ \**l-*ն և \**d-*ն՝ նախալեզվյան, իսկ *tr-*ն հետնախալեզվյան աճականներ են<sup>19</sup> (\**d>tr* աճականի համար հմմտ. *գաղտ*, *գողտ-ուկ* ևն, իսկ *tr* աճականի համար հմմտ. *ազդր*, *ասր*, *եզր*, *ծաղր*, *փոքր*, *ոսկր* ևն<sup>20</sup>:

<sup>18</sup> Այս արմատից են ծագել նաև *գողտր*-ին իմաստով առնչվող հ.հնդկ. *vānas-* «գրավչություն, սիրունություն», լատ. *venus*, -*eris* «սիրունություն, հմայք; սիրահար», *Venus -eris* «Վեներա, սիրո աստվածուհի», *venustus* «հմայիչ, նագելի, ջրնաղ, սիրուն», մ.բ.գերմ. *wunne*, *wünne* «ամենագեղեցիկը և լավագույնը» (Նիկ., \**wenə-*), հուն. *έν-ηρός* «մեղմ, փափուկ», հ.բ.գերմ. *ōdmuoti*, հ.սաքս. *ōthmōdi* «խոնարհ, համեստ», հ.բ.գերմ. *ōdi*, հ.սաքս. *ōthi*, անգլ.-սաքս. *teþe*, *ēaþe* «թեթև, հարմարավետ» (Պոկ., № 134), հ.նորվ. *auð-*, նորվ. *auð-* «թեթև» (Նիկ., \**awə-*) աճանցյալները:

<sup>19</sup> Կա նաև *գողտ* (*գողկ*) «մահիճ» բառը (Մալխ., 1, 457), որը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀՄԲ, 1, 573): Գ. Ջահուկյանը կասկածով դուրս է բերել հ.-ե. \**uol-d-ur-* \**uel-* «պտտել, ոլորել» նախաձևից (ՀՄԲ, 166): Թվում է՝ *գողտր* բառի օրինակով՝ սա էլ պետք է կցենք հ.-ե. \**ayē-* «սիրել, ուզել, օգնել» արմատին: Սակայն իմաստից և ձևից ելնելով՝ ավելի հավանական ենք համարում այն, որ այս բառը անկողին (<\**hան-կող-ին* <*կող(ն)* <\**gol-* «ճյուղ» (ՀՄԲ, 416)) բառի հին կրճատված տարբերակ է՝ *տ* կամ *կ* աճականով (հմմտ. բրբռ. *ընգօղին*, *գօղինք*, *գօղենք*, *գօղվենք* «ամուսնական առագաստ, անկողինների ծալք», *ընկողունագ* «անկողինների ամբողջությունը» ևն), մանավանդ որ դրա *կող* արմատը ևս ունի բարբառային *գող*, *գօղ*, *գօխք*, *գօխգ*, *գօղ*, *գիւղ* տարբերակները (ՀՄԲ, 2, 620-621): Գ. Ջահուկյանը նույն տեղում գրել է՝ «հավանաբար այստեղից է նաև *գաղակ* «մահիճ» բառը» (տե՛ս նաև ՀՄԲ, 146), որը Հ. Աճառյանը ենթադրել է *գաղակ* «օղակ» բառի սխալագրություն (ՀՄԲ, 1, 504): Կարծում ենք՝ *գաղակ*-ը ևս կարելի է ծագմամբ կապել *անկողին* բառի հետ:

<sup>20</sup>Տե՛ս Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 3, Ե., 1957, էջ 62-64:

*Վոնդիկ (ըռնտիկ, ռնդիկ, ռնտիկ, ռնտկիկ, ռունտիկ)* «1. գեղեցիկ, սիրունիկ, 2. առողջ, 3. շատ լավ, 4. վայելույշ, կոկիկ»<sup>21</sup>, *ըռունտ (ռունտ)* «1. գեղեցիկ, սիրուն, 2. առողջ»<sup>22</sup>, *վոնտել (ռնտնալ, ըռնտնալ, ըռըտնալ, հերնտիլ)* «գեղեցկանալ, սիրունանալ, լավանալ, առողջանալ, լավ զգալ» (ՀԼԲԲ, Զ, 90, Ե, 235-236) բառերը<sup>23</sup> ստուգաբանական բառարաններում չկան: Ելնելով վերոհիշյալ *գողտրիկ, վայելույշ* բառերի հետ հոմանշությունից՝ առաջարկում ենք *վոնդ-իկ* < \**վոունդ* < \**վիռունդ* / *վուռունդ*<sup>24</sup> < \*(a)uē-ro-nti- / \*(a)uō-ro-nti- < \*(a)u(e)-«սիրել, ցանկանալ» ստուգաբանությունը, որտեղ \*-ro-ն և \*-nti-ն՝ նախալեզվյան, իսկ *-իկ*-ը հետնախալեզվյան ածանցներ են (-nti>-(w)նդ / (ու)նդ ածանցի համար հմմտ. *եռ-անդ, արգ-անդ, վարս-անդ, կալ-անդ, հիվ-անդ, ծն-ունդ, սեր-ունդ, էլ-ունդ, սն-ունդ* և այլն (տե՛ս ՀՄԲ, 797)): Ինչ վերաբերում է բառի մի շարք տարբերակներում /վ սկզբնահնչյունի անկմանը, ապա դա թերևս վերապրուկ է Գ. Ջահուկյանի արձանագրած \**u* > Ø անցման (օրինակ՝ *իդձ* < \*(u)ēl-d- < \*(a).el- «ցանկանալ, ընտրել»՝ *գեդձ-ալ* «ցանկանալ, ըղձալ» բառին զուգահեռ) (տե՛ս Ջահ., 1967, 268-269): Իսկ քանի որ հայերենին այնքան էլ բնորոշ չէ *ռ*- սկզբնահնչյունը, *վ*-ն կորցրած տարբերակների մի մասում որպես սկզբնահնչյուն պահպանվել է *վ*-ին հաջորդող գաղտնավանկի *ը*-ն, որը մի դեպքում դարձել է *ե*՝ ստանալով *հ*-

<sup>21</sup> Տե՛ս *Հայրցլեզվի բարբառային բառարան* (այսուհետև՝ ՀԼԲԲ), հ. Զ, էջ 90, Ե., 2010, էջ 235:

<sup>22</sup> Տե՛ս **Ս. Մալխասեանց**, *Հայերեն բացատրական բառարան* (այսուհետև՝ Մալխ.), հ. 4, Ե., 1945, էջ 70:

<sup>23</sup> Այս բառն ունի համանուններ՝ *վոնդել (վոնտել)* «1. մեկի վարքով՝ կյանքով հետաքրքրվել, 2. հաշվի առնել այն ամենը, ինչ վիրավորական է իր համար» (ՀԼԲԲ, Զ, 90), *վոնդել* «շաղախվել, վարակվել» (Մալխ., 4, 353), *վոնդել (վոնտել)* «վանել, հեռացնել, դուրս անել, քշել, վտարել» (ՀՄԲ, 4, 632-633, ՀՄԲ, 713):

<sup>24</sup> \**վիռունդ* / *վուռունդ*՝ հնարավոր տարբերակային ձևերից որևէ մեկին նախապատվություն տալուն չեն օգնում ո՛չ հայերեն, ո՛չ այլալեզու զուգահեռները: Ունենք մի կողմից՝ նույնարմատ *վիզ(ն)*, *իդձ*, հ.հնդկ avitar-, հ.հուն. aiti-s «սիրելի» (Նիկ., \*awə-) բառերը, որոնք նույն դիրքում ունեն *ի*, մյուս կողմից՝ *զուն*, մ.բ.գերմ. wunne, wünne «ամենագեղեցիկը» (Նիկ., \*wenə-) բառերը՝ *ու*-ով: Ինչ վերաբերում է վերջին վանկի *ու* ձայնավորին՝ \*ro ածանցի կարճ *o*-ի դիմաց, ապա դա հաջորդող ռնգային *ն*-ի ազդեցությամբ է (հմմտ. \*pont- > *հուն* «գետուղի»՝ ՀՄԲ, 122-123):

նախահավելված (*հերնտի*):  $\text{F} > \text{n}$  անցումը հաջորդող ոնգային *ն-*ի ազդեցությամբ է տեղի ունեցել:

*Աւժիտ* (*odʃit*) «նվեր, նպաստ» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 4, 610): Է. Աղայանը համարել է իրանական փոխառություն ենթադրյալ *\*av-jitay* (<*\*av-* «հոգալ, օգնել, նպաստել») «նպաստ ապրելուն» կազմությունից (Աղ., 156): Գ. Ջահուկյանը, քիչ հավանական համարելով Է. Աղայանի վարկածը, ենթադրել է փոխառություն իրանական ենթադրյալ *\*aw-žit* (<*abi-jiti*) կազմությունից (ՀԱԲ, 102): Նկատի ունենալով այս տարակարծությունները, այլալեզու նույնարմատ գուգահեռները<sup>25</sup>, ինչպես նաև այն փաստը, որ օժիտը օգնության ձև է նորաստեղծ ընտանիքին (տե՛ս վերոհիշյալ *աւզն* բառի ստուգաբանությունը)՝ կարելի է այս բառը ստուգաբանել *աւժիտ* <*\*av-g<sup>w</sup>hi-* <*\*(a)u(e)-* «վիրել, օգնել, նպաստել» բանաձևով<sup>26</sup> (*-իտ* ածանցը *-ատ/-ուտ*-ի տարբերակ է, հմմտ. *օգ-ուտ, կողոպ-ուտ, արմատ, կտավ-ատ* ևն (տե՛ս նաև ՀԱԲ, 800), իսկ *զ/ժ* հերթազայության համար հմմտ. *մէզ – մուժ, տուգանել – տոյժ, առ-ոյզ – ոյժ* ևն<sup>27</sup>):

*Աւժանդակել* (*odʃanʒakel*) «օգնել, նպաստել, սատարել, աջակցել, գործակցել» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 4, 610): Գ. Ջահուկյանը, հետևելով Բենվենիստին և Բեյլիին, համարել է փոխառություն իրանական ենթադրյալ *\*aw-žand* կազմությունից պակաս հավանական համարելով Փերիխանյանի ենթադրած իրանական *\*abi-ujant* նախաձևը (ՀԱԲ, 101): Ի հեճուկս այս տարակարծությունների՝ դժվար չէ նկատել, որ այս դեպքում առկա է *աւժիտ* բառի նույն *աւժ-* արմատը: Իսկ *-անդակ-*ը (հմմտ. նաև *այլ-անդակ,*

<sup>25</sup> Հմմտ. հ.հնդկ. *avas-* «աջակցություն, հովանավորություն, բարեհաճություն», սնի-ի «դրամական աջակցություն, օգնություն», ավեստ. *avaiti* «հոգալ, օգնել», թոխ. *A wa-* «տալ, հանձնել», հուն. *έν-դής* «բարեսիրական» (*\*ev-āh̥s*), լատվ. *ataust* «հյուրապիրել», մ.կիմր. *ri-m-aw* «նա ինձ շնորհում է» (Պոկ., № 134.), հ.իռլ. *fine* «հարազատություն, ցեղ, ընտանիք», *coibnis* «հարազատություն», հ.բրետ. *coguenou* «հարազատ, հայրենի», բրետ. *gwenn* «ցեղ, տոհմ», մ.իռլ. *fonn* «ցանկություն, մաղթանք» (Նիկ., *\*wenə-*) ևն:

<sup>26</sup> Հ.-ն. *\*g<sup>w</sup>hi > ʃ* անցման համար հմմտ. *\*ēg<sup>w</sup>hi- > ʃ* (ՀԱԲ, 284, ՀԱԲ, 2, 238):

<sup>27</sup> Տե՛ս նաև Ն. Միմոնյան, *Ստուգաբանական դիտողություններ. վայթել/վարթել /ոթել.* — «Լեզու և լեզվաբանություն» (խմբ.՝ Վ. Համբարձումյան), հմ. 2, Ե., 2008, էջ 3-6:

*են-անդակ, սասպ-անդակ* են) բաղադրյալ ածանց է՝ *-անդ+ակ* (*-անդ*-ի համար տե՛ս վերը՝ *վռնդիկ* բառի առիթով)<sup>28</sup>:

*Աւճան (օճան, ոճան)* «1. օգնություն, 2. հնար, միջոց, 3. թույլ-տվություն, 4. բարիք» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 4, 613): Գ. Ջահուկյանը ենթադրել է, որ կապ ունի *աւժանդակ* հոմանիշի հետ (ՀՄԲ, 102)<sup>29</sup>: Ելնելով *աւզն* և *աւժ-իտ* բառերի հետ թե՛ իմաստային, թե՛ ձևային (*q/d/ճ* հերթագայությամբ) նմանությունից առաջարկում ենք *աւճ-ան* <\*au-d-io-<\*(a)ս(ե)- «սիրել, ուզել, օգնել» ստուգաբանությունը, որտեղ \*d-ն աճական է, io-ն՝ ածանց<sup>30</sup> (*-ան* ածանցի համար հմմտ. *շրջ-ան, խոտ-ան, խար-ան, շար-ան, պար-ան, ոլոր-ան* են (տե՛ս նաև ՀՄԲ, 796)): Վաղուց է նկատվել *օգնել, օժիտ, օժանդակ, օճան* հոմանիշ բառերի հնարավոր ծագումնաբանական կապը (ՆՀԲ, Հյուբշման, Տերվիշյան և այլք), սակայն ներկայումս, ինչպես տեսանք, առկա են տարակարծություններ: Մեր մոտեցումը համակարգային է, որի շնորհիվ նաև ծագումնաբանական կապ է հաստատվում իմաստով սերտորեն առնչվող այդ բառերի միջև<sup>31</sup>:

*Վիզ(ն)* «օգնություն, պաշտպանություն» բառը (որից՝ *գորա-վիզն* «օգնական, սատար») Հ. Աճառյանը չի ստուգաբանել մերժելով Տերվիշյանի առաջարկը՝ կապելու *օգնել, օճան, օժիտ, օժանդակ* և այլ բառերի հետ և բխեցնելու հ.-ե. \*vag- «աճել, զորանալ, օգնել» արմատից (ՀԱԲ, 4, 337): Գ. Ջահուկյանը ենթադրել է իրանական

<sup>28</sup> Օտարալեզու նույնարմատ զուգահեռներից հիշենք՝ հ.հնդկ. *ōman-* «օժանդակ, բարենպաստ, օգտակար», *ōmán-* «բարեհաճություն, պաշտպանություն, աջակցություն», *ōma-*ի «օգնական, ընկեր», *ōti-*ի «հովանավորություն, պաշտպանություն», *avitár-* «հովանավոր, մեկենաս», ավեստ. *avah-* «օգնություն, աջակցություն», *aoman-* «օժանդակ, նպաստող, աջակցող», թոխ. *A w-aste* «պաշտպան» (Պոկ., № 134.), անգլ.-սաքս. *wraðu* «աջակցություն», *wreðian* «աջակցել», հ.սաքս. *wreðian* «աջակցել», *giwreðian* «հենարան տալ», ավեստ. *urvaøa-* «ընկերական, ընկեր» (Պոկ., № 2221, (\**ureth-*) \**uroth-*, \**urath-* «աջակցել») ևն:

<sup>29</sup> Նա ընդունել է կապ նաև *աւզն* (<հ.-ե. \*au-g-) արմատի հետ (Ջահ., 1967, 319):

<sup>30</sup> Հմմտ. *խիդճ* <\*khel-d-io-, *խիճ* <\*khi-d-io- (ՀՄԲ, 330-331):

<sup>31</sup> Նույնարմատ զուգահեռներից հիշենք՝ հ.հնդկ. *ávati* «օգնել, նպաստել, խրախուսել», հ.իռլ. *con òi* «պաշտպանված», հ.սկանդ. *audmjǫkr* «պատրաստակամ» (Պոկ., № 134.), ինչպես նաև *աւժիտ* և *աւժանդակել* բառերին կից օրինակները:



փոխառություն՝ առանց սկզբնաձև մատնանշելու (ՀՄԲ, 711): Ելնե-լով իմաստից և նկատի ունենալով *g- u/- ai* լծորդությունը՝ առաջարկում ենք *վիզ* <\*(a)uē-g<sup>w</sup>h/gh- <\*(a)u(e)- «սիրել, ուզել, օգնել» ստուգաբանությունը, որտեղ \*g<sup>(w)</sup>h-ն աճական է<sup>32</sup>:

*Նուէր* «1. ընծա տաճարին, պարզև, ձոն, 2. երախայրիք, նուբար, 3. գոհ, մատաղ» բառը Հ. Աճառյանը համարել է փոխառություն պահլ. ենթադրյալ \*nivēd բառից (ni- «ցած» + vaēd- «գիտենալ, ճանաչել» <\*waid- «իմանալ») (ՀՄԲ, 3, 469-470): Գ. Ջահուկյանը համաձայն է այդ կարծիքին (ՀՄԲ, 573): Մակայն իմաստային առումով սա համոզիչ չէ: Ուստի առաջարկում ենք *նուէր* <\*նի-ուէր <\*նի-ւէր <\*ni-uēi-r-/\*ni-uōi-r- <\*(a)u(e)- «սիրել, ուզել, օգնել» ստուգաբանությունը<sup>33</sup> (*ն(ի)-* <\*ni- «ցած, ստոր; սակավ» նախաձանցի համար հմմտ. *նեցուկ* <\*նի-յեց-ուկ <յենուլ, նայել <\*նի-հայել, նիստ <\*նի-սիդ, նիւթ <\*նի-հիւթ, նկուղ <\*նի-կուղ, նշոյլ <նշոդ <\*նի-շոդ, նսեմ <\*նի-սեմ, նստակ <\*նի-յստակ են)<sup>34</sup>: Այս բառի բնիմաստը կարելի է ենթադրել «գոհասեղանին դրված ընծա» նշանակությունը:

### Եզրակացություն

Այսպիսով ներկայացրինք հայերեն մի շարք բառեր, որոնք մինչ այժմ համարվել են կա՛մ անհայտ ծագման, կա՛մ վիճարկելի ստուգաբանությամբ, կա՛մ փոխառություն այլ լեզվից: Հնչյունային, ձևային և իմաստային վերլուծությունների հիման վրա առաջարկվել են այդ բառերի ստուգաբանության նոր վարկածներ, որոնց համաձայն՝ դրանք սերված են հ.-ե. \*(a).(e)- «սիրել, ուզել, օգնել» արմատից: Այս բառերը կազմում են հոմանիշային խմբեր (*աւծիտ – աւծանդակություն – աւճան – վիզն – նուէր, վայել – գոհ, գողտրիկ – վռնդիկ*), որոնք առնչվում են իմաստային հանրության

<sup>32</sup> Արմատավերջի \*g<sup>(w)</sup>h-ի համար հմմտ. \*meigh- > *ւէզ*, \*ghogho- > *գոգ* «գիրկ», (ՀՄԲ), \*g<sup>w</sup>hā-g<sup>w</sup>h- > *ձագ*, \*vog<sup>w</sup>h- > *գոգ* «ասել» (ՀՄԲ) և այլն:

<sup>33</sup> Այս դեպքում ենթադրել ենք ոչ թե \*-ro աճանց, այլ \*r աճական՝ նկատի ունենալով, որ *նուէր* բառը ոչ թե *n*, այլ *h-ai* հոլովման է պատկանում:

<sup>34</sup> Տե՛ս ՀՄԲ, համապատասխան բառահոդվածները, ինչպես նաև ՀԼՊ, 245, *Հայոց լեզվի պատմական քերականություն*, հ. II, Ե., 1975, էջ 54-55:

կապերով: Դրանց միջև փորձել ենք տեսնել նաև ձևային-ծագումնաբանական ընդհանրություն՝ հիմնավորելով դա ներքին ու արտաքին համեմատություններով և ստուգաբանական բանաձևումներով: Հատկանշական է, որ հողվածում որպես հ.-ե. ծագման բնիկ հայերեն բառեր ներկայացվածներից մի քանիսը *վ/* սկզբնահնչյունով են (*վայել(ել), վռնդիկ, վիզն*), և դա օրինաչափ երևույթ է, այլ ոչ թե շեղում:

### Օգտագործված գրականություն

Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հհ. 1-4, Ե., 1971-1979:

Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Ե., 1957:  
Հայոց լեզվի բարբառային բառարան, հհ. Ա-Է, Ե., 2001-2012:

Մալխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հհ. 1-4, Ե., 1944-1945:

Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:

Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:

Джаукян Г., Очерки по истории дописьменного периода армянского языка, Е., 1967:

Nikolaev S., Database of Indo-European etymology / <http://starling.rinet.ru/cgi-bin/response.cgi?root=config&morpho=0&basename=\data\ie\piet&first>

J. Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch. Bern-München, 1959 / <http://dnghu.org/indoeuropean.html>

Wiktionary / <https://en.wiktionary.org/wiki>

Martirosyan H., Etymological dictionary of the Armenian inherited lexicon, Brill, 2008:

Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. II, Ե., 1975:

Աղայան Է., Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974:

Աղաբեկյան Մ., Հայերենի համեմատական ուսումնասիրության հարցեր, Ե., 2017:

Միմոնյան Ն., Ստուգարանական դիտողություններ. *վայթել/վաթել/նթել*, «Լեզու և լեզվաբանություն» (խմբ. Վ. Համբարձումյան), հմ. 2, Ե., 2008, էջ 3-6:

**Zakaryan Hovhannes- Etymology of Several Armenian Words Derived from PIE Root \*(a)u(e)- «to Love, to Want; to Help».** – The article, dwelling upon phonetic, morphemic and semantic analyses, puts forward the following new etymologies: վայել «deserving» \*(a)uai-ել- <\*(a).(e)- «to love, to want; to help», գոհ «satisfied» <\*uo-ti-, գողար «pleasant, nice» <\*uo-l-d-ր, վնդ-իկ «pretty» <\*(a).ērō-nti-/\*(a).ō-ro-nti-, ամժ-իս «dowry» <\*au-g<sup>w</sup>h-, ամճ-ան «help, aid» <\*au-d-io-, վիզ(ն) «protection» <\*(a)uē-g<sup>(w)</sup>h-, նուէր «gift» <\*ni-uei-r-/\*ni-uo-i-r- etc.

**Keywords:** Armenian, PIE, root variants, initial sound, determinative, vowel gradation, affix.

Zakaryan Hovhannes, PhD of Philology, the Head of Linguistic Department of "Tatev" Center of Research and Education.

**Закарян Оганес – Этимология некоторых армянских слов, возникших от ПИЕ корня \*(a)u(e)- "любить, хотеть; помогать".** - В настоящей статье на основе фонетического, словообразовательного и семантического анализов предлагаются следующие новые этимологии: վայել «достойный» \*(a)uai-ել- <\*(a).(e)- «любить, хотеть; помогать», գոհ «удовлетворённый» <\*uo-ti-, գողար «приятный» <\*uo-l-d-ր, վնդ-իկ «симпатичный, красивый» <\*(a).ērō-nti-/\*(a).ō-ro-nti-, ամժ-իս «приданое» <\*au-g<sup>w</sup>h-, ամճ-ան «помощь» <\*au-d-io-, վիզ(ն) «помощь, защита» <\*(a)uē-g<sup>(w)</sup>h-, նուէր «подарок» <\*ni-uei-r-/\*ni-uo-i-r- и т. д.

**Ключевые слова:** армянский язык, ПИЕ язык, корневые варианты, начальный звук, детерминатив, чередование, аффикс.

Закарян Оганес, кандидат филологических наук, руководитель лингвистического отдела Научно-образовательного комплекса "Татев".

## ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐ<sup>1</sup>

### Տիոյան Սուսաննա

բանասիրական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,  
ավագ գիտաշխատող. [susannatioyan@yahoo.com](mailto:susannatioyan@yahoo.com)

### Ֆիշենկճեան Անի

պատմական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,  
գիտաշխատող. [fishenkjianani@gmail.com](mailto:fishenkjianani@gmail.com)

**Բանալի բառեր.** հատուկ անուն, տառադարձում, արտասանական առանձնահատկություններ, միջնորդաբար, տարածքային ստորաբաժանում, արտասանական տարբերակ, օգտատեր:

### Նախաբան

Խոսքը, մասնավորապես, ֆրանսերեն-հայերեն (արևելահայերեն/ արևմտահայերեն) հատուկ անուն-ազգանունների, նան՝ տեղանունների գրադարձության (տվյալ պարագայում՝ տառադարձման) մասին է, որը, ի մասնավորի, վարչագործարարական ոլորտներում մեծ խնդիրների է հանգեցնում: Տրանսիայում՝ Փարիզի մեր գործընկերների կողմից պարբերաբար ահազանգեր ենք ստանում ֆրանսերեն-հայերեն գործնական փաստաթղթերի (հիմնականում՝ անձնագրերի) թարգմանության հետ կապված թյուրըմբռնությունների՝ անգամ դատական վեճերի հանգելու մասին: Խնդիրը ֆրանսերեն-հայերեն հնչարտասանական անհամապատասխանությունները չեն (ֆրանսերենը միանգամայն կարողունակ է արտահայտելու հայերենի հնչյունական համակարգը),

<sup>1</sup> Ներկայացվել է 14.09.2022, գրախոսվել՝ 13.10.2022:

այլ ֆրանսերենի արտասանական առանձնահատկությունները (ներառյալ վերհատոյթային նշանների հարուստ համակարգը). օրինակ, **Լիոն** տեղանունը ֆրանսերեն՝ **Lyon** - [ljɔ̃] – [Ljojn] (ռնգային) է հնչում:

Ուստի փորձեցինք խնդրի լուծումն սկսել մի փոքր ցանկից՝ անդրադառնալով Ֆրանսիայի 18 մարզերի, դրանց վարչատարածքային ենթակառուցվածքների և մարզկենտրոնների ֆրանսերեն անվանումներին՝ սրանց հնչարտասանական տարբերակներով՝ հնչագրերով (տրանսկրիպցիաներով), որպեսզի այս ցանկի միջոցով հնարավորինս վեր հանենք ու պարզենք խնդիրները. օրինակ, **Bourgogne-Franche-Comté** մարզը՝ [bʊʁɡɔ̃ʁ fʁɑ̃ʃ kɔ̃te] [**Բուրգոնյր-Ֆրանշ-Կոնտե**] է հնչում, կամ **Auvergne-Rhône-Alpes** մարզը՝ [ɔvɛʁn ʁon-alp] (**Auvergne-Rhône-Alps**) [Օվերնյր-Ռոն-Ալպ] և այլն, որոնց հաջորդելու են այդ անվանումների հայերեն հնարավորինս մոտ հնչումները (արևելահայերեն և արևմտահայերեն, այլև ռուսերեն), քանի որ, կարծում ենք, այն կնպաստի արևելահայերեն արտասանության հիմնավորման-հստակեցմանը<sup>2</sup>:

### **Բառերի հնչարտասանական դիտարկումներ**

Անհերքելի փաստ է, որ տասնամյակներ շարունակ արևելահայերենը օտար բառերի հայերեն համարժեքները կազմելիս՝ օգտվել է ոչ թե բնագրից, այլ դրանց ռուսերեն տարբերակներից՝ միջնորդաբար. ասվածի ամենավառ օրինակը **Փարիզ** բառն է՝ **Paris** - [paʁi], որը ոչ թե **Պարի** կամ **Պառի** է հնչում, ինչպես ֆրանսերենում, այլ **Փարիզ** [Париж], ավելի մոտ ռուսերենին: Այսպիսով՝ նկատի ունենալով նշված հանգամանքը, մեր այս ուսումնասիրության մեջ նպատակահարմար համարեցինք ներկայացնել քննվող բառերի նաև ռուսերեն տարբերակները՝ առանձին պունակով:

<sup>2</sup> Ուսումնասիրության ընթացքում պարբերաբար դիմել ենք Ֆրանսիայի մեր գործընկերներ Ա. Բախշյանին և Ն. Պարուտյանին, որոնք իրենց խորհուրդներով մեծապես օգտակար եղան:

Սկսելով պարզագույնից և ամենաանհրաժեշտից՝ հետագայում կանդրադառնանք դրանց ավելի ծավալուն ցանկերին, այլև ամենավիճահարույց խնդրին՝ հիմնականում սփյուռքահայերի շրջանում տարածում գտած հայկական հատուկ անունների և ազգանունների գրադարձությանը:

Ֆրանսիայում բնակվող, ինչպես նաև մշտական բնակության նպատակով Ֆրանսիա ժամանող կամ այնտեղից մեկնող հայերն անխտիր բխվում են այդ խնդիրներին՝ հատկապես հայաստանյան անձնագրեր ստանալիս (հիմնականում ֆրանսահպատակ թուրքահայերը, սիրիահայերը, լիբանանահայերը, իրանահայերը, իրաքահայերը և այլք, որոնց հատկանունները Ֆրանսիայի վարչական մարմինները գրանցվել են ըստ արևմտահայերենի հնչողության. օրինակ, *Պոդոս* հատուկ անունը ֆրանսիացին գրադարձում է *Bogos*, *Բոգոս*, մինչդեռ ֆրանսերենը թույլ է տալիս գրել *Poghos*, *Պոդոս*: Իսկ հետագայում՝ ֆրանսերենից արևելահայերեն գրադարձելիս մի կողմից անվան տերը չի համաձայնում այս գրադարձությանը՝ *Բոգոս*, ասելով, որ իր անունը *Պոդոս* է, մյուս կողմից էլ հայկական անձնագրային վարչարարները, անցագրային զգուշավորությունից ելնելով, պահանջում են տառացի գրադարձություն՝ *Բոգոս*, որը շատ տարբեր կարող է լինել անվան բուն արտասանությունից, կամ *Լորանը*, *Laurent*, անձնագրային բաժնում գրադարձվել էր *Լանրենս*<sup>3</sup>. *Շանը*, *Jean*, *Շեան*, որոնց լուծումն առանց միջամտության անհնարին է դառնում: Վերջինս ենթադրում է որոշակի սկզբունքների մշակում և կիրառություն. դա շատ լուրջ և աշխատատար գործ է, քանի որ ըստ ամենայնի պետք է ներկայացնել ֆրանսերենի հնչյունական (հնչարտասանական) համակարգը՝ հայերենի, հատկապես՝ արևմտահայերենի զուգադրությամբ, որը միշտ էլ անմիջականորեն «ֆրանսերենից փոխառել ու գործածում է բառեր, որոնք իրենց յուրահատուկ հնչյունական տեսքով իսկ հաստատում են ֆրանսերենից փոխառելը: Օրինակ, *սգասիա* (ակացիա) - *acacia*, *կլիսերին* (գլիցերին) -

<sup>3</sup> Ֆրանսերենի *au* հնչակապակցությունը կարդացվում է *o*:

glyce´rine, *քոլեջ* (քոլեջ) – colle´ge, *օպերետ* (օպերետա) – ope´rette և այլն»<sup>4</sup>: Այս դեպքում էլ, անզեն աչքով իսկ պարզ երևում է, որ փակագծերում տրված արևելահայերենները ռուսերենի «մաղով» են անցել: Այս հաղորդման արդյունքը Ֆրանսիայի տարածքային ստորաբաժանումների՝ 18 մարզերի անվանումների ցանկն է, որն առարկայական բազմաթիվ քննարկումներից հետո ներկայացվում է հինգ սյունակով, որում նշվում են՝ 1. մարզի տեսակը՝ քաղաքատիպ, թե երկրամասային, դրանց ֆրանսերեն անվանումները՝ արտասանական տարբերակներով (սյունակ 2.), 3-րդ սյունակը ներկայացնում է ռուսերեն անվանումները, 4-րդը՝ հայերենը՝ արևելահայերեն և արևմտահայերեն, իսկ 5-րդ սյունակում տրված են այդ մարզերի մայրաքաղաքների անվանումներն՝ իրենց արտասանական տարբերակներով և սրանց արևելահայերեն ու արևմտահայերեն համապատասխան ձևերով: Հուսով ենք, այս ցանկը, որ նմանատիպ աշխատանքների առաջին փորձն է, կծառայի ըստ պահանջի՝ ի նպաստ օգտատերերի: Այն, ունենալով նաև գործնական ուղղվածություն, կարևորում է նման ուսումնասիրությունների անհարաժեշտությունը:

Ստորև ներկայացնում ենք սույն աշխատանքի արդյունք հանդիսացող աղյուսակից մի հատված՝ հինգ տող միայն՝ էլնելով հաղորդման նպատակահարմարությունից և ընդհանուր պատկերացում տալու համար աղյուսակի բովանդակության մասին:

### Եզրակացություն

Անուն-ազգանունների, այլև տեղանունների գրադարձության հարցը, միշտ էլ խնդրահարույց է եղել: Այս պարագայում խոսքը Ֆրանսիայում բնակվող, ինչպես նաև մշտական բնակության նպատակով Ֆրանսիա ժամանող կամ այնտեղից մեկնող հայերի անուններին և ազգանուններին է վերաբերում:

<sup>4</sup> Ա.Կ. Բարլեզիզյան, *Հայոց լեզվի բարձրագույն համակարգը և նրա առնչությունը ֆրանսերենի հետ 19-րդ դարում*, դոկտ. ատենախոսություն, Ե., 1995, էջ 198:

Անդրադառնալով կոնկրետ մի ցանկի՝ Ֆրանսիայի 18 մարզերի, ապա դրանց կենտրոնների՝ ֆրանսերեն, ռուսերեն, արևելահայերեն և արևմտահայերեն անվանումներին, փորձել ենք վեր հանել խնդիրները՝ դրանց լուծմամբ հետագայում ավելի ծավալուն և ընդգրկուն ցանկերի անդրադառնալու նպատակով:

Աշխատանքն ունի նաև գործնական ուղղվածություն, որն ավելի է արժևորում դրա կարևորությունը:

ՖՐԱՆՍԻԱ-FRANCE [*fʁɑs*]

<i>Type</i> <i>Մարզի տեսակը</i>		<i>Region</i> <i>Տարածա</i> <i>շրջանը</i> <i>ֆրանսերեն</i>	<i>ռուսերեն</i>	<i>հայերեն</i>	<i>Capital</i> <i>մայրաքաղաքը</i>
1	<a href="#">Metropolitan region</a> Քաղաքային (քաղաքատիպ) մարզ <sup>5</sup>	<a href="#">Auvergne-Rhône-Alpes</a> - [ <i>ovɛʁn ʁon alp</i> ]	Овернь-Рона-Альпы	Օվերնյը-Ռոն-Ալպ Օվերնյը Ռոն-Ալփի (արևմտ. հնչ.)	<a href="#">Lyon</a> - [ <i>ljɔ̃</i> ] Լիոն (արևել. հնչ.)- Լիոն (արևմտ. հնչ.)
2	Metropolitan region քաղաքատիպ մարզ	<a href="#">Bourgogne-Franche-Comté</a> - [ <i>buʁɡɔ̃n fʁɑ̃ʃ kɔ̃tɛ</i> ]	Бургунди я-Франш-Конте (Графство, свободное от Бургундии)	Բուրգոնյը-Ֆրանշ-Կոնտե (արևել. հնչ.) Պուրկոնյը-Ֆրանշ-Գոնթե (արևմտ. հնչ.)	<a href="#">Besançon</a> - [ <i>bəzɑ̃sɔ̃</i> ] Բ(ը)զանսոն (արևել. հնչ.) Պրզանսոն (արևմտ. հնչ.)

<sup>5</sup> Քաղաքային (քաղաքատիպ) մարզ. (այսուհետև՝ քաղաքատիպ մարզ):



3	Metropolitan region քաղաքատիպ մարզ	<a href="#">Bretagne</a> - [ <a href="#">bʁɛtaŋ</a> ]	Бретань (Бретань) Ренн	(Brittany) Բրետան Բրըտանյը (արևել. հնչ.) Պրըթանյը (արևմտ. հնչ.)	<a href="#">Rennes</a> - [ <a href="#">ʁɛn</a> ] Ռեն Ռենն (արևմտ. հնչ.)
4	Metropolitan region քաղաքատիպ մարզ	<a href="#">Centre-Val de Loire</a> - [ <a href="#">sɑ̃tʁə val də lwaʁ</a> ]	Центр-Валь-де-Луар[4] (Центр-долина Луары) Орлеан	(Centre-Loire Valley) Սանտրը-Վալ դը Լուար (արևել. հնչ.) Սանթր-Վալ տը Լուար (արևմտ. հնչ.)	<a href="#">Orléans</a> - [ <a href="#">ɔʁlɛɑ̃</a> ] Օռլեան- (-եան չէ, եան է)  Օռլեան (արևմտ. հնչ.)
5	Metropolitan region քաղաքատիպ մարզ	<a href="#">Corse</a> - [ <a href="#">ˈkɔʁsɪɡa</a> ]	Корс (Корсика) Аяччо	(Corsica) Կորս (Կորսիկա) Գորսիքա (արևմտ. հնչ.)	<a href="#">Ajaccio</a> - [ <a href="#">aʒaksjo</a> ] Այաչչո - (Աժաք- սյո) (արևել. հնչ.) Աժաք- սիո (արևմտ. հնչ.)

---

---

**Օգտագործված գրականություն**

Բարլեզիզյան Ա. Վ., Հայոց լեզվի բառիմաստային համակարգը և նրա առնչությունը ֆրանսերենի հետ 19-րդ դարում, դոկտ. ատենախոսություն, Ե., 1995:

**Tioyan Susanna, Fishenkjian Ani - Some Issues on Transliteration of Proper Names** - The article discusses a translation-related issue, namely, transliteration of french-armenian (east armenian, west armenian) proper names and surnames, as well as toponyms, which often causes problems in administrative documentation. The article is related to Armenians who live in France, as well as Armenians with permanent residence in France. The article makes special reference to a list of 18 regions in France, which are sorted out into two types: towns and main cities, with their names – French, Russian, East Armenian and West Armenian. An attempt has been made to cover the problems of translation, with the perspective of coming up with an extended list of toponyms.

The work also has highly practical perspective, which makes it even more significant.

**Keywords:** proper name, transliteration, pronunciation features, indirectly, territorial division, pronunciation version, users.

**Tioyan Susanna**- PhD of Philology, Institute of Language after H. Acharyan of NAS RA, Senior Researcher.

**Fishenkjian Ani**- Candidate of History Sciences, Institute of Language after H. Acharyan of NAS RA, Researcher.

**Тюян Сусанна, Фишенкджян Ани- Некоторые вопросы транслитерации собственных имен.**- В статье рассматривается вопрос о переводе (в данном случае - транслитерации) французско-армянских (восточноармянских, западноармянских) собственных имен и фамилий, а также топонимов, что, в частности, приводит к большим проблемам в административно-прикладной сфере. В частности, речь

идет об армянах, проживающих во Франции, а также армянах, прибывающих или выезжающих из Франции на постоянное место жительства. В настоящем сообщении, ссылаясь на конкретный небольшой список 18 регионов Франции, выделенных по их двум типам - городско-региональные, с их названиями, и их центрами: французскими, русскими, восточноармянскими и западноармянскими - мы попытались показать проблемы транслитерации, с целью обращения в будущем к спискам более обширным и всеобъемлющим.

Работа также имеет практическое направление, что еще больше подчеркивает ее ценность.

**Ключевые слова:** имя собственное, транслитерация, особенности произношения, опосредованно, территориальное деление, произнесительный вариант, пользователь.

**Тюоян Сусанна**, кандидат филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, старший научный сотрудник.

**Фишенкджян Ани**, кандидат исторических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, научный сотрудник.

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ՀՈԴՎԱԾՆԵՐ**

**I**

**Գրիգորյան Սուսաննա** - Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի իրավական հասկացությունների իմաստային քննություն ..... 5

**Թադևոսյան Հասմիկ** - Նոր բառիմաստներ XIII դարի բժշկարաններում..... 17

**Խաչատրյան Հասմիկ, Խառատյան Մելանյա** – Բառաբարդումը որպես յուրահատուկ լեզվամտածողության արտահայտության միջոց Համշենի բարբառում ..... 28

**Կատվայան Վիկտոր** - Հինհայերենյան մի քանի հնչյունական հատկանիշների արտացոլումը արդի հայ բարբառներում..... 41

**Հակոբյան Ֆրիդա** - Գրաբարի էլեկտրոնային կորպուսի ստեղծման նպատակը և խնդիրները ..... 58

**Հովհաննիսյան Լավրենտի** - Թվականների հնաբանություններ Ղարաբաղի (Արցախի) բարբառում..... 67

**Վարդանյան Արտակ** - *Արտակ* անձնանվան ստուգաբանությունը ..... 74

**II**

**Խաչատրյան Հասմիկ** - *Գետին* հասկացության բառանունները և նրանց իմաստային զարգացումները բարբառային հայերենում..... 82

**Կատվայան Վիկտոր** – Կարնո բարբառը 20-րդ դարի սկզբին գրառված հեքիաթներում..... 95

**Հովհաննիսյան Նազիկ** - Մեր լեզուն, խոսքը և տրամաբանությունը..... 118

**Ներսիսյան Վարսիկ**- Ածանցման հարցերի քննությունը Մանուկ Աբեղյանի աշխատություններում..... 130

<b>Ֆելեքյան Մանուկ</b> - Իմաստային նորաբանություններ գրական արեւմտահայերենում.....	146
<b>Mkhitaryan Gayane</b> - Bible Translation as a Factor in the Preservation and Development of the Armenian Language .....	157

### ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

<b>Գրիգորյան Գայանե</b> - Չ ժխտական նախաձանցով դիպվածային նորակազմություններ.....	166
<b>Մարաշյան Հարութ</b> – Արևմտահայերենի նորաբանությունների իմաստաբանական քննություն.....	178
<b>Մարգարյան Լուսինե</b> - Արցախի տեղանվանական համակարգի ցեղանուն հիմքով տեղանունները.....	187
<b>Ֆիշենկճեան Անի, Տիոյեան Մուսաննա</b> – <i>Եղանակատրիչ մակբայ</i> եզրոյթն ըստ արեւմտահայերենի դասագիրքերու.....	201

### ՔՆՆԱԸԿՈՒՄՆԵՐ

<b>Չաքարյան Հովհաննես</b> - Հ.-ե. *(a)ս(e)- «սիրել, ուզել, օգնել» արմատից սերված հայերեն մի քանի բառերի ստուգաբանություն.....	215
<b>Տիոյան Մուսաննա, Ֆիշենկճյան Անի</b> - Հատուկ անունների գրադարձության մի քանի խնդիրներ.....	227

### CONTENTS ARTICLES

<b>Grigoryan Susanna</b> - Semantic Examination of Legal Concepts Grigor Tatevatsi's "Book of Questions".....	5
<b>Tadevosyan Hasmik</b> - New Lexical Meanings in the 13-th Century Medical Books.....	17
<b>Khachatryan Hasmik, Kharatyan Melanya</b> – Compounding as a Means of Expressing the Unique Language Thinking.....	28

<b>Katvalyan Viktor</b> -The Reflection of Several Phonetic Features of the Old Armenian Period in the Modern Armenian Dialects.....	41
<b>Hakobyan Frida</b> - The Purpose and Objectives of the Creation of an Electronic Corpus of the Old Armenian Language .....	58
<b>Hovhannisyán Lavrenti</b> - Archaisms of Numerals in Karabakh (Artsakh) Dialect .....	67
<b>Vardanyan Artak</b> - Etymology of the Personal Name <i>Artak</i> .....	74

## II

<b>Khachatryan Hasmik</b> - The Words for the Concept "Ground" and Their Semantic Development in Dialectal Armenian.....	82
<b>Katvalyan Viktor</b> - The Karno Dialect in Fairy Tales Recorded at the Beginning of the 20th Century.....	95
<b>Hovhannisyán Nazik</b> - Our Language, Our Speech and Logic .....	118
<b>Nersisyan Varsik</b> - Study of the Affixes Issues in the Works by Manuk Abeghyan .....	130
<b>Felekyan Manuk</b> - Semantic Neologisms in Western Armenian Literary Language.....	146
<b>Mkhitaryan Gayane</b> - Bible Translation as a Factor in the Preservation and Development of the Armenian Language .....	157

## REPORTS

<b>Grigoryan Gayane</b> - Occasional New Formations with the Negative Prefix շ[ʃ] .....	166
<b>Marashlian Harout</b> - The Semantic Study of Western Armenian Neologisms.....	178
<b>Margaryan Lusine</b> - Toponyms Based on the Tribename of the Toponymy of Artsakh .....	187
<b>Fishenkjjan Ani, Tioyan Susanna</b> - The Term Modal Adverb According to Western Armenian Language Textbooks .....	201

## DISCUSSIONS

<b>Zakaryan Hovhannes-</b> Etymology of Several Armenian Words Derived from PIE Root *(a)u(e)- "to Love, to Want; to Help".....	215
<b>Tioyan Susanna, Fishenkjian Ani-</b> Some issues on transliteration of proper names.....	227

СОДЕРЖАНИЕ  
СТАТЬИ

## I

<b>Григорян Сусанна</b> - Семантическое исследование юридических понятий "Книга вопрошений" Григора Татеваци.....	5
<b>Тадевосян Асмик</b> - Новые лексические значения в лечебниках XIII века.....	17
<b>Хачатрян Асмик, Харатян Меланя</b> - Деривация как средство выражения своеобразного языкового мышления в Амшенском диалекте.....	28
<b>Катвалян Виктор</b> - Отражение некоторых фонетических особенностей древнеармянского периода в современных армянских диалектах.....	41
<b>Акопян Фрида</b> – Цель и задачи создания электронного корпуса древнеармянского языка.....	58
<b>Оганесян Лаврентий</b> - Архаизмы числительных в карабахском (арцахском) диалекте.....	67
<b>Варданян Артак</b> - Этимология личного имени <i>Артак</i> .....	74

## II

<b>Хачатрян Асмик</b> - Словоформы понятия <i>пол дома</i> (земля) и их смысловые развития в диалектном армянском языке.....	82
<b>Катвалян Виктор</b> - Диалект Карно в сказках, записанных в начале 20 века.....	95
<b>Оганесян Назик</b> - Наш язык, наша речь и логика.....	118
<b>Нерсисян Варсик</b> - Исследование проблем аффиксации в трудах Манука Абегяна .....	130
<b>Фелекян Манук</b> - Семантические неологизмы в	

западноармянском литературном языке.....	146
<b>Mkhitaryan Gayane</b> - Bible Translation as a Factor in the Preservation and Development of the Armenian Language .....	157

### СООБЩЕНИЯ

<b>Григорян Гаяне</b> - Случайные новообразования с отрицательным суффиксом չ[ʃ] .....	166
<b>Марашлян Арут</b> - Семантический анализ западноармянских неологизмов.....	178
<b>Маркарян Лусинэ</b> - Этнотопонимы в топонимической системе Арцаха.....	187
<b>Фишенкджян Ани, Тиоян Сусанна</b> - Термин модальное наречие по учебникам западноармянского языка.....	201

### ОБСУЖДЕНИЯ

<b>Закарян Оганес</b> - Этимология некоторых армянских слов, возникших от ПИЕ корня *(a)u(e)- "любить, хотеть; помогать..."	215
<b>Тиоян Сусанна, Фишенкджян Ани</b> - Некоторые вопросы транслитерации собственных имен.....	227



ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՋԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ  
ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

1-2 (17-18)

Ձևավորումը և էջադրումը՝  
Մ. Խառատյանի  
Կազմը՝ Ս. Արևշատյանի

Խմբագրության հասցեն՝ 0015, Երևան 15, Գրիգոր Լուսավորչի 15, հեռ. (010)565337  
Address: Grigor Lusavorich str. 15, 0015, Yerevan, Armenia, tel. (010)565337  
Адрес редакции: 0015, Ереван-15, ул. Григора Лусаворича 15, tel. (010)565337

Հանդեսի պաշտոնական կայքը՝  
Official site of the journal: <http://language.sci.am>  
Официальный сайт журнала:

Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝  
E-mail of the journal: [instlingv@sci.am](mailto:instlingv@sci.am), [inslang@sci.am](mailto:inslang@sci.am)  
Электронная почта журнал:

Հրատ. պատվեր № 1061  
Ստորագրված է **տպագրության՝**  
Չափսը՝ 60x84<sup>1/16</sup> տպագրական մամուլ:  
Տպաքանակը՝ 100 օրինակ:  
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,  
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: